

15347

Բ. ՈՐԲԵՐԵԱՆ

ՈՎԱՍԻՍ

(ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ)

0.0



Փ Ս Բ Ի Ջ

Բազմալեզուան Յայտան
(Կ. Յ. ՆԵՐՍԷՍ)

1920

891.99
Ո-63


Op. 2000. 1000/1000

2000/1000

(1927 3-10 10)

391 99
7-63

Բ. ՈՐԲԵՐԵԱՆ



Ո Վ Ա Ս Ի Ս

(ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ)



Handwritten signature

6075

Փ Ա Ր Ի Ջ
Տպագր. Կ. Յ. ՆԵՐՍԷՍ
1920

Ն Ա Խ Ա Բ Ա Ն



ցկտուր և անկապակից գրուածներու հաւաքածոյ մը գոյութեան իրաւունք պիտի չունենար գուցէ: Այս հեռաւոր անապատի հորիզոնին վրայ մեծ յեղաշրջումներու կրկներեւոյթը ինկաւ զգայնամոլ հոգիիս վերև: Ռուսո-ճաբոնական պատերազմ, Համիտի անկում, Պալքանեան բաղխում և համաշխարհային փլուզում, յաջորդեցին իրարու քսաներորդ դարու առաջին քսանամեակին ու խռովեցին էութիւնս, երբ «Նոր Պրոմէթէ կաշկանդեալ, երկինքներու գողցած հուր» կ'սպասէի ցանկալի արշալոյսներու բոցավառումին:

Ու երբ տամնեօթը տարիներու ինքնակամ աքսորանքէս ձերբազատ, հին անցեալի խտէալով հրատոյժ, պիտի ուղղեմ դողդոջուն քայլերս դէպի հիւրընկալ ափունքը մեր հեռաւոր հայրենեաց, վերաշինել փորձելու համար մայրենի երգիքը, կը մտածեմ հետս տանիլ այս դալկահար թերթերը, արմաւենիի քանի մը դողացող ոստեր, որոնց մէջէն անձանօթ ուկիանի մը կոհակներուն հեւքերը ողբալով անցան:

*
**

Ու յիշատակներու այս ազազուն և անբոյր փունջը, թոյլ տուր որ քեզի՛ նուիրեմ, հոգեա՛կա Մարի, իմ անկումներուն ու խոյանքներուն հաւատարիմ ընկեր ու պահապան հրեշտակ, որ վիրաւոր ազանեակի պաշտելի նալուածքովդ, սպասեցիր ինձի հետ սրբազան արշալոյսին, ու պիտի հետեւիս ինձի, մինչեւ վերջին հանգրուանը կեանքին, մինչեւ անձաղկազարդ բլրակը մեր գիւղակին, ուր պիտի երթամ, կոհակներու որոտէն հեռու, յաւերժական հանգիստը գտնելու համար:

Ճիպուղի.
10 Ապրիլ 1920

Ռ. ՈՐԲԵՐԵՍՆ



41129 - ա.հ.



(24799-61)

24898-61

2003

Մ Ի Ն Չ Ե Ի Է Ր Ճ Ի Ա Ս



արտականութեան կատարում:

Այս երկու բառերը կրկնուած, վերակրկնուած ու բիւրիցս արձագանգուած հոգիի ամենէն ծածուկ անկիւններուն մէջ, սիրտը կը պարուրեն տեսակ մը անսահման գինովութեամբ ու կը ջլատեն բաժանումն ու իրեն յարակից լացող տրամուծիւնները:

Պարտականութեան կատարում:

Հազիւ քանի մը ժամեր ունիս հաշուելու սիրելիներուդ քով, արշալոյսը շատ մօտ է բռնկելու, արեւի քանի մը բարեկամ նշոյլներ քիչ մը ետքը պիտի սահին քովիկդ ու տակաւին չես զգար թէ վաղը, ու վաղուան յաջորդող ամսամած կամ պայծառ օրեր այդ նշոյլները պիտի մոռնան քեզ ու պիտի հալիս մենաւոր, տարբեր աստղերու տակ, որոնք օտար լեւներու ետեւէն, քեզի անծանօթ երկինքներէ պիտի հասնին:

Ուրիշ ամեն մտածում անհետացած է անծանօթի մշուշին տակ, ու տնակդ դեռ չի թողած, կը կարծես թէ արդէն իսկ հեռացած ես անկէ, թէ արդէն շոգեկառքը սուլելով կը սուրայ, թէ կառքին մէջ ընկողմանած կ'երերաս, թէ մինակդ կը քալես լեռներն ի վեր, կամ կը կատարես վայրէջքը:

Մինակդ:

Այդ բառին դառնութիւնը բնաւ չեն կրնար զգալ անոնք որ առաջին անգամ դուրս կը նետուին իրենց բնավայրէն:

Մ-ն-ո-ր-ն-ի-ն-ը. — « Մինչեւ Էրձիաս » և « Էրձիասէն անդին » երեք հատուածները կը պատկանին Իզմիրի կեանքիս վերջին օրերուն: Չիս անապատին կապող շղթային առաջին օղակները կը կազմեն ու թափառակոծ էութեանս այն աստիճանի հարապատ պատկերը: Անոնց վերջին տողերը ձիւ պուրի զրեցի, ու կ'արտատպեմ հոս, ԷՆՃՅՅ համար, որպէս զի չի կարենամ մոռնալ դէպի բարձունքներ սլացրս, ահաւոր և զիշերատուեր այս մենութեան մէջ (սորատուգուէլէ առաջ:)

ըլլան անոնք աղքատ՝ այլ հարուստ երազներով և կամ հարուստ ու հետամուտ կեանքի ձանձրոյթը նորութիւններով ամօքելու: Մինակ բառը անբացատրելի է այդ երկու դասակարգին համար ալ: Մինակը՝ մոլորած ծիծեռնակն է որ կ'անցնի կը կտրէ հորիզոնին լեռները, կուգայ ցրւիքին մէկ անկիւնը, հոն բունակ մը կը շինէ իրեն, ընկերուհի մը ու սիրուն ձագուկներ, ու մէկ մ'ալ նայիս բնագոյի վայրկեանական տկարացում մը գինքը կը շեղեցընէ իր սովորական ձամբէն, մանրիկ աչուկները սեւեռած անորոշութեան, կը սուրայ դէպի վայրեր ուր սիրելիներ չիկան:

Պարտականութեան կատարում...:

Այդ երկու բառերը երակներու մէջ ներարկուած ֆօսայիների ազդեցութիւնը ունին. դողդոջուն կը սեղմես սիրելիներդ կուրծքիդ, գինովութիւնը կը շարունակէ՝ տակաւին, կ'զգաս թէ ուժէդ կարողութենէդ աւելի բարձր և աւելի ընկճող բան մըն է այդ բաժանումը, — անորոշ զգացում մը սակայն, որ անուն չունի — շոգեկառքը կը սուլէ, կը մեկնի, աչքերուդ մէջ քանի մը կաթիլ արցունք կը դողան, չես գիտեր թէ ինչու, որովհետեւ տակաւին չես կարծեր թէ բաժնուած ես ու մինակ, ծովակին շրջանը կը կատարես, քու սիրական ծովակին, կանգ կ'առնես Գորտելիօ, ծաղկաւէտ, բուրանոյշ, յիշատակալից Գորտելիօն, մտքիդ մէջ աղուոր օրերու ցոլքեր կը մարմրին ու կ'անցնին: Դուն հո'ն ես, ու կեանքը կը քալէ:

Ու դեռ ժամեր կը տեւէ երազանքը: Աղօտ աչքերով կը գիտես երկնաբերձ Սիպիլի կատարները, որու զահաւանդն ի վար, դէպի բարձունքը մագլցող ձորակէ մը կը սահի Մադնիսան, քիչ մը անդին յաւերժապէս լացող Նիոպէն իր ապառաժուտ հիւղակին մէջէն քեզի կը նայի: Աւելի հեռուն, աւելի հեռուն բայց այլ ևս ցուրտ մինակութիւնն է ատիկա: Փակէ աչքերդ ու տնակդ դարձիր նորէն:

Ա՛խ, կ'ապահովընեմ ձեզ, թէ հոն կ'սկսի իրական տանջանքը: Այդ հեռաւորութեան մէջ ամեն բան սիրելի՛ կ'ըլլան քեզի, տնակդ, փոքրիկ սենեակդ. խոշոր անզգայ հայելիները, փոքրիկ կատուն ու նոյն իսկ դրան առջեւ աճող մէկ երկու ծառեր, որոնց տերեւներուն սարսուռը բնաւ դիտած չէիր բովանդակ անցեալին մէջ:

Շոգեկառքը կը սուրայ: Պաղ, սառուցիկ հովը անբաւական կ'ըլլայ ձակտիդ հուրը զովացնելու: Ստուերները իրիկուան

դէմ տարտամ ու տխրաշուք ծանրութեամբ կ'երկարին բլուրներէն դէպի ձորերը: Բայց դուն բնաւ չե'ս զգար անոնց ճնշումը, բոպէ մը միայն և արդէն հեռու ես անոնցմէ, աղուոր ստուերներ, որոնք վայրկեանէն աւելի չե'ն մթագներ կեանքդ:

Գիւղակներ, հոս հոն ցիրուցան: Անդունդ, վերելք, վայրէջք ու նորէն երկարաձիգ վերելքը դէպի Ուշագ: Քսանի չափ փապուղիներ, օդին մէջ կարծես առկախ երկաթակուռ կամուրջներ: Ու մտածել թէ կիրակիներու աղուոր իրիկո'ւնն է հիմակ. թէ ծովակը հանդարտօրէն կը քնանայ Իզմիրի դիցանոյշներու քարափին առջև և հոն մթնոլորտին մէջ անուշ գինովութիւն մը կը դողայ:

Գիշերը՝ խորհրդատո'ւն է կ'ըսեն տրտում հոգիներու: Տունէն բաժնուողները շատ լաւ պիտի հասկնան զիս, երբ ըսեմ թէ այն գիշերը՝ խորհուրդէ աւելի հրդեհ ցանեց էութեանս խորերուն մէջ: Յորեկը անզգալաբար ատել կ'սկսէի: Լոյսը՝ որ կը ցուցադրէր ինձի տնակիս և իմ միջև բարձրացող հեռաւոր լեռներու շղթաները՝ ցաւագինօրէն կը խայթէր ու կ'ասղընտէր մարմինս: Անոր համար գիշերին հետ տեսակ մը հանդարտ տրտմութեան իյնալը զգացի ուսերուս վրան, անոր ներքև կեցայ դողազին, կծկուած ու շրթունքներս սեղմած: Վահօնին պատուհանէն դուրս կ'երկարեմ գլուխս: Տարօրինակ գիշեր մըն է, ցուրտ, ու ահռելիօրէն մութ:

Այդ բարեկամ մութին ընդմէջէն կը նայիմ, կը սեւեռեմ ու կ'որոնեմ: Կը ջանամ կարգի մը դնել օրուան յիշատակներս, ու ձամբորդի առաջին օրուան, ու չե'մ յաջողիր: Ձէ՛, բան մը տեսած չեմ, ամբողջ օրուան մէջ տնակէս ու յիշատակներէս մազի չափ հեռացած չեմ, հո'ն եմ, չեմ կրնար հեռանալ անոնցմէ: Վերէն, մութին մէջ պահուած քանի մը աստղեր կը քթթեն ծաղրանքով աչքերնին: Ես անոնց չե'մ նայիր, թէև կ'զգամ իրենց հեզնութեան սարսուռը: Ձեռքերուս մէջէն թեթեւ դող մը կ'անցնի: Ամեն բան կ'անհետանայ: Շոգեկառքը ժամերով դանդաղ, վայրենի սուլումով մը յառաջ կը վազէ: Ժամը ութին մօտ: Ծառի և անտառներու բացխրիկ տերեւներէն երբեմն դողահար լոյսեր կը կածկլտան, կը փախչին, ոգեւարի վերջին հեւքին նման: Հիւղակ մը, հիւղակներ, գիւղակներ ամբողջ երբեմն: Կ'զգամ թէ կ'ընկճուիմ, ընկճուած եմ: Գլուխս վայրահակ՝ արտասուել կ'սկսիմ: Պիտի խենթեանայի՛ առանց անոր, ամբողջ օրուան զսպուած հառաչն էր որ

կը հալէր արցունքին մէջ: Ինքնամոռացումը մէջ ընկղմած՝ ցնցումով մը ինքզինքիս կուգամ: Մտերմի ձեռք մը կը սեղմէ ձեռքերս: Հանգչեցայ: Օ՛հ, կեանքիս մէջ երբէք այնչափ անուշ չէր թուած ինձի մտերմութիւնը. բնաւ այնչափ չէի զգացած պէտքը անոր: Ու այդ անկեղծ սեղմումը առիթ կ'ըլլայ որ հաւաքեմ ես զիս, ու մտածեմ՝ քիչ մը բաժանումի արշալոյսը, որմէ ժամերով հեռու եմ հիմակ:

« Աստուած հե՛տդ, հայրիկ »:

Մուժիսն մէջէն կ'զգամ մեծ ԵՍին զոյուժիւնը, կ'զգամ թէ քու ինձմէ՛ աւելի պարզօրէն ճանչցած ու սիրած Աստուածդ, որուն աղօթեցիր ինձի համար անգիտակցօրէն, կը հետեւի ինձի, սիրական տղաս, ու գողահար, ե՛ս այ աղօթք մը կը մրմնջեմ իրեն: Չեմ գիտեր թէ ինչ ըսի մեծ Անհունին, գիտեմ միայն թէ լսեց տկար ձայնս, բոլոր օրհասականներու ձայնին նման, և զգացի թէ մօտաւոր ապագայի մը մէջ պիտի անցնէի վերստին այդ նոյն գծին վրայէն, վերադարձիս օրը, ու ցնծագին պիտի ողջունէի կարմրավառ արշալոյսը, որ ինձի իմ անշուք այլ երանաւէտ տնակիս ճամբան ցոյց պիտի տար:

* * *

Առաջին օրուան այս դուտ անձնական տպաւորութիւններու հրատարակութեան տրուելը գուցէ քիչ մը շատ անբնական գտնեն բարեկամներս: Պէտք սեպեցի սակայն, ըսելու համար, թէ զգացումներ կան՝ որ աննիւթական ու յաւիտենական են և թէ, մարդ էակը, որչափ ալ դրական աշխարհի ժխտրին անձնատուր, վայրկեաններ պիտի ունենայ, ուր սիշտը վերստանայ անցեալին սիրատոշոր հեւքը, ու ճակատն ամպանայ յիշատակի տրամագլին խոհանքներով...: Անցեալի մէջ երկու տեսակ օրեր կան, ուրախ և տխուր: Չեզոք վիճակ չեմ ճանչնար ես: Այլ երկու տեսակին ալ յիշատակը տրտում է, որովհետև անցան ու այլ ևս չիկան...: Ու կարծեմ՝ այդ տրտութեան համար է որ և ոչ մէկ արուեստագէտ մինչև հիմա գծած կամ քանդակած է Յիշատակի դիցանոյշին արձանը առանց անոր ճակտին վրայ սփռելու տխրութեան ամպ մը:

Ուշաքէն անդին թմրութեան պէս բան մը կը տիրէ մարդու վրան, ճամբաները աւելի միօրինակ են, ու երկիրը շատ քիչ խորտուբորտ: Ճամբորդութեան վախճանին՝ մարդ երազի

պէս կը յիշէ Գարահիսարը՝ իր՝ գետնի տափակութիւնը բզբտելով դուրս, դէպի վեր պոռթկացող՝ սև ապառաժներով, էսլիշէհիրը, ուր երկաթուղիի գծերը կը միանան իրարու մանուածապատ ցանցով մը, ու վերջապէս պատմական էնկիւրին իր հոշակաւոր կարմիր վանքով: Հակառակ իր քարակուռ բնակարաններու անճաշակ շինուածքին, հակառակ իր նեղկուկ փողոցներու օձապտոյտ ոլորտքին, կերպ մը համակրութիւն կ'զգայ մարդ այս վերջին քաղաքին նկատմամբ. չեմ գիտեր ինչու, բայց գուցէ մայր բնութիւնը հոն աւելի մեղմ, աւելի ողորկ ու վճիտ բան մը ունի, կերպ մը տարտամ փայլունութիւն՝ որ կը յուզէ սիրտը:

Լեռներուն կատարները ձիւնի մանրիկ պատառներ կան: Անձանօթի մը պէս կը նայիմ՝ անոնց մոռցած մեր հին բարեկամութիւնը: Պանդոկին պարտէզը նստած՝ աչքերս կը մագնիսանան փառաւոր վերջալոյսէն, մին անոնցմէ, որոնք արեւելքի երկինքներուն վրայ կրնան բռնկիլ: Իրարու վրայ բարդուած, արծաթ ժապաւէններով եզերուած ամպեր, փառաւոր խառնակութեամբ մը կը սահին լեռներու զագաթներէն անդին: Երկաթուղիի զոյգ գիծերը, յանգած բլուրին ստորոտը՝ օձի պէս կը սողան դէպի անտրոշութիւն: Ասկէ անդին վերելքը պիտի սկսի ինձի համար, շատ փոքրիկ վայրէջքներով, վերելք մը դէպի յաւիտենական լեռնադաշտերը: Ասկէ անդին, հեռուն, ա՛խ, միշտ աւելի հեռուն իմ սիրելիներէն...

Միւս օրը՝ բուռն հետաքրքրութիւն մը կը ծնի ուղևորին սրտին մէջ: Ծառերը կը հատնին հետզհետէ, ու կ'սկսի հրաբլիսային լերկութիւն մը, կարմիր, դեղին, մոխրագոյն բլուրներու շարքեր, ընդարձակ դաշտեր, առանց դալարի ու կանանչութեան: Տակաւին ամբողջ օրեր կան համրելիք և ինչ օրեր, բայց քանի ժամերը կ'անցնին՝ կը բարձրանանք աւելի, օդը աւելի կ'ծող կ'ըլլայ, հովը՝ ցուրտ ու սառեցնող: Չիւնի պատառները կը շատնան, ճամբուն երկու եզերքը սպիտակ գոյնը տիրել կ'սկսի: Իզմիրի մէջ ամեն ինչ դալար, կանանչ էր կը մտածեմ՝ ու կը շարունակեմ գնացքս:

Երկու օր չանցնիր և ահա հեռուէն կ'ընդնշմարուի Այլի՛սը, իր ազոտտ, պղտոր ալիքներով, բլուրներու ստորոտը քերելով կուգայ կը մխրճուի ահարկու ապառաժներու դէզի մը խորը: Կամուրջին վերև կեցած՝ ահուղողով կը նայիմ՝ դէպի վարի անդունդը: Կը յիշեմ՝ Եփրատը իր լուռ վսեմութեանը մէջ

կամ գարնանասկիզբի խոռով ու փրփրադէզ օրերուն: Անոր հետ բաղդատելով Ալիս վտակ մըն է միայն, անօգուտ ու աղմկալից վտակ մը, որ սակայն ահարկու է: Կամուրջին մէկ ծայրը՝ հնութեան անծանօթ մէկ արձանագործը՝ մարմարէ առիւծ մը պառկեցուցած է որ սփինքսի դէմք մը ունի և դէպի դիմացի լեռները կը նայի: Հին դարերը աւելի մօտիկէդ կ'անցնին լուռ ու ծանրախոր գնացքով, հոն՝ ուր գե'տը կայ և որուն քով հիները կ'սաստուած բնոր դրին:

Գետէն անդին՝ Իսկե-Պեյին իր սովորական տափակ բարձրութիւնով ու վերջը նորէն ձանձրացնող միօրինակութիւնը գորշագոյն դաշտերու, որոնց վրայ անշուք կը պառկին բլրակներ, տափակ, գազաթնին հողին փակած: Երկարատև ճամբորդութիւններու մէջ այդ աննշանութիւնները կը խեղդեն մարդը: Հողին ատոնցմով չի՛ գոհանար, մանաւանդ երբ անոնք քովերնին չունենան անդունդներու պատուածքը, որոնց միջևէն բանտուած հեղեղի մը վալրի աղաղակը զալարելով կը թռչի:

Գորշեհիւրէն անդին տեսարանները զգալապէս կը փոխուին: Հովը մրրիկի կը փոխարկուի, հողը տեղ տեղ կապարի մութ ու տրտում գոյնը կ'ստանայ: Ամեն կողմ մարած հրաբուխի հետքեր, որոնց նայելով հրդեհներու բռնկիլը կ'զգաս: Երկիրը կը շարժի՝ կարծես: Ժամ մը, երկու երեք: Բլուրի մը գագաթը կը նետուի ճամբան, ինքն ալ կարծես հետաքրքիր, լայն, քարուտ, անհարթ ճամբայ մը: Բլրակին գագաթն է կառքն ալ հիմա, ու ցատկելով բոլորտիքս կը դիտեմ: Երեք կողմը հորիզոնը աւելի լայնցած է հիմա: Նայուածքը կընայ աւելի մօտիլ անսահմանութեան: Դիմացը՝ երկարածիզ բլրակներու ետեւէն, սպիտակ, գրեթէ կլորի պէս ամպ մը կ'երեւնայ: Երկնքի վճիտ կապոյտին մէջ այդ մէկ կտոր, անշարժ, գամուած ամպին ներկայութիւնը տարօրինակ կը թուի: Հետաքրքիր եմ, երազողներու նման: Քիչ մըն ալ, կէս ժամ, մէկ ժամ: Եւ յանկարծ, մշուշին մէջ, ընդարձակ, կորսուող շրջագիծներով անսահմանութեան մը մէկ կողմը լե'ռ մը, դէպի երկնք սուրացող լեռ մը կը կանգնի:

Էրճիսան էր:

Խորունկ յուզումով. երկիւղած կերպ մը պաշտումով կը նայիմ իրեն: Կարծես դէպի ինծի կուգայ, դէպի վրաս, կուգայ

ընկճելու զիս. էութիւնս փշրելու համար՝ հիմա պիտի իյնայ կարծես:

Ատիկա պե՛տ էր: Ատ ցնցումը, զոր մեծ լեռները միայն կրնան տալ իրենց ստորոտէն վաղուց հեռացած ու կէս մը այլասերած իրենց զաւակներուն, հողիիս մէջ ելեկտրական բոց մը պտըտցուց: Այդ մէկ վայրկեանը՝ երկար տարիներու թմրութեան տակ քնացող, ծովակի մը մեղկ ու մեղմօրօք ամուռնքներուն քով դեգերող ու կեանքի մեծ յոյզերը այլ ևս չ'զգալու սկսող հողի մը համար խոշոր սարսուռի պէս բան մը եղաւ: Նոր կեանքը կ'սկսէր կարծես երակներուս մէջ: Լեռը կը հասկնար զիս: Հիմա չեմ՝ մտածեր թէ երկրի կուրծքէն դուրս բարձրացող ու յաւիտենապէս անշարժ այդ ահագին ապառաժները հողի չունին: Իրենց ճակատները ձիւներու և սառուցիկ հովերու պէտք ունին հրաբխային անցեալի մը տաքութենէն զովանալու համար. իրենք աւելի մօտ Անհունին՝ մեզմէ, որ իրենց ստորոտին մօտիկէն անցնող կեանքի ճամբորդներ ենք միայն, իրենք մեզմէ աւելի ճանչնալու առիթն ու տարի՛քը ունին անդունդներու զաղտնիքները:

Էրճիսս՝ մինակը չի՛ բարձրանար ուրիշ լեռան մը պէս: Իր շուրջը, իր քովիկը շատ մը բլրակներ ունի իրեն շղթայուած, շատ մը քուրմեր, և ինք՝ քրմապետը, սպիտակ գագաթով մը, որուն շուրջ դարերու մշուշները կը բարձրանան հեւալով: Վայրէջքը սկսած է հիմա, երկար, ու ձիերը ոգեւորուած՝ կը սլանան: Դէպի Էրճիսս, դէպի մեծ լեռը, որ բոլոր երազներու նման՝ կը հեռանայ հետզհետէ: Փոքրիկ բլրակներ, որ կը ծածկէին զանի՛ կ'անհետին տակաւ ու հիմա՝ լեռը ամբողջ առջիս կը կանգնի՛ իր փառաւոր ու լայնարձակ վսեմութեամբ:

Այդ անբարբառ ու մեծվայելուչ հսկան մագնիսացուցած է զիս, ինչպէս Մոն Պլան « հմայքը ունի կասեցնելու առաւօտեան Արուսեակը », բանաստեղծին ըսածին նման:

Բոպէ մը կը տեղափոխուիմ՝ հեռուէն հողիով անոր զոյգ սպիտակ կատարները: Այդ բարձունքէն կը դիտեմ՝ շուրջի աշխարհը:

Տղմուտ Ալիսը՝ իր վրդովուած ու խոռով ալիքներով՝ կը սահի վարէն: Կեսարիան իր նորածիլ դալարներով, թալասը, էվէրէկը և անհամար գիւղակներ, կը պճնազարդեն հրաբխային հողերու գորշ միօրինակութիւնը, կը փոռուին առջիս:

կարմիր գետը կը շարունակէ իր ճամբան, ծուռ-մուռ, գալար-մոլոր ճամբայ մը, կ'երթայ ամայութիւններէ կամ մարդաշատ ափունքներէ մինչև ծովերուն ամենէն Սևը:

Ծո՞վը: Նայուածքս այդ փառաւոր բարձունքէն կը հասնի մինչև հո՞ն, հոգիի նայուածքս, ու կ'զգամ սրտիս ճմլուիլը կուրծքիս տակ:

« Աստուած հետդ, հայրիկ »:

Թոթով, մանկական ձայնից արձագանգը հո՞ն ալ եկաւ գտնելու զիս, տղաս: Այդ մենիկ ամայութեանց վրայ մարդ, ի՞նք ալ, բարձրաբերձ լերան պէս, աւելի մօ՛տ կ'ըլլայ Աստուծոյ: Զգացի հո՞ն ալ դարերուն անցնիլը լուռ ու տրտմաւ գին:

Տիեզերքի մեծ ԵՍին գաղափարը ինքնին բաւեց որ անշքքանայ էրճիասը: Հոգիին համար կը պղտիկնան, կը փոքրանան աշխարհի մեծագոյն բարձրութիւնները: Հոգիին համար չէ՞ն բաւեր էրճիասն ու իր ալեփառ կատարները: Ատով մէկտեղ, շնորհակալ եմ քեզի, ով լեռ, որ իմ մանկութեան յիշատակը վերարժարծեցիր: Քու վերև վերացած հոգիով, անգամ մըն ալ տեսայ զիս, տժգոյն պատանի, որ տասնեակ տարիներ առաջ կ'անցնէի շատ հեռուէն, կը քալէի անգիտակ ու կը գնայի որոնելու իմ բաղբը, անմտերիմ ու անտքիկ օտարութեան մէջ:

* * *

Աչքերս աղօտացած աւելի, յաջորդ օրը վերջալոյսին կը հասնիմ կեսարիա: Գարնան մշուշ մը թեթև, աղօտ ու կիսաթափանց, իր ներքև կը ծածկէ դալարներու ետին պահուած քաղաքը: Թուլօրէն չորս կողմս կը նայիմ: Գրեթէ մէկը չեմ տեսներ, լուսնկայէն զատ, որ սկսած է բարձրանալ տժգոյն ու հեւացող լոյս մը սփռելով էրճիասի կատարն ի վար:

Իզմիր, 21 Յունիս 1905.



Ի

Է Ր Ճ Ի Ա Ս Է Ն Ա Ն Դ Ի Ն

(Ե Ն Ղ Ո Ւ Մ Մ Ը)



անի մը ամիսներ կը բաժնեն զիս այն ուղեւորութեանս վախճանէն, մանաւանդ այն օրէն երբ տպաւորութիւններուս առաջին մասը կ'ստորագրէի: Դէպքերու անհուն շղթայ մը կը լեռնանայ էրճիասին և հոգիիս միջև: Յօդուածս ընդմիջուեցաւ բաղդին անակընկալ մէկ հոսանքովը, որ զիս հելլէն ու հոփմէական հնութիւններու մօտ, դէպի Սպարթա կը մղէր: Ու թերևս պէտքը չտեսնէի այս շեղումը ընելու եթէ ականջիս հանդիպած չըլլային Չիֆթէ Սարաֆի բամբ ու որոտագիլ նկարերգութիւնները գեամադամբաններու յաւիտենական քաղաքէն: Բաղդատութեան եզրը աւելի դիւրին կը գտնեմ հիմայ: Թափափիկ Հարօլտը կարգացած էի արդէն՝ անմտունջ հիացումով մը օծուած էր հոգիս, հին օրերու մէջ Հոփմի ամիսիթատը և Ովկիանը իրարու կապող Տիբերին վիրաւորի միմունջներէն: Չիֆթէ Սարաֆի տողերը աւելի հասկընալի էին, արեւելքի յատուկ թռչուններու երգին պէս, որոնց խորը ընդերկրային սարսուռներու ձայնը չիկայ պահուած, քանի որ Հարօլտ դիւային է:

Ըսի թէ բաղդատութեան եզրը աւելի դիւրին կը գտնեմ հիմայ: Իտալական հնութիւնները շատ երկրորդական, երրորդական են պիտի յանդգնիմ ըսելու այս փառաւոր երկրին վրայ ցիրուցան անցեալի բեկորներուն քով: Քօլօսէոմը կ'արժէ ինքնին իբր հանգոյցն ու հանգրուանը մեռած դարերու: Սակայն իրար գրկող եօթը բլրակները չեն կրնար ունենալ այն կերպ մը ահարկու վսեմութիւնը՝ որ յատուկ է մեր երկրին հազուագիւտ ու անզուգական հնութիւններուն: Համոզելու համար ըսածիս պէտք չունիմ թափառելու մինչև Նինուէ ու Բաբելոն, ուր կաւաշէն հսկաներ անթարթ բիբե-րով կը դիտեն անծիր անապատները իրենց գիշերներու խոփիչ լոռութեամբ, ոչ ալ գալու մինչև Եփեսոս, ուր արտեմական տաճարին բոյրերը կ'անցնին դեռ մաածումներու աշխարհիգ վերեւէն: Կը բաւէ երթալ Սպարթա, բարձրանալ մէկ քանի ժամ Աղլասընի ուղղածիգ գագաթը, դեռ արշալոյսը նոր

ծնած, ու հորիզոնին եզրերը՝ ոսկեղօծ: Ատանկ բարձունք չէի երազած երբէք. անոր չէի՝ հանդիպած ու գուցէ չի հանդիպիմ՝ ալ, մինչև այն օրը ուր կեանքը պիտի փակէ իր աչքերը ուրիշ լայն ու յաւիտենական հորիզոնի մը վրայ բանալու համար զանոնք:

Աղլասըն ալ հրաբղխային լեռ մըն է, հնչուն, սպիտակ ու միակտուր քարի անհուն զանգուած մը: Մէկ կողմին վրայ հիանալի լճակ մը իր բոյնը շինած է, միւս ամեն կողմերը լերկ ու անդալարի:

Առանց ետիդ նայելու՝ քայելու ես վեր, գլխու պտոյտ չունենալու համար: Անգամ մը գազաթը հասած՝ ալ ճամբայ մը չիկայ քեզ վար տանելու համար:

Դիտէ՛:

Խաղաղիկ տնակիս մէջ վառարանին ճարճատուն կրակին բոցերը կը տեմնեմ հեռուէն, բայց կարծես թէ հոն եմ տակաւին:

Այս սարսուռները կեանքիս մէջէն կ'անցնին ու անոր հետ կը քայլեն: Շեշտակի վարը դիտէ դեռ չորս կողմի չի նայած: Գահավէժ անդունդ մը, որ կանգ կ'առնէ, քիչ մը ծոկով աւելի մեղմօրէն գահավիժելու համար: Այդ ծոած կորուժեան վրայ բոլորաձև երկրորդ փոս մը կայ տակաւին մութով լեցուն: Լոյսը կը լեցուի հեղուկի պէս ու խաւարին դուրս հոսիլը կը կարծես տեմնել: Այդ փոսին շուրջը բարակ, սպիտակ ատամնաշարներ: Հսկայի կմախքներ, կղակնին հողէն դուրս ինկած:

Փոսին յատակը կանոնաւորութեան մը խորունկնալը կ'ընդնշմարուի, քանի լոյսը կը հոսի լեռներէն վար: Հին Սաղալասոսի հոշակաւոր թատրոնը Փոքր Ասիոյ Քօլօսէոնն էր:

Հոովմինը տեսած չեմ, այլ երազած: Ինծի այնպէս կուգայ թէ Աղլասընինն ալ չի տեսայ, այլ երազեցի: Նայուածքս անորոշ ու աղօտ էր ու հագիւ կրնամ յիշել հիմա այդ անդունդներուն շուրջ փոռող դաշտերուն դալարագեղ աղուորութիւնը: Դիմացը մշուշին մէջ լեռներու անհատնում շղթաներ կան կծկուած, դէմ առ դէմ, գիրկ գրկի, ամենքն ալ Ատալիայի տափակ լեռները: Ու անոնցմէ անդին հեացող իր կապոյտով կը տարածուի Միջերկրականը, երեք ցամաքներու կուրծքը բարախեցնող ծովերու այդ հսկան:

Արշալոյսի շողերուն տակ հետզհետէ երեւան կուգան Սաղալասոսի աւերակները, մեծ մասը հողին տակ պառկած, մոռացումի մագնիսական քունին ենթակայ: Բնակարաններէ աւելի շիրիմներ կան, հսկայական զանգուածներ, որոնց մէջ պառկողները ասպետական դարերու կը պատկանէին: Ու մտածել թէ տակաւին կոյս են այդ աւերակները, խաղաղիկ ու լքուած, իրենց յաւերժական լուրթեան մէջ:

Այդ իսկ է իրենց գերագոյն հմայքը:

Ոչ Քօլօսէոնը, ոչ Պոմպէին և ոչ իսկ գետնադամբանները կրնան ունենալ մեր Պալմիրային, մեր Եփեսոսին, մեր Նիւնուէին ու մանաւանդ Սաղալասոսին յատուկ սարսուռները: Այս վերջինը կը շեշտեմ հիմա, երբ կը մտաբերեմ այն արշալոյսը Աղլասընի ցից կատարին վրայ, ոտքերուս տակ պեղուած անդունդը և ամփիթատրոնը որ վարը, հեռուն, կը խորունկնար յիշատակներու գերեզմանին պէս:

Կոյս աւերակներ: Արագիլն անգամ մոռցած է զիրենք և ալ չի գար փաթթել իր խոռահիւս բոյնը կիսաբեկ մարմարի սիւներուն վրայ: Ու քանի վար կը գահավիժին քայլերս, Վսեմին շունչը այնչափ կը զարնէ ճակտիս, վտակի մը լալկան մրմունջը իրեն կը կանչէ զիս, քովը կ'երթամ և իր մեխակաբոյր ու սառնուտ ջուրերուն մէջ կը լուանամ ճակատս, կը դովացնեմ զիս, երբ ջուրերը կ'երթան վար զարնուելով խիճերուն ու խառնելով իրենց մահերգը ծերուկ սօսիի մը մէջէն սուլելով անցնող գեփիւռին շեշտերուն. « վտակ, հովիկ » կը մտածեմ, միայն անոնք են, միայն անոնք, որ կը յիշեն, որ չեն մոռցած մեռած դարերը...

Էրնիաս ու Տրդաւս Եպիսկոպոս Պալեան

Պիտի ներէ ինծի անշուշտ, երբ այս տողերը հանդիպին իր նայուածքին, պիտի ներէ, որ էրճիասէն ու Աղլասընէն վերջի վերապահեցի իր անունը. մարդկային անմահները բնութեան անմահներուն տեղի կուտան ու նոր դարերը շատ գէշ գործ մը ըրին սուրբերուն սեռը ջնջելով: Ինչ բարի էին հին ժամանակները, որ շատ մը իրապէս արժանաւորներուն հետ, հաւատալով՝ մեզի կտակեցին՝ քառասուն տարի սիւնի մը

16-86846

վրայ կեցող կամ շատ մը խիճի կտորներ կլլող մարդոց անունները իբր սուրբ ու սրբակեաց:

Տրդատ եպիսկոպոս Պալեանի համար շատ դիւրին գործ մը պիտի ըլլար նոխանձելի մակդիր մըն ալ իրեն համար ապահովելը այն դարերուն մէջ: Այսօր շատ դժուարահաճ են սերունդները: Իբր շինող եպիսկոպոս՝ Յովակիմեան Սրբազանի զոյգը եղած է Կեսարիոյ Առաջնորդը. սա տարբերութեամբ միայն՝ որ հասութեան կայունացնելէ աւելի դժուարոց շինած է և այն ալ Մէկ ԴՊՐՈՅ: Գուցէ գայթակղին ոմանք քիչ մը թեթեւութեամբ սուրբ բառը յիշելու համար, ուստի բացատրութիւն մը աւելորդ պիտի չըլլար: Հրաշք մը գործած է Տրդատ Պալեան, իրական հրաշք մը այս իրականութեանց դարուն մէջ. երբ վարդապետ տակաւին, գրպանին մէջ տանուար դահեկան ունենալով իբր դրամագլուխ, կուրծքին տակ սիրտ մը արի ու անվհատ, ու աչքերուն մէջ նաշուածք մը, որ դրապաշտիկ քաղաքի մը նեղ սահմաններէն հեռուն մտատիպարին կը սեւեռի, ասոնք ունենալով ձեռնարկած է հիմնարկութեան Ս. Կարապետի վանքին հսկայական վարժարանին, որ այսօր լրացած՝ բաց դռներով կ'սպասէ սերունդներու, որ պիտի գան անցնին իր նուիրական յարկին ներքեւէն:

Առաջնորդարանի բարապանը եռամտով վեցանկիւնի լապտերով մը առջիս ինկած կ'առաջնորդէ զիս Սրբազանին քով: Ովասիսի մը մօտէն անցնիլ ու վայրիկ մը կանգ չառնել զովանալու համար, անապատներու յիմար ուղեւորին գործը պիտի ըլլար:

Գիշերով կը տեսնեմ Կեսարիայի փողոցները, ոլորուն ու կորագիծ: Ուղիղ ճամբայ մը չի կայ բնաւ, տասնեակներով ուղիներ կը համրես, որոնք վայրկեան առաջ իրարմէ կը փախչին, քնացող տուներու ցանցը հիւսելով: Լապտերին լոյսը կը խաղայ ու քմահաճ ստուերներով պատկերներ կը յօրինէ համակ քարէ շէնքերուն վրայ: Կը հասնինք երկաթէ դրան առջև հաստ երկաթէ դամբրով, քարէ ամրակուռ ու ահագին պատի մը մէջ հանգչած: Զարմանքով կը նայիմ ու կը կարծեմ՝ տեսնել այդ քարի ու երկաթի շէնքերուն մէջ այդ քաղաքի բնակչութեան նկարագրին մէկ կողմը: Այդ նկարագիրը սնդիկի պէս շարժուն ալ է շատ անգամ, որ կլիմային համեմատ, միջավայրին համեմատ դիրք ու ծաւալ կը փոխէ:

Տարօրինակ հանելուկ, որուն առջև ժողովուրդներու կենսագիրները ափիբերան կը մնան շատ անգամ: Եւ ըսեմ պարզապէս թէ մեծագոյն ընկերաբանը պիտի շուարէր Կեսարացիի մը նկարագրին ուսումնասիրութեան հանդէպ:

Քարէ սանդուխներէն վեր, որոնց քով եկեղեցիին մուտք լոռութիւնը կը քնանայ, մեծ սրահին մէջ կը հանդիպիմ իրեն: Նահապետի փառաւոր մօրուք մը ալեխառն, պէխի չափ հաստ ու կարծես բարկացոտ յօնքեր, խոշոր, սև ու խրոխտ աչքեր, պարթևական հասակ:

Տրդատ եպիսկոպոս Պալեան:

Առաջին տեսնելս էր. կեանքի առաջին հանդիպում մը ու վարանումով կը կծկուիմ գրեթէ մտածելով թէ այդ բարկացոտ յօնքերով մարդուն հետ զուտ ձևակերպութեան մէկ տեսակցութիւն պիտի բաւէր, միայն տասը բոլակ: Այդ տասը բոլակները անցան և արդէն նշմարած էի իր անպատում անուշութեամբ լեցուն ժպիտը որ կ'ողողէր նայուածքը ու հմայուած էի անկէ: Ապառաժը հալած էր և ալ մնացի հոն:

Ժամերով խօսեցանք ու հիացումով ընկճուած, տեսայ թէ մտքիս մէջ կը բարձրանար ան, իտէպը հողին մէջ այդ մարդը, որուն թոխներուն բազդատամբ՝ իմս՝ թիթեռի մը մոլորուն թափառումն էր դէպի յաւիտենական արեգակը: Է՛հ, տեսայ վայրկեանէ վայրկեան պղտիկնալը իմ ԵՍԻս, այդ խրոխտ նաւուղիղին հանդէպ, որ կուրծք տուած էր կեանքի անհատնում փոթորիկներուն: Իր ժպիտը այնչափ անկեղծ ու վճիտ, յաղթական հով մը ունէր երբ կը թռչտէր իր սիրական երազին վերև:

Իմ դպրոցս, կ'ըսէր ու կը ժպտէր, դպրոցը եղած էր իր առաջնորդական 14 տարիներուն բովանդակ երազը:

Կեսարիոյ պէս տեղ մը գիտցած էր ամփոփել իր հուժկու ձեռքին ներքև այլազան կարծիքներ ու գաղափարներ, անոնց տուած էր իր փափաքած ուղղութիւնը, կրօնական ըլլալը չէ՛ր արգիլած, առևտուրի մարդու խիզախ ու խոհեմ միանգամայն սլացքը ու վերջապէս յաջողած էր լրացնել դպրոցը, որ ժառանգաւորաց Վարժարան համեստ անունին ներքև կոչուած է մտաւոր լուսաւորութեան կեդրոն մը հանդիսանալ: 18 դահեկանով սկսած է գործի ըսի, հազարաւոր լիրաներ ծախսած է սակայն և աշխարհի ամեն կողմերէն Կեսարացիներ վճարած են այդ գումարները, ստորագծեցի Կեսարացի բառը, որովհետև

կեսարացիին իր դրամը հարիւրին հարիւրով կը զիջանի հեռացընել զրպանէն:

Մատիտով արագ արագ գծեց դպրոցին յատակածեւր: Գարաւոր վանքի մը պատմական հողերուն ու լեւրան վրայ մագլցող շէնք մը, ուր ուսանող մակտին հողի աչքերով պիտի անցնի հին դարերուն վերեւէն մինչև Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ այդ վայրերուն վրայ ճեմեց և ստացաւ իր պատանեկան կըթութիւնը:

« Գործս լրացած չե՛մ նկատեր », կ'ըսէր յուզումէն կարմրած հիմա, դպրոցիս դրամագլուխն ալ պիտի ապահովեմ:

Իր խօսքին տէրն է Տրդատ Եպիսկոպոս: Վստահ եմ թէ պիտի ունենայ մնայուն դրամագլուխն ալ: Կը բաւէ որ աչքերը աշխարհի ուզած կողմը դարձնէ: Ամենէն առաջ կիւլպէնկեանները, այդ բաղմամբ ու նահապետական գերդաստանի զաւակները, « որոնց վրայէն արեւը մարը չի՛ մտներ », ու յետոյ էսաեաններ, Մանուկեաններ, Էջնաեաններ և ուրիշ բիւր կեսարիոյ արժանաւոր զաւակները, որ պիտի պատասխանեն իր կոչին:

Այդ դրամագլուխին առաջին գումարը վիպական դէպք մը պատրաստած է արդէն: Խօսքը Պալեան Սրբազանի կը թողում,

« Ս. կարապետի վանքին գոյքերուն ցուցակը աչքէ անցուցած ատեն շարունակ կը տեսնէի փոքրիկ քար մը, որուն հիները հարիւր փարա արժէք նշանակեր են: Աննշան երեւոյթ մը ունէր քարը, կանանչ ասլակիի կտորի մը պէս: Ասկէ քանի մը ամիս առաջ Մարթեան կարապետ Աղան, — ագնիւ կեսարացի մը զոր ճանչնալու բաղքը ունեցայ Սրբազանին քով — կանչեցի և ըսի որ առ սա քարը և ինծի մատանի մը շինել տուր: Տարաւ ոսկերիչին, կէս ժամ վերջը հեւարով, շունչը կտրած Առաջնորդարան վազեց.

« Աստուած օգնական, Սրբազան, աս քարը յիսուն ոսկի արժէք ունի եղեր:

« Ի՞նչ... յիսուն ոսկի՞ »:

« Այո՛, Սրբազան... ոսկերիչը պատրաստ է յիսուն ոսկի վճարելու, եթէ ծախել հաճիս »:

« Մարթեանի խօսքը բերանն էր տակաւին, երբ այդ ոսկերիչը հեւարով ներս մտաւ:

« — Աստուած օգնական, Սրբազան, հիմա Մարթեանը քար մը բերաւ, ես ալ պաշտօնատարի մը համար ատանկ քար

մը ծախու առնել կ'ուզէի. եթէ կարելի է յիսուն ոսկին տամ և այդ քարը ինծի շնորհք ըրէ:

« Հասկցայ թէ արժէքաւոր բան մըն է եղեր, ուստի բուն արժէքը հասկնալու դիտումով հարիւր լիրա պահանջեցի, ոսկերիչը կամաց կամաց մինչև հարիւր ելաւ: »

Ձերկարելու համար ըսեմ անմիջապէս թէ փարիզ էջնաեանի կը գրէ Տրդատ Սրբազան, նկարագրելով քարին խոշորութիւնը, և պատասխան կ'ստանայ թէ « Ջուրին յստակութեան համեմատ չորս հարիւրէն մինչև չորս հազար լիրա արժէք ունի այդ խոշորութեամբ զնռախսը »:

Անյիշատակ ժամանակներէ ի վեր հարիւր փարա գնահատուած այդ քարը պատուական զմրուխտ մըն է եղեր: Բախտը ասանկ կ'ըլլայ:

Մեր կարգին սակայն պիտի համարձակինք խնդրելու որ այդ քարը չի ծախուէր: Թող այդ զմրուխտը մնայ ու տեւականապէս մնայ իբր հիմը այն սքանչելի հիմնարկութեան, զոր ծրագրային վիճակէ մը իրականութեան հասցուցած է Պալեան Սրբազան:

Խօսակցութիւնը կ'երկարի ու չենք զգար ժամանակին թռչիլը: Կը խօսինք Մելքիսեդեկ Սրբազանի վրայ, որուն բարեկամ ու հիացող եղած է միշտ կեսարիոյ Հովիւր. կը խօսինք ու հիմա, ամիսներ վերջ երբ այդ գիշերին յիշատակները կ'երգեն մտքիս մէջ, կը մտածեմ տխրագին անվետարար մեկնողին, որ գնաց հանգչեցաւ վերջնապէս և որուն բաղարձ մեկնողին, որ գնաց հանգչեցաւ վերջնապէս և որուն հոգեհանգիստը կատարելու համար. նոյն իսկ երկու կարողիկոսներէ վերջը՝ դեռ կ'սպասէ կեդր. վարչութիւնը:

* *

Յաջորդ օրը Սուլթան Խանն եմ: Ընդարձակ դաշտավայրի մը կեդրոնը բերդանման և աւերակ շէնք մըն է անբնակ, որուն քովերը գաղթականի քանի մը հիւղակիներ եկած են կծկուիլ: Ճենովական ճարտարապետութիւն, Սելճուկներէն սրբազրուած, ու ընդարձակուած աւելի: Հողերու տափակութեան վրայ քարացած վակներեան երգ մը կարծես:

Ճամբան ձիւներուն մէջէն կը սողոսկի այլ ևս: Մարտ ու ապրիլ ծաղիկներու չե՛ն հանդիպիր այս կողմերը: Տաժանելի ճամբան Շարգլայէն անդին է տակաւին: Ձիւներու մէջէն, որոնք հետզհետէ կը խտանան կը բարձրանան ու քայլերուդ

տակ երգել կ'սկսին, պիտի քալես: Կառքը կրնայ վար զլորիլ: Ձիւններուն մէջ տապալակելով մինակդ դէպի վեր պիտի ելլես: Ամեն կողմ թաղուած անտառներ, ճեփ ճերմակ, ամեն կողմ ճիւղալիք անդունդներ, ու մտածել թէ սա թուշուները կրնան մէկ շունչով կտրել անցնիլ այդ վայրենի ու ամենի ամայութիւնները ու գնալ երգիքի մը տակ իրենց տաքուկ բոյնը գտնել:

Քալէ՛ հողի զաւակ. տակաւին օրեր ունիս համբելու, մայիսի աղուոր օրեր, ծաղկաւէտ ու ծիծաղուն դալարիներու ընդմէջէն: Մաքրէ հոգիիդ սև տրամութիւնները այդ ճիւղներու անբիծ սպիտակութեան մէջ, զովացուր ճակատդ ու թող որ սառոյցէ բարձրիկ մը վրայ հանգչի՝ ան ու միշտ յառաջ քալէ:

* *

Պղտոր ու հիմակ աւելի ուռած, զայրացած Ալիսը կ'անցնիմ երրորդ անգամ: Կառքը կը սուրայ հովի պէս: Սվազ եմ: Փողոցներէն անցնողներ հետաքրքիր կը դիտեն նորեկը: Ես յոգնած ուղեւոր՝ կանգ կ'առնում պանդոկին առջեւ ու աչքերս գոցի պէս՝ վերի յարկը կը նետուիմ: Սենեակը՝ հին բարեկամ՝ դուռը կը բանայ ինքնին: Տասը տարի առաջ՝ գիշեր մը՝ այդ սենեակին մէջ տղու պէս լացած էի:

Այս անգամ աղօթեցի:

Յ Հոկտ. 1905 Իզմիր.

Է Ր Ճ Ի Ա Ս Է Ն Ա Ն Գ Ի Ն

Ճիպուղի 11 Հոկտ. 1904

Պիտի հաւատայի այլ ևս, թէ արդէն ան ձեռք աշխարհին, իտէական երազներու անդրաշխարհին առած է կեանքս իր վերջին սլացքը, եթէ բեւեռային աստղը, այս երկինքներէն անդին չի շողար ամեն իրիկուն, կապելով զիս անցեալին ու յիշատակին և ուռեցնելով կուրծքս, կարօտով ու տառապանքով:

Խիզախ վերացումի մը պէտքը ունիմ այս պահուս, երբ զրիչս կը սուրայ սլացիկ մտածումներուս ետեւէն: Չորս կողմս նայելով ափ մը կարմիր ծով, պատաս մը Հնդիկ ովկիան կը

նշմարեմ: Աւելի վեր — Բուրգերը, աւելի բարձր Աքրոբօլը, այլ ևս անոնցմէ հեռու սլանալու պէտք ունիմ հանդիպելու համար յաւերժական Էրճիասին հրաբխային դաշտերէ դուրս նետուած տիտանի բարձունքին, որ կը հեգնէ իր շուրջը անցնող պատմութիւնն ու դարերը:

Ու կը տեսնեմ զայն հիմայ, այս վայրկեանին կը տեսնեմ ալեւոր զագաթը, իր լայն, վիթխարի զանգուածը, կ'զգամ աստուածաղուրկ Ողիմպոսներու յատուկ մենաւորի իր վիշտը, ու կը կարծեմ թէ կառքը կը սահի հիմա ալ ան ստորոտներէն, զիս տանելով երկամեսայ պանդխտութեան, կը սահի վերագարձին, կարծես աւելի դանդաղ, քանի որ մէջի թափառականը հոգիով հասած է արդէն իր սիրական աղուոր փիերը:

Ըսած եմ արդէն, թէ Սվազ անձանօթ չէր ինձի: Տասըմէկ տարի առաջ ճամբորդի գիշերուան մը յիշատակը ունէի անկէ: Մանուկ երեւակայութեանս մէջ գեղեցիկ փողոցներու, հսկայ շէնքերու տպաւորութիւնը չէի՛ն ջնջած ոչ Մօտա Պուռնիի ապարանքները, ոչ ալ Իզմիրի քարափին գեղատեսիլ բնակարանները: Հիմա կը հասկնամ հոգեբանական երեւոյթի բնակարանները: Մանուկութեանդ՝ բլրակներու վրայ մենաւոր մը գաղտնիքը: Մանկութեանդ՝ բլրակներու վրայ մենաւոր ծլող ծաղիկ մը քով՝ կ'երգէ հոգիդ: Ստեններ կ'անցնին, կը շրջիս նոր աշխարհներ, հրաշագեղ բուրաստաններու միջեւ կը քալես, սակայն շատ անգամ այն հին ծաղիկն է, որ մարած կը քալես, սակայն շատ անգամ այն հին ծաղիկն էր իրաժպիտով մը կը նայի քեզի ու կը հաւատաս թէ ան էր իրական աղուորը: Ու այդ տպաւորութեան տակ գացի Սվազ: Ձիւները դեռ վերցած չէի՛ն լեռներէն ու դաշտերուն վրայ մսկուտ ծիծառներու ճողոզիւնը չէ՛ր հնչած տակաւին: Մտած օրէս ուղեցի սրահել հին տպաւորութիւնը, այնչափ սիրելի են նոյն իսկ հին խաբկանքները, որ դիւրաւ չես ուղեր բաժնուիլ անոնցմէ: Մասնաւոր ճիգ ու ջանք չես ըներ այդ հին տպաւորութիւնները պահելու համար, կը բաւէ որ գիշերները երբեմն յաւիտենապէս անփոփոխ վերը նայիս, ուր մանկութեան օրերուդ մտերիմ աստղերը կը ժպտին քեզի արցունքով: Ու ես, ապրելու համար հինով, վերարծարծումը զգալու համար ես, անցեալին, կը բաւէր որ փակէի աչքերս մէկ վայրկեան, ու անցեալին, կը բաւէր որ փակէի աչքերս մէկ վայրկեան, ու հոգիիս հին անդունդներուն մէջ սուզէի: Արտաքին աշխարհի փոթորիկն ու ալեկոծումները չէ՛ն հասնիր այդ հեռաւոր խոփութիւնն ու ալեկոծումները չէ՛ն հասնիր այդ հեռաւոր խոփութեանց ուր պաշտելի Մենութիւնը իր մշուշով կը պատէ սրտի ծալքերը:

Ու երկարեցի ձեռքերս զէպի իտէականը, անկեղծ ու մանկային թոխչով մէկ անգամ ալ անձնատուր եղայ անոր: Հիմա որ ամեն նուիրական յիշատակ թաղած եմ կամ կը փորձեմ թաղել, չեմ զղջար այդ անվերապահ թոխչիս համար: Տեսական զրախտին երա՛գն ալ երկի՛նք մը կ'արժէ ինքնին:

Անուն մը պիտի չի տամ այդ սլացիկ իտէալին: Ըսեմ միայն թէ որոշուած է եղեր կարծես, որ կեանքի զոյգ թափառիկներ օրին մէկը հանդիպին իրարու, ճակատագրուած է եղեր որ նուիրական հայրենեաց առջև բազին կանգնեն այդ երկուքը, երկու ամի՛ս միայն և այդ բազինէն՝ բաժանումի և տրամութեան ամպերը՝ կրտսերագոյնին իյնան բաժին:

* * *

Ամեն բանէ առաջ թերեւս միջավայրն է որ կը կազմէ բնակչութեան մը նկարագրին ցայտուն մասերը, ու ժառանգականութիւնը հաւատարմօրէն կը ձուլէ զանոնք դարերու ընդմէջէն: Անոր համար նկարագրել պիտի փորձեմ նախ մայր բնութիւնը ու յետոյ անոր հարագատ ղաւակները: Սվազ՝ լեռներու շղթաներով կազմուած բուրակի մը կեդրոնը կ'ընկողմանի: Իր մօտիկէն կը սուրայ տղամայոյգ Ալիսը, որ ակունքէն մինչև Սև Ծով հազի՛ւ քանի մը դաշտեր կը գտնէ հանգիստ առնելու համար իր յորձանուտ վայրէջքէն: Իր ջրերը կարմիր ու պղտոր են շարունակ և աւազներու մէջէն սահած ատեններն անգամ կրանիթի ու որձաքարի խորխորատներէն անցած ժամանակնուն հոնդիւնները կը պահեն դեռ կարծես: Այդ գետը տարօրինակ ու ահարկու է: Ան չունի՛ բարձրաւանդակ լեռնազաշտի իր միւս ընկերներուն վսեմ ու խորհրդաւոր գնացքին խաղաղութիւնը, մինչև ծովին անհուն անդորը՝ բիւր անգամ կը փշրուի, կը բզբտուի, կը գալարի ու միշտ կը մոնչէ: Վրայէն ձգուած երեք կամուրջ տեսայ: Առաջինին քով հիները մատակ առիւծի մը սպիտակ մարմարէ արձանը գետեղած են, առանց արձանագրի, մանրանկար Սփինքսի մը պէս, որ անդունդներու խուլ մոխիչէն համրացած ըլլալ կը թուի: Երկրորդը էրճիասի ստորտը երկու բլրակներու իրար երկարած մտերմի ձեռներուն կը նմանի, որ կը սեղմեն իրար խաբկանքներու վիհին վերեւը: Երրորդը Սվազի քով, ամենէն յաղթն ու հոյակապը սակայն, իր հոյակապ շղթան ձգած է

մէկ ափունքէն միւսը, որուն ներքև իրարու վրայ գալարելով սուրացող ջուրեր՝ սոսկումներու անծանօթ վայնասուն մը կը խորդան:

Դեռ չի տեսած այն ատեն ոչ փրփրաղէզ կոհակները Միջերկրականին, ու չ'զգացած լայն ու խոր դիւթութիւնը Հնդիկ Ովկիանին, քանի անգամ կեցայ վերջին կամուրջին վրայ ու պաշտանքով ունկնդրեցի գետին արհաւրալից երգերուն: Դէպի պաշտելի հայրենիքս տանող ճամբան, ոլոր մոլոր գծերով, բլուրներէն անդին՝ լեռներու մէջ անհետ կ'ըլլար: Ի զուր փորձեցի ետ կանչել մտերմութենէ աւելի արագ սահող տասնամէկ տարիները: Զուր բաղձացի հանդիպիլ երագուն պատանեկին որ օր մը անցած էր այդ նոյն ուղիներէն յաւերժապէս երագուն իր նայուածքը սեւեռած դէպի մշշապատ ափունքներ: Տասնամէկ տարիներ վերջ հոն էի նորէն ու չի ճանչցայ ես զիս, այնչափ փոխուած էի:

Հիմակ կը ցաւիմ սրտանց, որ քանի մը օրուան ճամբով միայն հեռու, անգամ մը գոնէ չի գացի Մալաթիա, ծնրադիր արտասուելու ծնողքիս անշուք գերեզմանին վրան: Խեղճ, լքուած շիրիմներ...: Շատ մը սէրեր, շուշանի պէս ճերմակ, մտերմութիւններ՝ մայիսին նման վարդագեղ, պաշտումներ՝ հատումներով լեցուն, եկան ծիլի, ծաղկիլի ու ծիծաղիլ անտիական անբիծ բաղձանքներով ողբերուած իմ սրտին մէջ, ու յաջորդաբար զգացի որ իմ մէջ ծալլեցին ցաւերով դալկահար թերթերնին, այլ ձեր յիշատակը իր սիրելի ստուերը չի բաժնեց երբէք իմ կեանքէն: Անդունդներով բաժնուած ձեզմէ, ովկիանին մոխիչը կը մարէ իմ տկար հառաչիս շեշտը ու մեռնւ երագս, թէ մէկ օր ձեր քով պիտի գայի հանգչիլ:

* * *

Դէպի արեւելք հորիզոնը կը կտրեն Շիրոյի յաւերժապէս ձիւնապատ ու Սարըչիչէկի ծաղկաւետ լեռները: Դէպի հիւսիս Ս. Նշանի դարաւոր վանքին պատկառելի ուրուանկարը կը կանգնի: Իզմիրը շրջապատող լեռներու կատարէն աւելի բարձր է Սվազի դաշտը, հետեւաբար միշտ աւելի ցուրտ: Տարօրինակ հակադրութիւն: Մարդ որչափ աւելի վեր, զրախտին մօտ ելլէ այնչափ աւելի ցուրտին տակ կը սարսույ հոգին: Ատեն մը կը մտածէի միամտօրէն թէ արդեօք որչա՛փ կը մսին հրեշտակները: Երջանի՛կ օրեր...

Վանքի բլրակին ստորոտէն հեղեղատ մը կայ, որ երկուքի կ'երթայ բաժնել քաղաքը, այդ ձորին ջուրն է, զոր կը տօնէ հայկ. եկեղեցին որոշուած օր մը երգելով:

« Այտո՛ր Աերասխայս եղև երկրոյ Յորդանան »:

Ու Սվազի Յորդանանը, տարին մի քանի անգամ ձիւները հալած միջոցին կ'ուռի, կը կատարի, կը փրփրի ու կ'երթայ խառնուել անմեռ ու յարաշարժ Ալիսին:

Գաշտին պերճափառ գեղեցկութիւնը զիտելու համար երկու տեղ ընտրած էի: Քահանայապետի թաղին բարձունքը ու Ս. Նշանի վանքը: Այդ երկու կէտերէն դիտուած՝ կարելի է նըշմարել իրարու մօտ բոյն դրած անհամար հիւղակներու հիանալի կայանքը ու տեսարանը ու վայրկեանի մը մէջ դարեր ապրիլ: Քահանայապետի թաղին բարձունքը պատմական է իբր օրօրանը Սեբաստիոյ մեծագոյն զաւկին, Մխիթարի, մէկ զաւակ, որ կը բաւէ իր ծննդավայրի փառքին: Ու Ս. Նշան իբր նշարանը թափառիկ Պետրոս Գետադարձին ու Անանիա Կաթմուղիկոսին՝ իբր հանգստարանը Ս. Թէոդորոս Էկային ու Գոհարինեան կուսանաց: Մեծ Մխիթարէն վերջ, իբր իրենց ցեղին պատուաբեր տաղանդներ, աչազուրկ կէօզիւրեանը, Թորգոմեան պատուելին ու Տօթթ. Տաղաւարեանը միայն կը ճանչնամ

*
* *

Ս. ՆՇԱՆ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԱՐԻՏԱՍ. ԹԱՆԱԻՂՆԵԱՆ

Էրճիասը բաղդատած էի երկրորդ յօդուածիս մէջ Տրդատ Եպիսկոպոս Պալեանի հետ, իբր զոյգ հսկաներ, ու ՚ա սնանիշ ըրած հոգեկան արի սլացքը, որով կեսարիոյ հովիւր աւելի բարձր յաջողած է սաւառնիլ լեռներու հսկայէն:

Պետրոս Սրբազանի շուրջ էրճիաս մը գոյութիւն չունի ու չէի՝ կրնար զուգակշիռ մը ընել Ալիսի փրփրոտ ու անհանդարտ գնացքին և այդ խնկելի ծերունիին յիսուհիին գ տարիներու առաջնորդութեան ընթացքին միջև, որովհետև հանդարտ, մտածկոտ, ինք իր վրայ ամփոփուած, գրէթէ հին դարերու անապատականներու անցուցած կեանքին պէս կեանք մը եղած է իբր, առանց աչքի զարնող ելևէջներու, առանց յորձանքի և զուրկ խիզախ վերացումներէ, որոնցմէ աշխարհի անմահութիւնը կը ծնանի:

Պիտի յառաջանամ ըսելու թէ հեղինակ ըլլալէ աւելի

նախընտրած է հետեւող մը ըլլալ, ու շինելէ աւելի՝ պահպանող: Պահպան հին սրբազան նշխարներու, հին սրբաշունչ աւանդութեանց, ու պիտի հասկնան զիս անոնք, որ ամէն օր հինէն բանի մը փլշիլը կ'զգան իրենց հոգիին մէջ:

Պալեան Եպիսկոպոսը տեսնողը՝ արիութեան և աննկուն ճախրանքի շունչին անցնիլը կ'զգայ իր հոգիէն ու կը հաւատայ մարդ էակին բարձրութեան: Պետրոս Սրբազանը տեսնողը՝ կը հաւատայ հաւաստին: Տարիքը իննսուն և ութը ըլլալու է հիմա ու յիսուն և հինգ տարի է, կէս դարէն աւելի, որ հովուած է իր ժողովուրդը: Կարճ, նիհար, բարի, անուշ աչքերով, մտախոհ ու զուարթ միանգամայն, թոչունի անբիծ հոգի մը, որ չէ՝ ձանձրացած իր վանդակէն: Ու մաղերը սև են սաթի պէս, թել մը ձերմակ չի կայ սպրդած մէջերնին, նորերու նախանձր գրգռելու աստիճան սև:

Ծնրադրեցի իր առջև մեկնած օրս: Չեռքերը գլխուս վրայ դրած « Պահպանիչ » մը ըսաւ. — « Երթաս բարով, ըսէ Սպարթալեանի, թէ Աստուած զրկեց քեզ իր միջոցով հոս, որբերուս և այրիներուս գործ հայթայթելու համար »: Ու զողացող շուրթներով երկու աչքերս համբուրեց: Այդ համբոյրին ու աղօթքին սարսուռը հետս մինչև գերեզման պիտի տանիմ:

Ճիպտադի, 11 Հոկտ. 1903

Մանուշի վերջին թիւերէն մէկուն մէջ՝ իր Սվազի գործակալին Սըմենակ Թորգոմեանի մահագոյժը կարդացի: Երեք ամիս առաջ ալ կինը մեռած էր:

Սենեակս քաշուեցայ, դալկահարիլ սկսած լուսանկարնին ձեռք առի և արտասուեցի դառնապէս:

Գրասեղանիս խոռոն ի խոռոն թղթերուն մէջ՝ ձեռքս անցաւ վերի գրուածը: Ճիշտ տարի մը առաջ սկսուած ու կիսատ թողուած: Կը յուսայի երբեմն թէ օր մը կարենամ լրացնել անկապ այլ տրտմագին յիշատակներուս այս շարքը: Կեանքի այդ էջերը դառն արցունքով կը փակեմ ահա, իմ սիրական բարեկամս:

Բաժնուելէ առաջ սակայն այդ անցեալէն՝ չեմ կրնար արգիլել թեւաբեկ հոգիի մը ճախրանքի վերջին փորձը դէպի այդ մօտաւոր այլ հեռասլաց յիշատակները:

Կը տեսնեմ վերաւոր այլ յուսալից բաժանումս վարժապետի կեանքէն՝ դէպի կեանքի դպրոցը: Կը սահին առջեւէս

գորգերու բիւր գոյներու առջեւ շուարած ու մտամոլոր տարիներս: Այնչափ վարժուած, սկսեք էի սիրել գորգերը — անմոռնչ համակերպողներ, որ կուգային փոռել ոտքերուն երբևէ: Աչքերուս մէջ շեշտակի դեռ կը նայի խրոխտ արծիւներու յատուկ իր նայուածքը, դրական աշխարհի ուսուցչապետիս, որը կրցաւ միայն ընկճել զիս, և զոր չուզեցի՝ չի կրցայ ջնջել յիշողութենէս:

Ու երբ գացի Էրճիասէն անդին, ծափածայն հիանալու արուեստի գեղահիւս հրաշակերտներուն վրայ, մատաղ ու անտիական գործաւորուհիներու շինած գորգերուն առջեւ իտէական բաղձանքի մը իրականացման գինովութիւնը լեցուց էութիւնս: Իսե՛ս, զոր ոգեւորեց ուսուցչապետս և որուն մարմին ու կեանք տուաւ Իզմիրի ազնուագոյն մի զաւակը, երկու տարիներ ամբողջ հատնումի կեանք մը վարելով իր սիրելիներէն հեռու: Այդ իտէալին արդիւնքն էին եօթը գորգաշինութեան յատկացեալ ընդարձակ շէնքերը որոնց լուսանկարները միայն մնացին կեանքի թափառականին քով:

Քանի անգամ միասին շրջեցանք քեզի հետ, սիրական բարեկամս, քանի՛ անգամ ամոքել փորձեցիր տրտամթախիծ ժամերս, անմոռանալի Սահակ Վարդապետ Օտապաշեանին և Չուգասարգեանին հետ: Ես նորէն, հոս եմ, չեմ կրնար հաւատալ թէ մեկնած ես աշխարհէն, կրնամ խաբել ինքզինքս երբեմն, չի մտածեցի՞ր ծերունի հայրդ, որ ամեն օր հողակոյտդ գրկել պիտի գայ կորաքամակ, մինչև քովիկդ տեղ մը տալդ, որ դադրի՛ արտասուելէ...

*
* *

« Մարդիկ հիւլէնէ՛ր են: Ամեն ոք իր շրջանը կը կատարէ աշխարհի վրայ », գրած էր մէկը անցեալ տարի:

Կը փափագէի սակայն որ բարձունքներու և անդունդներու նոր շրջան մը չի՛ բերեր ինձի ապագան, կը բաւե՛ն ինձի իմ անցեալինները լիովին, — անապատի այս օրերը թող յաջորդեն իրարու, ինչպէս մոռացումն ու մենութիւնը, յիշատակին ու մտերմութեան:



Ա Ղ Ո Ւ Ո Ր Ա Փ Ե Ր

(ՄՆԱՍ ԲԱՐՈՎԻ ՓՈՒՍԱՐԷՆ)

Բաժանումի վերջալոյսին մի հսկայ նաւ կը դողար, վերջին սոյլերը հնչած, Մութը կ'իջնէր բլուրներէն մօտակայ, Ու կը ջնջէր ալեակները մեղմայած. Եւ ուղեւորը կը դիտէր անխօսուկ Ազամանդները ծովափի մանեակին, Գարուններու յուշիկները խուսափուկ Որ կ'անցնէին հատիկ հատիկ, անձկագին: Կը մտածէր թէ « կը դառնամ ես մի օր, Երբ որ դառնան ծիծառները թափառիկ, Ու մայիսին՝ դալարագեղ ու աղուոր, Սիրուն ափեր, ինձ վերստին կը ժպտիք...: Նաւը քալեց, ուղեւորը զերդ արձան իր նայուածքը հոն սեւեռեց ընդերկար, Աստղեր դողդոջ՝ մշուշին մէջ մարեցան, Ու մենութիւնն՝ Անհունէն վար կը ծփար...»

*
* *

Պղտոր աչերն հանդիպեցան. օրէ օր նոր ափերու ու նոր բարձանց ձիւնապատ. Օր մ'Աքրոբօլն իր հմայքով դարաւոր Օր մ'ալ շքեղ անծայրածիր անապատ, Եկան ցնցել իր էութիւնն, ինք սակայն Միշտ որոնեց հի՛նը լռիկ դիտեց հոն, Ուր կը դիտեն զիրար ապշած ու անձայն Աղուոր Իզմիրն ու մանկամարդ Գորտէլիօն... Չեզ նայեցաւ վէս բուրգերու զագաթէն, Եւ սփինքսի՛ն մըմնջեց ցաւն իր սրտին,

Սակայն բաղդը՝ աւելի վէս իր ճակտէն,
Ըսաւ. «Քալէ՛ կարմիր Ծովէն ալ անդին...»

* * *

Անապատի Մայրն, անշշուկ, անալի,
Մոայլ Նեղոսը ցոլացուց իր պատկեր-
կ'այրէջ ու չէ՛ր հատներ սիրտը վշտալի
Աստուածային մորենի՛ին զերդ ընկեր:
Մոգեր, Որ էն, Մովսէս, Յիսուս հոն էին
Ստեղծողներ մեծ ցաւերու բաղձանաց
Վհուկ մոմեան, անմահութեան, անցեալին
Անխօս վկան յաւերժապէս լռակեաց,
Փորձեցին զո՛ւր մագնիսացնել իր հողին,
Ուղեւորը անցաւ անոնց ընդմէջէն,
Ուղեց դառնալ Տիանի վճիտ լճակին
Ուր դիցուհիք սիրոյ երգէ՛ր կը հնչեն:
Ազու՛ր ափեր որ Հոմերն իսկ յուզեցին,
Ուր գարուններ կը ծիծաղին վարդաբոյր,
Որ գիւթեցին մերթ Պայրընն ու Լամարդին
Ա՛խ, ալ չիս'տի՛ ժպտին քեզ հէ՛զ ուղեւոր...:

* * *

Կտրեց անցաւ կարմիր Ծովն ալ և Հնդիկ
Ովկիանի ափունքն ի վեր թափառկոտ.
Մոայլ, վհուկ Ափրիկէէն, հանդարտիկ
Կը սեւեռի իր անցեալին նուազկոտ...:

Մշուշին մէջ Հիմալայի վէս շղթան,
Հոգւոյն խորն ալ անդունդը կայ ովկիանին,
Օ՛հ, մի՛ հըպիք, ստուե՛րն է այն Մենութեան.
Թողէ՛ք զինքը երազոց մէջ անձկագին:

Կը յիշէ մերթ իր մանկութիւնն հրեշտակի
Հեզակարկաջ վտակներով օրօրուն,
Երբ սրտին մէջ կաթէր երկնից շեշտակի՛
Հաւատքն անբիծ ու միամի՛տ օրերուն:

Կը յիշէ դեռ պղտոր Ալիսն, էրճիաս,
Տարին չանցաւ որ կը կտրէր ձոր ու սար,
Երբ ամեն օր յուզումներով վաղահաս,
Ազու՛ր Ափեր, ձեզ ողջունե՛լ կը յուսար:

Ձի՛ մտածեր սակայն թէ հոն ի՛նչ մնաց,
Գուցէ յիշող մէկ քանի սիրտ մտերիմ,
Քանի մը վարդ ու տնա՛կը մոռցըւած,
Ու մենաւոր բարեկամի մէկ շիրիմ...:

Դարձիր նոր բոյնըդ ուղեւոր ու քեզի
Նոր օրերու երջանկութի՛ւնը հիւսէ.
Թող բաղձանքը վճիտ հոգւոյդ մէջ հոսի,
Չգէ՛ կեանքը փրփուրներէ, երազէ...:

Նայէ զէմըդ, դիտէ խրոխտ Հիմալան,
Քալէ շիտակ, զերբուկներէն սուրա վեր,
Կա՛րճ է կեանքը այլ հորիզոնն անսահման,
Մի՛ օր նորէն կ'ողջունես զու՛ն այն ափեր...:

Ճիպուղի 14 Ապրիլ 1904.



ՄԱԽՈՒԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ



Եթէ երբէք հաւատայի տպաւորութիւններու և յիշատակներու վաղահաս շնջումին, իմ հոգիին մէջ, գրիչս անզգալաբար պիտի սահէր այսօր ամենէն առաջ վերջ մը տալու « Դէպի էրճիաս » յօդուածներուս շարքին, որոնց երկուքը երևցան արդէն ամիսներ առաջ ու երրորդը դեռ կը մնայ հոգիիս խորունկը, մոխիրներու տակ մնացած կրակի անլուսափայլ այլ չի հատնող հրայրքով: Բնութեան իրերը այնպէս չե՛ն: Հեռաւորութիւնը կը պղտիկցնէ, անորոշապէս կ'աղօտացնէ՝ զանոնք: Վիթխարի լեռները հեռուէն՝ կապոյտի նուրբ շղարշով ծածկուած խորհուրդին կը նմանին: Տիեզերքի մեծափառ արեւները հեռուէն մէյմէկ լուսաւոր կէտերու կը փոխուին: Յիշատակները սակայն շեղումներն են այս ընդհանուր օրէնքին: Անոնք չե՛ն հեռանար: Կեանքը կը քալէ, անոնք կը մնան: Կը կարծես թէ դիզուած են իրարու վրայ բաբդ ի բարդ, փառաւոր խառնակութեամբ, երբեմն բաղադրուած իրարու, կը հաւատաս նոյն իսկ թէ կորուսած են որոշ գոյներնին և օր մ'ալ յանկարծ դէմ առ դէմ կը գտնես ինքզինքդ ատոնց ու կը տեսնես թէ անոնք միշտ հինե՛րն են, տրտում կամ զուարթ, ժպտազեղ կամ արտաշուտագօծ: Վտակներ կան որ ոլոր մոլոր կը սահին, կ'ընթանան: Բլրակի մը ափէն կ'անցնին երգելով, հառաչելով ու իրենց երգին մէջ կը մոռնան թէ անզգալաբար բլուրին շուրջն են դարձեր, կուզան հին ճամբային մօտ և անձայն զարմացուածով նոյն մարզերն ու թուփերը, իրենց վրայ հակած՝ նոյն լացող ուռիները կը նշմարեն: Մենք ալ նոյնպէս կը քալենք անձանօթ կարծուած շաւիղներէ, որոնք յաւերժապէս հինե՛րն են ու վտակին յափշտակութիւնը կ'ունենանք, շուրջերնիս հին յիշատակներու խաղաղ վերազարթնումը տեսնելով:

Անոր համար « Դէպի էրճիաս » յօդուածներուս երրորդին յետաձգումը իր նշանակութիւնը կը կորսնցնէ, գէթ ինծի համար, որովհետև արդէն գրած եմ զայն մտքիս մէկ անկիւնը, ու թուղթի վրայ առնելը որչափ ուշացնեմ՝ կը կարծեմ թէ

աւելի նուրբ բառեր պիտի հանդիպին գրչիս, նոյն իսկ նրբագոյններ, դէթ մասամբ բացատրելու համար գերագոյն յուզումներու այն անմոռանալի երկու ամիսները, որոնք առաջին սլացքը տուին ուղեւորին, դէպի նորագոյն և անձանօթ հորիզոններ:

* * *

Այս հակիրճ ու կտրատ նախարանէն վերջը ուրիշ հատի մ'ալ պէտքը կ'զգամ՝ յօդուածիս վերնագրին անցնելէ առաջ: Ու այս երկրորդը՝ բացատրելու համար միջավայրը՝ որ տուն տուաւ այս տողերուն: Շոգենաւր ուշ ատեն հասաւ Իզմիրէն Աղեքսանդրիա, Միջերկրականի ջուրերուն անսովոր քունը վրդովելով ու երբ բամբ գոռումով խարխիսը կը նետէր՝ այն ատեն միայն արթնցայ զիս մազնիսացնող յափշտակութենէն: Փամերէ ի վեր նշմարած էի Ափրիկէն, ծովին ջուրերէն հազիւ դուրս նետուած իր ցամաքի տափակութեամբ ու ներքին խոովքի մը վրդովումները կը ցնցէին էութիւնս: Այդ վերջալոյսին՝ դարեր ապրեցայ: Մինչեւ հասնիլս նաւահանգիստ՝ ճամբորդութիւնս յետադարձ սլացքով յանգեցաւ մինչև Կախապատմական դարերու սկիզբը, ու տեսայ անցնիլն քովէս՝ « Ես եմ՝ Որ էն » ի վհուկէն մինչև բուրգերուն ստորոտը պատմական աղաղակը գոռացող մեծ հսկան — « Այս բուրգերուն զագաթէն քառասուն դարեր ձե՛զ կը գիտեն »: Դէպի անհուն երկարող տափակ ցամաքին տեսքը հիասթափում մը բերաւ սակայն: Կը կարծէի թէ պատմական խորհուրդներու և խորխորատներու այդ երկիրը անհուն բարձունքներ, անչափելի անդունդներ ունենալ պարտ էր: Ու վերջը, օրեր, ամիսներ վերջը ես ինծի պիտի չկարենայի բացատրել տակաւին պատմական դէմքերու գոյութիւնը, եթէ տեսած չըլլայի Սփինքսին կոյր այլ ծակող նայուածքը, որ իմ աչքերս անապատի անհունութեան կը դարձնէր: Ծով, անապատ, երկինք: Այս երեք անսահմանութեանց մէջ հիմա կը բացատրեմ նախնական մարդուն հոգեկան սարսուռները, որ բնութեան անհունին իր Եսն ալ կը միացնէր և ատոր արդիւնք հին Եգիպտոսը, որ մարդկութեան կրօնի պատգամները կ'որոտար իր բուրգերուն բարձունքէն: Անմահութեան հաւատքին մայրն է այդ երկիրը: Մեծ Անհունի մը գոյութեան պէտքը հոն աւելի ճնշող կ'ըլլայ մարդուն համար, որ կ'անցնի յաւիտենական Նեղոսին

ափերէն ու բոլորտիքը՝ ցիրուցան, ամեն կողմ անսահմանութեան դրոշմը կ'ընդնշմարէ:

Անհաւատ գնա հոն ու հաւատացեալ դուրս պիտի գաս, կարծուած բարեկամութիւններու ներքեւ սողացող հրեշու-
թիւններ տեսնելով մտերմութեան վրայ տածած հաւատքիդ քայքայումը զգալէդ ետքն ալ:

Անհաւատ գնա, անցիր մէկ անգամ հնութեանց թան-
գարանէն, տե՛ս մոմիաները՝ որ անմահութեան կ'սպասեն, միջոցն ու ժամանակը հեգնելով, ու խօր վրդովումով զէպի
երկինք, գէթ զէպի վե՛ր պիտի նայիս:

Մեծ անմահներու և անմահութիւններու այդ երկիրը եկած էր վերջին անգամ՝ վարդան Մախոխեան, իր նկարները ցուցադրելու համար: Պիտի չ'ըսեմ թէ հոն գեղարուեստի մեծ քննադատներու գոյութիւնը կրնար վրդովել զինքը, որովհետև նախ չի կան ու յետոյ Մախոխեան աւելի դժուարահաճ վարպետներու գնահատութեան արժանացած էր վաղուց: Ո՛չ, ասոնց ո՛չ մէկը, արուեստագէտը այդ երկրին մէջ ինքն իսկ կ'ըլլայ իրեն քննադատ, ու գոնէ կը կարմրի՝ ինքնիրեն, եթէ չեն արժեր իր գործերը, որովհետև իր շուրջը թեւածող անմահներու ստուերներ, կ'ըսեն իրեն, թէ վերջնական մոռացումն ընկեր է Միջակութեան:

Ու շիտակը ըսելու համար քիչ մը շատ թերահաւատ, թէև չեմ գիտեր ինչու, ուղղեցի քայլերս այն կիրակին զէպի Գեղարուեստական Ակումբի սրահը, ուր բացումը պիտի կատարէին ցուցահանդէսին: Հակառակ տեղատարափին արդէն բազմութիւն մը հաւաքուած կը գտնեմ հոն, ու պատկառոտ լուսութիւն մը որ հիացող զէմքերու վրայ կը ծփայ:

Ամենէն առաջ ըսել պարտէի թէ նկարիչը չէի՛ տեսած, չէի ճանչնար: Ըսել կ'ուզէի թէ անձնական համակրութիւններ մասնաւոր տրամադրութիւն մը չէի՛ն ծնած իմ մէջ: Անտարբեր գացի պիտի ըսէի, եթէ միայն ցեղին ձայնը գոյութիւն չ'ունենար...:

Հարիւր յիսունէն աւելի նկարներ կային եթէ չեմ սխալուր:

Առաջին անգամ արագ նայուածք մը ամենուն վրայ ու վերջը՝ կամաց կամաց, հատիկ հատիկ: Քանի մը անգամ սենեակին շուրջը դարձած եմ արդէն և շուրջիս բազմութիւնը կը դադրի գոյութիւն ունենալէ: Բոլորն ալ տրտում նկարներ էին: Ամենուն վրայ, շատ քիչ բացառութեամբ՝ ծովը կայ իր բիւրափոփոխ երեւոյթներով, կրնամ ըսել ամենքն ալ ծովի նկարներ, հազիւ քանի մը հատ մեռած, ձիւնապատ դաշտեր, հիւղակներ, սակայն ծայրէ ի ծայր դառնազին մելամաղձոտութեամբ զծուած, այնպէս որ մտախոհ վայրկեան մը դիտելէդ ետքը կ'զգաս որ տառապանքի շունչը կ'անցնի ճակտէդ և սիրտդ հին կարօտներով կը բաբախէ:

Նկարիչը աւելի երջանի՛կ է բանաստեղծէն: Երկուքին ալ քով նոյնն են դիտելու և զգալու երանութիւնները, սակայն հոն ուր նկարիչը կ'աստուածանայ, բանաստեղծը կը հառաչէ ու կը կոտորէ գրիչը: Այդ նկարներուն ետին, խորունկը թաղուած մելամաղձիկ հոգի մը կը նշմարէի հիմա, Սև Ծովին եզրը սնած մանկութիւն մը, Սանասարեանի բարձունքը ու ճացած պատանութիւն մը, որ վերջն ալ գացած է իր հոգին պատմելու ամեն ծովերու ալիքներուն:

Տարօրինակ զուգադիպութիւն, որ Այվազովսքին ու Մախոխեան իրենց մանկունակ օրերուն խաղցած են միևնոյն ծովին ալիքներուն հետ, մին վերը, միւսը վարը, ու այսօր մեծ վարպետին մեկնումէն վերջ վատահօրէն կրնանք ողջունել երեւումը իր յաջորդին, որ գիտէ կոհակներուն հիւանդութիւնը, ինչպէս իր բժիշկ եղբայրը՝ մարդերունը:

Աս մտածումները փայլակի պէս անցած էին մտքէս երբ ետիս խմբակի մը կեդրոնը կանգնած տեսայ զինքը: Մէկը իր անունը կուտար և ինք մեղմօրէն կը պատասխանէր: Իր երիտասարդի փոքրիկ զէմքին վրայ խոշոր սև աչքերը գրաւեցին ուշադրութիւնս ամեն բանէ առաջ, սև ածխագոյն բիբով, շուրջը լայն, շագանակագոյն ծիրով: Այդ աչքերը տեսնելը կը բաւէր վայրկենապէս գրաւուելու համար: Հոն արտայայտութիւնները կը փոխուէին բոլորէն բիւր անգամ, բիւր ալեակտութիւնները կը փոխուէին բոլորէն բիւր անգամ, բիւր ալեակտութիւններու վէտովտումին պէս, երբ մանաւանդ շուրջի նկարներուն ներու վէտովտումին պէս, երբ մանաւանդ շուրջի նկարներուն վրայէն անցնէին հարեւանցի կերպով, ամեն մէկը՝ տարբեր երկինքի ներքև, տարբեր յոյզերով ու խոհանքներով գծուած: Հեղինակներն ալ անշուշտ կ'ունենան այդ զգացութիւնը երբ իրենց գործերը աչքէ անցնեն երբեմն: Նկարիչը աւելի կեն-

սալից ազդեցութեանը ներքե կը գտնուի իր գործերուն: Անոր կեանքը դէպի կատարելութիւն կը ձգտի, դէպի իտէական, բան մը, որուն չի պիտի հասնի երբէք, քանի որ իր դէմ կայ հեզնող բնութիւնը, որուն մէկ ակնթարթը չի՝ նմանիւր միւսին:

Դէմքերու նկարիչներ աւելի դիւրին աշխատութեան մը առջեւ կը գտնուին: Մէկ օր, երկու օր, մէկ ամիս, դէմքը զգալապէս չի փոխուիր: Գեղեցիկ դէմքերը մանաւանդ շատ անգամ տարիներով անփոփոխ կը պահեն իրենց նրբանոյշ գծերը ու նկարիչը, որ կտաւի վրայ պիտի առնէ զանոնք գեղեցիկին սիրովը վառուած, յօժարակամ պաշտումով կը հակի անշունչ կտաւին վրայ:

Կան ուրիշ նկարիչներ ալ, որ Մայիսի օրունան են սիրահար: Վարդ, կակաչ, վտակ, ծաղկաւէտ բլրակներ, կուժը գլուխն առած գեղջկուհի, ասոնք են անոնց նախասիրած նիւթերը: Ոմանք ալ քիչ մը աւելի հիւանդ, աշնան դալկուն տերեւները կը գծեն, ճիւղէն բաժնուելով ինկած ատեն, կամ հովին առջև նետուած: Մէկ խօսքով կան սոխակ նկարիչներ, կամ բու, կամ ծիծեռնակ: Մախոխեան մերթ արծիւ է ու մերթ ամպ, աւելի անպ, որովհետև ամպերը միայն կուրծքերնին ալիքներու կարօտովն կ'ուռեցնեն:

Չեոքի ջերմագին սեղմում մը, համակրանքի քանի մը բառեր ու կը բաժնուիմ իրմէ:

Ես իմ ճամբաս քալեցի, ինք ալ պիտի քալէ իրենը: Չեմ կարծեր սակայն թէ կարենայ երկար մնալ Եգիպտոս: Իր սև, խոշոր աչքերուն կարօտը յագեցնելու համար սև կամ սպիտակ ծովեր պէտք են, մուժ ու թխպայորդ ալիքներ ու կոհակներ, որոնք կ'երթան փշրիլ անմարդաձայն ավերու վրայ: Սրտի անծանօթ եղբօր մը մաղթանքը կը յանձնեմ այդ ալիքներուն:

Ճիպուղի, 19 Մայիս 1904.



⸘

Ս Փ Ի Ն Ք Ս

Մահարձանը ամայութեան,
Բուրմը մեռնող ժամանակին
Բուրգերուն քով կը հսկէ ան,
Մարմինն՝ առիւծ, գլուխը կին:
Առիւծ ու կին, յաղթ ու տրտում,
Արիութիւն ու վիշտը խառն,
Մշտանորոգ սիրտ մ'ի հատնում,
Անցնումներու խորհուրդը դառն,
Որ չի մեռնիր ու չ'երագեր
Ու կը դիտէ յաւերժարաց
Իր աչքերով սահող յոյզեր
Ու կրօններ անգնդայած:

Ոչ մի դալար, ոչ մի բաղեղ
Կը մագլցին կողերէն վեր,
Կը զարնուին իրեն անեղ
Անապատին այրող հովեր:
Եւ ինք արձան... այլ չէ՛, կ'ապրի,
Զգացի՛ օր մ'իր սրտին տրոփ,
Տեսայ նայուածքն իրեն վայրի
Ու սարսըռալը հրաբորբ:
Չեոքը ծալած ու ծնրաղիւր
Աւեր տաճար մը կը հսկէր,
Որմէն անցեալն անկարեկիր
Խըլած էր քուրմն ու իր երգեր:

Կ'սպասէր թէ արդեօք կուգա՞ն
Գացողները անվերադարձ,
Ուխտաւորները հնութեան
Ու վըհուկները ոգեհարց:
Ու չէ՛ ին գար, իր ատենուան
Աստուածներն իսկ մեռան կարգով,
Օսիրիսը, Իսիան ու Ռան
Անէացան իրարու քով:
Առի՛ւծ, այլ կին, գամուած է հոն,
Հաւատքներու հէ՛ք սգաւոր,

Աւազին մէջ լքուած, հեռո՛ւն
Նեղոսէ՛ն իսկ վշտամուրը:

* * *

Ու կը տեսնեմ Եթովպիոյ խորերէն
Յաղթ հսկաներ կերտեցին
Խորհրդաւոր շարականներ երգելէն
Քեզ զերդ նուէ՛ր Նեղոսին:

Լերանց զաւակ, կրանիթի յաղթ մի կտոր
Բերին այնտեղ, արուեստագէտ մ'անանուն
Իր գշիրով անմահութի՛ւն տուաւ քեզ,
...Ո՛ւր յոյզերը, ո՛ւր հանճարներն այն անհուն...

Կանգնեցար հոն Նեղոսին երգն ըմպելով
Ու բազինէդ բիւր կրօններ սահեցան,
Եհովան քովդ ըսաւ թէ « Ե՛ս եմ Որ Էն »,
Ու ժպտեցա՛ր դուն իրեն:

Պաշտողներդ մոխի՛ր են ու կ'ապրի՛ս դուն,
Ասիւծն սուրա՛լ կ'ուզէ, այլ, կի՛ն, չե՛ս կրնար,
Երգը ելու ծարաւն մընա՛ց մէջդ արթուն,
Մարեցան մինչ այլ բաղձանքներդ բոցավառ...:

Մի՛ խաբեր զի՛ս, աւազն օտար է քեզի.
Կրանիթ՝ երէկ, այսօր ըՍփինքս ու միշտ կին
Բաց աչքերէդ հին կարօտը կը հոսի,
Ու կ'որոնես ուրիշ աշխարհ, այլ երկին:

Դարեր անցան, այլ լեռներդ կը յիշես,
Ամպրոպներու, ցուրտ փոթորկին ունիս ցաւ,
Հող արեւն ու հուր-աւազներ կ'այրե՛ն քեզ,
Եւ էութիւնդ սպասումէն հալեցաւ:

Կարօտահիւծ սրտեր համայն քեզ կ'զգան,
Սփինքս չե՛ս դուն, հէզ կին, արծա՛ն անխօսուկ,
Ափն ովկիանին, անապատին խօլական
Լացա՛ւ զքեզ թափառիկ ա՛մպ մը վհուկ...:



է

Ի Ն Չ Ո՞ Ի Ե Կ Ա Յ

(ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ ԷՋԵՐ)

Ճիպուղի, 50 Մայիս 1904



ԻՆԻՆ սկսաւ այրել արդէն: Յունիսին, Յուլիսին՝ քա-
րերը մոխի՛ր պիտի դառնան: Գառազդին մէջ
բանտուած առիւծին պէս ամեն կողմ կը դառ-
նամ ու ելքի ճամբան չեմ գտներ: Հողիս կը մոնչէ զայրազին
ու ես սկսայ վախնալ ինձմէ: Ո՛ւր էք իմ անցեալին փթթի-
նազա՛րդ գարուններ...: Ծովը եռացած կապար է կարծես, ո՛ւր
Իզմիրի ծովակն ու Տիանի լճակը: Ինչո՞ւ եկայ, ա՛խ, ու ձեզի
ալ իմ հետ բերի այս թիապարտի կեանքին: Ինչո՞ւ եկայ...:
Գիշերները կը թափառիմ երկարօրէն ծովի ու անապատի
անհունին մէջ բանտուած, կը նայիմ աստղերուն որ անծանօթ
են, ափսո՛ս:

Ճիպուղի եմ, աշխարհի մոռցուած մէկ անկիւնը: Կիսա-
մերկ սօմալիներու քանի մը թշուառ սեզապատ հիւղակներ
իրարու քով կը կծկուին ու տասնեակ մը քարաշէն տուներ
կը բարձրանան հոս ու հոն, իրենք ալ զարմացած հոս իրար
գտնելուն:

Եկայ և ալ չեմ մեկնիր, չեմ կրնար արդէն: Այսչափ
յանկարծական ու բուռն խզում մը անցեալի և իմ միջեւ
չ'ընդարմացնէր զիս: Մեր լեռներուն հաւատարիմ կաղնին
եղած չէի, կապուած հայրենի հողին, սակայն արագիլի նման
կը յուսայի վերադառնալ օր մը դէպի մեր աւերակ աշխարհը:
Ամեն յոյս, ամեն երազ ջնջել պէտք է հոս, Տանդէի դժոխքին
նման:

Եւ սակայն չեմ կրնար ապրիլ անշարժ, պիտի մեռնի՛մ,
կը նախընտրեմ մեռնիլ: Չեմ ալ կրնար մեռնիլ:

Ծովափը գացի մինակս, տունը թողելով կեանքիս պա-
հապան հրեշտակը՝ քառամեայ կորիւնիս հետ: Հետս չի բերի
զանոնք որ չի խօսիմ հետերնին: Հոս խօսիլը հեծկլտակ է:
Ինչո՞ւ եկայ...:

Վերը՝ Եթովպիան, դիմացը երբեմնի երջանիկ Արաբիան:
 Անզգալաբար կը դառնամ դէպի երկաթուղին որ Ափրիկեան խորերուն մէջ կը մխուի: Հոն ինձմէ առաջ եկող Հայեր կան, շատ տարիներ առաջ: Բոնութեան փոթորիկը արմատախիլ ըրած է դանոնք հայրենի հողէն ու խլեակի պէս նետած է այս ափունքը: Կը շնչեն, կ'ապրին, կը զարգանան ու կ'սպասեն: Ես ալ կրնամ միանալ ինձմէ առաջ եկողներու խումբին:

Դիմացը երբեմնի երջանիկ Արաբիան դարերէ ի վեր բռնապետութեան ներքեւ ընկճուած, դրօշ պարզած է այսօր և կը պայքարի ազատութեան համար: Ամեն օր խումբ խումբ կուգան հոս պաշար ու ուղմանիւթ փնտոելու համար, իրենց անտաշ ու փրկչական դարու մակոյկներով: Վաղը պիտի մօտենամ իրենց ու սեղմեմ՝ ձեռքերնին. պիտի ըսեմ թէ Հայ եմ... պիտի յիշեմ Կիլիկիոյ դիւանագէտ Հեթումը որ արաբ ամիրապետին եղբայրական համբոյր կ'ուղարկէր: Հայաստանի ազատութիւնը Մէքքէի և Մէտինէի առջև պիտի որոշուի: Համիտի վրայէն ամիրապետութեան գողցուած պատմութեանը երբ պատուուի, մէջտեղը հասարակ աւազակ մը պիտի մնայ: Պիտի գրեմ մեր յեղափոխականներուն որ իրենց ուշադրութիւնը Արաբիա դարձնեն ու հիմէն փորեն բռնապետութեան գահը:

Ու յետոյ պիտի ջանամ այս աննշան ու մոռցուած կէտը մեր ազգային դատին բրորականտի համեստ վառարան մը ընել: Օտարներու հետ բարեկամութիւններ պիտի մշակեմ, պիտի ջանամ երգել ու ծանօթացնել մարտիրոսացեալ Հայաստանը:

Ասոնցմէ վերջ և ամենէն աւելի, աչքերս անդունդներէն անդին պարզուող հորիզոնին սեւեռուն, ծնրադիր Պայրընի ստուերին, պիտի գոռամ հոգիով ազատութեան և յոյսի մեր երգերը, վերջնական յաղթանակի տենչանքներով խանդավառ:

*
* *

Պիտի, պիտի: Ու երբէք պիտի չ'ընկճուիմ:

Հարաւի հուր խորշակը ոտքիս առջև ովկիանէն կոհակ մը մղելով կը փշրէ, ու կ'անցնի երկար ձողի մը ծայրը ալեծածան եռագոյն դրօշին ծալքերը կը ծփացնէ: Այդ դրօշին կը դառնամ, աչքերուս արտասուքը չորցած հիմակ: Ու երկնից վրայ փալիւրացող յաւիտենական մեր Հայկին և ազատութեան նւիրական ու յաւերժական դրօշին ներքեւ, կ'երդնում:

Իմ տարաբաղդ ու Սրբազան Հայրենիք, պիտի չ'ընկճուիմ երբէք...:

Ը

Ա Ռ Լ ՈՒ Ս Ի Ն

Ս. Գ. Բարեկամ Նորոս



ՈՒՐ ԻնՁ աղուոր երազներըս անցեալին
 Անվերադարձ յոյգերով,
 Գիշեր մը լուկ ճակտիս վրայ թող փայլին
 Մոռցուած խանդն ու գորով:
 Յիշէ՛, Լուսին, մտերիմներ էինք մերթ
 Կը սիրէի՛նք մենք զիրար,
 Երկուքս ալ նոյն Անծանօթին ձեռակերտ,
 Ու մենութեան սիրահար:
 Դուն մընացիր հատնումներէս անբաժան
 Երբ ափերէն սիրական
 Մըրրկավար կը դիմէի՛ ի դաժան
 Ճակատագիրն, ապագան:
 Մեր Եփրատին ալեակներէն մինչև հոս,
 Մինչև կոհակն ովկիանին
 Շաւիղներուս քու շողերըդ վշտահոս,
 Դալկահար լոյս մը տուին:
 Եւ անապատն ըսաւ ինձի քու կեանքէդ
 Ինչ որ չէի՛ երազած.
 Ինձի պարզեց թափառումիդ լուսահետ
 Գաղտնիքները միգամած:
 Սորվեցուց թէ քու ժպիտըդ խուսափուկ
 Յաւին փրփուրն էր միայն,
 Ու զարնըւած դու նոյն բաղդէն յեղյեղուկ,
 Աքսորական ինձ նման...:

*
* *

Կրկներևոյթն ինչպէս շատ հեղ կը բերէ
 Անապատի հորիզոնին
 Վրայ նրկարներ որ կը շարժին,
 — Ափ մը տեսի՛լ մեզ անծանօթ ափերէ,

Մտածուածը զիս քառսի՛ն տանի մուկթ,
Երբ դուն մօրըդ գիրկն էիր դեռ,
Հուսի՛ն, հալած նիւթ ու շանթեր
Կը գոռային քու ծնունդըդ մօտալուտ:

Ընդվզումով մը նետուեցար անհունին
Գիրկն, ուղեցիր ընկերն ըլլալ,
Բիւր աստղերու կեանքը հրահալ
Ապրիլ, այրիլ յուզումներէ անմեկին:

Այլ օրէնքը կապտեց զքեզ ու շղթան
Անցուց վզիդ, զծեց մի ծիր,
Ըսաւ. «Ա՛յս է ուղիդ, դարձի՛ր
Քու մայր-երկրին բոլորտիքը յաւիտեան»:

Մանկութիւնըդ երազներով երջանիկ
Անցաւ, գուցէ գարուն, վարդեր,
Եկան ծաղկիլ, սոխակ, թիթեռ
Երանութիւն, սէր միասի՛ն խայտացիք:

Այլ ժամանակը սլացաւ զուարթուն,
Մենութեան ցուրտը պատեց քեզ
Մարեց յոյսերըդ հրակէզ,
Հայրենաբաղձ ու կարօտով մեռար դուն...:

* * *

Նոյնն է մեր բաղն, իմ աքսորի՛ մտերիմ,
Մայր-Եփրատէն մինչև ովկիան,
Նոյն ծիրին շուրջն անյուսութեան,
Երկրէն հեռու, կարօտակէզ կը մարիմ...:

Կը դիտեմ վաղն ու անծանօթ ապագան,
Կը հարցնեմ զո՛ւր թէ մի օր
Իմ երբեմնի յոյսերն աղուոր,
Մայիսին հետ արդեօք նորէն պիտի գա՞ն:

Պիտի՞զգանա՞մ արդեօք մի օր դէպի հոն,
Շուար մոլոր Եփրատին ափ,

Յուզումնալից ու հրատապ,
Ողջունելու Հայուն ազատ հորիզոն...:

* * *

Քու դիակըդ պատանք մ'ունի լուսաւոր,
Անհունն եղաւ շիրիմ քեզի,
Աստղերուն լոյսն ալ կը հոսի
Ու կ'ամոքէ մենութիւնըդ ամեն օր:

Ա՛յս, տեսնէի ես ալ քեզ պէս մի գիշեր,
Թէ ի՛մ ալ մայր-երկրիս վրան
Գարնան յոյսերը կ'երերան,
Հրսէի ձայնը որ զիս հոն կը կանչէր,

Ու չ'երթայի թող...: Այն ատեն աւազուտ
Ու հրատապ շիրմին պատկեր
Էութիւնըս չի՛պտի՛ ընկճէր.
Ու գրկէի՛ պիտի անվախ մահը մութ...:

* * *

Տուր ինձ աղուոր երազներըս անցեալին,
Անվերադարձ յոյզերով,
Գիշեր մը լոկ ճակտիս վրայ թող փայլին
Մոռցըւած խանդն ու գորով:
Յիշէ՛, լուսի՛ն. մտերիմներ էինք մերթ,
Կը սիրէի՛նք մենք զիրար,
Երկուքնիս նոյն անծանօթին ձեռակերտ,
Ու մենութեան սիրահար...:

Ճիպուղի



ՎԵՐԱԴԱՐՁ

(ՅԻՇԱՏԱԿ ՌՈՒԽՍՕ-ՃԱՐՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ)

Ճիպուղի, 12 Ապրիլ 1906



Իմակ որ այդ մօտաւոր անցեալին վրայ իջաւ վերջապէս Պատմութեան սև վարագոյրը, և Չուշիմայի աղէտալի ջուրերուն մէջ քայքայուեցան ոռոսական տարաբաղղ նաւատորմին վերջին բեկորները, տրտմազին ու երկիւղած սարսուռով կը մօտենամ այն օրերուն, կը թղթատեմ յուշատետրիս էջերը և կը վերապրիմ այն ահաւոր յիշատակներուն մէջ:

Ճիպուղի. եղաւ վայրկեան մը, ուր աշխարհի սիրտը հոս բարախեց և ես լսեցի այդ տրոփիւնը: Ռազմի դաշտն իջած էին արեւելից Ալալիոնն ու արեւմտից Հսկան, ու դերակատար տիտաններուն, — ահարկու մարտանաւերուն մեծ մասը իմ աչքերուս առջեւէն անցաւ գնաց ու կ'երթայ տակաւին դէպի մոռացումի անողոք անդունդները: Եւ ան ինչ գեղատեսիլ, հուժկու, խրոխտ մարտանաւեր էին, կայմերնին դէպի երկինք ցցած, ինքնավատահ, ծանրաքայլ, ահարկու: Աչքիս առջեւն են դեռ, ինչպէս այն գիշեր, երբ Միսսիսիպիուս չորրորդ երգին ուրականային աղաղակն անցաւ հոգիիս խորերէն: Ռօժտէսթվէնսքին Ատլանտեանէն վար կ'իջնէր, կը բոլորէր Բարեյուսոյ գլուխը, ու կ'ուղղուէր դէպի Հնդկաց Ովկիանոս: Միւսները, Նաւարին և իր ընկերները Սուէզէն կուգային, կանգ կ'առնէին Ճիպուղի քանի մը օր, պարահանդէս, հացկերոյթ, խրախճանք: Ճիպուղին իրենց վերջնթեր հանգրուանը կ'ըլլար: Վերջինը պիտի ըլլար Սայկօն, ուր կաղն ի կաղ պիտի հասնէր Նէպոկաթովի երրորդ նաւատորմը. համախուժմբ ղիմելու համար դէպի Խաղաղականին գերագոյն խաղաղութիւնը, ու Նաւարինի տուած պարահանդէսէն աչքի առջեւ ունիմ խամրած ծաղիկներու փունջ մը, սև շղարշով ծածկած, երբ զայն նուր-

բող ոսկեճամուկ զգեստներով սպան, իր հարիւրաւոր ընկերներուն հետ կը քնանայ հիմա Չուշիմայի աղէտալի խորքերուն մէջ:

**

Տարին հազիւ բոլորած էր Ճիպուղի հասնելուս, երբ այդ դէպքերն ահարկու վսեմութեամբ իրենց տողանցումն սկսան: Այն օրերը, հիմակ իսկ յիշելուս ներսէս սարսուռի մը քալելուն կ'ունկնդրեմ կարծես: Աշխարհի այս անձանօթ ափունքը նետուած բաղղին հոսանքէն, ճառագայթային օղակ մը մնացեր էր միայն կեանքին և իմ միջև, մեզի իրարու կապող, և այդ սգաւոր ճառագայթը արիւնոտ ցոլացումով ու զոդրոջուն, բոնկած կովկասէն, կիսայրեաց հայրենիքէն կը հասնէր: Վրէժն էր, սրբազան վրէժը, զոր այրիացած ու ալևոր Մասիսը կը կտակէր իր տարահալած գաւաղներուն:

Ակնունին նոր հրատարակած էր «կովկասեան Վէրքեր»ը, ու Հայոց վիրաւոր Հայրիկը իր առիւծի մոնշիւնը արձակած էր մարտիրոսացած եկեղեցիին կամարներուն ներքեւէն, խիզախ, մեղամաղձոտ ու որոտագին: Ու հայ չիկար աշխարհի վրայ, որ գուրգուրանքով չի հծծէր Վրեժ բառը, Վրէժ Ռուսիոյ դէմ, որ Մասիսի երկու կողմը արիւններու մէջ կը խեղդէր, հոս Հոնական-Վանտալական բնազդներ ուժովցնելով, հոն ցեղային դարաւոր ատելութիւններ շղթայագերծ ընելով ու քանդելով Հայուն հայրենական տունն ու տաճարը: Հոն Բլէհվէ, կալիցին, հոս՝ Իզգէթ, Շէֆիք և ամենուրեք նոյն ահաւոր տառապանքը որ կը ճնշէր մեր ճակատագրին վրայ:

Եւ այս տողերը գրողը, որ տրտմազին քնարը ձեռքը, եկած էր թափառականի վրանն հաստատել վայրիկ մը, ստորոտը Եթովպական բարձունքներու

« Ուր թխսեն դիք և արծուիք »

կը յեղյեղէր գուրգուրանքով այդ սրբազան բառը, երբ տեսաւ տիտան մարտանաւերուն գալն ու գնալը, դէպի անդունդ: Իրենց հսկայ իրաններէն ծուխի ամպեր ժայթքելով, ինքնավատահ ու ծանրաքայլ, կուգային խարիսխ նետել և պահ մը իրենց պարփակած փտութիւններն ու պղծութիւնները ցուցադրել:

Քանի անգամ այդ ծուխի ոլորտներուն ընդմէջէն, կարմրած հորիզոնին վրայ կարծած եմ նշմարել ալեգարդ խրիմ:

եանը, արտասուեալին աչքերով, որ թեւաբեկ խաչի մը նշանով այդ նաւերուն՝ անդունդը ցոյց կուտար:

Այդ պահուն ինծի համար անակնկալ մը հասաւ: Լոնտոնէն հեռագիր մը զիս «Տէյլի Մէյլ»-ի թղթակից կը կարգէր և կը յանձնարարէր տեղեկագրել Ռուսական նաւատորմին շարժումները:

Հարմգուրըթհ, հիմա լորտութեան բարձրացած նօրթքլիֆ անունով, անգլիական լրագրութեան Տիտանն է, լուրերու նաբօլէօնը, ինչպէս կը կոչեն զինք Մանչի երկու եզերաց վրայ: Դեռ իր Վաթէրլօն չէ՛ ունեցած այդ մարդը, ոչ ալ Ս. Հելէնի հեռանկար մը կընայ վրդովել զինք, որ երկրագունտին ամենէն հեռաւոր անկիւններն իր թղթակիցները ունի և աշխարհն իր հսկայի ձեռներուն մէջ բռնած է: Հեռագրական զիծը կը բացուէր ինծի ու կ'արտօնուէր հեռագրել օրն օրին պատահարներն ու իմ կրած տպաւորութիւնները:

Այդ պահուն էր որ զգացի մարդու, քղրակցի և Հայու պարտականութեանցս իրար բաղխումը ներսի զիս:

Առաջին վայրկեանին իսկ, անոնց համար, որ հետեւեցան ուշադրութեամբ հին փտած Ռուսաստանի ճիգերուն, հապճեպ ու ճակատագրապաշտ որուշումներուն, ու մօտէն տեսան նաւատորմիդ անուան տակ ծածկուած գերեզմանական փտութիւնը, մարտին ելքը որոշուած էր անդառնալի կերպով: Բարձրու ապականութիւնը, մանաւանդ գողութիւնը իր ամենէն գարշ երեւոյթներով կը պարզուէր նաւերուն մէջ: Կուրծքերնին տասնեակ պատուանշաններով շողացող աւազակներ, առանց ամչնալու կը սակարկէին իրենց միջնորդէքը ու մուժիկին քրտինքովն ու արցունքովը ողողուած բուպլիները խաղի կանանչ սեղանին շուրջ կը հալէին: Կարգապահութիւնն ամենախղճալի՛ էր: Ստորակարգեալները սոսկումի մը ներքև կը պահուէին շարունակ, ոստիկանութիւնը հոն ալ իր ուրուատեսիլ գանկը կը ցցէր ամեն անկիւնէ դուրս: Այդ այլազան ազգերէ հապճեպով հաւաքուած մարդոց մէջ կային սակայն ցանցառ կերպարանքներ, հայրենիքի հաւատքովը զօրացած, որ կ'երթային մեռնիլ սրբազան Ռուսաստանի համար:

Հիմակ որ տարին կ'անցնի այն ճակատագրական ահաւոր օրէն, որ փտութիւնն ու նկարագիրը, գինովն ու դիւցազունը

ընկղմեց քով քովի, անծանօթ ովկիանին խորքերուն տակ, սրտի ցաւ մը կ'զգամ յիշելով զիրենք ու գրելով իրենց վրայ, կարծես թէ լուռ գիշերին մէջ, երկու դասակարգերն ալ, տրտում աչքերով ինծի կը նային...:

«Երսունեչորս Համպուրկ-Սմերիկա գծին պատկանող կամ անկէ վարձուած շոգենաւներ, հարիւր քսան հազար թօն ածուխով, Ճիպուդիի ծոցն հասան, Ռուս նաւատորմին համար»:

Այս առաջին հեռագիրս էր «Տէյլի Մէյլ»-ի ուղղուած, որ յաջորդ առտուն արդէն աշխարհի շրջանը կ'ընէր: Այդ սեւաներկ, գիշերաստուներ շոգենաւները, գերման դրօշին տակ, հսկայական ագուանէր էին կարծես, որ Եւրոպայէն մինչեւ Սայկօն հետեւեցան կամաց կամաց նոր դարու Արմատային, զիակ գիշատելու համար: Նոյն յաւիտենական գերմանը, որ դեռ երէկ ալ թուրքիան լափել կը փորձէր:

Առաջին օրէն, մօտէն տեսնելով անկարգապահութիւնը, ուղմամթերքի ցաւալի պակասութիւնը և աղտոտ երեւոյթներ նաւատորմին մէջ, ստիպուած էի հակիլ յոռետեսներու գաղափարին պատերազմի ելքին մասին: Եւ անվերապահ մտածումս հաղորդեցի «Տէյլի Մէյլ»-ին: Ահա թղթակցութենէս հատուած մը.

Ճիպուդի, 24 մարտ 1903

... «Բայց ամեն բանէ առաջ ժամանակ ունեցայ ուսումնասիրելու իրենց (Ռուս սպաներուն) մտային վիճակը: Օրէ օր կը լսէին թէ ճաբոնական բանակն ու տորմիդը կը յառաջանային նոր ու կարեւոր յաղթանակներով: Բօրթ-Արթիւրի անկումը՝ շատոնց նախատեսուած՝ ահռելի ցնցում մը տուաւ անոնց՝ որ կ'երթային մահուան: Շատեր կը կարծէին թէ Գուրօբաթքինի մէկ յաղթանակը, Ռուսիոյ զինուորական պատիւը փրկելով, խաղաղութիւն պիտի բերէր: Այդ բարի լուրերը չ'եկան երբէք: Թէ ուր կը դիմեն մարտանաւերը: Չեմ գիտեր տակաւին: Սակայն գիտեմ թէ իրենց համար լաւագոյնը պիտի ըլլար՝ ե՛ս, հայրենիք դառնալ: Այն վարչութիւնը որ այս նաւաբաժինները դէպի անծանօթ ծովեր և ահաւոր վտանգներ կը զրկէ, կընայ իր կարեւոր պատճառներն ունենալ, բայց այդ որոշումը տալէ առաջ, լաւ կ'ընէր հաշուելով իսկական ուժին չափն ու

հկարագրի և կրթութեան աստիճանն անոնց, որ Ռուսիոյ նաւային ուժին բաղդը իրենց ձեռքին մէջ պիտի ունենային: Անուրանալի է թէ ինկածներու քով, մարտանաւերու մէջ, կան Ռուսաստանի արիասիրտ զաւակներէն շատեր, որ պիտի երթան մեռնիլ, մտածելով թէ իրենց պարտքը կը կատարեն: Սակայն Բեղրսպուրկի վարիչներուն կ'իշխար մտածել լրջօրէն ու պաղարեամբ, թէ արդեօք լաւագոյն չէ՞ր Ռուսիոյ շահերուն համար, պահել իր անձնուէր զաւակաց կեանքերը շաւազոյն ժամանակաց հաւար:»

Այդ հատուածին անկեղծ ոգին տիրեց թղթակցութեանս մէջ, սկիզբէն մինչև վերջը: Սակայն իսկապէս կոյր ճակատագիր մը կայ որ կը վարէ ազգերու բաղդն ու ապագան: Հակառակ Հայ ըլլալուս, ու կուրծքիս ներքե վառող վրէժ-ինդրութեան կրակին, չի կրցայ չըսել սրտցաւ ճշմարտութիւնը: Սակայն Բեղրսպուրկի հեռագրական գործակալութիւնը երիցս պաշտօնապէս հարուածեց «Տէյլի Մէյլ»-ի ձիպուղիի թղթակիցը, ու նոյն իսկ դանի երեւակայական մէկը հոչակելու չափ յառաջացաւ:

Երրորդ նաւատորմը, Նէպոկաթօֆի հրամանին ներքե երբ հասաւ հոս, ձիպուղիի հեռաւոր ջուրերուն մէջ իսկ ճաբոնական մարտանաւերու հանդիպումէն ու բաղխումէն սոսկալով, տասը մղոն հեռու խարխիս կը նետէր: Միակ անձը այս տողերը գրողը եղաւ, որ յանդգնեցաւ երթալ, շրջիլ նաւէ նաւ և իբր իր տպաւորութեանց խտացումը հետեւելը հեռագրել:

«Երրորդ նաւատորմը հասաւ, խարխուլ, հին նաւերէ բաղկացած, տղայ-նաւագներ, անփորձ սպաներու հրամանատարութեան ներքե: Կարծեմ ԱնՁնԱՏՈՒՐ ըլլալ կ'երթայ:»

Ստորագրած բառս ամիս մը չանցած իր գոյութիւնը պիտի արգարացունէր: Այլ ինչ որ հիանալի և ահարկու էր, ճակատագիրն էր որ կը մղէր այդ տորմիդները: Սովորական պարագաներու տակ, անուակի մը աւրուելը, ղէկի մը խորտակումը, արգելք կը հանդիսանան ուղեւորութեան շարունակելուն: Ռուսական նաւատորմին համար այնպիսի բան, այնպիսի նախախնամական դիպուած չի պատահեցաւ երբէք: Գեղաշէններն ու խարխուլները, ծեր կամ մանուկ ղեկավարներով ամենքն ալ կրցան հասնիլ հոն, ուր ծովակալ Թօկօն և անկէ վեր, անկէ բարձր, տառապած ժողովուրդներու անէծքը կ'ըսպասէին ակնդէտ:

Վերջին սեկնողը ձիպուղիէն Քօսթրօման եղաւ. հիւանդանոց-նաւը, երկու հարիւրի մօտ գլխութեան դեռատի դիցանոյշներով: Ամպոտ օր մ'էր ու քիչ մ'ալ ալեկոծ. նաւակիս վրայ կայնած, երկար ատեն, նայուածքով ու հոգիով, հետեւեցա՛յ իրեն: Հեռուն, հորիզոնին մօտ անյայտանալու վրայ էր, կը նայէի՛ դեռ: Հառաչի պէս տխուր, ու աւերակ հայրենեաց մինաւոր հիւղակի մը բուխերիկէն ոլորուող ծուխին պէս՝ մուխի ոլորաք մը բարձրացաւ իր ծխանէն: Այդ ծուխէն անդին, տեսայ Հայոց Հայրիկին աչքերը, որ հանդարտ, որ տրտմազին, կը ժպտէին ճակատագրին ետեւէն...:

*

Այս քանի մը ամիսներուն սակայն առիթն ունեցած էի երկարօրէն տեսակցելու հետերնին ու նոյն իսկ շլանալու այն թագուն ճառագայթէն որ պահուած էր Ռուսիոյ ագնուագոյն երիտասարդ զաւակներէն մէկ քանիին կուրծքին խորը, բարձրացած և իրապէս սրբազան Ռուսաստանի մը կարօտովը սոգորուող էակներ: Անոնց մէկ քանիին հետ նոյն իսկ մտերմութիւն հաստատած էի և քանի անգամ իրիկունէ իրիկուն, կուգային քովս, երկու գաւաթի միջեւ անցեալին վիշտն ու ապագային ուրուականը մոռնալու համար: Իրենց մէջէն Քուրշինսքի անուն, նիհար, եղնիկի աչքերով անխօսուկ Բոլնիացի մը, որ կովկասն ալ կը ճանչնար ու հեռաւոր երազներու մէջ խորասուզուիլ կը սիրէր, մասնաւոր համակրութեամբ մը կապուած էր ինծի: Շատ անգամ ծովին եզրը կուգար հետս ու առջեւէս կը քալէր մենախօսելով ինքնիրեն ու բոռնցքը դէպի երկինք ուղղելով: Ամենքին մեկնումէն վերջ, շուրջս ահարկու լուծիւն մը ու հանդարտութիւն մը տիրել սկսաւ: Սրտատրոփ կ'սպասէինք մեծ դէպքին: 10 Ապրիլին, Ուաթնէյ, այն ատեն «Տէյլի Մէյլ»-ի—այժմ «Սթանտարտ»-ի արտաքին բաժնին խմբագրապետը կը զրէր ինծի. — «Այս նամակը ձեռքդ հասնելէն շատ առաջ, նաւային գերակշռութիւնը արդէն վճռուած պիտի ըլլայ Օայրագոյն Արևելքի մէջ:»

Այս նամակը հասնելէն բաւական վերջը Ռուսական միացեալ տորմիդը կը մեկնէր Սայկոնէն: Հարուածն ուշացած էր, սակայն պիտի զարնէր վերջապէս...:

Աննախընթաց ջախջախումին լուրը բերող հեռագիրը այրեց մատներս: Խելայեղ տուն կը վազեմ: Երրորդ նաւատորմն

առանց գնդակ մը պարպելու անձնատուր է եղեր: Ռոժմետով-վէնսքի՝ գերի: Եւ ծեր առիւծը, ծովակալ Էնքուլսթ, որուն համար կարելի է կրկնել, ինչ որ Հիւլիօ ըսաւ Կարիպալտիին համար. — «Պատերազմի միակ անպարտելին» Մանիլլա կը մնար, օտար Բարեկամի մը անձնատուր: Տունէն կը սուրամ՝ դէպի ծովեզրը: Վերջալուսային ժամերու տխրութեամբ տժգուններ է արեւմուտք, Արեւելքէն, սակայն, ծովին խորերէն արծաթի լուսին մը կ'սկսի վեր ելլել, Չուշիմայի անդունդներէն իր վրայ առած կարծես դիակնատիպ դալկունութիւնը խեղդամահ Ռուսաստանին: Յարիսեանին արդար նժարը, հոն կը պատկերանար խոնաւ աչքերուս առջեւ, ու կը տեսնէի որոշակի Բագուլի մէջ ողջակէզ հայ Ադամօֆի շիրմէն շանթի մը մեկնիլը, ծովակալ Մաքարօֆի մարտանաւին գլխուն, ու Հայ Եկեղիցիին Հայրիկը, որ արտասուագին «հոգոց» մը կը մըրմընջէր Չուշիմայի համայնակուլ վիհին վերև:

* * *

Ճիպուղի, 24 Յունիս 1903 (Օրագրէս հատուած մը).

«Տնիբերը — «ասպատակ» յածանաւը, առտուն կանուխ հասաւ Ճիպուղի, լուռ, առանց թնդանօթի սովորական ողջոյններուն ու կիսաշողի կ'սպասէ նաւահանգիստին բացերը: Իրմէ վերջ, իրեն պէս քանի մը խլեակներ ալ պիտի գան կը մտածեմ, ազատները, ու նաւակիս մէջէն, ձեռքով կը խաղամ ալեակներուն հետ, որ անտարբեր խոյս կուտան փրփրացայտ ու ժպտագին: Դէպի Սայկօն մեկնած ատեն անարատ սեւով մը օժտուած էր Տնիբերը: Վերադարձին կամ աւելի ճիշտը սրընթաց փախուստին՝ Հնդիկ Ովկիանի կոհակները զարկեր մաշեցուցեր են ներկը, ու կողերուն վրայ տեղ-տեղ կարմիր, արիւնագոյն կարմիր մը թողուցեր են, որ լայն վէրքերու կը նմանի: Կամրջակին վրայ եմ արդէն: Տարօրինակ խաժամուժ մը և ժխոր մը կը տիրէ: Հինգ վայրկեան կանգ կ'առնեմ՝ նաւակետ Սքալրսքիի քով: Ձեռքը կը սեղմեմ, ու կ'զգամ թէ ծովու ծերուկ այդ աշխատաւորին ձեռքերը կը դողան յուզումէն: Ներսը՝ սրահին մէջ, Սթ. Քիլտայի նաւակետն ու նաւաստիները անկիւն մը քաշուած, հանդարտիկ ծխամորճ կը քաշեն: Կարծես թէ իրենց նաւը չըլլար Տնիբերի ընկերմածը, Դեզին Օովուն բացերը: Մտամփոփ, ու ելած ինքզին-

քէս, կը քալեմ՝ նաւաստիներուն քով: Հոս, հոն, կարմրած աչքերով քանի մը սպաներ: Արմուկս յեց նաւեզրին, դուրսը, դէպի հոն կը նայիմ, ուր շատ չեղաւ, նաւարին և իր ընկերները կեցած էին իրենց ահարկու շքեղութեամբ: Օովային քանի մը թռչուններ կան, որ հոն, նոյն տեղը, կը խաղան ալեակներուն հետ:

Յանկարծ, քովս, ինծի փաթթուած շղուտ բազուկներ մը կ'զգամ, ու գլուխ մը եղնիկի նայուածքով, որ կուրծքիս վրայ կ'լինայ: Քուրշինսքին էր: Եղբօր պէս կը փարիմ իրեն, ու կը թողում որ զիս քաշէ իր սենեակը տանի: Սայկօնի մէջ ինք ծովակալին հրամանով Տնիբերը է փոխադրուէր ու կեանքը այդ հրամանին կը պարտի: Իրարու ձեռք բռնած՝ չի կըցանք խօսիլ, իր ձակատն աւելի դալկագոյն ու էութիւնն աւելի ըմբոստ: Հարցուցի իրեն Պետրովիչը, Մարքօֆը, Եուվանօվիչը, — մեր բարեկամներէն: — Այս աշխարհի վրայ ալ պիտի չի հանդիպի՞նք անոնց, կ'ըսէր աչքերէն կախուած անխօս արցունքի կաթիլը: «Հապա Լուհտէ՞ն, հապա Տէմքի՞նը:» «Անոնք հոս են», ըսաւ նոյն տրտմազին ժպտով ու ձեռքը ձեռքէս անբաժան, զիս վարը, միւս ընկերներուն գտնուած տեղը տարաւ: Չորսերնիս ալ լուռ, իրարու կը նայէինք: Մեր մէջտեղէն, լո՛ւռ, մահուան կանթե՛ղը կ'անցնէր, իր դեղին ցոլքերը ձակատնուս զարկած: Թեթև դուռի զարկ մը, նշանակալից, երբ երեքը միասին ընդ առաջ նետուեցան և չորրորդ մը ընդունեցին ներս, նիհար, բարձրահասակ, կապուտաչուր, կուրծքը ոսկեհոռ ու աղամանդազարդ պատուանշաններով ողողուն: Ռուսերէն ծանօթացման քանի մը բառերէ յետոյ, նորեկը յառաջացաւ ինծի ու ձեռքս թօթուեց, մաքուր ֆրանսերէնով մը լուրեր հարցնելով: Նաւային բարձրաստիճան սպայ մըն էր, երիտասարդ, Ռուս հին ազնուականի մը միակ զաւակն ու ժառանգորդը: Շրթունքս փակուած էր կարծես: Ձէի կրնար խօսիլ: Նորեկը թիկնոցակը հանեց, մէկ կողմ՝ նետեց ու ցած ձայնով միշտ ոռուսերէն սկսաւ խօսիլ բարեկամներուս հետ:

Եւ յանկարծ ինծի դառնալով, — «Լսեցի թէ հայ ես. — Քուրշինսքին ու բարեկամներս կ'ըսեն թէ հոգիով համակիր ես նոր Ռուսաստանին, զոր կը յուսանք հիմնել: — Նոր Ռուսիա մը, ուր գոյութիւն չունենան նախապաշարումի ու տգիտութեան կերտած ամբարտաւանները ժողովուրդի խաւերուն

մէջ և ուր Արդարութիւնը փայլի հաւասարութեան, եղբայրութեան և ազատութեան վերև: Մերունի հայրս սրտին ցաւէն պիտի մեռնի, զիս նոր ուխտի դրօշին տակ երգուած տեսնելով, սակայն ընկերներու հետ պիտի մեռնիմ մեր նշանաբանին համար. — « Դիակներուն վրայէն ընդ առջ... »: Յուզումէն կը դողար խօսած ատեն և աչքերն անսովոր փայլով մը կը շողային:

« Չուշիման բաւական չէ՛ բոնապետութեան գերեզմանն ըլլալու համար: Տգիտութեան խաւարն անդունդներու մէջ չի թաղուիր: Լուսաւորե՛լ պէտք է զայն », — վրայ բերաւ անդիէն Քուրչինսքին, որ շամբանեայի գաւաթները լեցնելու զբաղած էր:

— « Կախաղաններու կատարէն լուսաւորել, իբր ջահ կախուելով » — մրմոաց ակօաներուն տակէն Տէմքին:

— « Հարիւրաւոր, հազարաւոր կախաղանի ջահերն ի՞նչ են որ, շարունակեց նորեկը, տգիտութեան այն լայնատարած քառսին մէջ, եթէ ոչ հոս ու հոն՝ աղօտ, աստղային նշոյլներ, որ մութին սոսկումը կը կրկնապատկեն: Գիտութեան արե՛ւը պէտք է մեր դժբաղդ աշխարհին համար, և անձնուէր, անյողդողդ գործունէութիւն մը:

— « Աստղալից գիշերներուն է որ կը յաջորդէ արեւը, ըսաւ Լուհտէ, որ մինչև այն ատեն կը պատուհանին սեւուած էր աչքերը ու բառ մը չէր հանած բերնէն:

— « Դուք կովկասի մէջ ափ մը ժողովուրդ էք, շարունակեց նորեկը, առանց ուշադրութիւն ընելու միւսներուն ընդմիջումներուն, սակայն ձեր յառաջդիմութեան շնորհիւ կարող էք դաս տալ լայնածաւալ Ռուսաստանին: Դարերով Ձեզ ճընշեր, խեղդեր, աքսորեր են, նոյն իսկ այս պահուս բռնկած է կովկասը, այլ դուք կը տոկաք ու կ'ապրիք, արհամարհելով ամեն ճնշումները, որովհետեւ Լոյսը չի՛ խեղդուիր, չի՛ մեռնիր այլ կը ձևափոխուի, հոս ուժ, հոն աղաղակ, և անդին շանթ ըլլալու համար: Թող լոյս տրուի Ռուսիոյ և ան պիտի ըլլայ, այսօրուան Ռուսիան, ի՞նք պիտի ըլլայ քաղաքակրթութեան ասպետական յառաջապահը:

— « Այդ լոյսը նահատակներու գերեզմանէն միայն պիտի ծագի, » կրկնեց վերստին Տէմքին, շրթունքը կծկելով ջղաձգօրէն:

Գաւաթները ձեռքերնիս, մագնիսական տպաւորութեամբ

մը կարծես կապուած նոյն սեւեռամտածումին շուրջ, ու նոյն երազով գինովցած էինք: Կամաց ու դողացող ձայնով մը առաջինն էս եղայ բաժակ առաջարկող Ռուսաստանի ազատագրութեան աշխատող բոլոր քաջորդիներու կեանքին:

Նորեկը խանդավառութեամբ բաժակը զարկաւ և «ամբողջացունե՛մ առաջարկդ, ըսաւ: Խմենք, ընկերներ, կովկասի ու հոն պայքարող Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կեանքին: »

* * *

Յուշատետրիս տողերն հոս կ'ընդհատին: Հիմակ սարսուռով կը վերապրիմ այն օրուան կեանքը: Նորեկն իր ըսածին պէս գնաց փակել իր ծերունի հօր աչքերը: Շղթայակապ Սիւպերիա աքսորուեցաւ: Տէմքին ու Լուհտէ, իրենց երազածին պէս, գացին ջահի նման օրօրուիլ կախաղաններու կատարէն: Քուրչինսքին գնդակով մը զարնուեցաւ:

Չուշիմայի անդունդէն աղատած, գացին հայրենակից դահլճներու ձեռքով իյնալու: Ու դեռ բիւրաւորներ իրենց պէս, կը տառապին, կը հիւժին, կը մեռնին, ու դեռ բռնկած է կովկաս ու չ'ազատագրուեցա՛ւ Ռուսաստան: Այս աստղալից գիշերին խորէն, կ'ոգեկոչեմ գձեզ, իմ գաղափարի անվեհեր ու տարաբա՛ղդ ընկերներ, որ մատաղ կեանքերնիդ զո՞հ տարիք ազատութեան բագինին, ըսէ՛ք ինձի ե՞րբ պիտի ծագի սրբազան Արեւը, Արեւելքի ու Արեւմուտքի բոլոր ընկճուած ու գերի ժողովուրդներուն կեանքին վերև:

տիկ Կոստանտնուպոլս 1909, ա՛. 852



Ն Ո Ր Տ Ն Ա Կ Ս

Կը զարնուին կոհակները ծովափին,
Ուրուականը որոտագին կը սուրայ,
Երկինքներէն բիւր կայծակներ կը թափին,
Անդունդին վրայ:

Անապատներ կը խլրրտին աւազէ
Յորձանքներու տակ հրատապ, անսահման,
Բորենիի կաղկանձիւն մ'ալ կը վազէ
Ի գերեզման:

Այս ձայներուն մէջ անձանօթ, ահաւոր,
Ննջէ՛, Տընակ, ստուերներով թախծագին,
Ամայուլթեանց դու քընացի՛ր հոս անդորր,
Իբրև հոգին...:

* * *

Կ'երազէի մերթ անտառներ անշաւիդ,
Կամ մոռցըւած անտես վիհեր ցիրուցան,
Ուր ընկղմէր կեանքի վտակն 'ի բաւիդ
Լուռ ու անձայն:

Կամ բարձունքներ գերդ Ողիմպոսն ու Բուրգեր
Ու Հիմալան, կ'ուզէի հոն շինել բոյն,
Մեծ Անհունը գտնել հոգւոյս իմ ընկեր
Յաւին հանգոյն:

Կեանքի խլեակ, կոհակ մը հոս նետեց զիս,
Որ պլլուի՛մ քեզի, Տընակ մենաւոր,
Երանութեան ստուերներուն ովասիս,
Խաղաղ, անդորր:

* * *

Գէթ չե՛ս զգար, որ հեռաւոր լեռներէն,
Պըսակ իբրև ճակտիդ չեկա՛ւ ափ մը ձիւն,
Ու Մայիսներ քեզմէ հեռու կը բուրբն,
Ժպիտ, աւիւն...:

Ձի դողացիր դուն սառնաշունչ փոթորկին
Գրկերուն մէջ: Արեւակէզ կուրծքէդ վար,
Բաղեղն աղուոր չի տարածեց անձկագին
Ճիւղեր դալար:

Արևին տակ այրէ ճակատդ ինձ նման,
Վտակներու տեղ ե՛ս օրօր թող ըսեմ,
Ովկիանն ալ ինձ: Ննջէ՛ Տնա՛կ սիրական,
Լքուա՛ծ Եղեմ...:

Գոնէ վտակ մը քովիկէդ թող սահէր,
Հորիզոնըդ փակէր կանաչ մի բլրակ,
Որ գտնէի՛ սևեռելով դէպի վեր,
Սուրբ յիշատակ:

Որ դաւակս ալ սիրէ՛ր քեզի, ի՛մ Տնակ,
Վտակիդ շուրջը թող գար ման,
Կանաչ բլրակն ըլլար սահման
Իր երազին և իղձերուն բովանդակ:

Դեռ չի մոռցաւ, արտօսրագօծ ու թոթով,
Քանի անգամ ուզեց ինձմէ մանկութեան
Հիւղակն ու վարդ: Դարձայ մունչ ու հոգեխոտով
Դէպի Ովկիան...:

* * *

Կը զարնըւին կոհակները ծովափին,
Ուրուականը որոտագին կը սուրայ,
Երկինքներէն բիւր կայծակնե՛ր կը թափին,
Անդունդին վրայ:

Անապատներ կը խլրրտին աւազէ
Յորձանքներու տակ հրատապ, անսահման,
Բորենիի կաղկանձիւն մ'ալ կը վազէ
Ի գերեզման:

Այս ձայներուն մէջ անձանօթ, ահաւոր
Ննջէ՛, Տնակ, ստուերներով թախծագին,
Ամայուլթեանց դու քընացի՛ր հոս անդորր
Իբրև հոգին...:

Տիրե-Տափա, 14 Յուլիս 1907.



Չ.Ո.

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն Ը



ակառակ տարօրինապէս հղօր յիշողութեանս, որ իմ երանութիւնս ու դժբաղդութիւնս միանգամայն եղած է, կան իրողութիւններ, որոնց շղթային օղակները կորսուած, անհետացած են մտքիս մէջ ու պարապ տեղը կ'աշխատիմ վերակազմել դէպքեր, մտաբերել անուաններ ու թուականներ, վերակազմել աղօտացած առ յաւէտ նկարներ: Չեմ կրնար:

Ամպ ամպի վրայ, մշուշ մշուշէ բարձր և անոնց ծալքերուն մէջ թաղուած դէպքեր ու դէմքեր, որ ալ պիտի չի ժրպտիս ինծի: Ու կը կարմրիմ հիմակ խոստովանելու թէ Եփրատ Գօլէճին մէջ անցուցած պատնեկան վեց տարիներս, այդ խառնաշփոթութեան մէջ կը սուզուին, ճիշդ այն հիանալի գիւղակներուն նման Խարբերդի դաշտին, որ գարնան քանի մը առտու՝ սպիտակ բամպակի մէզին ներքև անյայտացած կը գտնէինք: Բան մը միայն չեմ կրցած մոռնալ, անհուն տառապանքն է, լքուած որբութեան, վիշտը անկարող խոյանքներու և անիրականալի երազներու: Ուսուցիչներուս պաշտելի դէմքերն անգամ գրեթէ մշտապատ են, հակառակ ունեցած լուսանկարներուս, դեղին ու դալկուն: Իրենց հոգի'ն է որ կը յիշեմ, նոյնացած Եփրատ Գօլէճի հոգիին և այդ բաւ է, որ ատենը մէկ զգամ աղօտացած աչքերէս կախուած արցունքի մէկ կաթիլ:

Դառնօրէն քաւեցի, անապատին մէջ՝ պատանեկան սայթաքումներս, վեր, յաւերժապէս վեր սլացքս խորունկ պատճառը ունեցաւ, որ ստիպեմ օրին մէկը մեր անմահ Եփրատը, զիս՝ — անառակ որդի — վերընդունելու իր զաւակներու շարքին մէջ:

Քանի՞ հոգի էինք շրջանաւարտ, մոռցած եմ: Քանի մը հոգի միայն հազիւ կը ներկայանան մտքիս առջև, — Յուսիկ Մելքոնը, անմոռանալի ուսուցչապետիս որդին, Արսէն Տիրանը, Յովհաննէս Գասապեանը ու Հէնրին: Կայի՞ն ուրիշներ ալ: Չեմ գիտեր, եթէ կային, թող ներեն ինծի: Աւարտականի տա-

րին, վերջին օրերը, հեռացած էի ամենէն, ես զիս հեռացուցած աւելի: Իրենցմէն մէկը «մնաս բարովի» երգը գրած էր: Ես չ'երգեցի միասին, ու վերջին ճառս, որուն նիւթը կեանքիս չափ տխուր էր — «Գերեզմանին Եզրը» — հեծկլտալով արտասանեցի: Խուռն բազմութիւն մը կար սրահին մէջ, ոչ մին տեսայ, բացի Խարբերդի վեց տարիներու եղբայրակցէս Ռուբէն Զարդարեանէն, որ եկած էր անմահ թիկատինցիին հետ, անցեալիս դազաղին՝ վրայ խօսած դամբանականիս ունկնդրու համար: Ոչ մէկուն ձեռքը սեղմեցի, վիշտը զիս այնչափ խորխտ ու մարդատեաց ըրած էր: Վկայական մը դրին ձեռքս, ուրիշներուն վկայականին պէս կարմիր ժապաւենով մը կապուած, սակայն այնչափ սե'ւ ու սևագիծ, հոգիիս նման:

Պոլսէն բարեկամիս Մովսէսեանի ձեռքով ե'տ զրկեցի այդ վկայականը: Ինձմէ խզել կ'ուզէի հին անցեալը: Անկարելի եղաւ սակայն: Գատը-զիւղի ապարաններուն, Քիրմաստիի ու Պանտրմայի բուրաստաններուն, Գորտելիոյի Մայիսներուն ու Ճիպուղիի ամայքներուն մէջ Եփրատը հետեւեցաւ ինծի ու վերջապէս օր մը, յաւերժութեան չափ անմեռ, տեսայ որ իր բազուկները երկարեց ու վերադարձուց վկայականը ուսուցչախուժբին խանդաղատ ու գորովագին համբոյրներով:

Ու գրեցին ինծի, աշխարհի ամէն կողմերէն, Քալիֆորնիայէն պաշտելի Մելքոնը, Նիւեօրքէն զգայուն ու պերճախօս Պէննէեանը, Ասիօլայէն բարեհամբոյր կարապետեանը, Պոսթոնէն Խանդաղատ Եշիլեանը, ու Խարբերդէն Հայրենի հողին հաւատարիմ անմահ թենէքեճեան, Նահիկեան, Սողիկեան և Որբերեան: Գուրգուրանքով պահած եմ իրենց գրութիւնները, Տօքթ. Պարնըմի և նախագահ Բիկզի նամակներուն հետ: Անոնց ամենքն ալ պիտի կտակեմ զաւկիս որ օր մը կեանքի բարձունքները դէպի իր սլացքին, կարդայ ու քիչ մը աւելի յիշէ կեանքի թափառականն ու անապատի արդիւնքները:

Այդ նամակներէն մին միայն կը փորձուիմ օրինակել հոս, Փրօֆ. Նահիկեանինը, իր անուշ ու պարզ բովանդակութեան համար:

Խարբերդ, Եփրատ Գօլէճ, 10 Փետր. 1909

«Միրելի Սանս,

«կը ցաւիմ որ Ձեզի գրելու համար այսչափ մը ուշանալու ծուլութիւն ունեցայ: Ձեր 5 դեկտ. 1907ի նամակը, Մօքայի խահուէն ու վերջերս զրկած Միսսիսներդ ընդունած եմ:

ԺԲ

Ա Ղ Օ Թ Ք Ը

(Ս.Սմոնաճառի ուսուցչապետի Ե. Թեոֆիլեանի՝ ԸՆԳԻ. Պատմութեան Լեւոնիդասի դասին օրը՝ առատուելով մեզ լացնելուն ի յիշատակ, նուէր):



Մ ԱՆՄՈՒԱՅ ՀԱՅՐԵՆԻՔԷՍ քիչ մ'անդին,

իբրև գագաթ մ'հրսկայի

Ապառաժ մը խորշոմներով իր ճակատին,

Վէս Եփրատին կը նայի:

Կը նայի նա, ամայութեան մէջ ցցուած,

Հին դարերու հոսանքին,

Սեպաքանդակ աղօթք մ'է նա առ Աստուած,

Լոած հառա՛չ մ'անձկագին:

Թափառական արծիւ մը մերթ կ'առնէ կանգ

Ու կը թռչի վեհօրէն,

Կտուցին վրայ սուր ճիչ մ'իբրև արձագանգ,

Անյիշատակ օրերէն:

Լուռ աղօթքը իբրև պսակ ճակատին

Չերդ մի հսկան Հոմերի

Ապառաժը քարացած վի՛շտ մ'անձկագին

Վէս Եփրատին կը յառի:

Ինքը՛ անշարժ, ան՛ կը սուրայ զայրագին,

Ինք՛ լուռթի՛ւն, ան՛ բողոք,

Գետն յաւէտ թռի՛չ, մինչ կապուած է իր հոգին,

Օրէնքին տակ անողոք:

* Մալաթիայէն խարբերդ ճամբուն վրայ, Եփրատ գետին եզրը, բարձր ապառաժ մը կայ, որուն վրայ սեպագիր՝ Քետացի թագաւոր մը առ Աստուած աղօթք մը քանդակել տուած է: Եփրատ Գօլէճ իր վեցամեայ երթեւեկութեան՝ այս օրին պէս կը յիշէ այդ ապառաժին իր հանդիպումը, դրախտագեղ Մալաթիային այն զաւակը, որ գէթ թափառումներուն մէջ, Չայլտ Հարօլտի բաղգակեց պիտի ըլլար:

Այնչափ մօտ այլ իրարմէ զա՛տ յաւիտեան,

Հին կայքին մօտ դրախտին,

Ուր ծառին տեղ կեանքի ու՛անմահ Գիտութեան

Լացող ուռիք կը վիթթին.

Ժայռին աղօթքն ու ընդվզումն ալիքին

Կը միանա՛ն իրարու,

Այլ ափսո՛ս, նոյն ամայութեա՛ն կը յանգին,

Անպատասխան, ահարկու...:

Եւ ինչ տենչով մ՛ անզուսպ, անյագ, խօլական

Այդ աղօթքը երկնային

Յաղթանակովն արբշիւ, հպարտ, հին արքան

Դրոշմեց ժայռի ճակատին:

Աւելի վե՛ր մոռացումէն տրտմագին

Կարծես կ'ըսէ՛ր դարերուն,

Ես՝ օծում, դուք՝ անմահութի՛ւնը կեանքին

Պիտ՛ նուիրենք իրարու:

Ինքն ու բանակն իր սահեցան ու զացին

Եփրատին պէս դէպ՛ առաջ,

Ինչպէս հողմին առջև ինկած առանձին

Բեկորն ամպի մշտավազ:

Շիրիմ մ'ունի՛: Չե՛մ գիտեր, այլ դեռ մանուկ

Չո՛ւր փնտոեցին իմ աչքը

Արքան, որմէ՛ ոչ իսկ ստուեր մ՛յեղյեղուկ

Ժայռին ներքև կը հանգչէր...:

* * *

Դեռ պատանեակ այլ իղձերով անսահման

Քանի անգամ տառապանքի ուխտաւոր,

Գացի խնդրե՛լ տագնապներուն իմ դարման

Ժայռին անդորր:

Խորշոմն աղօթք մը գծեց լուռ ճակտիս վրան,

Չոր կարդացի՛ն ամեն աստղերն երկինքին,

Ու սիրտս հեծե՛ց յիշատակի գերդ խորան

— Ցաւի՛ բագին...:

Կեանքս ուղեցի կապել իրեն յաւիտեան,

Աղօթք մ՛ըլլալ Եփրատին քով ծնրադիր,

Գինովութիւնն ըմպել անոք մենութեան
Զերդ տարազիր:

Տարահալած գտայ զիս ամբն ովկիանին,
Եւ զբացի՛ անդունդներու մոնչող,
Ուր կոհակներ երկինքներո՛ւ կը բաղխին
կայծակնաշող:

Այլ դուն հոն ես ապառաժին իբր ընկեր,
Դիւցազնական ցեղ, մարտիրոս հայրենիք,
Որ Եփրատին մէջ կը դիտես քու պատկեր,
Սէգ, խաղաղիկ:

Ճակտիդ վրան աղօթք մը կայ ողբալի,
Ճակատազիրն չի հասկըցա՛ւ զայն ամսո՛ս,
Այլ որուն շեշտը հոգւոյս մէջ կը հալի
Արտասուահոս:

Սեպաքանդակ աղօթքըդ ամբն Եփրատին,
— «Տէ՛ր, ալ բա՛ւ է խաչելութիւնս այս անհուն,
«Պայծառագոյն արշալոյսնե՛ր ալ ծագին
«Թող հէ՛ք Հայուն:

«Ու դուն, Եփրատ, գետ դրախտի՛ քաղցրանուն,
«Ալեակներէդ սլանայ թող նոր մի Մովսէս,
«Մեռած յոյսեր հրաշքով առնեն յարութիւն
«Յիսուսի պէս »:

Այնչափ մօտ այլ իրարմէ զատ յաւիտեան,
Հին կայքին մօտ դրախտին
Ուր ծառին տեղ կեանքին՝ ւ անմահ զիտութեան
Լացող ուռիք կը փթթին,
Ժայռին աղօթքն ու ընդվզումն ալիքին,
կը միանա՛ն իրարու,
Ա՛խ, արդեօք միշտ ամայութեա՞ն պիտ՛ յանգին,
Անպատասխան, ահարկու...:

Ճիպուղի

Վ.Գ.

ՄԵԿՆՈՂԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

(Անդրժիբւէն Գրուած)

Ն Ա Խ Ա Ռ Ա Ն

ՀՈԳԻՍՍ ՄԱՐԻՆ. —



Լիւեամ՝ Սթէտի «Ճիւլիայլն Նամակները» տարիներ
առաջ կարդացած, լացած ու մխիթարուած էի:
Աւետարանէն վերջ անդրաշխարհի առաջին պատ-
գամը եղած էր ինձի համար այդ գիրքը, որուն ընթերցումով
անգամ մըն ալ հաւատացած էի Հաւատքին և Անմահու-
թեան: Դէպի անապատ ընտանովի աքսորանքիս երկար
ու թախծագին գիշերներուն, նայուածքս յաւէտ սեւեռած
բեւեռային աստղին ընդնշմարել փորձեր էի տարակոյսի ու
կասկածի խորքերուն մէջ դողդոջուն նշոյլ մը, որ գերեզ-
ման մեկնող սիրելիներէն համէր: Տարիներու փորձէն
վերջ, հիւանդագին պայծառատեսութեան մը յանգամ միտքով,
կը գտնեմ թէ մօտեցած եմ այդ նշոյլին, որ շրջմովի հուր մը
լինելէ դադրեցաւ, մանաւանդ այն օրէն ի վեր, ուր մտերիմ
հոգիի մը թռիչն ալ դիտեցի դէպի այդ սահմանագիծը, որ պող-
պատի պէս հատու և պաղ, կ'անցնի սիրելիներու միջևէն: Տե-
սեր էի ուրիշ շատերուն անվերադարձ մեկնումը, որ երբ իջ-
նէին գերեզման՝ անթափանցիկ վարագոյր մը կ'իյնար իրենց
և իմ միջև: Այն հոգին, որ մեկնեցաւ վերջին անգամ, բաց
թողուց վարագոյրին մէկ անկիւնը, թէ ես աչքերով չիտեսայ
ուսուր ամայութեանց մէջ լքուած հողակոյտ մը ցուցուցին:
Մարմինը հո՛ն. էր, ըսին: Կրնա՛ր ըլլալ: Լացի հոն, ինչպէս
ուրիշներ: Սակայն յամառ վստահութեամբ հետեւեցայ իր հո-
գեփիւռը, և ոչ ալ փշալից անտառներուն մէջ, ոչ վայրի և ըմբոստ
չունի դայլայլիկները կը բերէին արձագանգը իր առ յաւէտ
մարած ձայնին: Անվհատ կը հետեւէի սակայն իր յիշատակ-

ներուն, հոս ու հոն ցիրուցան, Ճիշտ աղաւնիի մը թօթափած աղուամազին նման, որ կ'ըսէ քեզի թէ թոչունը անցաւ անկէ: Ու գիշեր մը հասա'յ իրեն, լսեցի իր ձայնը, ու անսա'յ թէ կ'ապրէր ան տակաւին: Հին ոտանաւոր մը կը կրկնէր, կիսատ ու տխրահունչ թարգմանութիւն մը:—

«Կոթնելով ապառաժի մը,

«Մենաւոր կը մտածեմ,

«Թէ ինչո՞ւ երբ դուն գացեր ես,

«Աշխարհի վրայ դեռ կ'ապրիմ...»

Անապատ կեանքիս հրեշտակին հետ միասի՛ն լսեցինք այդ ձայնը, և լուռ ու դողդրղազին իրարու ձեռք սեղմեցինք, շունչերնիս բռնած, որ շուտ չի մեկնէր մեր քովէն:

Եւ այն գիշերէն վերջ յաճախ այցելեց մեզի: Գրիչը ձեռքս, թողի որ սահէր թղթին վրայէն: Ես չ'էի՛ գրողը, այլ կ'օրինակէի՛ պարզապէս, ինչ որ կ'ըսէր Ոգին: Ընդօրինակուածը մերթ նամակի մը երեւոյթը կ'առնէր, ու մերթ ալ օրագրի, այլ միշտ ազնիւ տառապանքի ու հատնումի դրուագ մըն էր, զոր այսօր կարգի դնելով հրատարակութեան կուտամ: Ուրիշները հոն կրնան գտնել ցաւի ողբազին մրմունջը, կամ մխիթարութեան սրտապնդիչ աղաղակը: Մենք զանի կարգալով, մեր անապատի ու մենութեան երկար տարիները պիտի յիշենք և իրարու նայինք: Անոր համար, ցաւի, արցունքի և հաւատքի փալվիլացող ժպիտը այս թերթերուն վրան, կը խնդրեմ որ նուիրես զայն. մեր պաշտելի մայրերուն յիշատակին:

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ

17 Յունիս, 19..

— Այսօր երկրորդ տարեդարձն է մահուանս, և առտուն կանուխ սիրելիներս բոլորուած կը գտնեմ վերստին, մենաւոր ու լքուած հողակոյտիս բոլորտիքը, աչքերնին արցունքով լեցուն ու սրտերնին անմխիթար: Ես իրենց քովն եմ, կ'ուզեմ սփոփել զիրենք ու չեմ կրնար: կ'ուզեմ պատմել իրենց մոռացումին ու մահուան անհուն երանութիւնը, սակայն ձայնս չի՛ հնչէր իրենց հողէ ականջներուն:

Անոր համար կը գրեմ քեզի ով իմ պահապան Հրեշտակս որ հոգիիս հողէ պատեանին ընկեր եղար օրօրոցէս մինչեւ գերեզման, կը գրեմ ինչ որ պիտի ըսէի իրենց, ու կ'ուզեմ որ

այս նամակներս և օրագիրս տանիս անոնց, որ տրտմութեան հովիտին մէջէն կը քալեն դեռ և տխուր աչքերով զիս կը փնտռեն: Դիւրաւ պիտի ճանչնաս զիրենք, աշխարհի մէկ անկիւնը մեկուսացած, ճակատնին խորշոմե՛ր է արդէն, այն երկուքը, պիտի ճանչնաս զիրենք անհուն սիրոյ լուսարձակ աղամանդի այն երիզէն, որ տարիներէ ի վեր կը կապէ սրտերնին իրարու և պիտի կապէ յաւիտեան: Մեկնած պահուս իրենց բոյնին մէջ միայն մէկ ճոռուող ունէին, հիմակ երկուք ունին ու երկրորդը... անունը սորվելու պէտք չունիս, սուր անոր այն անունը, որով կը կանչէիր զիս երբեմնի կեանքիս մէջ և ան իր պայծառ ու սև մարգարտի շողացող աչքերով պիտի ժպտի քեզի: Կը գրեմ՝ մանաւանդ, որ երբ օր մը մեծնան, կարենան զիս յիշել իմ ցիրուցան զաւակներս, ու չի մեղադրեն մայրերնին, որ այնչափ անժամանակ մեկնեցաւ քովերնէն: Միշտ մէկէն միւսին սնարին քով կը սուրամ, կը համբուրեմ զիրենք, — այնչափ հեռու են իրարմէ, կը հսկեմ երբ քնանան, այլ իրենք զիս չե՛ն տեսնէր: Դէմքս աղօտանալ սկսաւ իրենց մանկային մտքերուն մէջ, և յիշատակս կը վախնամ թէ պիտի մոռնան օձել արցունքով: Կը ներես ինձի, իմ պահապան Հրեշտակս, եթէ այս երանութեան անդրշիրմէն նորէն վիշտով է որ կը գրեմ: Ամէն բան կը փոխուի՛ վարազոյրին այս կողմը, մայրենի սրտէն ի դատ:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ

16 Յունիս 19...

Այսօր վերջին օրն է որ կ'անցնեմ աշխարհի վրայ: Երեք զաւակներս հեռացուցեր են քովէս: Հնգամսեայ գառնուկս ալ կը տանին անշուշտ, սակայն զայն գիրկս սեղմած եմ և մարդու չեմ տար: Առտուն կանուխ հոս եկանք պանդոկէն, — գետնայարկ սենեակ մը: Քալելով եկայ, սաւանս իմ ձեռքով շիտկեցի: Գերմարդկային ուժ մը կը ծաւալէր մարմինիս ամեն կողմը: Չէի՛ ուզեր որ տեսնե՛ն թէ կը մեռնէի: Ժպիտը շրթութունքիս՝ կը խօսէի ամենուն հետ, փոքրիկիս շրթները թոյլ ու անարիւն ստինքիս փակած: Աչքերս պայծառ էին մինչեւ իրիկնամուտ, երբ երակներուս մէջ կրակ մը կը վառէր: Երկու մոմ վառել տուի: Ժամը եօթն է արդէն ու խափշիկ սպասու-

հին կը մրափէ անկիւն մը: Խեղճ կինը օրերով չէ՛ քնացած ինծի հետ: Սիրտս անցնիլ մը կ'զգամ ու կը տեսնեմ որ մովին լոյսին գողացող ստուերները կերպարանք կ'առնեն, կը շարժին ու ինծի կը նային տրտմազին: Ճիշտ մնարիս մօտ, առաջին անգամ ըլլալով, քեզի տեսայ իմ պահապան բարի Հրեշտակս, քու ժպտող քաղցր ու երկնային՝ նոր կեանքով ողողեց և ու թիւնս: Դուն, անտես ընկեր իմ կեանքին, կը տեսնէի զքեզ և ան ինչ անուշ էր քու դէմքդ: Ու ճիշտ քու քովիկդ, փետրագարդ թեւերուդ փարած, մայրս կը ժպտէր ինծի, մինչ վաղամեռ հայրս, յոգնած և աւելի լուրջ, անկիւնը, պարապ աթոռին վրայ կը հանգչէր: Ինչ վշտազին ու քաղցր է նոյն ատեն բաժանումը այս անցաւոր աշխարհէն: Ժամը ու թիւն վարագոյրը ինկած էր աչքերուս առջեւէն և ականջներս աւելի զգայուն, սկսան թրթոռալ միւս կեանքի յաւերժական մեղեդիներէն: Դէպի Գողգոթա վերելք մը եղած էր կեանքս: Ոտքերս կը դողային, ցաւատանջ մարմինս ալ ուժ չունէր աւելի վեր ելլելու: Բարձունքին միւս կողմը կը տեսնէի Աւետեաց խոստացեալ երկիրը ուր վիշտ ու ցաւ չի կան: Այնչափ հրաշալի ու գեղեցիկ, սալայն մեկնողը՝ առանց ուղեւոր, այդ բարձունքէն դէպի վար կը նայի, անցեալ կեանքին, և ահամայ կը հառաչէ այս կողմի վշալից ուղիներուն ետեւէն, թէ և կը տեսնէ հեռուն, անմահութեան բուրաստանները: Այդ ժամէն իսկ սկսայ հեռանալ, զգացի թէ կը բաժնուիմ ինծի սիրելի ամեն իրերէն: Թող որ քեզմէն առաջ անցնի և մնարիս աւելի մօտ գայ մայրս, իմ պահապան բարի՛ Հրեշտակ. թող զգամ իր շուրջը և ան ըսէ ինծի, թէ ինչպէս կրնայ մայր մը բաժնուիլ իր զաւակներէն, ինք որ տարիներ առաջ մեզի մինակ թողելով հեռացած էր մեզմէ:

Աւելի մօտ, մայր իմ, քիչ մը աւելի՛ մօտ, տես, հնգամսեայ գառնուկս, դեռ փարած է սքինքներուս, ու կուլայ, դուն առ գայն իմ զրկէս, եթէ կրնաս, ու տուր գայն քու միւս զաւակիդ, որ կ'արտասուէ անշշուկ:

Մայրս քովս է, ձեռքը ճակատիս վրան և ալ կրնամ մեկնիլ: Անդրաշխարհի սահմանագծին վրայ, զլիսու պտոյտ մը կ'զգայ հոգին, անորոշ տատանո՛ւմ մը, մէկ այս ու մէկ ալ այն կողմ հակո՛ւմ մը, ճիշտ մատուռի կանդեղին պէս, որ շիջանելէն առաջ յանկարծական պայծառութեամբ մը բոցավառի:

Ժամը 11. զաւակս անօթութենէն ու ցաւէն յոգնած՝ կը

քնանայ: Ժամը 12. կը ներեմ անոնց որ լացուցին զիս: Մարմինս կ'իյնայ անկողնիս վրան, օրհասականի ջղաձգումներով և ալ չ'եմ տեսներ, չ'եմ խօսիր, զաւակս չ'եմ կրնար գրկել: Աշխարհի հետ կապերը խզուած չ'են բոլորովին, որ հոգին թոխ առնէր ու ոչ ալ կ'ուզեմ որ սլանայի: Մ'նալ պէտք էի, սակայն հարկ է մեկնիլ: Պահապան հրեշտակս մեղմօրէն ճակատս կը հանգչեցնէ բազուկին վրան ու կը մըմնջէ

- « Մեկնի՛նք յոգնած հոգի,
- « Տառապեցար ալ բաւ,
- « Դագրի՛ն այլ ևս կեանքի
- « Յաւերն անբաւ... »:

Ու հիմակ փայլակի պէս կ'անցնին հին օրերը, մարած աչքերուս առջեւէն, օրօրանէն մինչև շիրիմ: Կը դիտեմ կեանքս որ յիշատակ եղաւ ու դէպի անդի՛ն կը հակիմ: Մենկնիլնք...:

— (Յաջորդ նամակներուն ու օրագրին հրատարակութիւնը ընդհատուած, Մարիիս փափաքին համաձայն:

Ռ. Ռ.



Ճ.Գ.

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ Պ

(ՍՐԲՈՒՀԻՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Քանի մ'օր ալ, քոյրիկ, հոս ենք տակաւին,
 Ու պիտի գանք մոլոր տկար քայլերով,
 Ընկերանալ այն մինաւոր քու շիրմին,
 Ուր կը հանգչին մայրենի սիրտդ ու գորով,
 Ու տառապած քու մարմինն:

Կը կարծեմ թէ կ'զգաս արդէն ու տրկար
 Մեզ կը հասնի ձայնդ հրեշտակի թեւաբեկ,
 Երանութեան վայրկեանները ետ չ'են գար,
 Սիրելիներս, քիչ մ'ալ ինծի մօտ կեցէք,
 Ա՛խ, զիս մինակ մի՛ ձգէք:

Այլ դուն մինա՛կ թողիր տնակդ ու գացիր.
 Որբուկներդ անմայր ու մեզ վշտագին,
 կեանքի յոյսեր, իղձ ու մորմոք ցանուցիր,
 Ինկա՛ր նման բուրաստանի այն ծաղկին,
 Որ կը կոտորի՛ չի՛ հիւժիւր:

Ծաղի՛կ, ինչ թարմ է յիշատակն անցեալին,
 Երբ անապատն եկար այնտեղ բուրել դուն,
 Թռչո՛ւն, որ հոն ծնողազուրկ, անձկագին,
 Դայլայլիկն հոս՝ որոնեցիր զուարթուն,
 ...Հանդիպեցար պատրանքին:

Անբա՛ղդ աղջիկ, որ կանուխէն վշտագին
 Տեսար մայրդդ, որ ձեզ մինա՛կ կը թողուր,
 Նախանձեցա՞ւ իրեն, քոյրիկ, քու հոգին,
 Որ մեկնեցա՛ր այնպէս անձայն ու տխուր,
 Աչքերդ յառած սև հոգին:

Մտասեւեռ, մնաս բարով մ՛իսկ չ՛ըսա՛ւ,
 Գնաց հոգին, ինչպէս կ'երթան տունէ տուն,
 Մտածեցինք թէ կը մնա՛ր, ինք տակաւ
 կը վերանա՛ր թռիչներով ոստոստուն,
 Երանութեանմբ մը ամբաւ:

Քանի մ՛օրէն պիտի մեկնի՛նք, այլ ինչպէ՞ս,
 Ինչպէս թողունք ամայքին մէջ իր շիրիմ,
 Այսչափ հեռուն ու մինաւոր...: Վշտակէզ
 Գէթ մի՛ն ըլլար տառապանքի մտերիմ,
 Որ այցելէ՛ր մերթ իրեն,

Որ այս երկրին փշեայ անբոյր ծաղկունքով,
 Ատենը մէկ խա՛չ մը բերէր իր վրան,
 Ըսէր թէ մենք չե՛նք հեռացած, այլ իր քով
 Մեր հոգիներն օր ս՛հանդիպիլ կը յուսան
 Ձերդ արտասուքն ու գորով:

Ըսէր իրեն թէ շատ անգամ դողդոջուն
 կը հաձբուրե՛նք ձագուկները իրեն տեղ,

Պատրանքն ունին՝ թէ կը մնայ իրենց բոյն,
 « Մայրիկն ո՛ւր է կը հարցնեն երբ անմեղ,
 « Իզմիր գնաց » կը ստենք:

— Իզմի՛ր, բայց ան մեզի մինակ չէ՛ր թողուր
 — Իզմի՛ր, ... բայց դո՛ւն պիտի ծածկես երբ մսինք
 — Իզմի՛ր... կ'ուզենք մե՛նք ալ գնալ մօ՛րաքոյր,
 — Հոգիներ՛րս, մե՛նք ալ կ'երթանք օր մ՛ըսինք
 Ու լացի՛նք...:

Ա՛խ, երկինքներ լուսանշոյլ հեռաւոր,
 Իզմի՛ր, սիրոյ, երջանկութեա՛ն հայրենիք,
 Պիտի կտրե՞նք օր մ՛անդունդներ ծովին խոր,
 Ու դէպի ձեզ պիտ՝ թռչի՛նք...:

Ամայութեան մէ՛ջը մնաց իր շիրիմ,
 Սիրտերնիս հոս այլ կարօտնիս դէպի հոն,
 Հոս մենութիւն ու վի՛շտը մեզ մտերիմ,
 Հոն՝ լուսաւոր հորիզոն:

Այլ կարծեմ թէ կ'զգայ արդէն ու տկար
 Մեզ կը հասնի ձայնն հրեշտակի թեւաբեկ,
 « Երանութեան վայրկեանները ետ չե՛ն գար,
 Սիրելիներս, քի՛չ մ՛ալ ինձի մօտ կեցէք,
 Ձիս հոս մինակ մի ձգէք ... »:

Տիրե-Տալա, 24 Յուլիս, 1908



ՎՆ

«ԼԵՉՈՒ ԵԼԼԷՐ ԵՒ ԸՍԷՐ ԻՆԾԻ»

Սուրէն Պարթեւեանի «Կլիկեան Արհաւիրքը» նախապէս կարդացած էի յօդուած առ յօդուած, Բիւզանդիոսի, Ազգի, Արեւելեան Մամուլի և Գաշիկի մէջ: Անդունդներէ բարձունքներ հե ի հե խոյանք ու վերանկում կրկնուեցան ցաւատանջ հոգիիս մէջ, երբ աչքէ անցուցի նորէն դիւցազնական երգերու այդ շարքը օղակաւորուած իրարու: Ովկիանի մէկ քմայքը պիտի ըսէի, զրացնութեամբս մեծ ովկիանին, երբ ամեն օր կը տեսնեմ հեռաւոր փոթորիկներէ կուրծքերնին լեցուած կոհակներ, որ կուգան իրարու ետև, մին աւելի բարձր միւսէն, անծանօթ հեւքերով ու հառաչներով ուռած՝ զարնուիլ յաւերժական ժայռերուն:

Ա՛խ...:

Կամքէս անկախօրէն գրչիս ծայրը թռիչ առնող այս հառաչը կը պրկէ կուրծքս ամեն անգամ որ կ'ուզեմ սլանալ դէպի հին անցեալը, որուն համար անծանօթ մը եղայ այլ եւս: Առաջին տարիները աւելի մօտ էի անոր: Բարեկամներ կային որ ատենը՝ մէկ՝ քանի մը բառ, քանի մը տող կը զրկէին կեանքի թափառականին: Բարեկամական կապերը թուլցան հետզհետէ: Յուրտ մենութիւնը և դարկահար յիշատակներ՝ մինակ մնալ սկսան: Եւ մոռացումէն աւելի հզօր՝ մահը զարկաւ, խզեց այդ կապերէն շատեր, ու վերադարձին՝ տառապանքի ուխտաւորը, Հայկականին և Յովհաննէս Ունճեանին, Պետրոս Տիլպէրեանին ու Սայա Ազնաւորեանին, Գամպուրեանին ու Տօնիկեան Մկրտտիչին, Անդրանիկ Վարժապետեանին և Գարեգին Բաբազեանին և այնչափ շատերուն տեղ իրենց շիրիմները պիտի գտնէ վրանին արտասուելու համար:

Վերադա՛րձ: Այլ դէպի ո՛ւր: Դէպի հոն՝ ուր մահուան դալուկը իջաւ մեր դալարագեղ սարերուն վրայ, ուր դրախտի զոյգ վճիտ գետերը ի բոսոր մկրտուեցան:

Դէպի ո՛ւր: Հոն՝ ուր Շնորհալիի յաջորդը ալ չի հաւատար Աստուծոյ «Եթէ Ան նոյնն է անօրէններու Աստուածին հետ»:

Եւ արտասուագին ու պաղատագին կը վերակրկնեմ հառաչս անզուգական Հարօլտին ուղղուած.

«... Բոնէ՛ ձեռքէս զողորջուն,
« Երթանք փնտուել միասին նոր հորիզոն, նոր երկիր,
« Գաղտնիքներուն անդ քննել անվերջ ինչպե՛սն ու ինչո՛ւն
« Նոր Աստուա՛ծ մը որոնել տառապանքի՛ն կարեկիր...»:

Եւ այդ ցնցումը, էութեան խորը կատարուած այդ հաւատքի, յոյսի և սիրոյ երբեակ ու միաժամանակ փլուզումը, որովհետև Ազատութեան արշալոյսին առաջին շողերը Ատանայի աղէտին վրայ կարմրեցան, ու խանդավառ ու զինով խոյանքներու անձնատուր Հայութեան կուրծքը, ճիշտ սրտին, եղբայրադաւ դաշոյնը խրեցաւ: Ինքնախաբուծեան եղկելի հմայքներէն զարթնումը ցաւագին ու տաժանելի՛ եղաւ: Ու Տորոսի բարձունքներէն իջած այդ աղաղակը, փոթորկավար հասաւ աշխարհի ամեն ափերը, տարագիր ու տարահալած Հայութեան՝ հայրենիքի վերստին մեռնելուն ահագա՛նգը հընչեցնելով:

«Ո՛ր տայր ինձ»... այլ ո՛չ զառաւօտն Նաւասարդի ու ո՛չ զզարնանագեղ հրճուանքներ, այլ, Լըքօնթ Տը Լիլի պէս,

« Եւ սակայն ես այդ փառաւոր ճակատագիրն երագեցի,

« Արևուն տակ իյնալ ինչպէս նախահայրերը կ'իյնային,

« Երիտասարդ և ողբաշուած դիւցազներէն ու կոյսերէն »...:

Ամեն դարերու մեծագոյն բռնակալին անկումը աւետող հեռագրին ճիշդ քովի՛կն էր Կլիկիան հրդեհներու սկզբնաւորութեան գոյժը:

Առաջինով խելայեղ, երկրորդին ուշադրութիւն չ'ըրի՛նք, աչքերնիս այնչափ պղտորած էր երջանկութեան արցունքներով: Երկրորդ օրը սակայն և յաջորդ օրերը, հեռագիրը աւելի բացորոշ ու մահուան զօղանջէն աւելի զարհուրելի կը դառնար: Սուգը կ'իջնէր մեր սրտերուն մէջ անգամ մըն ալ: Խաչուած կինէն ու զաւակները մորթող մայրէն վերջ՝ կախադաններ, շղթաներ, բանտեր: Շնորհալիին յաջորդ «արտասուալի» կաշղթաներ, փառաւոր ու հեծեծագին ու վարը՝ հարաւի ափերուն վրայ խելահեղ ու թափառական, վտարուած իր հայրենիքէն, նայուածքը ուղղած Տորոսի բազնին ուր ազգի մը կեանքը կ'ողջակիզուէր, կը տեսնէի քեզ, տարաբաղդ Մուշեղ, ձեռներդ բացած խաջածև և անդունդներ ասդին կը լսէի հեծկտանքիդ

շեշտը.— «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր կի-
լիկիան»...:

Ու նոր Եսայի, տառապած այլ յաւէտ հոմերական կաթո-
ղիկոսներու մեծագոյնը, Սահակ՝ բոունցքը սեղմ ու պիրկ,
նայուածքը հրացայտ ուղղած դէպի բիւզանդական ասիերը
«Աստուծոյ ստուերին, կ'որոտար—«Եթէ կիլիկեան աւերները
չի վերաշինուին, ու եղեռնապիղծ հրէշներ չի քաւե՛ն այս
աշխարհի վրան իսկ իրենց ոճիրը՝ այն ասէն պիտի բարձրացնեն
ձայնս երկնային արդարութեան: Մեծ Օսմանի յաջորդներէն և
ոչ մին ինքզինք դէմ առ դէմ գտած էր այդ խաղաղ այլ ահա-
ւոր սպառնալիքին: Եւ ո՞վ գիտէ, ինչ մտածեց կայսրը, երբ
կարդաց «Ճայնը երկնային արդարութեան բարձրացնելուն»
այդ սպառնալիքը, ինք որ երբեմն բանտարկեալ ու գերի տե-
սած էր դժոխային իր նախորդին ահաբեկ անկումը, ուրիշ
մեծագոյն դժբաղդի մը Սուլթան Մուրատին արցունքներէն
ու անէծքէն հալածական ու զարնուած...:

Ելեէջներու տարօրինակ ու մոզական թատերաբեմ մըն է
այս մեր աշխարհը, ուր Երլտըզէն Ալլաթինի, Կապիտուլէն
Տաբպեան, ովսակնակ ու խաչեացի կը յաջորդեն իրարու:

Մեծ Օսմանի յաջորդներէն և ոչ մին ինքզինք դէմ առ
դէմ գտած էր այդ սպառնալիքին ըսի վերը: Սխալեցայ: Կը
տեսնեմ թէ անապատը բթացնել սկսեր է յիշողութիւնս և կամ
պաշտած դէմքերս միւսնոյն փառաւոր արշալոյսի մէջ հալած
ձուլած եմ: Սահակ կաթողիկոսէն առաջ բռնապետութեան է՛ն
զարհուրելի օրերուն, Համիտ ալ լսեց նոյն բառերը և Հա՛յ մը
ըսաւ իրեն: Ձի հաւատաք զուցէ, եթէ սակայն մէկէ աւելի
ապրող վկաներ գոյութիւն չ'ունենային, այնչափ լուռ ու ան-
շշուկ սեկնեցաւ այդ զիւցաղն ու պաշտելի հոգին, խառնուե-
լու Խրիմեաններու, Վարժապետեաններու խնկելի ստուերնե-
րուն:

Սերաստիոյ կոտորածէն քիչ վերջը, ծերունագարդ այլ
յաւէտ կորովի և երիտասարդ առաջնորդը Պետրոս Սրբազան
Պոլիս կուգար: Չեղքը Խալիֆային դաշնագիրը բռնած, որով
կը պատուիրուէր քրիստոնեաներուն հետ սիրով վարուիլ իբր
«աստուածային աւանդներ» ուզեց ընդհանուր եկեղեցականու-
թեան հետ զիմում ընել Համիտին, կոտորածի և հալածանքի
վերջ մը տրուելու համար: «Ո՞ր օրուան կ'սպասենք ըսեր էր,
եթէ մեր ժողովուրդը պիտի մեռնի ի՛նչ կ'արժէ մեր ապրիլը:»

Այդ եկեղեցականները զարհուրանքով մերժած էին միանալ
իրեն, և ցուրտ հեգնութիւն, այդ նոյն սևազգեստ և անարի
հոգիներէն ոմանք, ազատութեան հռչակումին հոգեհանգիստ-
ներու նախագահեցին և սրբազան արշալոյսը տարփողեցին
շոնդազին ցոյցերով:

Պետրոս Սրբազան չի յուսահատիր: Այն ատենուան Ներ-
քին Գործոց նախարար Մէմտուհի առաջնորդութեամբ կը ներ-
կայանայ կայսեր, ինքը մինակը ձեռքը Խալիֆային հրամա-
նագիրը բռնած:

— «Սուլթանը հարցուց ինծի թէ ի՛նչ խնդիրք ունիս,
Տէրվիշ, որ այս տարիքիդ ելեր մինչեւ հոս եկեր ես:» Նուի-
րական հրամանագիրը ձեռքը տուի և ըսի թէ «Որբանոցիս
համար ողորմութիւն ուզելու եկած եմ:» Յայտնապէս բարկա-
ցաւ և խուսափողական կերպով. «Եթէ կ'ուզես քեզի ամսա-
թոշակ կապեմ» ըսաւ: Մերժեցի ըսելով թէ «Մէկ ոտքս գերեզ-
մանին մէջ է արդէն, մինչեւ հիմակ փառք Աստուծոյ, ժողո-
վուրդս զիս ապրեցուցած է և պատառ մը հաց կընայ տալ
ինծի. ես եկած եմ քեզմէ, ժողովուրդիս հօրմէն, որբերու համար
ողորմութիւն խնդրելու: «Ի՞նչ ըսել է, մենք քու զաւակներդ
ենք, հայր մը իր զաւակները կը խրատէ, կը յանդիմանէ,
բանտ դնել կուտայ բայց չի՛ ջարդեր: Խալիֆային հրամանա-
գիրը նուէր բերի քեզի և կը յիշեցնեմ թէ քեզմէ աւելի բարձր
Աստուած մը կայ, Անոր առջեւ հանելէ առաջ սրտինս, քեզի
կը դիմեմ, որ աշխարհի վրայ անոր ստուերն ես...»:

«Սուլթանը բարկացաւ և նշան ըրաւ որ զիս դուրս հանեն:
Ելած միջոցիս ըսի. «Որբերս մի՛ մոռնար եթէ ոչ զիս ալ սպան-
նել տուր:»

Երլտըզի դուրսը քառորդի մը չափ զիս սպասուցին ու
վերջը բերին ինծի նուէրը որքանոցիս հաւատ Սուլթանին կայ-
սերական բարեւներով:»

Եօթը տարիներ անցած են այս պատմութիւնը իր իսկ,
Պետրոս Սրբազանի բերնէն լսելէս ի վեր, ու ճիշտ հիմակ,
զրած ատենս, կարծես զողո՞ջ իր շեշտերը կուզան ականջիս.
— «Բեզմէ բարձր Աստուած կայ, Անոր առջեւ հանելէ առաջ
սրտինս քեզի՛ կը դիմեմ, որ աշխարհի վրայ Անոր ստուերն ես:»

Համիտ լսեց թերևս նոյն բառերը, երբ տարիներ վերջ,
ուրիշ Հայ մը, պատգամաւորութեան մը հետ միասին գնաց
ըսել իրեն,

«Ազգին կամքով քեզ գահընկեց կ'ընենք...»:

*
**

« Եւ թողուցի որ սլանան ալիքներն իմ խոհերուս,
 « Երազք և յոյսք, աւաղանքը վատնուած ուժերու,
 « Որոնցմէ բան չի՛ մնար, եթէ ոչ դառն յիշատակ:
 « Ովկիանոսն ինձ ձայնով մ'եղբայրական խօսեցաւ,
 « Վասնզի նոյն աղաղակը դոր ծովը կ'արձակէ,
 « Մարդն Աստուծոյ կ'ուզէր զայն, ունայնօրէն, մշտական:»
 ԼԸ ՔՕՆԹ ՏԸ ԼԻԼ

Ա՛խ, ան ալ երանգ մնաց: Բոցակէզ աւերներու, կիսայրեաց տաճարներու և քսան հազար նահատակաց աճիւններուն վերեւէն, եղբայրութեան սրտազին ճի՛շը լսեցինք ու կարծեցենք թէ ցանկալի միութիւնը իրականացած էր: Արշարունի պատրիարք, Սապաղեան Գերերջանիկ և Յակոբ Պօյաճեան, փութորկին առջև միացած իրարու, ձեռք ձեռքի տուած, մէկ օր միայն, եպարքոսին դիմեցին: Մայր եկեղեցիէն բաժնուած երկու հատուածները ինքնաբերաբար, գրեթէ բնազդօրէն, նոյն խոովքին տակ, ազնիւ ու իտէական սլացքի մը անձնատուր կ'ըլլային:

Եւ ի գուր յուսացինք. թէ գոնէ Ատանայէն, մարտիրոսներու աճիւններէն, Սրբազան Միութիւնը պիտի թո՛ւնէր: Այդ խոյանքը մէկ վայրկեան միայն՝ տեւեց: Մէկ հատուածը իր նայուածքն յաւիտենական քաղքին յաւերժական էջմիածնին կը դարձնէր: Միւսը խաչեցեալ Յիսուսէն՝ խաչուած հայրենեաց կը դառնար:

Ի՞նչ էր որ բաժնեց զանոնք վերստին իրարու գրկէն, և անմիութեան թոյնը անգամ մըն ալ ներարկեց արիւնաքամ Հայրենեաց երակներէն...: Ու ոչ մէկ գերմարդկային ձայն չի բերաւ գոռ ու խրոխտ շեշտերը վերադարձի ու միութեան երկնային երգին, այն երկրին համար, ուր ըստ բանաստեղծին,

«Երկիր, ուր որդիք ալ նախահարց չունի՛ն արիւն»...:

Այդ մտածումներուն տակ ընկճուած, անապատականի աշտարակիս մէջ ամփոփ՝ ամիսներ առաջ, սենեակս՝ զիս դէմ առ դէմ գտայ Մէյճըր Տըվթի Ուայլիի հետ — Ատանայի անգլիական նախորդ հիւպատոսը, որ դէպքէն վերջ Մենելիքի երկիրը փոխադրուեցաւ նոյն պաշտօնով: Ինք դալկահար ու

մեկամաղձոտ, այն օրերուն ուրուականը միշտ աչքին առջև, քանի որ իր կեանքի ընկերուհին՝ զուարթ ու ծիծաղկոտ, առանց սարսուլու հազարաւոր վիրաւորներու վիճակը կը բացատրէր մեզի, հին ու փորձ հիւանդապահի պաղարիւնով, երկար ու դարձդարձիկ ասուլիսներէ վերջ:

«Հիացում կը տանիմ հետս հայրենակիցներուդ նկատմամբ ըսաւ Մր. Ուայլի: Երբէք չ'էինք կարծեր թէ այնքան ուժգնօրէն դիմադրութիւն մը պիտի կազմակերպէին Հայերը, իրենց նիւթական ինչքերէն աւելի բարոյական պատի՛ւը պաշտպանելու համար:

Մութ ուժեր զարհուրելի թիւրիմացութիւն մը ձգեցին հայրենակիցներու միջև և հրահրեցին զայն միջևեւ որ հրդեհը բռնկեցաւ և ալ անկարելի եղաւ մարել զայն: Ոմանք մեղադրեր են զիս, իբր թէ Հայոց զէնքերը հաւաքելով երկրորդ ամօթալի ջարդին տեղի տուած ըլլամ՝ իրենց ինքնապաշտպանութեան միջոցը ձեռքերնէն առնելով: Զգուելի սուտ մըն է այդ: Կրցածս ըրի համերաշխութիւն գոյացունելու համար և իրօք խրատեցի որ մնացած հրազէններն յանձնեն, երբ գիտէի թէ փառապաշտօնի հասած եր այլևս: Մուշեղ Եպիսկոպոս սքանչելի եկեղեցական մը է որ տարիներով յաջողեցաւ Պահրի Փաշան գրեթէ մագնիսացընելով իր ժողովուրդը հովուել: Եթէ հոն ըլլար, վստահ եմ թէ առաջին զոհերէն մէկը պիտի ըլլար, թէև իր ներկայութիւնը կրնար ժողովուրդին անհուն ուժ ներշնչել: Լսեցի թէ վերադարձեր է դէպքը լսելուն պէս, մինչև Մերսին հասեր է: Սակայն շատ ուշ էր և իր ներկայութիւնը աւելորդ էր, պարապ անձնագոհութիւն մը պիտի ըլլար ըրածը: Սխալ է թէ թուրք կառավարութիւն արգիլեց Մուշեղ Եպիսկոպոսի ցամաք ելլելը: Ես խկ եի, որ զավաստ դրկեցի և անգլիական նաւուն հրամանատարին որոշ հրահանգ տուի որ չի թոյլատրուի Մուշեղին ելլելը, որովհետեւ՝ վստահաբար գիտէի թէ այդ կիրքերու գրգռութեան միջոցին զայլը մեռնիլ պիտի նշանակէր, ու կ'ուզէի, կը մաղթէի՝ որ Մուշեղ շատ տարիներ ապրէր, ինք՝ դեռ երիտասարդ, կրակոտ, խելացի, Հայութեան համար...:»

Գնդակահար բազուկը երիցս վեր բարձրացուց Մր. Ուայլի, ու ձեռքը ճակտին տարաւ: Կոտորածի ուրուականը նորէն կ'անցնէր աչքերուն առջևէն: Հիացում՝ յայտնեց Սահակ կաթողիկոսի համար, որ ալեւոր ու ծերունի, սակայն դիտցած է

տողալ անմոռնչ և հետապնդել վերաշինումի մեծ գործը:

— « Ատանան, կործանած և աւերակ կիրիկիան պիտի վերաշինուի » ըսաւ վերջապէս Մր. Ուայլի, մեկնած ատեն. վստահ եմ ատոր հոգիով: Մաղթեցէք միայն, որ Հայուն հաւաստի Աստուծոյ եւ իր ապագային վրայ անսասան մնայ: Իսկ ես ուր ալ որ ըլլամ, պիտի ցաւիմ այդ սքանչելի քաղքէն մեկնելու համար, ուր այնչափ բարեկամութիւններ հաստատած էի և զոր կը յուսայի օր մը վերածաղկած տեսնել...:

* * *

Գիշերի այս ուշ ու վշտագին ժամերուն, օրօրոցին մէջ աչքիս դէմ է անապատականի կեանքիս վերև նորածագ հրեշտակը, — Սրբուհի — Արուսեակս, որ սկսեք է ժպտիլ դէմքերու և իրերու, որոնք ես չեմ տեսներ: Վստահ եմ թէ կը կարգայ հոգիս, ու կը տեսնէ ապագան, և անոր կը ժպտի: Ա՛խ, մէկ վայրկեան, լեզու ելլէր և ըսէր ինձի, մոլորատանջ ուղեւորիս, թէ հեռուն տեսաւ ինք Արդարութեան Արուսեակին նշուազեղ փողփողի՛լը այն սգապատ հորիզոնին վրայ, միութեան ու երանութեան փառաւոր արեգակին և ալ անվերջ արշալոյսներու իբր աւետաբեր և այդ տեսիլքի՛ն ժպտեցաւ...:

Վայրկեան մը միայն լեզու ելլէր ու ըսէր ինձի...:
Ճիպուղի, 10 Յուլիս 1910.



ԺՁ

Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն

ԻՄ ՀԱՅՐԵՆԻ բուրաստանիս մէջ սիրուն
Ու մարմարէ աղբերակի մ'եզերքին,
Վարդի մէկ ծիլ, գերդ յուշիկ հին օրերուն
Դեռ չի դիմած պանդխտութեան դառնագին,
Իմ մատներով տնկեցի:

Մէկ արշալոյս հազիւ կեցայ իրեն քով,
Տերեւները խամրած, հովէն կը դողար,

Մէկ անգամ ջուր տուի իմ տաք արցունքով
Ու մեկնեցայ դէպ' ուղիներն վշտահար,
Օտարութեան, տաժանքի:

Ոչ մանկական երգերս օրօրն եղան իր,
Եւ ոչ ալ ի՛նք բուրեց կեանքիս գարնան հետ,
Ձի քաղցի' իրմէ ծաղիկ մ'իսկ կարմիր
Իբրեւ նուէր իմ երազի՛ս սիրաւէտ,
Ու պաշտումիս լուսածիր:

Տընակս ինկաւ ու կը քեցաւ վշտահար,
Մամուռներով լցաւ աղբիւրն մարմարի
Եւ ա՛լ չ'երգէր, — այլ վարդենին միշտ դալար
Բիւր վարդերով կը սարսըռայ, կը վառի
Իղձերուս պէս անհամար:

Ամայքներուն մէջ դուն ինչո՞ւ կ'ապրիս դեռ,
Մէկ գարունէ դողոջ կ'անցնիս միւսին,
Ու գեփիւռի՛ն կուտաս աղւոր քու թերթեր,
Ինչո՞ւ դալար, երբ ձայները լոցին,
Ու սոխակներ չե՛ն երգեր...:

Ծաղիկները որո՞ւ ճակտին կ'սպասեն,
Դուն, իմ աւեր հայրենիքի՛ս վարդենին,
Յոյս չի՛ ծագիր մութ ամպերու քառուէն,
Ու հաւատքին նշոյլները կը հատնին,
Հոգիին մէջ վշտագին...:

* * *

Սարսուաց տունկը: Անապատիս խորերէն
Լուսնի գոյգ շող կապեցին մեզ իրաւու,
Անդրաշխարհի իբրեւ երազ լուսեղէն,
Իբրեւ հծծի՛ւնն անցնող անուշ օրերու,
Եւ իր երգը լսեցի:

— « Ինչո՞ւ խամրիլ, երբ գարուններ կը ծաղկին,
Ու երբ կայծեր կընա՛նյառնուլ մոխրէն,

Քանի յոյսեր կրնան դառնալ դեռ կեանքին,
Ու երազներ դեռ կը խայտան, կը բուրեն,
Դաշտերուն մէջ հայրենի:

Որ վշտահար ու գլխահակ հեռացար,
Քու հիւղակէզ օտարութեան, հէ՛ք քերթող,
Ու կտրեցի՛ր մութ անդունդներ, ձոր ու սար,
Կեանքի խութին դէմ տիրական ու յաղթող,
Ու բարձունքի՛ն սլացար,

Դարձի՛ր, հոգի՛ տուր հիւղակիդ աւերակ,
Դարձուր երգը աղբերակիդ մարմարի,
Քե՛զ կ'սպասեն դրախտի գետն ու բիւրակ,
Ու հին ուղին տակաւին քե՛զ կը յառի
Հիմա լքուած ու մինակ...:

Առ վարդերս, սիռէ անյայտ շիրմաց վրան,
Կախէ՛ քրնարըդ ճիւղերէս տրամագլին,
Ու մրմնջէ՛ երգը անմահ Հայութեան,
Թէ չի՛ մեռնիր Հայրենի՛քը թանկագին,
Քանի ծաղկի՛ վարդենին...:

Արցունքիդ տեղ՝ ոռոգեցի՛ր որով զիս,
Խոզված հոգիդ պիտի կապեմ անդորրին,
Ու երբ մահուան դալուկներով տժգունիս,
Եկուր գանձել, հո՛ս, հոգիիս մտերիմ,
Ըստուերիս տակ մէկ շիրիմ...:

Ճիպուղի, 10 Օգոստոս 1915



ԺԷ:

Ճ. ԿՕՐՏՈՆ ՊԷՆՆԷԹ



Կնչ որ է Լօրտ Նօրթհքլիֆ, — երբեմն Ալֆրէտ Հար-
մգուրթ — Անգլիոյ համար, նոյնը և աւելին է Կօր-
տոն Պէննէթ Ամերիկայի համար: Երկուքն ալ լրագ-
րութեան տիրամեններն են, մարմնացումները բարձրագոյն իտէա-
լին, որուն կրնայ ցանկալ լրագրապետ մը մրցումներու և
տաժանքներու այս աշխարհին մէջ: Առաջինը հիմնադիրն ու
տէ՛րն է Տեյլի Մեյլին և քանի մը ուրիշ օրաթերթերու ու
պարբերականներու: Առաջները կը հեգնէին զինքը, նոյն իսկ
կը ծիծաղէին, տեսնելով այն տարօրինակ եւ առասպելական
յեղաշրջումը, որ կ'որդեգրէր հնաւանդ Անգլիայի այդ հսկայ
զաւակը, լրագրութեան մէջ: Հիներն ահագին ֆրախի մը ալըն-
կալութեամբ կ'սպասէին: Հարմգուրթ կը բարձրանար լեռնաձև
մակընթացութեան մը ահագնութեամբ առանց տեղի տալու
սակայն: Ու կատարուած իրողութեան առջեւ գլխիկոր մնացին
բոլոր հեգնաբաններն ու բոլոր արհամարհողները, որ կը դի-
տէին անդունդին մէջ սուղող լեռան մը նման հնամենի ու մեծ
թայնզին իսկ սասանումն ու փլուզումը:

Ազնուապետական Անգլիային մեծագոյն կայսրը էտուարտ՝
կը նուիրագործէր նորութիւնը հսկային ճակատին Լօրտութեան
պսակը շնորհելով: Մ'օտէն հետեւեցայ այդ տիտանի ճիգերուն
և Ռուս և Ճաբոնական պատերազմի շրջանին՝ իբր «Տէյլի
Մէյլ» թղթակից և իբր Հայ յարգանքով ու երկիւղածութեամբ
շնորհաւորեցի մեծ հսկային աստիճանի բարձրացումը:

Կօրտոն Պէննէթ սակայն այլապէս բարձր ու վիթխարի
ոյժ մը կը ներկայանայ: Առասպելանման Ամերիկայի զաւակ,
ուր Ասթօրներ, Մօրկաններ, Ռաքֆէլլըրներ յաջողած են
օրէնքի գծած բիրտ սահմաններուն մէջ իսկ դրամի ահագին
կայսրութիւններ հիմնել և որոնց ուժին առջեւ պիտի գողար
նոյն իսկ Աւսթրիացի դիւցազնը, Կօրտոն Պէննէթ գրիչը դար-
ձուց այն մոզական ճպտտին, որ ուղղելով արեւին, կրնայ կա-
սեցընել անոր յաւերժական թաւալումը, որ ովկիանն ու ցա-
մաք կը տեղափոխէ, և զայրագնաց գետերը կը հմայէ ու

կ'անդամալուծէ: «Նիւ Եօրք Հէրալտ» ի ծնողն ու տէրն է ինք: Այդ թերթին ծանօթները միայն գիտեն անոր նշանակութիւնը, հրատարակուած միաժամանակ Նիւ-Եօրքի ու Փարիզի մէջ հիանալի կազմակերպութեամբ մը և աշխարհի որ և է մէկ կողմը տերեւ մը չի շարժիր առանց սօսափիւնին արձագանգը բերելու անոր: Արդիական թերթ մ'է «Հէրալտ», միշտ նոր, շարունակ դալար: Ինքը Կօրտօն Պէննէթ սքանչելի Սքօրթսմէն քանի Բաժակներ նուիրած է համաշխարհային մրցումներու համար, մանաւանդ նաւարշաւներու: Հետեւելով իրեն Նօրթհքլիֆի, աշխարհի մէջ միակ արժանի մրցակիցը Պէննէթի, ինք ալ մրցանակներ հաստատեց. այն էր որ Պլերիոյի վճարեց հազար անգլ. ոսկի, սաւառնակով Մանշը անցնելուն համար, ու երկու անգամ տասնական հազար անգլիական՝ օղային մրցումներու:

Ամերիկա սակայն ազնուապետական տիտղոս մը չունի՝ տալու Կօրտօն Պէննէթի: Ու լօրտութեան պսակին տեղ, որ կը փայլի Նօրթհքլիֆի նամակագլուխներուն վրայ, Կօրտօն Պէննէթ, իբր զինանշան, բո՛ւ մը ունի փորագրուած մատանիի ակին վրան, բո՛ւ մը ամեն օրուան Հեռաշօններուն ճակատը, բո՛ւ մը զրօշակին վրան ու թերեւս սրտին մէջ, սա տարօրինակ արձանագրութեամբ. —

« La nuit porte conseil ».

* * *

Եւ ալ կարելի է գուշակել երանութիւնս երբ առտու մը ծովեզերքը, սովորական պտոյտիս, տեսայ բուրի զրօշը լայն պարզած հիանալի զբօսանաւին, որ կը ճեղքէր մեր ջուրերը: Լայսիսքրաքա Կօրտօն Պէննէթի ետքն է, որ կը շրջի իր տիրոջ հետ բոլոր աշխարհի ծովերը: Ի՞նչ բան մղեց զինքը գալ քանի մը օր անցնել այս մեր մոռցուած անկիւնը, չի կրցայ բացատրել մինչև հիմա, ինչպէս անբացատրելի մնաց՝ երբ Չայլտս Փրիք, Բիդսպուրկի մեծ միլիտատէրին միակ զաւակը եկաւ այս տարի գնալ անապատի ամայքներուն մէջ առիւծի որսորդութեան:

Կայծակի արագութեամբ կ'որոշեմ ընթացքս: Անմիջապէս գրագիրս կը զրկեմ շոգենաւ, իբր Տեյի Մեյի թղթակից այցետոմսովս, և փափկօրէն զիս իր տրամադրութեան տակ կը

դնեմ: Արդէն իբր Ամերիկեան կառավարութեան առևտրական թղթակից, կերպ մը պարտականութիւն ալ ունիմ, քանի որ պաշտօնական հիւպատոս չիկայ տակաւին: Կօրտօն Պէննէթ շատ սիրով կ'ընդունի գրագիրս, որմէ կը խնդրէ ընկերանալ քաղաքի մէջ մտադրած պտոյտին: Զի մոռնամ ըսել թէ իբր հիւր իր հետ ունի պարոնուհի Ռիւթերը, հոշակաւոր հեռադրական գործակալութեան տիրող կինը: Յամաք ելլելուն կառք մը կը դնեմ տրամադրութեան տակ ու գրագիրս կ'առաջնորդէ զինք հոս ու հոն, ինչ որ կայ շահագրգռական այս նորաշէն քաղաքին մէջ: Մեկնած միջոցին կը հրաւիրէ զիս երթալ այցելել իր զբօսանաւը:

Յաջորդ օրը Արթինիս հետ միասին կ'երթանք նաւ: Սանդուխին գլուխը, երկայնահասակ, կապուտաչուի, կայտառ, ուղղաձիգ կեցուածքով ծերունի մը, միշտ ինձմէ աւելի երիտասարդ — ձեռքը կ'երկարէ ինծի, պարզ ու ազնիւ շեշտով մը:

- Որբերեա՞ն:
- Մը. Պէննէթ:
- Yes, wellcome!

Եւ ինք անձամբ կ'առաջնորդէ զիս նախ ընդունելութեան սրահը: Ամեն կողմ մեծ վարպետներէ ստորագրուած իւղաներկ նկարներ, հիանալի գրադարան մը: Պարոնուհի Ռիւթերը իր պատուակալ օրիորդներով: Դրախտի բեկոր մը: Իրօք այդ ամենը տեսնելես վերջ, ալ հոգ պիտի չ'ընեմ եթէ երկինք չ'երթամ: Տեսայ դայն աշխարհիս վրան: Եւ այդ՝ Հնաշխարհիկ ճոխութեանց վերև, սև, թափծու պրօնգէ հիանալի... Բո՛ւ մը, իր զինանշանը: Եւ ամեն կողմ բռն յիշեցնող արձանագրութիւններ:

« Owl's right Owl's well, when the and is well. »

Քանի մը վայրկեան հանգիստէ վերջ կը շրջինք սենեակները: Հոգ իրօք մարդ կ'անմահանայ:

Սեղանատունը ուրիշ հրաշալիք, խոհանոցը նմանապէս: Քիչ մը անդին՝ անկիւնէ մը, վեց զուգեղանակ կովեր, — թարմ կաթի անսպառ աղբիւր, կը բառաչեն: Հապա մեքենաները, հապա մաքրութիւնը, համաշափութիւնը: Վեց հազար ձիու ուժ: Հրաման մը կուտայ և ահա նաւուն երկու կողմերէն երկու շոգեմակոյկ և վեց առագաստանաւակ վար կ'իջնեն: Մրցում մը պիտի կատարեն, Մօնթէ Բարլօյի, Քանի պէս: Ժամ մը վերջ վար կ'իջնենք գաւկիս հետ: Երկուքս ալ

Պէննէթ դեռ չէր ճանչցած Երիտասարդ Թուրքերը: Հասան Պէյլիի մատուռն ալ քանդուած չէր տակաւին, մեր շատ մը յոյսերուն նման: Երկու ժամ անցուց քովս: Մեկնած ատեն ներուժ խնդրեցի ակամայ պատճառած յուզումիս համար և ձեռքը համբուրեցի: « Ճիպուդին և Հայերը պիտի չի մոռնամ », ըսաւ ան մեկնած պահուն:

Եւ չի մոռցաւ: Մեկնելէն քիչ վերջը իր Երիտասարդական օրերու լուսանկարը կը դրկէր ինծի, շնորհալի նամակով մը, և իր ու անապատի որդեգրին թղթակցութիւնը կը շարունակուի ցարդ: Իր գաղափարը շատ չանցած փոխեց և զարմանալի չի գտայ, երբ Երիտասարդ Թուրքերուն համակիր Պէննէթը իր մեծ թերթին ճակատը կը դնէր կծու քննադատութիւն մը Մակեդոնիոյ վարչութեան, Ալպանիոյ և Եէմենի խնդիրներուն նկատմամբ, իթթիհատականներուն օրով:

Կ'ըսեն ինծի թէ հանգիստ է հիմակ Մակեդոնիան, ու գրեթէ ազատ Եէմէն ու Ալպանիան: Կը մտածեմ՝ ու կ'արտասուեմ: Ե՞րբ պիտի վերաշինուի Հասան Պէյլիի քանդուած եկեղեցին: Ե՞րբ պիտի խաղաղի Հայաստան:

Ճիպուդի 4 Հոկտ. 1912.



ՎՐ:

“ՕՓԱՆՔՆԵՐ”ԷՍ ԵՐԵՔ ԿՈՀԱԿ

1

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Ա.Ն. ԼՕՐՏ Պայրն

Ա.

Դուն որ իբրև ուրական, մոայլ դարու մ'առաջին Մեծ ողբերը երկնեցիր, հոգիիդ մէջ խոտված. Որ արձագանգը բերիր անդունդներու հառաչին, Տրտում փայլակ, անբաժան սև ամպերէ մշտայած, Մըրկածին, մշշածին, թափառեցար Եւրոպան, Երբ միւս Մեծ Թափառողն՝ իր աչքերը կը փակէր ի Սէնթ Էլէն, մենաւոր, անփառունակ. — խօլական Յընորքին անձնատուր, մոռացումին լոկ ընկեր:

Բ

Երկուքնիդ ալ հանճարի փայլատակում մի անճառ, Յեղաշրջման նա ծոցէն, վիշտի քանոսը քու մայր, Փառքի ուղի'ն նա ընտրեց, դուն երգերուն սըլացար, նա դահերու, թագերու, դուն՝ ովկիանի'ն սիրահար: Եէնա, Վալրամ, Օսթէրլից, ու Վաթէլլօ, Սէնթ Էլէն, Կապիտուլէն ի Տարպիան, ի լոութիւն դամբանին, Այս էր իրեն ճակտի գիր, — մինչ դու թռչուն՝ երգելէն կը սուրայիր Արեւելք, երազներով անձկազին:

Գ

Խառնուրդ մ'արծուի ու անգեղ, ծիծեռնակին, սոխակին, Նոր Պրոմէթէ անկաշկանդ, երկինքներու զողցած հուր, Դարուց սփինքս, հոգիով առիւծ, սակայն սրտով՝ կին, Խրոտվայոյց զերդ Ալիս, ու Եփրատին պէս տխուր, Մին ի զարմէն դիւցազանց, ջնջուած ցեղէն սուրբերու, Նարեկացի նորածագ, սուրբ կիրքերու խաչակիր, Այլ ամբարիշտ կոչնական Բագոսին, չա՛ր համբարու, Անկումին մէջ պաշտելի, Եղեմին հէ՛ք տարագիր...:

Դ

Մոլորատանջ գիսաւոր, Բօլոսէին վերն առկախ, Յոգնած յորձանք մ'ովկիանին, ի Սուրբ Ղազար զըտած նինջ, Սահող ըստուեր մ'յեփեսոս, ուր Արտեմիան՝ իր նուաղ Նայուածքով գո՛ւր կը հայցէ ժամանակէն համաջինջ Տաճարն ու իր պաշտողներ. — լացող վըհուկ բոցին քով, Ոչ մըտերիմըդ՝ Շէլլին՝ կը փոխէր ափ մ'աճիւնի, — Նոճեաց սարսուռն ի Պուճա, ուր տակաւին արցունքով Բիզենց աղբուրը մենիկ, կաթիլ կաթիլ կը հատնի...:

Ե

Նոր Լեանտըր. յԵլլեսպոնտ, ալեակներուն մէջ ալօս Մ'յօրինեցիր, որմէ վար պիտի հոսէր Եւրոպան, Ժողովրդոց յուզումէն ցնցումը, վէս ու գոռոզ, Դէպ՝ Ասիա, մերթ դըրախտ, արդ նեխումին աւազան, Եւ Ապողոն յարուցեալ, գացիր դէպի Մարաթօն, Թէրմոպիլէ, Աքրոբոլ, մոռցած Ալպիոնն ու ովկիան Արծուի նայուածքը վերջին՝ դէպի կարմիր հորիզոն, Մըմնջեցի՛ր — « Ես մեռնիմ, թող ազատի՛ Ելլադան... »:

Զ

Աթէնքի կոյսը փակեց աչերըդ դեռ կիսաբաց,
 Ու ժպտագին ու գինով արշալոյսէն նորածագ,
 Հոգիդ թըռաւ Ողիմպոս, կայանը դից, դիցուհեաց,
 Որ կը փայլէր վերըստին, ճակատը վեհ, սպիտակ:
 Դար մը կ'անցնի անկէ ցարդ, գուրգուրանքով կը հսկես,
 Որ դրօշակը երկնագոյն չ'առնէ ըստուեր մ'իր վըրան,
 Որ չի դառնան հին օրեր, ու գերութեան ողջակէզ
 Զըլլայ, չ'իյնայ վերըստին, ապրի՛ ազատ Յունաստան:

Է

Դար մը կ'անցնի անկէ ցարդ ու բարձունքէդ դիտեցիր
 Յոյզերը՝ որ դերդ փայլակ կտրատեցին Եւրոպան,
 Գերի ազգեր, որոնք պահ մ'յիշատակիդ ծընրադիր,
 Մագըլցեցան դէպի վեր, ազատութեան Գողգոթան: ...
 Ողջունեցիր ցնծագին, արիարանց ոգին՛ն՛ն,
 Որոնց շուրթը քու երգեր, իրենք քեզմով հըրդեհուած,
 Դէպի բագին դիմեցին, հաստատակամ, անվեհեր,
 Կաթիլ մը լոյս հայցելով ապագայէն ամպամած:

Ը

Խորհրդանիշ Սուրբ Դատին՝ քեզ յառեցան վենետկէն
 Դժբազդ ցեղի մ'անմահներն, Բազրատունին, Ալիշան,
 Գրիչդ հոն էր, այլ ափսոս, երգերու տեղ հըրեղէն,
 Հառահներու կամուրջէն ողբի ձայներ սըլացան: ...
 Արարատին անծանօթ՝ այլ սիրեցիր մեր լեզուն,
 Մեր գիրերուն վըրայ մերթ խոնարհեցաւ քու ճակատ,
 Դար մը կ'անցնի անկէ ցարդ, մեր հայրենեաց վշտասուն
 Գերի են դեռ զաւակներն, տարահալած, յուսահատ: ...

Թ

Ըստորուէն Տորոսի՝ դերդ թիթեռնիկ մ'ազազուն,
 Հիւսիսայգէդ շլացած՝ դէպի բարձունքդ առի թև,
 Տարիներով թափառիկ, շրջմոլիկ հուր մ'ոստոստուն,
 Շիրմաց ընդմէջ, այլ քեզի սեւեռելով յարատեւ,
 Աւերակէ աւերակ որոնեցի ձայնըդ գոռ,
 Գետերուն հետ սահելով հասայ մինչև կոհակին,
 Քեզմով լեցուն ամէն ինչ, այլ աչքերէն իմ պղտոր,
 Խոյս կուտայիր անցեալին իմ խէտլ թանկագին: ...

Ժ

Հասած հիմակ անապատն անմարդաձայն գիշերին,
 Քանի անգամ հրայրքով մ'երազեցիր զոր այնքան,
 Քեզ անծանօթ ովկիանի մ'ափն ուր ալիք կը փշըրին,
 Եւ իրենց հետ իմ յոյսեր, կը պաղատի՛մ ողբաձայն,
 Հարոյտը տուր ինձ ընկեր, բոնէ ձեռքէս դողդոջուն,
 Երթանք փնտոել միասին նոր հորիզոն, նոր երկիր,
 Գաղտնիքներուն անդ քըննել անվերջ «ինչպէս»ն ու «ինչու»ն
 Նոր Աստուած մը որոնել, տառապանքի՛ն կարեկիր: ...

ԺԱ

Մտերմութիւնք թողած հոն, Շէլլիիդ պէս ափ մ'աճիւն,
 Հայրենիքէս տարագիր, — Հարոյտըդ տուր ինձ ընկեր,
 Հրատոչոր աւաղէն կը մեռնին կեանքս ու աւիւն,
 Տառապանքն հոս անհուն է, ա՛խ, դիս մինակ մի ձգեր: ...
 Կը դառնանք շուտ անոր հետ, ու գուցէ՛նա պատմէ՛ քեզ,
 Ինչ որ երբէք չի տեսաւ երբեմն ստրուկ Ելլադան,
 Հայրենիք մը սրգազգեաց, բագնիդ վըրան ողջակէզ,
 Բորնկած կովկասն ու յաւէտ ապերջանիկ Հայաստան: ...

ԺԲ

Գուցէ իջնես միանգամ՝ քու բարձունքէդ այն ատեն,
 Քնարիդ շեշտերը յուզեն պոռնրկացած Եւրոպան,
 Եւ ալեւոր Մասիսի ձիւնասպիտակ գագաթէն
 Ազատութեան մոռցըւած Երգը գոռաս Հայութեան: ...

Ճիպուդի, 14 Յուլիս 1906



Ծ Փ Ա Ն Ք Ն Ե Ր

Ե Ր Գ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Դ Է Պ Ի Ա Ն Դ Ո Ի Ն Դ



Ա.



Աստղի մը պէս հեռաւոր, անհետացած ի վաղուց,
 Որուն նշոյլը նուազ դեռ կուգայ մեզ կամարէն,
 Ընդհարում մը թէև բիրտ առանց շողի զայն թողուց,
 — Ջարհուրելի վախճաններ արեւներու համօրէն, —
 Մեր ճակտին տակ մտածկոտ կ'զգանք յաճախ մոլորուն
 կայծի մը հեւքը դողդոջ, ու կը կարծենք թէ յոյսին
 Աստղը կ'ապրի տակաւին, եթերին մեջ դարերուն,
 Մեռաւ, ափսոս, նա վաղուց, հաւատքին հետ միասին:

Բ.

Հանդիպեցան իրարու ովկիանի մ'ափն անծանօթ
 Քարանձաւի մը բերան՝ ուր նայեաղներ խոյս տուին
 Գիտութենէն հալածուած, մարդկութիւնը մտածկոտ
 Թողած մենիկ և ալ զուրկ երազներէն անցեալին.
 Հարուտը՝ դար մ'ալեւոր, միւս ոգին դեռատի,
 Այլ ընկճըւած աւելի, ա՛խ, Ունայնը տեսաւ ան,
 Երբ դեռ մանուկ՝ կը խայտար ալեկացն հետ Եփրատի,
 Ու կը յառէր մոլորուն ասուպներուն գիշերուան:

Գ.

Հարուտը՝ դար մ'ալեւոր, ովկիանն փակած իր ուղին,
 Ովկիանն՝ որուն մէջ զգաց ան Անհունին վէս նրկար,
 Այլ միւսը ըսկեպտիկ, յառած աչքերը հողին,

Յուզումներով բոցակէզ յոգնած թոխ մը տրկար,
 Իրարու ձեռք սեղմեցին, ու նորեկը սարսուռով
 Մտերմութիւն ուխտեց հոն, ուխտեց զընալ անբաժան
 Ուրուականին հետ մէկտեղ, դէպ՛ իտէալն անխրոզ
 Որ կը փայլէր շատ հեռուն, խորքերուն մէջ մըթութեան:

Դ.

Ճամբայ ելան միասին, երազն իրենց տուած թեւ,
 Խորհրդաւոր մի զեփիւռ մըղեց զանոնք Հերակլի
 Սիւներէն ներս և աղօտ արշալոյսով մը թեթեւ
 Միջերկրականը տեսան, իր խորքերովն անալի.
 Ծով ծովերու սրբբազան, ընկղմեցան որուն տակ
 Աստուածները՝ որ բերին Տիբեր, Ալիս ու Նեղոս,
 Որուն վրայէն սուլեցին զեփիւռն Յոնիոյ ու հրատաք
 Սահարայի փոթորիկ ու պատգամներ երկնախօս:

Ե.

Ատլանդիկին հետ կապուած ժապաւէնով կապտագեղ,
 Ազրիոյ խորն երկարած իր մէկ բազուկն հսկայի,
 Կուրծքը Վէսուլն հերարձակ, իր վիհերովն հրազեղ,
 Գլուխը դրած յունական ափերուն մօտ գեղանի,
 Ծով-Ըսփինքան է, ծընրադիր Տորոսի վէս լեռներուն,
 Կամ աւազանն՝ ուր խառնեն մութ Ափրիկէն՝ իր խորհուրդ,
 Ծեր Ասիան՝ Տառապանք, ու Եւրոպան՝ մոլորուն՝
 Խուլ հարցերու շունչն այրող, դէպի քառան անյագուրդ:

Զ.

Անապատի ու զարնան միջեւ պառկած յարաշարժ,
 Կոհակները իր կը նետէ մինչեւ խորքը ամպերուն,
 Կապանքները խորտակել կ'ուզէ սակայն չի կրնար,
 Ու կը դառնայ իր խորքին, իբրև վիշապ գալարուն,
 Աստղերը զուր կ'ողողեն զայն շողերով ցոլացիկ,
 Արեւը զուր կը խառնէ ցոլքն՝ սպիտակ փրփուրին,
 Ապերճանիկ ծովն է Ան, սևով շաղուած իր ալիք,
 Ոճիրներու դարաւոր ծածկող դամբանը խորին.

է

Ափերն համակ օծեցին խորհրդաւոր մի շունչով
 Արիական ցեղերու իրար գրլող հասանքներ,
 Հինտուքուշէն երբ իջան,—կամ առասպել հոգեթով,
 Երբ ազգերը զատուեցան ըստորոտէն այեհեր
 Արարատին, անոր շուրջ թողած մի ցեղ երկաթի,
 Որ կեցաւ հոն անասան, մրրիկներու դիմազրաւ,
 Երբ պետութիւնք հընամի, կը փշրէին ամէն դի,
 Եւ իրենց հետ՝ փառք, անուն, մեծութիւն, ուժ և համբաւ.

Ը

Փիւնիկեցին նախ թրոսաւ թեթեասահ՝ ափէ ափ,
 Նաւակներովն իր խախուտ՝ հրաւէր կարդաց կոհակին,
 Մանուկ ազգեր՝ փառամոլ՝ հետեւեցան հըրատապ
 Յոյզով ՚ի ծովն անսահման, երազամոլ, անձկագին,
 Ու բարձրութեանց կատարէն տեսան, ափսոս, թէ ան ալ,
 Սահման ունէր: Վայրահակ խոնարհեցաւ ճակատնին,
 Եգիպտոս, Հոովմ, Ելլադա որոշեցին ընթանալ
 Մէկգմէկու ետեւէ՝ դէպ՝ իտէալն անհունին:

Թ

Կեանքը կարճ էր ու անյագ, ... ըստիպուեցան յօրինել
 Մին՝ իր մոմիան, ու միւսներն իրենց դաշտերն Եղիւսեան
 Կեանքը կարճ էր, այլ անուշ, պէտք էր բաւի՝ դ մը անել,
 Ուր փառատենջ հոգիներ մոլորէին յաւիտեան:
 Զուր բուրգերու գագաթէն կոչում ըրին աստղերուն,
 Պարապութիւնը հեգնեց իրենց ճիգերն մանկական,
 Արձաններու բազնին քով, տառապեցան գալարուն
 Այլ խոր գիշեր և անլոյս, անշող մնաց ապագան:

Ժ

Ծովը դիտեց այս ճիգերն իր ծիծաղովն ահարկու,
 Հեգնոտ, դաժան, թողուց որ կեսարն անցնէ իր վրդին
 Շղթան Հոովմի երկաթէ, բազուկներովն իր հուժկու,
 Բոպէ մը վերջ բազն հոն էր, դաշոյնովը Բրուտոսին:

Ազատ ծովը եղաւ ան, թէև իր վրան փորձեցին
 Պարգել բիւր բիւր երփնագոյն, հողմածածան դրօշակներ,
 Բոպէ մը լոկ և անցան, ինքը մնաց առանձին,
 Անկաշկանդ, վէս միապետ, գաղտնիքներուն իրեն տէր:

ԺԱ

Քայլ մը դէպի արևելք, Լիբանանէն քիչ մը վար,
 Կը հեծէ հէք մի ծովակ,—Մեռեալ ծովը մենաւոր,
 Զոր դիտեցին մեր երկու ուխտաւորներն հողմավար,
 Ու կանգնեցան պահ մը հոն, յիշատակին անձնատուր.
 Երկիրն ու ծովն է մեռած ու մահն անգամ մեռաւ մերթ,
 Թէև հիմա չի մեռնիր մէջն ամբարիշտ մեր դարուն,
 Հողն Աւետեաց երկնաշունչ իր վէպերովն հրաշակերտ,
 Ընտրեալ ցեղին բնավայր, օրրանը սուրբ երգերուն:

ԺԲ

Հոմերական տաղ մ'է նա, այդ երազուն ցեղին բազդ,
 Գերութենէ գերութիւն, մշտամոլոր, թափառիկ,
 Յաւերժապէս ծընրաղբը Եհովային մեծայաղթ,
 —Կրակի, ամպի սիւնն հըսկայ, կամ մոլորչող փոթորիկ.—
 Յեղ մկրրտուած բուրգերուն և ըսփինքսին ըստորոտ,
 Սեմի զաւակ, ծրծած կաթն արիական հաւատքին,
 Դիւցազնական մի երգի շեշտը խրոխտ բամբորտ,
 Կամ Նեղոսի, Եփրատի ափերն հառաչ ողբագին...

ԺԳ

« Փարաւոն, թող Իսրայէլն ազատ »—ամպի կրակի
 Սիւնը ինկաւ առջեւին ու քալեցին գայթ ի գայթ,
 Կտրեցին ծով ու սարեր ու նետուեցան շեշտակի
 Անապատի ծոցն անհուն, քառսուն տարի անընդհատ.
 Քառսուն տարի, հին սերունդն իր ոսկորներն աւազին
 Խառնեց մինչև նորն՝ հասաւ նախնիքներուն իր երկիր,
 Տառապանքով մաքրուած, բաղձանքներով կաթողին,
 Այնքան ատեն սիրական հայրենիքէն տարազիր:

ԺԴ

Քառսուն տարի, ... կայ սակայն ցեղ մը նրման միւսին,
 Քառսուն դար է քեզ համար, Ազատութի՛ն ցանկալի,
 Իր նահապետ լերան շուրջ՝ արցունքն արիւնն կը հոսին,
 Քու կարօտովդ հայրենեաց, մշտատրխուր կը հալի...
 Ո՛ւր ես արդեօք, աշխարհի վըրան այլ ևս չիկա՞ս դուն,
 Կը խոսափի՞ս այն ցեղին զաւակներէն պաշտող քեզ,
 Չունին անոնք առաջնորդ՝ ոչ ամպի, ոչ կրակի սիւն,
 Այլ հայրենիք մ'աւերակ, բազնիդ վըրան ողջակէզ:

ԺԵ

Թմբուկներով փողերով պարիսպները սարսեցին,
 Խըրոխտ արևն իր ճամբան անոնց համար առաւ կանգ,
 Երիքովի կը մըխան դեռ հիւզակներն առանձին,
 Չազալներու լըսելով վայնասունին արձագանգ.
 Անպարտելի յաղթական, իրենց հետ էր Եհովան,
 Փռչիլի պէս ցրուեցան Ամսղէկը, Քետացին,
 Օծեալ իրենց արքաներն խելայեղ ու տիրական
 Յաղթանակի ու սիրոյ անմահ քնարը լարեցին:

ԺԶ

Տեսած սանդուխն ի Բեթէլ, ընդմէջ երկնից ու երկրին,
 Ղրկած մարմնով ի դըրախտ մեծ Ազատիչն ու Եղիան
 Հաղորդակից ամեն օր գաղտնիքներուն ամբաւին,
 Ու ճանչնալով նախանձի, սուրի, հուրի Եհովան,
 Օր մ'ալ ըմբոստ ու ահեղ, ճակատ տուին երկինքին,
 Շղթաները փորձեցին փշրել, թէև ինքն Աստուած
 Դարբնած ըլլար: Ու վերէն իր շեշտերով զայրագին,
 Մեծ Նախանձողն իր որդւոց վրէժի անէ՛ծքը գոռաց:

ԺԷ

Անլուծելի հանելուկ, գաղտնիք, մարդն ու իր հողին,
 Փակուած հողին՝ աստղերէն վար՝ անոնցմէ թռչի վեր,
 Ինքը տրկար ու հիւլէ, այլ կուրծք կուտայ փոթորկին,

Ու կոհակին, մի հպարտ ընդվըզումով անվեհեր:
 Կարճ է ճամբան քալելու սակայն անհուն իր կորով,
 Դէմքը տըժգոյն՝ այլ ներսէն՝ հիւսքը երկաթ ջիղերու,
 Թէև շուրջը կործանին ամեն ինչ, ինքն անխըռով
 Իր իտէալն կ'երազէ, — Աստուածն ըլլալ Աստուծոյ:

ԺԸ

Եւ Իսրայէլ անկէ վերջ նման աշնան տերեւին
 Գլորեցաւ սարէ սար, օտար ափեր գերութեան,
 Քանի անգամ դարձաւ ետ, սուր յուշերէ անմեկին,
 Շինել տաճարն ուր սակայն ալ չի դարձաւ Եհովան:
 Խըլեակի պէս կոխեցին զինքը Պարսիկն, Ասորին,
 Նեղոսէն ետք Բաբելոն՝ լացող գետին ուռիներ
 Ունկնդրեցին զիշերներն ներքեն իրենց ըստուերին
 Հեծեծանքը սուրբ ցեղին, բղխած սրտէն կարեվէր:

ԺԹ

Հոս՝ Եսայի, քիչ մ'անդին՝ Եղեկիէլ տեսանող,
 Որ Մովսէսի բաղդակից՝ ընդնշմարեց ամպէն վեր,
 Կապոյտին մէջ իր փառքով՝ ձիւնասպիտակ, լուսաշող,
 Սուրբ Աստուածը հնութեան, խորշոմ ճակատ, ալեհեր,
 Կամ Երեմիան, կամ Եզրաս, Արտաթի դաշտն անսահման,
 Որուն աչքի վարագոյրը վերացաւ մէկ գիշեր,
 Անդըրշիրմին գաղտնիքներ՝ դեռ չի մեռած տեսաւ ան,
 Լըսեց ձայնն իր հրեշտակին, որ զինքը վեր կը կանչէր:

Ի

Մարգարէները համայն, այնչափ հեռու դարերով
 Եւ իրարու անծանօթ, որ նոյն քնարը հընչեցին,
 Սպասումով մը լեցուն, յուզումալից, մշտախոռով,
 Կարծես տըժգոյն փայլակներն եղան այն մութ քառսին,
 Որ մարդկութիւն կը կոչուի, և որ գերդ վէսն ովկիան,
 Երկնակապոյտ ծալքին տակ, անլոյս գիշերն ունի խոր,
 Լի կարօտով մի շողին երազներու տուրնջեան,
 Յղի յաւէտ մտածմամբ, անյուսութեամբ ահաւոր:

ԻԱ.

Լուսինը դեռ կը նայի դաշտերուն վրայ Մովաբու,
 Ուր քարաշէն քաղաքներ աւազին տակ կը նիրհեն
 Լըռութիւնը կ'ընդհատեն վայրի չազալ, յովազ, բու,
 Մեռած ծովուն ալեակներն կը խուսափին ավերէն.
 Սողոմ, Գոմոր կը ծածկեն անիծապարտ իրենց բաղդ,
 Խաւի մը տակ ծրծումբէ, որմէ ելած գոլորշին՝
 Կը ծաւալի թունաւոր ու ճիշով մը յուսահատ,
 Մայրիներու թռչնակներն անկէ հեռու կը փախչին:

ԻԲ.

Կամաց կամաց ու դողդոջ առանց երգի մըմունջի,
 Աւազներու ընդմէջէն կը թաւալի Յորդանան,
 Ալիք չունի ու կարծես յաւերժապէս կը հանգչի
 Գետն անիծուած, արիւնի ու նեխումի անկենդան:
 Զուր կ'որոնէ աչքը հոն Եղիայի կառքն հըրեղէն,
 Նիհար, ոսկրուտ Եսային, սուրն հրեշտակին ոճրադատ,
 Տապանակին առջեւ վառ լոյսն անբաժան կանթեղէն,
 — Թաղեց զանոնք իրեն տակ անծայրածիր անապատ:

ԻԳ.

Մոռացումը չի թաղեց սակայն զքեզ իրեն տակ,
 Երանի թէ ջնջուէին քրսան դարերըդ աշխարհէն,
 Յիսուս, ու մենք ըլլայինք դէմն Աստուծոյ շանթարձակ,
 Ու խաղալիկ իր կամքին, քրմայքներուն իր ամէն,
 Կը գինովնար Նա ծուխէն ողջակէզի ճենճերին
 Ու կը ներէր շատ անգամ իր ապստամբ զաւակաց,
 Քրսան դարերդ կը ծածկեն ահաւոր վիհ մը խորին,
 Լի արիւնով, ոճիրով, անէծքներով մշտայած:

ԻԴ.

Օգոստեան մեծ դարուն մէջ Հոովմի շղթան իր վրզին
 Ի Բեթլեհէմ աննըշան, գերի Աստուածը կուգար
 Ծիւն Հըռութին, Բոոսին, Բերսաբէին ու Դաւթին
 Նահապետաց, Ադամին և Աստուծոյ ալեփառ:

Իսրայէլին ժառանգած քրնարն արցունքն ու խորհուրդ,
 Ու մարդկութեան խրտացած վիշտն իր մատաղ ճակտին տակ
 Կուգար աշխարհ, մինչ անի, նայուածքով մը հեգնոտ, ցուրտ,
 Կը յօրինէր ոտքին տակ, կորուստի վիհն անյատակ:

ԻԵ.

Քանի մը մոզ ալեւոր. Արեւելքէն մոլորուն,
 Եկան աստղին հետ հրաշող, ողջունելու Մեսիան,
 Ու լուսարձակ, լուսասփիւռ, հրեշտակներու ալելուհ
 Խաղաղութեան երգին հետ՝ դէպի երկինք բարձրացան:
 Դաշտ հրաշալի՝ ուր հօտեր կ'արածին դեռ օրն ի բուն
 Ու գեղջկուհին կը վազէ ժամերուն մէջ իրիկուան
 Դէպի աղբիւրն կիսաչոր, ուռիին տակ, մօտ ճամբուն,
 Լըսել սըրինգն իր հովուին, մելամաղձիկ, ողբաձայն:

ԻԶ.

Ու ծերունին ալեհեր, ոչուն բազուկը դողդոջ,
 Գրկեց կորիւնն Յուդայի, ու ճակատը վայրահակ՝
 Իսրայէլին ողջունեց սուրբ յոյսերուն այդ բողբոջ,
 « Արձակեան, Տէ՛ր », մըմնջեց, « սեկնելու է ժամանակ »...
 Նոյն երգե՛րն են երազի, ա՛խ, նոյն ա՞ստղը լուսաշող,
 Նոյն Ծերունի՞ն, որ շատ հին դարերուն մէջ մթութեան,
 Գացին մէկտեղ ողջունել, իբրև աշխարհը փըրկող.
 Հիմալայի ըստորոտն, արքայածին Սիտտարթան...

ԻԷ.

Ինչո՞ւ հողմին, ալեակին պէս չապրէինք յաւիտեան,
 Գէթ սարէ սար, ծովէ ծով կը յածէինք անընդհատ,
 Կարելի է սըլացիկ, կը տեսնէինք մի վայրկեան
 Քաոսին մէջ լուռ գաղտնեաց, գիտութեան սուրբ ճառագայթ,
 Գոնէ չէինք ըզգար մենք մեր ճակտին տակ՝ մոլորուն
 Կայծի մը հեւքը դողդոջ, չէինք կարծեր թէ Յոյսին
 Աստղը կ'ապրի տակաւին, եթերին մէջ դարերուն,
 Մեռու, ափսո՛ս, նա վաղուց, հաւատքին հետ միասին...

ԻԸ

Երկու տարու և արդէն արեան հոսանքն սկըսաւ,
 Ռաքէլ լացաւ որդեակներն, անմխիթար սըգաւոր
 Բեթլեհէմի խրճիթներն պատեց մահին մաշող ցաւ,
 Ու լոեցին հին երգեր, շրթանց վըրայ վիրաւոր:
 Արեան լիճէն խոյս կուտար Աստուածորդին Եգիպտոս,
 Յիշե՛ց արդեօք կեանքին մէջ, իր առաջին զոհերուն
 Դալկուն ճակատն ու անմեղ արտասուքներն յորդահոս,
 Ու մայրերուն յօշոտուած տառապանքը գալարուն...:

ԻԹ

Մահն ամեն տեղ կը դարնէ կեանքը իբրև աշնան հով,
 Այլ ահարկու է մինչդեռ կը մօտենայ հիւղակին,
 Երբ որ մանկան կը մեռնին նախկին ճիշերը թոթով
 Ու ծընողքը կը դառնան գերեզմանէն տրտմազին:
 Խրճիթն ընդհուպ մէջքը կոր, կը ծալլըւի իր վըրան,
 Եւ ալ վնտուէ երբեմնի երանութեան ցուքը հոն,
 Բայլերն ընդհատ ու դողդոջ քիչ մ'ատեն ալ կ'երերան,
 Մինչև ստուեր, մոռացում, գան հաստատել իրենց բոյն:

Լ

Վարագոյրը կը ծածկէր Սրբութիւնը Սրբոց մերթ,
 Ուր կը մընար Տապանակն ուխտին անտես ամբոխին,
 Գաղտնիքն ու իր ըստուերներ կը պահէին հրաշակերտ
 Դելփեան փոսը կամ Վեստեան սրբատեղիքը նախկին,
 Կայ երկիր մ'ուր հաւաքուած հանելուկներն անցեալին
 Մարգարէներ ու կրօնի հիմնադիրներ քաշուեցան,
 Պահ մ'առանձին, վըրանին խորհըրդաւոր քօղ մ'առին,
 Հաւատքի մէջ խորասոյզ, կեանքը մոռցած իրական:

ԼԱ

Նեղոսն հազիւ ափ մը հոն դալար կուտայ իր ափանց,
 Անմոռնչ ալիք չեն խոռվեր Մադիամու դաշտն՝ ուր Մովսէս
 Գընաց պատմել իր ցաւեր գիշերներուն անթափանց,
 Անապատին հետ խոկալ և արտասուել դառնապէս:

Հոն թաղուեցան մանկական տարիներն ալ Յիսուսին,
 Աւաղապատ խրճիթին մէջ՝ ըսփինքսէն ոչ հեռու,
 Զայն կըթեցին Անսահմանն ու Անցեալը միասին,
 Եւ օծեցին մարգարէ բիւր ապագայ դարերու:

ԼԲ

Եւ անկէ ետք ոգի մ'է լուսապըսակ, թոչըտուն,
 Զերդ առաջնորդ խղճալի ձկնորսներու խըմբակին,
 Թափառական իբր ասուպ, նայուածքն յառած աստղերուն,
 Խոնարհ դասուն գըթացողն ու կարեկիցն առաջին.
 Օձերու պէս խորագէտ, միամիտ գերդ աղանին,
 Գըտաւ սըրտի տըկար կողմն ուղեկորոյս մարդկութեան,
 Յոյսի բառեր մըմընջեց գերի անլոյս ամբոխին,
 Ու սիրոյ մեղկ Աստուծոյն փոխակերպեց Եհովան:

ԼԳ

Երբեմն այսպէս կը փլչին ստորերկրեայ անդընդոց
 Մէջն ահագին բարձունքներն յաւերժական լեռներուն,
 Եւ անոնց տեղ կը խուժէ ծովն անհանդարտ, ալեկոծ
 Ու կը թաղէ իրեն տակ, ծաղիկ, դալար ու գարուն:
 Հոգիներու մէջ փլաւ հին Աստուածը շանթարձակ,
 Յիսուս կարծեց հոսել հոն խաղաղութեան շունչն ու սէր,
 Այլ ԵՄն ազատ ասպարէզ գըտաւ անվախ, համարձակ,
 Իր մոլուցքին, որմէ վար ոճիր, արիւն կը հոսէր:

ԼԴ

Սլացիր կատարն թափօրի կամ գընա ծովն Գալիլեան,
 Մին՝ ապառաժ մենաւոր, միւսը յուզուած, անհանդարտ,
 Փնտռէ Աստուածն այլակերպ, կամ գանի՝ որ հըրաման
 Կուտար հողմին, փոթորկին, կեցիր հոն մէկ ակընթարթ,
 Գիշերն իջնէ թող վըրադ ստուերներովն իր երկար,
 Ու երագէ անշշուկ, — հին անցեալէն ոչ մի ձայն.
 Պիտի գայ քեզ վրդովել, լոկ շըշունչը դողահար
 Ժողովողին՝ սը հեծեց « — Ամենայն ինչ ընդունայն... »

ԼԵ

« Աստուած Մէր է, մարդն ալ սէր կը պարտի իր ընկերին,
 « Եղի՛ք բարձր ու կատարեալ՝ ինչպէս Ձեր Հայրն երկնաւոր. »
 « Մի՛ ատէք այլ սիրեցէք Ձեր արիւնի թշնամին. »
 « Մարդն անմահ է, շիրմէն ետք դեռ յոյսեր կան հեռաւոր. » —
 Ասոնք եղան սկզբունքն ու կտակներն իր վերջին,
 Որոնց վրայ կը յուսար հիմնել նոր կեանք, նոր կըրօն,
 Ափսո՛ս, երազ վաղահաս ու յոյս անդարձ կը թռչին,
 Երբ մթաստուեր, ամպամած ու տխուր է հորիզոն:

ԼԶ

Բանաստեղծի նայուածքով ու հոգիով մարդարէն,
 Տեսաւ անդունդն ահագին, որ կը բանար ապագան,
 Զգաց հոգին մարդկութեան, որ իր նսեմ՝ խորքերէն,
 Կասկած, նախանձ կուտար դուրս ժայթքումներով խօլակահ: —
 Լացաւ մէկ օր, գիշեր մ՛ ալ — « Հայր » մրմնջեց ողբագին,
 « Բաժակն անցոր այս ինձմէն » — չ՛ եկաւ կոչին պատասխան —
 Մըտերի՛մը ողբաց նախ, մտերմութեան թանկագին
 Գաւն ու մահը արտասուեց ի մենաւոր Գեթսեման:

ԼԷ

Կ'երթանք գրկել մահն անվախ, երբ կը կանչէ պարտքը մեզ,
 Հրացայտ աչքով, խանդավառ կ'երթանք կուրծք տալ զընդակին
 Գաղափարին համար սուրբ, յօժարակամ ողջակէզ
 Կ'ընենք մատաղ մեր յոյզերն ու երազներ թանկագին, —
 Այլ դառնագոյն ու նրսեմ, անմըխիթար է վախճան,
 Երբ կը հանգչի ճակատնիս, մտերմութեան անձնատուր,
 Ու կ'զգանք թէ կուրծքերնէս բազուկն անոր դաւաճան
 Կը մխէ ներս մատնութեան դաշոյնն հատու սայրասուր:

ԼԸ

Արտասուալից աչքերով, կամաց կամաց դէպի վեր
 Ելաւ ըմպել մարդ-Աստուածն անարգ խաչէն մահի թոյն,
 Մատնութիւնն ու ուրացում՝ բազմացուցին իր ցաւեր,
 Ու նախազգաց ապագայ ժամանակներ դառնագոյն,
 Զգաց անշուշտ թէ ժայռուտ ու փշալից Գողգոթան
 Պիտի ըլլար Իտէալն հոգիներու տառապող,
 Ու խաչն անարգ՝ գերագոյն մխիթարն հէք մարդկութեան,
 Որ մութերէն շատ անդին պիտի ժպտէր լուսաշող:

ԼԹ

Մեռաւ Աստուած ու յարեաւ: Անոնք՝ որ շատ սիրեցին
 Զինք, զայն տեսան վերստին. 'ի յանապատն 'ի ծովափ,
 Ուր կը գընար դեզերիլ ու երագել առանձին,
 Լիբանանի գեփիւռին դարձած ճակատն հըրատապ:
 Օրհնեց զանոնք ու ներեց զինքն ուրացող Պետրոսին:
 Սրբագործեց իր սիրով՝ Մատլէնին հետ կինն ինկած,
 Ճակտին մոայլ չի բերաւ ալ մահացու կեանքը սին,
 Մինչեւ հրածեշտն իր վերջին, անմահ լեռնէն Ձիթենեաց:

Խ

Այս երագէն դիւթական, զէթ ճառագայթ մ'անըստուեր
 Մընար ու լոյս տար մեղի, որ կ'սպասենք դարերով,
 Զոհած պատիւ, հայրենիք, յօշոտելով մեր սրտեր,
 Կարօտակէզ կը կտրենք անհիւրընկալ սար ու ծով:
 Հիւղակը մարդ չի մընաց, որ չի փարէր Սուրբ խաչին,
 Ամեն ուղիք տարին մեզ դէպի ժայռուտ Գողգոթան,
 Մեռանք: Մէկ ձայն չի բերաւ արձագանգ մեր հառաչին,
 Զիկա՛յ արդեօք յարութիւն յոյսերուն հէք Հայութեան...

ԽԱ

Փոքրիկ իբրեւ ձիւնագունտ դուր գաղաթէն սարերուն
 Կը գլորէ ձեռքն անմեղ, գուարթաձայն մանուկին,
 Որ նախ մեղմիւ ու տակաւ պլլըւելով թաւալուն
 Նոր խաւերու կը կազմէ ձիւնակոյտը ահագին,
 Նոր կըրօնն ալ դերդ աղբիւր, ալ մ'արիւնի, արտասուաց,
 Քալեց իբրեւ մի վըտակ, հեծկըլտուքով մ'անմուռնչ,
 Այլ քիչ մը վերջ հոսանք մ'էր լավաներու զայրագնաց,
 Որ անցեալը կը փշրէր, խիզախ թափով մ'հրաշունչ:

ԽԲ

Սիրոյ արեւն բոցավառ կը հրդեհէր հորիզոնն,
 Մարդ-թիթեռներ շրլացած՝ նախ այրեցին թեւերնին,
 Կամ թեւաբեկ՝ քաշուեցան անապատներն, հոս ու հոն,
 Ճգնել մենիկ ու բաղձալ երանութեան դամբանին.
 Խաղաղութիւն երկնային, որուն յառած հեգնեցին
 Գարուն, ծիծաղ ու զալար, ընտրեցին հուր կախազան,
 Կամ խելայեղ, փորձեցին տանջանքն ապրիլ Միածնին,
 Փշրել կեանքն ու իր կիրքեր, երագներով խօլական...:

ԽԳ

Գինովութեան հին օրեր, որոնք անցան այնչափ շուտ,
 Հին, նոր Հոովմ' սարսափած այս հսկայէն նորածին
 Որ կը ցնցէր հաւատներն անցեալներու կիսափուտ,
 Քանի անգամ արիւնով զանի խեղդել փորձեցին:
 Երկարատեւ խուլ պայքար, որմէ ոչ մին յաղթական
 Ելաւ: Մարդն ալ կրօնքն ալ, զիջումներով փոխադարձ
 Զիրար խաբել ջանացին. մինչեւ մեռան իրական
 Նըպատակներն Յիսուսին, ու սին կեղեւը մընաց:

ԽԴ

Յայտնութիւնը՝ տեսնուած Պատմութէն լերկ, անբընակ,
 Խաբկանքի տարրը ծընաւ ու ոսկեպատ դրրախտին
 Երագն անգամ շլացուց Յանկութեան սիրտը անյագ,
 Ու մարդն ուղեց հոս ապրիլ՝ այդ իտէ՛ալն երկնային:
 Սկըսաւ նախ կաշառել Յիսուս մանուկն ու իր Մայր,
 Հագցուց դիպակ ու բեհեղ խանձարուրի փոխարէն,
 Զինորսներու խմբակին՝ տարահալած ու թափառ՝
 Սուրբի տիտղոսը տըւաւ, պըսակներով լուսեղէն:

ԽԵ

Թագերու վրայ դրաւ խաչ, գոհարազարդ, ոսկեշող,
 Բռնակալին սուրն հատու՝ օձեց իւղով, աղօթքով,
 Ու Պետրոսին փառամուր, Տէրը երիցս ուրացող՝
 Որ զլիսիվայր էր խաչուած, իր անցեալէն հոգեխոով՝
 Գահ մ'ի Հոովմ' տըւաւ հին զահերուն տեղ կեսարաց.
 Շղթաներով արծաթի կապեց խիղճն ու ազատ Բան,
 Եւ սկսան նոր շրջան մի մթազին ամպամած,
 Նոր ծուղակներ ինքնահիւս ու նոր դարեր գերութեան:

ԽԶ

Բիւր տաճարներ կ'ողողեն արդ Սուրբ քաղաքը Դաւթի,
 Եօթնակործան, այլ ընդ միշտ վերաշինուած հաւատքով,
 Մոմ ու կանթեղ կը մըխան ու կը հեւան ամեն դի,
 Ազգ ու ազինք կը դիմեն հոն ծնրադրել քովէ քով.
 Կ'ըսեն թէ մահն հոն մեռաւ, գուցէ անոր դիակէն
 Ծաւալեցաւ նեխումին ու փտութեան գոլորշին,
 Որ ամպոտեց խիղճն ու սիրտ ու հաւատքի փոխարէն,
 Կասկածի որդը դըւաւ հոն ցաւերով մոլեղին:

ԽԷ

Սակայն անկիւն մը կայ լուռ՝ Յովսափատու ձորին մէջ,
 Ուր իրարու խառնըւած, երջանիկներ կը ննջեն,
 Անոնք, որոնք հաւտացին և զգացին լոյսն անշէջ,
 Կաթած իրենց հոգւոյն վրայ, երկինքներու բարձունքէն:
 Գերերջանի՛կ դիակներ... որ կ'սպասեն անտրտունջ,
 Լըսել կեանքի հրեշտակին որոտագոչ փողին ձայն,
 Ժամն՝ ուր Աստուած ալեւոր պիտի իջնէ հըրաշունչ
 Իր շեշտերով կտրել հոն, կեանքերու հուսկ դատաստան:

ԽԸ

Սելովամէն քիչ մը վար, շաւիղ մը կայ մոլորուն
 Մէջքերնին կոր շէնքերու բաւիղին մէջ խեղդըւած,
 Որ կը պահէ տակաւին հին խունկերու ծուխերուն
 Ամպի գոյնը անորոշ, տրտմութիւնը միգամած.
 Այդ շաւիղէն կ'անցնէր մերթ Սուրբ ուխտին հին Տապանակ,
 Որուն առջեւ պարելէն՝ Երգիչ Արքան կը գընար:
 Ու կը վառէր ոսկեղէն եօթնաստեղեան աշտանակ
 Իսրայէլն ալ կը ցնծար յաղթանակով տենդավառ:

ԽԹ

Երգ-Երգոցի չքնաղ վարդն ու Սարօնի շուշաններ
 Փունջ փունջ այնտեղ բուրեցին, յօրինեցին ծաղկաւէտ
 կեանքի ուղին Իմաստնոյն. ու մրայօն, սեւահեր
 Գեղուհիներ քալեցին նոյն շաւիղէն լուսահետ
 Դէպի Տաճար, ուր փառքով կ'ընկողմանէր Եհովան
 Երազանքի մէջ մոռցած աստուածութիւնն ու երկին,
 Երբ առաջին շողերուն մէջ լուսասփիւռ առտըւան,
 Կը հալէին շարականն ու ալէլուն ցնծազին:

Մ

Շաբաթ օրերն հիմակ ալ նոյն շաւիղէն կը քալեն
 Յնցոտիներ վըրանին Իսրայէլի զաւակներ,
 Ծեր, կաղ ու հէք, վիզերնին ծուռ, քայլերնին դողալէն,
 Կ'երթան պատի մը առջեւ, ժամանակէն կիսաւեր
 Ու կ'արտասուեն անշըշուկ: Դուն, Աւետեաց Պաղեստին,
 Փառքի օրերդ տեւեցին բաղեղներու ծաղկին պէս
 Մէկ արշալոյս ու դուն գուր կը յուսաս թէ վերստին
 Զաւակներուդ թափառիկ՝ դարձը պիտի ողջունես:

ԾԱ.

Կիսակործան այդ պատը կայ տաճարին յիշատակ,
 Սակայն անկէ քիչ մ'անդին՝ միւս շէնքը փառաշուք,
 Որ կ'երկարէ ի կապոյտ՝ գմբէթ, կամար, աշտարակ,
 Իբրեւ դամբան անցեալին՝ որ կը հանդչի անշըշուկ:
 Հին Տաճարին մարմարներն իրարու վրայ են շարուած
 Իբրեւ ժխտում՝ դրրական Աստուածորդոյն անէծքին,
 Սրբագործուած Տխտտի հրդեհներէն կիսայրեաց,
 Յաղթանակի մի կոթող, հսկայական անագին:

ԾԲ.

Արիւնի մէջ թաթխուած դրրօշակներ կը ծրփան
 Վրանին ինկած արծաթի մահիկն աստղով մը յըզի,
 Անոնց ներքև կը հանդչին փառք, յիշատակ ու դամբան,
 Ամօթահար խաչն անգամ ծալքերուն տակ կը կըքի.
 Չի մարեցին դեռ դարեր. հին տաճարին վըրայ նոր
 Այդ մզկիթէն կը լըսուին իբրեւ հառաչն օրհասին՝
 Արձագանգներ կատաղի մըրիկներու հեռաւոր
 Երբ ազգերը կուգային բաղխելու հոն միասին:

ԾԳ.

Մին՝ Խաչակիր, սեւեռած միւսն աչքերը մահկին,
 Այլ ամենքն ալ փառատենջ՝ մէկ երազով գինովցան,
 — Ճգմել զիրար, — մինչ անդին՝ ստուերներով տրտմազին՝
 Խաղաղութիւնը կուլար բաղդին վրայ մարդկութեան:
 Կը կարծես թէ հոն են դեռ, ու զէնքերը կը շաչեն,
 Դիակնաբոյր զեփիւռէն հեւքեր կուգան անծանօթ,
 Թէ մնս մը կայ ողորմութիւն խուլ, անաւոր մոխրէն,
 Չոր չեն կարող մոռցնել ալէլուներ նուազկոտ...:

ԾԴ.

Պէտք է մոռնալ. այլ ափսոս, ցեղերու ձայնը հըզօր,
 Կ'աւանդըւի դարէ դար, սերունդներուն ապագայ,
 Արիւնի դէմ՝ պէտք է որ թափուի արիւնը բոսոր,
 Մէկ արցունքի փոխարէն, պէտք է որ ազգ մը սըզայ:
 Մին՝ խաչին, մին՝ Մահմէտին սուրը քաշած սայրասուր,
 Չարկին զիրար դարերով, Մարսիլիայէն Վիէննա.
 Յուստինեանք իր շիրմէն տեսաւ կարմիր մահաբոյր
 Դրօշը մահկին պարզուած իր տաճարին իսկ վըրայ:

ԾԵ.

Ու ցանկալի, սպասուած Հաղարամեան չ'եկաւ դեռ,
 Ամեն կուրծքի տակ Յանոսն՝ իր տաճարն ունի բաց,
 Չի տարածեց ամեն դի Խաղաղութիւնն իր թեւեր,
 Հորիզոնը կարմիր է ու երկինքը՝ միգամած:
 Կը փոթորկին ուժգնօրէն հոգիներու փառամոլ
 Կիրքն ու տենջանք ամեն օր, իրարու վրայ կը փլչին
 Պետութիւններ ու չի գար ժպտի մը շողն երկնացու,
 Որ ամոքէր սգախոտով մարդն ու անսանձ իր հոգին:

ԾԶ.

Թող բարձրանար մէկ գիշեր իր դամբանէն Մեռեալ Ծով,
 Նեխած շուրերն իր նետէր Սաղէմին վրայ և իր տակ
 Անյայտանար ամեն ինչ, անցեալն իր սեւ յուշերով.
 Թող ընկըղմէր մոռացման վիհին ներքև անյատակ:
 Յորդանանը կանգ աւնէր ու լեռները՝ զարհուրած՝
 Վէր նետուէին արմատնէն, և անսահման, ամայի,
 Անապատ մը երկարէր երկրին վըրան Աւետեաց,
 Ու տարածուէր անէծքի լըտութիւնը ամենի...:

ԾԷ.

Ու կըրօնքը քայքայուէր... Պիտի ներե՞ս արդեօք դուն
 Քու տարագիր մէկ զաւկին, ո՞վ մարտիրոս Հայրենիք,
 Մատուռներուդ շուրջ նըսեմ անցան աղւոր թռչտուն
 Իր մանկական երազներն՝ արդ փոթորկին խաղալիկ:
 Իուն ծընրաղիր կուլաս դեռ, կը զարնըւի՝ նա Խաչին,
 Անիծելու համար զո՞ւր կ'որոնէ հոս Եհովան,
 Աստուած խուլ է, չի լըսեր քու սրտակէզ հառաչին
 Ու կը թողու որ կաբմի՛ր հագնին շուշան, Շաւարշան...:

ԾԸ.

Քանի անգամ կրնայիր խաչի փոխան՝ առնել սուր,
 Դուն մերթ առիւծ, մերթ արծիւ՝ նախընտրեցիր Գառնուկին
 Դրօշը պարզել ու դարեր պաղատազին հայցել զուր,
 Սին երազներ՝ որոնք միշտ ափերէդ խոյս կուտային...:
 Երակներուդ մէջ արեան կաթիլ մ'անգամ չի մընաց,
 Թողուցիր որ քեզ զարնեն, սրտիդ խորէն շեշտակի,
 Ոտքի կոխան եղար դու նենգ, դաւաճան թշնամեաց,
 Յօշոտեցին որոնք կոյս մարմինըդ հէք հրեշտակի:


ԾԹ

Կարծեցիր թէ կը մընար էջմիածինը՝ հեռո՛ւն,
 Աստուածորդւոյն շիրմին մօտն իսկ զրկեցիր սգազգեաց
 Զաւակները՝ որ կանգնեն տաճար ո՛ւ քու վիշտերուն
 Թարգման ըլլան, այլ ափսո՛ս, Ամբաւն հոն ալ լուռ մընաց...
 Մատուռները մընացին ստուերներով տրտմագին
 Լուռ, ամայի, աստուածներդ՝ առանց զիրենք պաշտողի,
 Պրլլըեցար խելայեղ, լալահառաչ Արաքսին,
 Ըսիր. « Մընանք միասին, առանց շաղի ու շողի... »

Կ

Գընանք, Հարօլտ, անդունդի՛ն, նե՛ղ է աշխարհն ու տըխուր...
 Թոխ առնենք դէպի քեզ ծանօթ Պարապն ամայի,
 Սուրանք, մինչեւ հողագունտն՝ իբրև ցաւի մը փրփուր,
 Արտասուքով մեր պղտոր նայուածքներէն անհետի...
 Դէպի անդունդ, և ալ ետ չի դառնայի՛նք, ա՛խ, երբէ՛ք,
 Եւ կամ գայինք փոխ առած Յաւիտեանէն իր շանթեր,
 Ու ներսմը գերագոյն, իմ սրտաբե՛կ Հայրենիք,
 Զոր հայցեցիր դարերով, որուն համար կուլաս գեռ... :

Տիրե-Տալա, Օգոստոս 1906.



2

Մ Ե Ր Յ Ե Ղ Ը

(ԾՓԱ.ՆՔՆԵՐՈՍ ԵՐԿՐՈՂ ԵՐԳԷՆ ԿԱՏՈՒԱԾ ՄՐ)

Սիրելի Ուսուցչապետքս բոժ. ՄեկՔՈՆԻ
 յիշատակին նուիրուած.

Ի



Ի ՏԵՍԱՅ որ կը սուրար խաչանշան դըրօշին
 Ծալուց սեւեռ նայուածքովն իր երազոտ ու մըթին,
 Դէպ՝ Արեւելք Արեւմուտք կամ Բեւեռներն հակընդդէմ,
 Միշտ եզրերէն կասկածի անարձագանգ անդունդին,
 Դաւաճանուած շարունակ, այլ և յաւէտ խանդավառ
 Երկըրպագու Անհունին, Իտէալին, Վսեմին,
 Շուրջն իր ազգեր կ'իյնային ալևորած, հեւասպառ,
 Ան՝ կը սուրար յաւիտեան, մշտանորոգ իր հոգին
 Աստղի լուսով ողողուն, ամայքներու մէջ մնայլ... :

ԻՍ

Գացի Դեղին ու Կարմիր, Սև, Սպիտակ ծովուց ափ,
 Անցայ մշուշը Մանշի, ու բարձրացայ Հիմալան,
 Ատլանդիկէն իջայ վար ու փրփրակոծ, հրատապ
 Դէպի ովկիանն լուսաշող, հորիզոնով վէս ու լայն,
 Այրեցեալին ուրականն ու գետին երգ ներդաշնակ
 Եկան բաղխիլ ճակատիս ու բաբախել սրտիս հետ,
 Ամենուրեք, վիշտին պէս ու Երազին հանգունակ
 Հանդիպեցայ մեր ցեղին, յիշատակով խնկաւէտ... :

ԻԲ

Ու ճանչցայ զայն հետքերէն իր խաչանիշ ու զիկզակ,
 — Ուղեկորոյս ուխտաւոր, տժգոյն ու միշտ յուսալի՛ր,
 Իտէալով որ գինով՝ կը մրմնջէ՛ շարունակ —
 « Պիտի ապրի՛մ քանի որ Մասիսը չի՛ կործանիր »...:
 Զինքը կապող դարաւոր շղթաները մաշեցան,
 Նկուզներու խորն անլոյս արփաւետե՛ց դարնան պէս,
 Արհամարհե՛ց մահն անշուք ու երգերով յաղթական
 Անմահութեա՛ն խոյացաւ, միշտ անյողզողը ու միշտ վէս...

ԻԳ

Եւ անմահ ելաւ հողմավար, որ աստղերուն կարօտով,
 Յար դէպի վե՛ր սլացաւ, փայլակներով կուրծքն ուռած,
 Որ արցունքի, վտակի ու կոհակի փոխուեցաւ,
 Ու մերթ մրմունջ, մերթ մալինչ ու միշտ բողոք ու հառաչ
 Զարնըւեցաւ երկինքին ու գահավէժ ինկաւ վար,
 Ասուպի պէս շողալով, զերդ հրեշտակն ապստամբ
 Խաչն իր ճակատին և ուսին, տրտմաթախիժ, վշտահար,
 Եօթնապատիկ մարտիրոս, երազներէն հիասթափ:

ԻԴ

Այլ միշտ գոռոզ ու ժպտուն, Արարչութեան շուարուն
 Նոր անառակ այս օրդին՝ նորէն սուրաց դէպի վեր,
 Դէպի արեւն ու աստղեր, դէպի գէնիթն ու Անհուն,
 Եւ հմայքովն իր ընկճե՛ց ժամանակն ու իր դարեր...
 Անմահութեան ապաշոյց, ու թափառիկ զերդ Հրէան
 Այլ ինքնուրոյն, ինքնատիպ, ու մշտապէս անայլայլ՝
 Փոթորկին դէմ՝ դարերու խրոխտ ոգին Հայութեան
 Նահատակի, հերոսի կրկին թագով լուսափայլ:

ԻԵ

Եւ ո՞ր ազգն այս աշխարհին անցաւ ընդ հուր և ընդ սուր,
 Տարագրեցաւ խմբովին, մկրտուեցաւ բիւր անզամ
 Իր արիւնին մէջ բոսոր, և կուրծքին տակ սայրասուր
 Զգաց նետը ժատնութեան և ցաւերու անդգամ
 Ու ճակատը սուրբ մնաց, օժուն անմահ միւռոնով,

Ու ձեռքերով պողպատեայ յաւերժապէս պարզեց վեր
 Դրօշը Խաչին ու կրօնի ո՛ւ Ազատութեան հոգեթով,
 Յառաջապահ մարտական և ախոյեան անվեհեր...:

ԻԶ

Ուրիշները կանգնեցին հսկայական զերդ արծան
 Մատնանշող իրենց փառքն ու փայլուն անցքն աշխարհէն,
 Բուրգ ու դամբան և սփինքս ու կոթողներ բազմազան,
 Ու մեռած դից ՚ի հանգիստ բիւր տաճարներ հոյաշէն,
 Սակայն ոչ ո՞ք Հայուն պէս գիտցաւ ծովուն կոհակէն
 Երկնել Նարեկն ու անմահ իր աղօթներն հրաշունչ,
 Ոչ մի՛ն ծնաւ Ծնորհալին, որ շուրջն աւեր, ոխ ու քէն
 Երգեց փառքը արևուն, ու շարականն երկնահունչ...:

ԻԷ

Ու նոյնն էս դուն յաւիտեան, բաղդահալած Հայութիւն,
 Աստուածախօս քու լեզուով ու հոգիով բոցակէզ,
 Զան միգամած Իրանին, խանգն ի կովկաս և աւիւն,
 Որ ափունքէն Վոսփորի եռանդագին կը կրկնես
 Ու կը գոռան երգը զոր դուն Երկինքէ՛ն ստացար,
 « Բոնութիւնը մեռնի՛ թող, ո՛ւ Ազատութեան թանկագին,
 « Եղբայրութեան մոռցըւած ու Հաշտութեան լուսավառ
 « Այս աշխարհի վրայ թող արշալոյսները ծագին »...:

ԻԸ

Քալէ՛ ուղիդ անդադար, ցե՛ղ նահատակ ու հերոս,
 Արեւելքի ջահն եղիր, Մասիսի շուրջն հրդեհող.
 Անցիր դարուց միջեւէն, ճակատըդ վէս ու գոռոզ,
 Ճշմարտութեան դարձուցած, ՚ւ ապագայի՛ն յուսաշող,
 Եւ երբ աշխարհը մեռնի, շիրիմներուն մէջ ազգաց,
 Հողակոյտ մը լինի պարզ թող քուկդ անշուք, միայնակ,
 Որուն վրայ հրեշտակներ դէմքով ժպտուն ու անլաց,
 Կեանքիդ Խաչը գետեղեն, իբրև անմահ յիշատակ...:
 Ճիպուղի, 21 Սեպտ. 1909.



5

Ա. Ռ. ՈՎ. Կ. Ի. Ա. Ն

(ԾՓԱՆՔՆԵՐՈՒ Առորդ երգին վերջին հատուածը)

ԽԹ.

... Որ որոտովն անընդհատ կոհակներուդ զայրագին,
Խըռովեցի՛ր երազկոտ տարիներուս դաշն ընթաց,
Ու նետեցի՛ր խելայեղ՝ զիս աստղերէն անդունդին,
Բեկոններէն՝ Այրեցեալ, Տարակոյսէն առ Աստուած,
Ա՛ռ թովանքըդ հոգիէս, թող խոհերըս որ թուշին,
Դէ՛պ ալեակներն անցեալին, լքուած յուշերն մանկութեան,
Թող սլանամ մի բոպէ իմ առաջին մրմունջին,
Ու դառնամ գիրկըդ նորէն, իմ մռայլ վէս ովկիան...:

Ծ

Անապատէն կուրծքիդ մէջ մխուած ժայռի մը վրան,
Արծուի մը գերդ թեւաբեկ՝ ուխտաւորը առաւ կանդ,
Ու հոն համրեց տարիներ, ու կ'ուզէր հոն յաւիտեան
Մնալ, լսե՛լ թաւալող մոլինչներուդ արձագանգ,
Տեսնել անհուն յորձանքիդ գալ, փշրելը ոտքին տակ,
Երբ իր անթարթ նայուածքը սուղած խորը մթութեան
Ծագն արևուն կ'սպասէր անդունդներէն անյատակ,
Այլ կ'ընկղմէր աւելի իմ մռայլ, վէս ովկիան...:

ԾԱ.

Ընկողմանած իր կուրի կեղևին վրայ դիւրաբեկ,
Մերթ հիւսիսը քշեց զայն, մերթ հարաւի հուր խորշակ,
Վրադ ինկած մենութեան ցուրտ պատանքէն անաբեկ,
Քանի անգամ մխուեցաւ անդունդիդ տակ անյատակ,
Ուր ճաշակեց մոռացում մը մահերէ՛ քաղցրագոյն,
Երբ իր կուրծքը բարախեց քու սրտիդ հետ մի վայրկեան,
Ու փոթորիկը կեանքի՛ հմայքով մը գերագոյն
Իրարու գիրկ մոռցաւ ձեզ, իմ մռայլ, վէս ովկիան...:

ԾԲ.

Օրէնքի տակ բանտըւած դուն՝ անհուն մը հունաւոր,
Իր ցաւատանջ հոգւոյն պէս, — զգացիր թէ ապստամբ՝
Խուսափեցա՛ւ խորերէդ, և իր սրտին վիրաւոր,
Բողոքներուն հակառակ, օր մը գեղուն դառնութեամբ՝
Բարձունքներուն սլացաւ, մեծ Անհունին ՚ի ինդիր,
Մագլցեցաւ բուրգերէն, Արաֆաթն ու Հիմալան,
Հանգիստ ու բոյն տուին հէք ուխտաւորին տարագիր,
Կը հեզնէի՛ր երբ դու զայն, իմ մռայլ, վէ՛ս ովկիան...:

ԾԳ.

Հոս՝ Լուսթեան աշտանակն, ուր սև անգղեր խուռներամ,
Մահին ե՛րգը կը կոծեն, դաշնակութիւն գերդ կեանքին,
Հոն՝ սրածայր էջքերով երկնասրլաց Բախոսան,
Ուր քընացող խորհուրդներ՝ անէութեան կը յանգին,
Ու վերջապէս անհանդարտ, յարադողդոջ կղզի՛ն այն,
Որ առաջի՛նն արեւուն կ'ողջունէ շող գեղերփեան,
Ուր բոցավառ հիմէն վեր կը սլանայ Ֆուճիաման,
— Ըմբոստութեան մարմնացում, — իմ մռայլ, վէ՛ս ովկիան...:

ԾԴ.

Տեսար սլացքն իր խրոխտ, ու խորերէդ գոչեցիր,
— « Եկո՛ւր ոգի՛դ ապստամբ, հանգցուր ճակատդ ալեւոր,
« Արարչագործ գերդ Հոգին ու խո՛հերդ ցանուցիր
« Տուր երկինքի հովերուն, անհունիս մէ՛ջ հունաւոր... :
« Մեծ Անհունին ՚ի ինդիր... գերդ էօֆօրիօն Ֆաուսթի,
« Ոչ մէկ բարձունքն աշխարհի կրնայ պարգել աչքիդ զայն,
« Թող ճակտիդ տակ անհանդարտ՝ սուրբ մոռացումը կաթի,
« Ու դուն սեղմէ կուրծիդ վրան քու մռայլ, վէս ովկիան...:

ԾԵ.

« Քանզի տեսայ հրեշտակներ անհատներէ գերագոյն,
« Որ կրնային սլանալ ակնթարթի մը մէջ լուռ
« Արհորուէն Որիօն, ու լուսնակէն աստղերուն,
« Հին գերմարդեր՝ աչքերնին ու սրտերնին բոց և հուր,
« Երբ Եհովան յոգնաբեկ, կոհակներուն վրան ինկած,

« Եղիցի լոյս, կ'որոտար անթափանցիկ մթութեան,
« Անոնք 'ի զուր յածեցան միջոցին մէջ միգամած,
« Մեծ Անհունին 'ի խնդիր ու կ'որոնեն յաւիտեան...:

ԾԶ

« Եկուր հանգչէ խորքիս մէջ, տառապանքի՛ ուխտաւոր,
« Փոսփորաշող աչքերով ուր պարիկներ կը պարեն,
« Ուր Սափփոյներ դարերու՝ ճակտիդ վրան ալեւոր,
« Անմահութեան դափնիներ պիտի հիւսեն նկարէն,
« Ընտրէ քեզի բնավայր ամայքներն իմ հիւսիսի,
« Կամ մօտ աղւոր ամերուն՝ ուր զողորմուն կը սողան
« Աւերներու զոյգ գետերն, իրար ձուլուած միասին,
« Հին Եփրատէսն ու Տիգրիս՝ դէպի մոայլն ովկիան...:

ԺԷ

« Բաժնէ ինձ հետ գիշերները պատմութեանս աստղազարդ,
« Ու լուսնակը մեր վրան թափէ ոսկի իր վարսեր,
« Հետըդ շարժինք ու խայտանք, մրրիկներու հետ գուարթ,
« Ու ծիծաղինք շանթերու, սարսուռներու իմ ընկեր:
« Եկո՛ւր, ալ բան քալեցիր կորաքամակ ու տրկար,
« Նոր Պրովետէ հակոտնեայ, երկնից հուրէն զողջրւած,
« Անհունը քե՛զ կ'սպասէ վայելչագեղ, մեծափառ,
« Հանգչէ այլ եւս մոռացման թեւերուն վրայ մոայլամած...:

ԾԸ

Ըմբոստութեան մարմնացու՛մ՝ Զուճիամային կանգնած վրան,
Լսեց այս կոչն ովկիանին, պանդուխտ արծուին թևաբեկ,
Ու դէպի՛ վե՛ր նայեցաւ: « Հոն արևներ կը շողան
« Ու դեռ կընամ սլանալ, մտածեց լուռ, վշտաբեկ...:
« Կրնամ երթալ, հարցնել յաւերժական աստղերուն,
« Ո՛ւր կը յանգի այս ուղին գիշերաստուէր մթութեան,
« Կա՞յ ելք մ'արդեօք վիհէն զուրս կասկածներու մոլորուն
« Մեծ Անհունին՝ կ'ուզեմ ես ընկերանալ յաւիտեան:

ԾԹ

Պաղ սարսուռ մը ընդհատեց մտածման թելն իր յանկարծ,
Հարուան էր որ գլխիկոր կը մրմնջէր ահանջին,
— « Հէք մոլորած դու հոգի, շրջմոլիկ հո՛ւր, նախահարց

« Տեսար մեռած կրօններ ու զիտեցիր վշտագին,
« Աստուածներու սև թափոր, որ կը նիրհեն յաւիտեան,
« Գարձիր դէպի արևմուտ, տե՛ս Սիպերիան դալկահար,
« Նկուղներուն խո՛րն իջիր, ըմպէ ժա՛հրը գերութեան,
« Եւ զգա՛ հոն իրական կեանքի տե՛նչը տենդավառ...:

Կ

« Մնաս բարո՛ւ, ես կ'երթամ՝ շղթայակապ ամբոխին
« Հետ տառապիլ ու երգել ու թողուլ սիրտըս նորէն
« Միսօլունկի մ'իրբեւ նոր Սիպերիային վշտագին,
« Ուր երկինքը կը սարսոսայ տառապանքի ժխորէն,
« Իսկ դուն սուրա միշտ հեռուն, տե՛ս լեռները բոցավառ,
« Ու յիշէ թէ մէկ Աստուած՝ կ'իշխէ միայն մեր կեանքին՝
« Որուն առջեւ զոհ կ'իյնան բիւր ճակատներ դալկահար,
« Արդարութեան Աստուածը, Ազատութի՛ւնն իր բագին »...:

ԿԱ

Լուեց...: Ընկճած ինք իր վրայ, ուխտաւորը կը քեցաւ,
Մուտն արեւին կը հասնէր Սիպերիայէն մթագոյն,
Անդին սուղեց իր նայուածքը պրդտորած արդ տակաւ,
Հոն՝ ուր Մասիսն ալևոր, ողջո՛յն կուտայ դարերուն:
« — Այդ Սուրբ բարձունքը մոռցայ, խոկաց լացա՛ւ տրտմազին,
« Գառնամ զողորմ քայլերով վշտակարկաչ վտակին,
« Գտնեմ տնակս աւերակ, ուր աղբիւրի մրմունջին
« Հետ գեփիւրը կ'օրօրէ՛ յիշատակն ու վարդենին »...:

ԿԲ

Լուռ քայլերով իջան վար, մին՝ գտնելու Սիպերիան,
Միւսը՝ դժբաղդ Տաւրոսին ամրունքներուն ամայի,
Եւ Ուխտաւորն անգիտակ, շրթունքներուն իր վրան,
Կուլար հին երգ մ'ուղղրւած անդունդներո՛ւն ամեհի,
— « Առէք թովանքն հողիէս, թողէք խոհերս որ թռչին,
« Դէպ՝ ալեակներն անցեալին, լքուած աւեր կիլիկիան,
« Թող սլանամ մի բոպէ իմ առաջին մրմունջին
« Ու դառնամ գիրկըդ նորէն, իմ մոայլ, վէ՛ս Ովկիան » ...:
Ճիպուղի 1 նոյ. 1910

«ԾՓԱՆՔՆԵՐ» ՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ



Ահա առիկ ծՓԱՆՔՆԵՐՈՒ առաջին տպագրութեան յառաջաբանը.—
ԾՓԱՆՔՆԵՐՈՒ առաջին երգին՝ Գէպի Ա. Գեղուցիին հրատարակու-
թիւնը՝ սրտի պէտք մըն էր ինձի համար: Պայքընի Զայտ Հարօղտին ան-
կոխ թողած աշխարհները թափառիչ ձակատագրուած էր ինձ բաղդէն.
Պաղեստինով կ'սկսիմ: Նոր երգիչը՝ անբաղդատապէս աւելի տկար Հա-
րօղտէն՝ այլ աւելի տառապած անկէ՝ մտադիր է շարունակել իր ուխ-
տագնացութիւնը, դէպի Արեւելք, մինչև նորածագ Արեգական երկիրը, մեծ
Կրօնքներու դամբաններուն ընդմէջէն, եթէ միայն առիթը ունենայ մտա-
ծելու՝ թէ համակիր այլ խումբ մը հոգիներու ծոց, կրցաւ Հայ տառապան-
քին մէկ հեքք արթնցունել:

Ճիւղուղի, 5 Սեպտեմբեր 1906

Երկրորդ և չորրորդ երգերէն մէջ մէկ հատուած միայն կը յանձնեմ՝
այսօր տպագրութեան: Ամբողջութիւնը կը փափաքիմ՝ որ հրատարակուի
իմ անցնումէս վերջ: Այնչափ ախուր և յուսահատ շեշտեր կան հոն՝ որ
նոր սերունդին հոգին չեմ ուղեր հաղորդակից ընել իմ վիշտերուն: Ժա-
մանակը կ'անցնի, և օր կուգայ որ անոնք արժէք կրնան ունենալ իբր
գեղապիտական երեւոյթ:

Ձի մտնամ յիշել, թէ առաջին տպագրութիւնը ձօնած եմ՝ բարե-
կամիս, Մաթիկ Գէորգօֆի:

Ճիւղուղի

12 Փետրուար 1920

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ



ԺԹ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ



անուխ է տակաւին: Հոս ալ իրեն համար դպրոց
կայ: Այս տարի հիւանդոտ է քիչ մը, գալ տարի
թող մեկնի:

Սենեակին մէջ, մենաւոր նստած, այս խօսքերով կը հա-
մոզէինք զիրար, առանց համարձակելու իրարու աչքին մէջ
նայելու ու կը յետաձգէինք Յարութիւն-Վերոյրիս դպրոց մեկ-
նուժը, մէկ տարիէն միւսին, ու տարիները կ'անցնէին կայծակի
արագութեամբ — այրած տարիներ — և իրարու աչքին մէջ
չ'էինք նայիր ըսի, որովհետև գիտէինք թէ այդ բոլոր բառերը,
պատճառները, որ կը կրկնէինք մէջերնիս, պարապ բաներ էին
ու խորունկը մեր մտածումին՝ բաժանումին սարսուռն էր որ
մեզի կը զարհուրեցնէր: Եկաւ սակայն ըսպէ մը, ուր Ֆրան-
սացի դասատուն դաղրեցաւ դաս աւանդելէ և ըսաւ մեզի թէ
նախնական կրթութեան շրջանը լրացած էր: Արթինը, զինք
այս կարծ անունով կը սիրէին կոչել Ֆրանսացի դասընկերները,
մեկնիլ պարտ էր: Խօսակցութիւնները դաղրեցան տան մէջ:
Սկսայ աւելի երկար մնալ գրասենեակս ու թողուլ մայր ու զա-
ւակ իրարու հետ, առանձին: Կ'երթայի երբեմն գաղտուկ, թե-
թեւ քայլերով, տունը, աստիճաններէն վեր, կ'ունկնդրէի իրենց
խօսակցութեան: Անսովոր բան մը չ'էի լսել: Արթինը կը կար-
դար կամ իր սովորական կատակները կ'ընէր, հնչուն ծիծա-
ղով մը ընկերացած: Մայրը աւելի լուռ էր և կը թողուր որ
զաւակը խօսի, կարելի եղածին չափ շատ: Նոյն լուռ քայլե-
րով կը դառնայի գրասենեակ, կուրծքս թաքուն հեքքով մը խոր-
տակուած:

« Պիտի դրկե՞ս այս տարի », հարցուց մայրը մէկ իրիկուն:

« Այո », կրցայ ըսել: Եւ այդ եղաւ ամբողջը:

Սակայն սկսայ օրէ օր նոր պատճառներ որոնել, յետա-
ձգելու համար անխուսափելի մեկնումը: Նախ՝ շոգենաւները
չ'էի հաւնել: Մեսածըրին շատ խճողած կ'ըլլայ այս տաք եղա-
նակին: Հալոյեզը ուղղակի Մարսիլիա կ'երթայ ու յետոյ մինակ

մեկնիլ չէր ըլլար, հետը մէկը պէտք էր, որ ճամբորդութեան միջոցին խնամք տանի:

Տասնը մէկ տարու տղայ մը մինակը չի՛ կրնար մինչեւ իզմիր երթալ: Ի՞ գուր Արթինս կ'ըմբոստանար ինծի դէմ եւ խրոխտ շեշտերով կ'ըսէր թէ ինքը մանուկ մը չէ: Ես կամքս կը քալեցնէի և կ'սկսէի քաշքշել զինքը: « Պէտքերդ ոլորէ տեսնեմ. « Արթին », կ'ըսէի: Ու այդ պղծիկ մարդուն դէմ, գլուխս կախ՝ դրասենեակիս ճամբան կը բռնէի, քթիս տակէն բաներ մը մըմուտով: Այսպէսով մայիսն անցուցինք: Յունիսին՝ տաքերն սկսան սաստկանալ: Որոշում մը տալ պէտք էր: Բանի մը օրէն ուսական Տիգրիս շոգենաւը պիտի անցնէր, որ ուղղակի իզմիր կ'երթար: Բայց որո՞ւ հետ: Տանը մէջ ամենքս ալ համաձայն էինք, թէ Արթին մինակ չէր կրնար ճամբորդել: Պարապ տեղը Արթին կ'ըմբոստանար մեր այդ տրամաբանութեան դէմ: Պարագաներն ալ կարծես մեղսակից էին մեզի: Եթովպիայէն ոչ մէկ բարեկամ այդ օրերը իջած էր հայրենիքին ճամբան բռնելու: Եւ քանի օրերը կը մօտենային նաւուն անցքին՝ այնչափ աւելի կ'ամրապնդուէր մէջերնիս յոյսը, թէ զաւակնիս պիտի չի մեկնէր: « Հոգ չէ՛ », կ'ըսէի, « այս տարի ալ Տիրէ-Տավա կ'երթանք ու սեպտեմբերին՝ դպրոցներու վերաբացումին՝ անշուշտ մէկը կը գտնուի, որ մեկնի միասին »:

Այդ օրերը սակայն կարգացեր էի՝ թէ Չարեհ Մերքիւրեան, Պաղտատի Օսմանեան Պանքային տնօրէնը, Ատանա պիտի փոխադրուէր նոյն պաշտօնով: Մերքիւրեան հին բարեկամ մըն էր մեզի, ու շնորհալի ընկերուհին ալ իզմիրցի, Արթինիս մօրը վաղեմի ծանօթ: Չեմ գիտեր ինչո՞ւ, այդ լուրը կարդալէս վերջ խուլ մտահոգութիւն մը ծնաւ իմ մէջ: Հապա եթէ շոգենաւուն մէջ ըլլային Մերքիւրեանները: Յարմարագոյն առիթըն էր և Արթին կրնար մեկնիլ: Բայց, կ'ըսէի ինքնիրենս, կրնայ ըլլալ որ անոնք ցամաքի ճամբով մեկնած ըլլան: Մայրն ալ այս վերջին յոյսին կը կռուչէր: Արթինը մինակ, մարդու պէս, վրանիս կը խնդար այս անգամ:

Խուլ, թաւ, խորունկ ու երկարատև սուլում մը կը ցնցէ մեզի՝ Ռուսականը եկեր է: Ա՛խ, այդ շոգենաւի սոյլերը: Անոնք որ վերէն, Սուէզէն կուգան, և անոնք որ Դեղին Ծովէն կամ Հնդկ Ովկիանէն կը վերադառնան, տարբեր շեշտեր ունին:

Առաջինները հայրենիքը կը թողուն իրենց ետին, երկրորդները դէպի հոն կ'երթան: Տասը տարիներէ ի վեր վարժուեցայ անոնց շեշտին, և առանց գիտնալու կրնամ զգալ, թէ ո՞ր մին դէպի հայրենիք կը սուրայ:

Կը նետուիմ նաւակ և կը դիմաւորեմ Տիգրիսը: Այլ ևս գրեթէ իրականութիւն մըն է, բնագոյն այնքան որոշ կը խօսի իմ մէջ. հոն են Մերքիւրեանները, և Արթինս այդ շոգենաւով պիտի մեկնի: Տարտամ յոյս մը կայ սակայն: Եթէ հոն չեն...: Գինովի քայլերով կը նետուիմ կամըջակին վրայ: Կ'անցնիմ սալօնը, և առաջին անգամ աղօտ նայուածքս կը հանդիպի մէկ անկիւն, Մերքիւրեանին, որ զիս նշմարած՝ կ'ելլէ. ինծի կուգայ իր սովորական անկեղծ ու ազնիւ ժպիտով: Երկու բառով կը հասկցուինք իրարու հետ: Կը տեսնէ հոգեկան վիճակս, ու քանի մը բոպէէն արդէն նաւակին մէջն ենք:

Տուն կը դառնամ լուռ ու մտածկոտ գնացքով: Պէտք չունիմ նոյն իսկ ըսելու թէ Արթինս պիտի մեկնի: Աչքերս ըսած են արդէն: Ու խուլ հեծկլտուք մը, որ չենք կրնար զսպել այս անգամ, կը թռչի մեր կուրծքէն, երբ Արթինս լրջօրէն, իր սնտուկն ու գիրքերը կարգի դնել կ'աշխատի:

Թէ ի՞նչպէս այդ օրը սեղանի մը շուրջ բոլորուեցանք ու շաւրսանի գաւաթները զարկինք իրարու, ինչպէս գացինք շոգենաւ, հապճեպ, ու տարօրինակ ինքնամոռացումով, երազ կը թուին ինծի ամենքը: Առաջ՝ ես համբուրեցի զինքը, քանի մը կաթիլ արցունքով օծելով ճակատը: Ինք ինձմէ աւելի քաջ, չի լացաւ, այլ պինդ սեղմած ձեռքէս.

— « Հա՛յր, ըսաւ, կ'երթամ, ըսածիդ պէս, հայ ու մարդ ըլլալու համար: »

Այլ սակայն բան մը չի գտա՛ւ ըսել մօրը, համբոյր մը, տփուցած ճակտի մը վրայ, ու նաւակ իջանք: Ճակատը ձգած ձեռքին վրայ, միւս ձեռքովը թաշկինակը կը շարժէր, մինչև որ շոգենաւը մնաս բարովի թաւ ու խոպոտ սոյլով, տատանիլ սկսաւ ու քալեց ճամբան:

Դարձած ձիպուղի, ուր անապատն ու մենութիւնը կ'իյնա-

յին մեր հոգիին վրայ, մտածեցի ընդերկար ու յիշեցի կեանքիս
այն շրջանը, երբ հայրս կորսնցնելէս ետքը, հրեշտակային մօր
մը խնամքով, մայիսի մէկ առտու, երազուն ու հրատոչոր
պատանեակ, զսպելով առաջին բաժանումին կուրծքս խոր-
տակող հառաչը, կը մրմնջէի ե՛ս ալ իմ կարգիս.

— Մա՛յր, մի՛ լար, կ'երթամ՝ Եփրատ, ըսածիդ պէս, Հայ
և մա՛րդ ըլլալու համար:

Երջանի՛կ, այլ ափսո՛ս, անվերադա՛րձ օրեր...:

Ճիպուղի, 9 Հոկտ. 1912.



•

Ա Դ Ա Մ Ի Ն Ա Ն Է Ծ Ք Ը



— րախտէն դո՛ւրս, — կը մոռնչէր վիրաւոր,

Հըպարտն Աստուած ու չէ՛ր հաւտար աչքերուն,

Երբ նախահայրը՝ կը նետուէր ցնծազին,

Եւային ձեռքը սեղմած՝

Դէպի աշխարհ:

Մինչև այն օր Ինքը Տէրն էր բացարձակ,

Նիւթին, Ուժին և իր շուրջ,

Հըլու, անխօս տիեզերքը կը տեսնէր:

— Լեռներ հսկայ, որ ծովին մէջ կ'իյնային

Իրմէ վախցած: — Դրուժիւններ ու բոյլեր

Որ նրկիւղով Իրեն գծած ծիրին մէջ

Կը դառնային: Ու հիմա,

Դեռ երէկուան իր ձեռակերտ այդ հիւլէն՝

Ծիծաղով մը ամբարիշտ,

Եղեմ-դրախտը կը հեգնէր:

« Ես եմ՝ Որ էն », — կը մոռնչէր վիրաւոր

Հըպարտն Աստուած ու չէր հաւտար ականջին,

Երբ նորաշող երանութեամբն ապստամբ,

Սիրով գինով մարդը՝ ճակատն՝ աստղերուն,

« Ես եմ՝ Որ էն », կը մրմնջար ու կ'երթար:

« Ի՛մս են Սէրը, Բընութիւնը ու Մեղքը,

« Ի՛մըս Գիշերն ու փըշալից ուղիներ,

« Այլ երջանիկ եմ՝ բիւր անգամ, քանի որ

« Սէ՛րը ունիմ՝ ինձի ընկեր անբաժան: »

Տիեզերքի մարմինները ներշնչուած

Այս ապստամբ հիւլէնն.

Արարչին դէմ՝ սկսան գլուխ վերցընել

Ասուպներն նախ ամայութիւնը թողին,

Աւելի մօտ եկան մարդուն համակիր,

Զարնըւեցա՛ն մթնոլորտին և ըսին

Վայրկեան մը շողն՝ մութ յաւիտեա՛նը կ'արժէ:

Մոլորակներն դանդաղցուցին գնացքնին,

Աստղերն անգամ սիրտ առած,

Յաւերժական իրենց ծիրէն դո՛ւրս ելան:

Դրախտին փակ դրան առջեւ, զոր հրեղէն

Սուրն հրեշտակին կը պահէր,

Ադամ՝ զուարթ ու ծիծաղկոտ՝ առաջին

Իր բունակը կը շինէր:

Ճակտի քրտինք, Ծնունդի ցաւ, — անէծքներն

Աստուածային՝ կը շեշտէին աւելի

Երջանկութիւնն նախամարդուն:

Կայէն, Աբէլ, — նոր ճոռուղներ աւելցան

Որոնց եկան միանալ

Սոխակներն ու դեղձանիկներն Եղեմին,

Սուրբ երգերու բուրաստանէն ձանձրացած:

Նիւթն՝ Օրէնքին ներքեւ ընկձած անգամ մ՛ալ,

Եկաւ Աստուած: Իր հպումէն տիեզրի

Անսաստ տարրերն՝ վազած էին հե ի հե

Իրենց ծիրին: Դրախտին դռները բացաւ,

Ու ճիշտ իր դէմ՝

Ընտանիքի երջանկութի՛ւնը տեսաւ:

Նախանձեցաւ:... Ներէ՛ ինձ մե՛ծդ Անծանօթ,
 Եթէ դարեր ետքը կ'զգամ թէ մէկ օր
 Յաւերժական մենութեանդ մէջ Դուն անգամ
 Նախանձեցա՛ր հէք մարդէն:
 Ու մահուան սև հրեշտակն այդ բոյնը զրկեց
 Արէլ ինկա՛ւ եղբայրասպան հարուածէն,
 Իր եղնիկի աչքն Եղեմի՛ն սեւեռած:

Իրիկունը Ադամ եկա՛ւ երգելէն,
 Տարօրինա՛կ: Ոչ արձագանգ մ'իր ձայնին:
 Արդեօք օ՛ձը: Չէ՛, վստահ էր թէ Եւան
 Երկրորդ անգամ չէ՛ր խաբուեր:
 « Կայէ՛ն, Ա՛րէլ »: Խնդաց ինքնին: « Թերեւս
 Ինձ աչքկապուկ կը խաղան »:
 Հովը կ'ոռնար: Շատ հեռուն,
 Դրախտին անշուք մէկ լուսանցքէն
 Կարծեց տեսնել զոյգ մ'աչեր,
 Տամուկ նայուածք մը զղջումի: —
 Աստուած զինքը կը դիտէր:
 Ու հոն, ծառին տակ, տեսա՛ւ
 Իր Արէ՛լը, արիւններով թաթաւուն,
 Անձայն: Մայրն ալ՝ որ շուար,
 Շուար մորը՝ կը դողդոջէր անխօսուկ:

« Ա՛րէլ, հոգիս »: Ու զաւկին
 Ճակատն առաւ ծունկին վրայ,
 Ինչպէս անցեալ օրերուն մէջ մանկութեան
 « Ա՛րէլ, հոգիս »: Պաղ, սառած
 Ճակատը վար գլորեցաւ ծունկերէն:
 Հովը կ'ոռնար: ափսո՛ս, Հօրը սրտի կոչն
 Անարձագանգ կը մնար:
 Խիղճը կ'ըսէր Ադամին
 Կուրծքին ներքեւ վատ ու վախկոտ շեշտերով,
 — « Ըմբոստ մ'ըլլա՛ր, խոնարհէ՛,
 « Աստուծոյ կամքն, օրհնեա՛լ ըլլայ ըսէ դուն »:
 Ադամ՝ զունատ, ոստնումով մը խելայեղ,

Բոունցքը՝ սեղմ՝ ուղղած արդ լուս դրախտին
 Եւ զերդ առիւծն Եթովպիոյ, որ կորիւնն
 Իր ոտքերուն քով կը տեսնէ ոգեվար,
 Մորնչեց, « — Աստուած անարդար,
 « Չպի՛տի՛ ընկճիմ, չեմ՝ ընկճիր:
 « Կ'անիծեմ՝ քեզ Արդարութեանդ անունով,
 « Դուն Անհունն ես, ես՝ հիւլէն,
 « Կ'անիծեմ՝ քեզ օրէնքներուդ անունով,
 « Դուն ալ ողբա՛ս ինձի պէս... »:
 « Բու միածին Չաւակդ ալ օր մը մեռնի,
 « Աչքիդ առջև ու չ'երկարե՛ս ձեռքդ իրեն,
 « Ամայանայ դրախտըդ ու Դուն խելայեղ
 « Չի կարենա՛ս արտասուել... »
 « Ա՛րէլ, հոգիս... »:

Աստուած սարսռաց: Սուղեցա՛ւ Նա Ինքն իր մէջ,
 Յիշեց գալու Գեթսեմանին Գողգոթան,
 Կարմրած ճակտով Իր սիրական Գառնուկին
 Օրօրոցին մօտեցաւ:
 Յիսուս Մանուկ կը ննջէր դեռ ժպտագեղ.—
 « — Ո՛չ, չեմ կրնար », մրմնջեց,
 « Բաժանումին տոկայ, Ե՛ս իսկ չ'եմ կրնար... »
 Ու Մանուկին ճակտին վրայ դրոշմեց
 Համբոյրն Յոյսի, Միացումի, Յարութեան...:

Ճիպուղի 4 Յունուար 1906



ԻՍ.

Մ Ե Ր Մ Ա Յ Ր Ը



ասը տարի առաջ ձիպուղին տեսնող մը՝ այսօր անկէ վերստին անցնելուն, պիտի չի կրնայ զայն ճանչնալ, այնչափ ընդարձակուած ու զեղեցկացած է: Նորաշէն քաղաքներն ալ մարդ էակին կը նմանին: Իմ երբեմնի աշակերտներս եթէ այսօր քովէս անցնին ու բարեւեն զիս, անծանօթի տեղ կը դնեմ՝ զիրենք այնչափ փոփոխութիւն կը կրէ դէմքերնին: Հոն ապրող մը գրեթէ բան մը չի կրնար նշմարել: Քաղաքը մեզի հետ կը մեծնայ, կը շարժի, կը յառաջանայ, ու երբ մեր մէջքերը կը կորանան ու ճակտին վրայ խորշոմը կը ծալուի, ան տարուէ տարի աւելի սիրուն ու զեղեցիկ կ'երևի: Աներևոյթ գետ մ'ալ ունինք աւազներու մէջ կորսուած, որուն երկու եզրերը արմաւենիներու պարտէզներ յաւերժապէս կը սարսոտան: Առանց երկաթուղիի գոյգ գծին, որ դէպի եթովպական բարձունքները կը վերելակէ ու կը սուրայ, առանց ամենազգի շոգենաւներուն, որ թաւ սուլումներով սիրուած հորիզոններու արձագանգը կը բերեն, ահաւոր աքսորավայր մը պիտի ըլլար ձիպուղին, որուն գերեզմանական մոռացումը պիտի իյնար կեանքին ու յիշատակին վրան: Յիրաւի, ամէն բան փոխուած է ձիպուղի, տասը տարիէ ի վեր, մեռելներու հանգստավայրէն գատ:

Քաղաքէն տասնըհինգ բոպէ հեռու, ծովուն մօտ, բայց խորն ինկած աւելի, այնպէս որ կը լսես կոհակներուն մոլինչը, առանց տեսնելու զանոնք, աւազուտ անապատի մը վրայ բաւական ընդարձակ որմափակ տեղ մըն է մեր գերեզմաննոցը, աւելի ճիշտը հանգստաւէտ օթևան մը, ուր կը վերջանան ամեն վաղազրաւ փառասիրութիւններ, գերագոյն ջնջումին տակ:

Ձիպուղիի գերեզմաննոցը համաշխարհային է, ցեղի մը, կրօնքի մը չի՝ պատկանիր, մահուանն է, դիակներու եղբայրութեան բնակարանն է: Առաջին անգամ տեսնելուս՝ տրտում սարսուռ մը զգացի: Ամրան տաք օրերուն էր: Կրակի պէս

հարաւի խորշակը կը սուլէր, աւազի բոցագալար ամպեր մղելով հողակոյտերուն վրան: Շիրիմ՝ կամ արձան, ոչ ալ մարմար գոյութիւն ունէին, քանի մը հատէ գատ, միւսները թաղուելուն՝ վրանին նոյն աւազէ անկողինը կը փռեն, դիւրափշուր հողակոյտ մը, որ առաջին հովին իսկ, հողին հաւասար կ'ըլլայ: Ոմանք ալ փայտէ սև խաչ մը ունին վրանին, որ հազիւ քանի մը ամիս կը կենայ, ու կ'իյնայ, կը կորսուի աւազին տակ: Հոն են երկաթուղիի բանւորներ, կառավարական պաշտօնեաներ, մարդիկ, որ բազմ որոնել եկեր են, ու գերագոյն բաղդին, մահուան գիրկն են ինկեր: Հոն են Ֆրանսացին, Յոյնը, Անգլիացին, Եգիպտացին, Իտալացին ու Չուիցերիացին այդ մահուան սրտայոյգ հանրապետութեան մէջ իրար խաճուած:

Հոն է Հայը:

Եւ ո՞ւր չէ արդեօք Հայը, ո՞ր երկինքներուն տակ չէ՝ ինկած ան, իր յաւերժական թափառականի խոովքներուն տակ կ'քա՛ծ դողդոջուն, ա՛խ, ո՞ւր չէ Հայը, իր դրախտագեղ հայրենիքէն գատ...:

Եւ առաջին տեսնելուս, հոգիով արդէն հոն էի, իմ հայրենի քաղաքին գերեզմաննոցը, հրաշալի բուրաստաններու մէջ թեթևօրէն բարձրացող այն բլրակը, որուն կողերէն արծաթաձայն առուակը անմահութիւն երգելով, կը սահէր, կ'երթար: Ոսկորներս գէթ պիտի սարսուտն մէկ օր այդ անմոռաց երգերէն...:

Մատակասքարէն կամ Հնդկաչինէն շատ անգամ կուգան շոգենաւները, հայրենիք դարձող ուղևորներով: Վերադարձողները շատ անգամ գունատ կ'ըլլան ու դալկահար: Հասարակածի խոնաւ ու տաք կլիմաներուն տակ տարիներով մաշած կուգան, կուրծքերնուն տակ անողոք և անծանօթ ախտերով կուգան, կուրծքերնուն տակ անողոք և անծանօթ ախտերով: Ծովին վրայ՝ մշտապէս ալեկոծ Հնդիկ Ովկիանի անցքը՝ կը թուլցընէ այդ հիւանդներուն դիմադրելու կարողութիւնը, ու նաևուն բժիշկը տրտմագին այլ անողոք, անոնցմէ ոմանց հրաման կուտայ իջնել ձիպուղի, հիւանդանոցը կազդուրուիլ քանի մը օր և շարունակել ուղևորութիւնը յաջորդ նաևով: Աղիտաւոր հրաման: Չեռքերնին դողալով, քայլերնին կ'թոտ, կ'իջնեն նաևակ ու կ'երթան հիւանդանոց: Մենաւոր անկողին մը և անծանօթ դէմքեր: Դիմացնին՝ ծովը, ու կրնան

նուազո՞ւն աչքերով տեսնել զիրենք բերող շոգենաւը, որ կը մեկնի լուսաւոր հայրենիքը, դէպի գեղեցիկ Ֆրանսան: Երկու երեք օր հազիւ կ'անցնի ու հիւանդը կը մեռնի, ուժասպառ, ու սրտին կարօտէն մոխիր դարձած: Մնտուկին վրայ եռագոյն դրօշակ մը կը նետեն ու մէկ երկու կառքով գերեզմաննոց կը տանին: Հետեւած երբեմն պանդուխտի յուղարկաւորութեանց դէպի Պալըքլըի մահաստանը, կերպ մը վարժութիւն դարձած էր ինծի, թէ ի'նչպէս կը մեկնին մենաւոր ու անոք հոգիներ: Հոն սակայն կը գտնուէին քանի մը ուրիշ պանդուխտներ, նոյն գիւղէն, որ աչքերնէն քանի մը կաթիլ կը սրբէին, իրենց ալ նմանօրինակ վախճանը նախատեսելով: Հոս պարզապէս ահարկու էր, քանի որ մեկնողները անծանօթներ էին, կ'երթային հանգչիլ հողակոյտի մը տակ, որ վաղն իսկ անհետ պիտի ըլլար հարաւի հուր խորշակին առջեւ:

* * *

Հիւանդանոցը, ուր կը բնակի բժշկապետը իր ընտանիքով, եթէ ունի, ծովին վրայ նայող հիանալի դիրք մը ունի: Բոլորովին անջատ է քաղքէն, գրեթէ միւս ծայրը, այնչափ մեկուսացած որ հոն առժամեայ բնակողներուն ոչ մէկ հառաչը, ոչ մէկ հեծկլտուքը կուգայ վրդովել անապատի միւս գաւակններուն տրտմազին խաղաղութիւնը: Գերեզմաննոցը անկէ շատ հեռու է, չի' տեսնուիր, սակայն կ'ըզացուի: Ըսել կ'ուզեմ թէ անոնք որ մեռնիլ կ'երթան հոն, նայուածքնին չի' չարչարուիր հողակոյտերու ու շիրմարձաններու պաղ ու տխուր տեսարաններով: Իրենց նուազ աչքերը միշտ լայնաբաց պատուհաններէն կ'ուղղուին դէպի ծովը — այսինքն — ուղին սիրելի Ֆրանսային, ու դէպի վերի կապոյտը — ճանապարհը աստղերու երկնային աշխարհին: Չէի հաւատար, երբ կ'ըսէին ինծի, թէ հոն մեռնողներուն հառաչները աւելի խեղդուած կ'ըլլան, և աւելի սրտակէզ: Քանի մը ամսէ ի վեր ես ալ առժամապէս մենաւոր ու մահուան անցքը տեսած շատ մօտէն, հիմակ կ'զգամ թէ ինչո՞ւ, որովհետև վերջին վայրկեաններուն՝ ճակատը սիրելի կուրծք մը կ'որոնէ վրան իյնալու համար, ու տամուկ աչքերը պաշտելի աչքեր կը փնտռեն, գերագոյն մնաս բարովին համար:

Մենաւոր մեռնիլը՝ ահուելի' է պարզապէս:

* * *

— « Այն ատենէն ի վեր չե'մ գտած հանգիստս », կ'ըսէր Մատամ Մօրէլ, բժշկապետին կինը, երբ անցեալ ամառ, իրիկուն մը պտոյտէ կը վերադառնայինք, ինք, Մարիս ու ես: « Ամեն ամիս պէտք է որ թարմ ծաղիկներով փունջ մը կազմեմ ու տանիմ փոքրիկ Ալիսին գերեզմանին: Սայկօնէն կուգային, հոն տեղին վրայ կազմուած սիրուն ընտանիք մը, հայրը, մայրը ու երկամեայ աղջիկնին, հրեշտակային Ալիսը: Ճիպուղի մօտերը փոքրիկը անհանգիստ կ'ըլլայ, ջերմով անկողին կ'իյնայ ու նաւուն բժիշկը կը յանձնարարէ իրենց ճիպուղի իջնել, մինչև փոքրիկին կազուրուրելը և յաջորդ շոգենաւը առնել Ֆրանսայի համար: Եկան հիւանդանոց: Փոքրիկը կայտառ, առոյգ ու գիրուկ, բնաւ հիւանդ չէ'ր կարծես: Աչքերը միայն քիչ մը կարմրած, ու ձեռքերը երբեմն ջգային պրկումներով կարկամած: Գիրկս առի, սիրեցի զինքը: Երբ մեր յարկաբաժինը քաշուեցանք, ամուսինս ըսաւ. — « Խեղճ ծնողք, չեն գիտեր թէ վերջին իրիկունն է, որ կ'անցընեն իրենց Ալիսին հետ: Փոքրիկը մեհեմիթ ունի և հազիւ կը հասնի արշալոյսին: Պիտի չի հաւատայի, եթէ չի գիտնայի թէ գիտութեան վճիռները անողոք են: Իմ փոքրիկներս քնացուցի սրտազին սեղմելով սրտիս, և ուշ ատեն կամացուկ մը գացի դժբաղդ ծնողքին մօտ, որ մանկան անկողնոյն քով վիզերնին ծուռ, աչքերնուն մէջ սարսափ, կը նայէին գալարուող հիւանդին, որ ալ չէ'ր ճանչնար զիրենք: Մինչև լոյս մնացի հոն, հետերնին տանջուելով գերագոյն բաժանումներու սարսափին տակ: Մանուկ հրեշտակը՝ արշալոյսին մօտ կը թոչէր արդէն դէպի լաւագոյն աշխարհի մը արշալոյսը: Մօրը գրկին վրայ իր վերջին ժամերուն, իրենց ձեռքով դրին անկենդան մարմինը սեւապատ փոքրիկ մնտուկին մէջ, եւ ամուսինս ու ես ընկերացանք իրենց հետ դէպի գերեզման: Հայրն ու մայրը իրենց ձեռքով իջեցուցին իրենց սրտի հատորը հողին մէջ, շունչերնին բռնուած, կամաց, մեղմով, որ չարթննար մանկիկը, իբր թէ իր փետրագարդ անկողինը ըլլար, ուր ննջելու կ'երթար: Աւազի հողակոյտին վրայ, քանի մը անբոյր ու դալկահար ծաղիկներ սփռեցինք: Ու լալազին՝ մայրը ինզրեց ինձմէ, որ գամ այցելեմ երբեմն այդ մենաւոր շիրմին ու քանի մը ծաղիկ բերեմ Ալիսին: Դեռ երէկ ինծի անծանօթ այդ մօր

տուած խոստումս կը կատարեմ ամեն ամիս, իբր թէ իմ քոյրս էր ինք, ու մեկնած մանկուհին իմ զաւակս եղած ըլլար...: »

* * *

Անկէ ի վեր տրտում ու քայլամուտք, գացի քանի անգամ ձիպուղիի գերեզմաննոցը: Հոն կը հանգչի Յակոբը, պանդըխտութեան հոսանքին առաջին ուժասպառ խլեակներէն: Հոն է Հաճի Տուտուն, ալեւոր պոլսեցի մայր մը, որ մէջքը կոր ու դողդոջ, ուղեւորի ցուպին կըթնած, եկեր էր իր միակ զաւակը, Արմենակը որոնելու այս հեռաւոր ափունքին վրան. հոն հրեշտակային Երուանդը իր եղբօր հետ քով քովի, ամենքն ալ Հայ ու Հայու զաւակներ: Անյայտ է իրենց շիրիմը, մեր ցեղին բաղդին նման, ու ալ ոչ մին ունին զիրենք յիշող, և իրենց վրայ դալկահար ծաղիկներ սփռող:

Այլ ոչ, դուն կաս աշխարհի մոռացումներէն աւելի վեր, դուն, ալեւոր ու սգազգեաց այրիդ, ի՛մս հայրենիք, դուն, Մայր Հայաստան, որ Մասիսի ստորոտէն կը հետեւիս տարահալած զաւակներուդ քայլերուն, ու մեր աննման լուսնակէն շող մը, Արաքսէն ու Եփրատէն հեծկտուք մը, ու Շաւարշանէն Շուշանի բոյրը, գիշերներու ցօղին ու զեփուռին հետ, կը զրկես անոնց վիրաւոր կեանքին և անյիշատակ շիրիմներուն...:

Ճիպուղի, 20 Դեկտ. 1915.



ԻՌ

Գ Ը Ն Ա ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱԿԻՍ

Դիւթուած հոգիս բաղդէն դժխեմ,
Անապատին մէջ հրայրեաց,
Ախ, ալ չիպ'տի' վերատեսնեմ
Ձիւնն ու մշուշն իմ հայրենեաց:

Եղնիկի պէս օր մը երբէք
Հին երկնային բարձունքն ՚ի վեր
Ձիպ'տի' սուրամ ու սրտաբեկ
Պիտի հատնի'մ հոս կարեվէր...:

Ես կը մխամ մինչ կարօտով,
Հոգիս բոցը չի մարած,
Ու կ'որոնեմ սրտախոտով
Ձիւնն ու մշուշն իմ հայրենեաց.

Ամպեր կ'անցնին ծովէն անդին,
Ու փոթորիկը խելայեղ
Կը սլանայ որոտագին,
Անդունդներու մէջէն անեղ:

Ո՞ւր կը դիմեն ամպ ու հովիկ,
Երգն ամայքին, հեւքն ովկիանին,
Ո՞ւր կեանքն ու իր տրտում ալիք,
Հին երազներըս ո՞ւր գացին:

Երգէ', հոգիս, երգդ ո՞ւր մնաց,
Յանձնեցիր զայն ո՞ր կոհակին,
Միայն մենիկ ու տխրամած
Անբաղդները հոս երգ չունին:

* * *

Գէթ դուն գրնա, տղաս, դուն որ միասին
Հոս այրեցա՛ր արևներու բոցին տակ,
Որ անտրտունջ բաժնեցիր հետըս կեանքին
Լեղի բաժակ:

Սուրա', ամպին, փոթորիկին հետ հեռացի՛ր
Ամայութեան կոհակներէն շատ հեռուն,
Հորիզոնէն անդին անհուն ու անծիր,
Վէս Տաւրոսի լեռներուն:

Գտիր ամբիժ ձիւնն ու մշուշն հայրենեաց,
Տո՛ւր ճակատըդ ցուրտ սառուցիկ հովերուն,
Ու ջիղերով պողպատի պէս ամրացած,
Ողջունէ նոր մի գարուն:

Զիս մի՛ հոգար: Ես քայլերով զոգզոջուն
կրնամ՝ ելլել բաժանումի Գողգոթան,
Դու հին, մեռած երազներո՛ւ Յարութիւն,
Փակէ աչերս ու զընա՛...:

Վերաշինէ՛ տընակս աւեր ու լքուած,
Համբոյրներըս տուր վարդերուն սիրահմայ
Ու դէպ՛ ամբիժ ձիւնն ու մշուշն Հայրենեաց
Փակէ աչերս ու զընա՛...:

Ճիպուղի, 21 Յուլիս 1914.



ԻՊ.

ՀԱՐԱԻԻ ՀՈՒՐ ԽՈՐՇԱԿԻՆ

Յորեկն այրող արեւուն տակ,
Պլլըւած հուր աւազներուն,
Շուար-մոլոր, աննպատակ,
Կը թափառի՛ս դուն օրն ՚ի բուն:

Ոչ սոյն ունիս ցուրտ հովերուն,
Ոչ ալ մոի՛նչը փոթորկին,
Հարաւի հուր խորշա՛կ տժգոյն,
Դու մարմնացած ցաւի՛ հոգին:

Անապատի կլափին անձիր
Խոպոտ հառա՛չն ես վշտագին,
Կամ արձագանգը տարագիր
Լքուած սիրոյ լիշատակին:

Կը թափառիս ու կ'որոնես յաւիտեան
Ովասիսն ուր այրած հոգին զովանար,
Կամ մռնչող ու փրփրակոծ ովկիանն,
Ուր սուզէի՛ր դողահար:

Սւազն առած կը գալարուիս մերթ վրրադ,
Բողոք-վիշապ, դէպի երկի՛նք կը սուրաս,
Ու կ'իյնաս վար, մոլորատանջ ու վհատ,
... Լճու է Սստուած:

Քու սե բաղլին համակերպիլ չե՛ս կրնար,
Հայրենիքըդ անապա՛տն է յաւիտեան,
Դուն հարաւի ով հուր խորշակ վշտահար,
Որ կը բաղձաս ազատութեան:

Ես կը ճանչնամ հոգի մը որ յորձանքիդ
Մէջ ընկղմած մոլորագին
Կը թափառի՛ շուրջն անհունին,
Ու կը յառի՛ ապագային անժրպիտ:

Զո՛ւր կը յիշէ ովասիսներն անցեալին,
Հին գարուններ մշտադալար,
Երազ ու յոյս, սէր ու քընար,
Մտերմութի՛ւն, խանդ ու գորով թանկագին:

Ու մտամփոփ ու թափառիկ քեզի պէս,
Անապատին իբրև ընկեր անբաժան,
Կը տժգունի արեւուն տակ բոցակէզ,
Ու կ'սպասէ ազատութեան:

* * *


Թափառեցէ՛ք, որոնեցէ՛ք յաւիտեան,
Ովասիսն՝ ուր այրած հոգին զովանար,
Կամ մռնչող ու փրփրակոծ ովկիանն,
Ուր սուզէի՛ք դողահար:

Ճիպուղի 24 Յուլիս 1914.



ԻՊ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՎԵՐԱԿԱՐՁԸ



(Տ Ե Ս Ի Լ Ք)



ազերն ալևոր ու պարթև հասակը կորացած, այլ այդ մազերը դեռ անխորշում ու լայն ճակտի մը վրայ ինկեր էին, ու քայլերը կրնային համեմատիլ գարնան առտունները անտառի մէջ սուրացող եղնիկի մը քայլերուն, ճկուն ու դիւրաթեք: Ծերութիւնը իր փառքը տուած էր անոր, առանց հոսելու երակներուն մէջ այն տրտմագին թուլութիւնը, որ մեծ դադարէն առաջ կուզայ մարդուն յիշեցնել յաւերժական հանգստեան մօտենալը:

— Մշտնջենական երիտասարդն եմ կը մտածէր ինքնիրեն ու կը քալէր, ու քանի կը մօտենար իր հայրենի քաղաքին, աչքերը աւելի վառ, աստուածային հանճարի ցոլքովը կը շողային: Քառսուն տարիներու կարօտը կ'ուռեցնէր կուրծքը, և ինք վէս ու գոռոզ, կը շարունակէր ճամբան: Իրաւունք ալ ունէր: Այդչափ տարիներ առաջ մեկնած էր մէկ օր այդ բուրաստաններու մէջ պահուած քաղքէն, դէպի կեանքի չոր ու վհատեցնող իրականութիւնները, տրտմագին քնարէ մը զատ առանց ընկերի, ու ողջունած ամեն ծովերու ափերը: Ինքը մինա'կը հարթած էր ճամբան, ամեն օր դէպի աւելի լուսաշող բարձունքներ: Մանկան մը ճիչերով սկսած էր, ընտանեզուրկ ու լքուած հոգիի մը գալարումներով, այլ ժամանակը ձեւ տուած էր այդ անկերպարան ճիչերուն, ու մեյամաղձոտ բանաստեղծը տեսեր էր օրին մէկը, որ աստուածներու դալարագեղ դափնին կը բոլորուէր իր լայն ճակտին շուրջ: Երազուած իտէակա'նն էր այդ, հոգիներէ հասկըցուած և անոնց մէջ արձագանգ գտած ըլլալու զաղափարականը:

Արտեմիսի տաճարէն, Աղլասընի անդնդային աւերներէն, Սփինքսէն ու այն լքուած մեհեաններէն ուր ծնրադիր ու կոյր Պուտտաներ յաւերժապէս կը նիրհեն, երկնածրար էվէրէսթէն ու մշտայոյզ Հնդիկ Ովկիանէն, նորածագ արեգական երկրին

քրիզանթէմներէն ու լայնակառոյց բաղոտաններէն, իր քնարին վրայ եկած էին թրթռալու յաջորդաբար կարօտի մոռցուած երգեր, որոնց ունկնդրած էր խանդավառ ամբաւութիւնը:

Ու վերջին օրերուն, յիշատակի անզուսպ թափովը, փառքով ու հարստութեամբ յղփացած, ըսեր էր ինքնիրեն, — «Դառնամ հայրենիք, գտնեմ իմ հին հիւղակս, մեր աղբիւրներուն վրայ ծլող վարդենիէն կախեմ քնարս ու աչքերս հոն փակեմ, ուր իմ սիրելիներս կը ննջեն »:

Իր թափառիկ անցեալին այս դրուագները հիմակ փայլակի արագութեամբ կը թռչտէին բանաստեղծին վառ աչքերուն առջեւէն, երբ սարսուռով մը կեցաւ, ինք որ կանգ չէր առած ովկիանի ուրականին մոխնջներուն ընդ առաջ, վտակի մը կարկաչը լսած էր, պուրակին երկարածիգ բարտիներուն առաջին ստուերն ալ թեթև մը հպած էր իրեն: Այդ կարկաչը անծանօթ չէր, քաղքին տուններուն միջեւէն գալարուելով սահող այդ առուն ընկերակցած էր ատենով մայրենի օրօրներուն ու դեռ կը յիշէր ծառերուն ստուերները, որ զեփիւռին հետ կը խաղային:

Վայրկեան մը միայն կանգ առաւ ու քալեց նորէն, այս անգամ աւելի դողդոջ և աւելի արագ:

Հիմակ քաղաքին մէջ էր արդէն: Բիւր ծիծառներ օդին մէջ կը ճուռողէին: Բացատներու միջեւէն լերկ լեռը կը բարձրանար: Իբր թէ տակաւին երէկ եղած ըլլար, վտակին քովէն կը քալէր ծերունի բանաստեղծը, անոր հետ խօսելով, երբ ան, ոստոստուն առուակ, իր ընթացքին առջև ելած քարի մը, խուժի մը հանդիպած, վայրիկ մը կը կենար մտախոհ, և աւելի բարձր մըմունջներով, ինք իր վրայ գոռուելով տարտղնելով, կ'ոստնուր ու կը սահէր անդին:

«Մօրաքոյրիս երթամ» ըսաւ, «մայրս մեռնելէն վերջ այդ կինը այնչափ գուրգուրաց վրաս», ու միշտ վտակէն անբաժան քալեց ծառուղիներէն: «Ինչ անակնկալ պիտի ըլլայ», կը մտածէր, «նախ պիտի չի ճանչնայ զիս, քովը պիտի կենամ քանի մը օր, կամաց կամաց պիտի խօսիմ բացակային վրայ, և օր մըն ալ գիրկը պիտի նետուիմ, խեղճ մօրաքոյր»...:

Ու վայրկեանէ վայրկեան նոր ծրագիրներ կը շինէր, ինք որ փառք ու հարստութիւն կը բերէր իր հետ ու վերջին խաղաղութեան կարօտը կը քաշէր:

Վտակին ուժգին մէկ սղաղակէն կանգ առաւ ու շուրջը

նայեցաւ: Զուրը ճամբան կը փոխէր ու քիչ մը անդին երկուքի կը բաժնուէր: Բաժանումի լաց:

— « Հոս էր մօրաքոյրիս տունը »:

Ճակատը ցնցելով չորս կողմը նայեցաւ: Ամայի պարտէզ մը քանի մը ծերուկ, քոսացած ուռնիներ ու թթենիներ: Յանկապատի փշենիները՝ ցիրուցան: Քիչ մը անդին տնակի մը, մէկ պատը կը մնար միայն, ծառի մը բունին կոթնած, ու քանի մը սև ազոաններ, որ կը քնանային ճիւղերուն վրայ: Ո՛չ մէկը կար:

— « Շատ ո՛ւշ, խեղճ մօրաքոյրս, շատ ո՛ւշ », — մրմնջեց ծերունին ու քալեց դանդաղելով:

— « Գոնէ հօրեղբայրներս գտնէի », — Ու բաժնուած վտակին մէկ ճիւղին հետ, կամաց կամաց ու վիզը ծուռ՝ քալել սկսաւ նորէն:

Ամայի փողոցին ծայրը, դրան մը առջև, մազերը ձիւնի պէս ճեփ-ճերմակ, ծերուկ կին մը նստած էր: Աչքերուն արցունքը սրբելով, փառքի տրտում ուղեւորը՝ դէպի հոն խոյացաւ:

Ա՛ն էր, Լուսիա քուրիկը, հին դրացուհի մը, որուն ջահրակ ուրած ատեն, հին օրերուն շատ անգամ կը խաղային քովը ու կամացուկ մը մաղէն կը քաշէին տղաքը:

— « Բարի իրիկուն, Լուսիա քուրիկ:

— « Բարի իրիկուն, դուն ո՞վ ես:

— « Աղէկ նայէ երեսս, զիս չե՞ս ճանչնար, միտքդ չե՞ պզտիկ եղած ատենս քանի անգամ դրկած ու սիրած ես զիս, մոռցա՞ր:

— « Դուն նափուղէնն ես:

— « Չէ՛, Լուսիա քուրիկ, դուն փոխուած չե՛ս, մազերդ միայն ճերմկեր են, ես այնչափ փոխուած եմ որ չի ճանչնաս:

— « Դիւթէլեան Յովհաննէ՛սն ալ չես, հապա ո՞վ ես: Գիտեմ, անոնք ալ չիկան: Գացողը ետ չի՛ դառնար:

Ու տարօրինակ նայուածք մը նետելով, պառաւը, յիմարի ինդումով մը գլուխը անդին դարձուց: Յիմարացած էր խեղճ կինը, ու բանաստեղծը իր մեռած ազգականներուն նմանցուցեր էր:

Մեռա՛ծ...: Բայց ի՞նչ էր որ ի՛նք ալ, փառքի ու ճոխութեան մէջ յափրացած բանաստեղծը, որուն և անցեալին միջև քառասուն տարիներու անդունդ մը կը փորուէր: Ի՞նչ իրաւուն-

քով վերադարձած էր հոն հին վտակին և ստուերներուն, որոնց օտարական մնացած էր ինք այնչափ երկար տարիներ...:

Վտակը ոտքին տակ խուլ աղմուկով մը կը լմաւալէր: Այդ անխօս հրաւէրը ցնցեց ծերունի բանաստեղծը, որ ելաւ և սկսաւ քալել ամայի փողոցներէն: Այլ ևս իր չորս կողմը չի նայեցաւ, ուռած աչքերուն չի հանդիպեցաւ ան միւս փլատակ տնակը, իր տնակը, որուն աղբիւրը անձայն մնացած էր ու վարդենին՝ խամրած:

Քալեց ամայի ծառուղիներէն, դէպի ստուերներու մէջ պահուած բլրակը, ուր գիւղին ննջեցեալները կը քնանան:

« Դուն պիտի ճանչնաս զիս մայր իմ, դուն պիտի չի մերժե՛ս զիս, ըսաւ հեկեկալով: « Կեանքիդ մէջ կ'ուզէիր դպրոցի վկայակա՛նս տեսնել ու չի տեսած մեռար, ճակատս դափնէպսակ, փառքով կը վերադառնամ այլ սիրտս կարօտով այրած: Հոս ամէնքը օտա՛ր են ինձի, քու և հայրիկիս քովիկը տեղ մը բացէք, որ փակե՛մ աչքերս:

Ու լուռ, սպիտակ մարմարներու մէջէն քալեց հիմակ դողդոջուն ծերունին, անշուք ու մոռցուած անկիւնը գերեզմաննոցին, քնարը փշենիին քով դրաւ, ու հեծկլտալով, ճակատը մայրերու պատուականին հողակոյտին մօտեցուց...:

* * *

Հեծկլտալով արթնցաւ երիտասարդ բանաստեղծը: Դէմը մեծ ովիանոսը արևին հրավառ ճառագայթներուն տակ կը դողար: Ի՛նք կայտառ ու կեանքի սկի՛զբը դեռ, խոր ցնցո՛ւմ մը կրած էր այդ երազէն: Հպարտ ժպիտ մը կարմիր՝ ծաւալեց անծալ ճակտին վրայ եւ ինք՝ խրոխտ ու անյողողդ, նաշուածքը դատե՛ց ովկիանի անհունէն և ստուերամած վտակին՝ դարձաւ:

« Չէ՛, տակաւին ուշ չէ՛ », ըսաւ ինքնիրեն:

Ճիպորդի 18 մայիս 1908



132

Բ Ա Ղ Դ Ի Ե Ն



Բ անցեալին եղար դու մերթ ուղեկից,
 Ու տարիք զայն շաւիղներէ լուսասփիւռ,
 Հորիզոնին մօտ անսահման, սիրագիծ,
 Անոր ճակտին յոյսեր, յոյզեր տուիր բիւր,
 Ով բաղդ, տե՛ս. նոյն պատանին է շուարուռն,
 Քու երբեմնի որդեգիրըդ յուսաշող,
 Կ'ուզես մարե՞լ ժպիտն անցեալ օրերուն,
 Երանքը գէթ իրե՛ն թող.. :

Տարիք դու զայն շաւիղներէ լուսասփիւռ,
 Ըսիր, « ըմպէ՛ երանութի՛ւնը կեանքին,
 « Ահա սիրոյ ջինջ ու վճիտ, լոյս-աղբիւր,
 « Թող զովանայ՝ հրատուչոր քու հոգին: »
 Սթափումը սակայն, ափսո՛ս, կուզայ շուտ,
 Հետքերդ հազի՛ւ կը նշմարուին յուսաշող,
 Իր յոյզերն ալ կը հետեւին քայլերուդ,
 Ստուե՛րը գէթ իրե՛ն թող.. :

Հորիզոնին քով անսահման, սիրագիծ,
 Տեսար թէ ինչ թռիչներով սլացաւ,
 Փոթորկավար, վէս ամպերուն բաղդակից,
 Երբ շանթերով լեցուն էր սիրտն իր ամբաւ,
 Խորշակն այրեց մայիսի հէք վարդենին,
 Իր կեանքն ասո՛ւպ մ'եղաւ տրտում ու սահող,
 Ու դողդոջուն կը սահի՛ դեռ..: Անցեալին
 Յուշե՛րը գէթ իրեն թող...

Անոր ճակտին յոյսեր, յոյզե՛ր տուիր բիւր,
 Եւ իտէալ՝ Մաւի՛սը, նոր Գողգոթան,
 Վարը՝ անդունդ, այլ վերն արե՛ւ լուսասփիւռ,
 Ըսիր, « հոգիք պիտի այրի՛ն յաւիտեան: »

Հաւտաց քեզի ու երազեց խայտազին,
 Ու չի տեսա՛ւ կասկածին իժը խայթող,
 Արդ իր յոյսերն ամայութեան կը հակին,
 — Պատրանքը գէթ՝ իրե՛ն թող..:

Ով բաղդ, տես, նոյն պատանին է շուարուռն,
 Երկնի մը տակն՝ ուր հին աստղեր կը փայլին,
 Ով կիանի մ'ափն՝ ուր կոհակներ մոլորուն,
 Կ'ուզան մոնչել յիշատակներն անցեալին.
 Դողդոջ քայլերն ու ճակատը՝ վայրահակ,
 Հոգին՝ մշուշ ունի, խոնաւ աչքը՝ ցօղ,
 Կը քայքայէ՛ զինքն հարաւի հուր խորշակ,
 — Քնարը գէթ իրե՛ն թող...:

Քու երբեմնի որդեգիրըդ յուսաշող
 Անապատի՛ եղաւ որդին մենակեաց,
 Ամայութիւնն անմարդաձայն ու անկոխ,
 Ուրուականներ մոռալաղէմ, սգազգեաց
 Իր շուրջ առին, ու պաշտելի մայիսին
 Ձի՛ գար իրեն ոչ մի երգը թոչըտող,
 Տա՛ր փափաքներն ու պատրանքներն միասին,
 — Հաւատքը գէթ իրե՛ն թող...

Կ'ուզես մարել ժպիտն անցեալ օրերուն,
 Մարէ՛ կրնա՞յ վառիլ յոյսը, երբ արդէն
 Հէ՛ք տարագիր, կը սեւեռի մոլորուն
 Իր նայուածքով՝ հողին, ու զինք կը քանդե՛ն
 Իրերն աստեաց..: Է՛հ, թող միայ՝ կիսայրեաց,
 Իբրեւ մի ջա՛հ իտէալին խուսափող...
 Գըթա՛, ու հոն, գիրկն իր աւեր հայրենեաց,
 Շիրի՛ մ' մը գէթ իրե՛ն թող...:

ձիպուղի 10 Օգոս. 1920



66 ԵՓՐԱՏ՝ԻՆ ՎՐԱՅ ԽԱԶՀԱՆԳԻՍՏ



ըէկ ճիպուղի հասնելու տասնամեակը տօնեցինք: Յարածուփ կեանքէս անբաժան իտէալին ու երազներուն համար, միշտ դէպի վեր սեւեռած նաշուածքիս ու բաղձանքներուս համար, դադարի հանգրուանն եղաւ երէկը: Եւ ի՞նչ յուզումնալից օր էր:

Կարծես բան մը չէ՛ր փոխուած, երբ առտուն կանուխ, ժամը Յին ելայ ողջունել անապատներու բոցավառ արշալոյսը, որուն տակ մեծ ովկիանին կոհակները մոնչելով կուգային փշրուիլ: Երազի մը մէջ էի, սպասումով մը հմայուած, սպասումովը միւս տասնամեակին:

Քաղաքը դեռ կը քնանար, և ժամերը կը հնչէին իրարու ետեւ, մետաղի մը ծանծաղուտ շեշտերով: Տասը տարի առաջ Արթինս կար միայն հետերնիս, անկէ ի վեր մեր բունակին մէջ գոյգ ճոռողներ աւելցան, կ'անցնիմ սենեակ և այդ եռամեայ և երկամսեայ անտիական հրեշտակներու ճակտէն համբոյր մը կ'առնեմ, դողդոջ շրթներով, կը սրբեմ աչքերս, և կարօտի համբոյր մըն ալ Յոնիականի ափունքը քնացող Կորիւնիս կը դրկեմ, ինչպէս կը սիրէր անուանել զայն Մուրատեանց Սրբազանը:

Այսօր արձակուրդ պիտի տամ ես ինծի: Աշխատիլ չեմ ուզեր, չեմ կրնար: Երագե՛մ պիտի: Յոգնատանջ վերելքիս մէջ, ինծի իրաւունք կուտամ այդ մէկ օրն անցնելու նուիրուած ամբողջովին անցեալ յիշատակներուն, մէկ օր, գոնէ մէկ օր, որովհետև գուցէ բանաստեղծին ըսածին պէս,

Վաղը շատ ո՛ւշ պիտի ըլլայ

Դառնալու հին գարուններուն...:

Ու տարօրինակ իրողութիւն, մշուշ մը կը պատէ, կը վարագուրէ ճակատս ու յիշողութիւնս, կարգն ու ներգաշնակութիւնը կը խանգարեն, շղթային մէջ օղակներ կան որ ջնջուած են, ու տասը տարիները միահաղոյն, ամենը մէկէն կը խուժեն, կը ծանրանան ու կը ճնշեն զիս: Առաջին չորս տարիները հոն

են, մերենական աշխատանքի, համեստ գրադրի, ամփոփման տարիներ: Յետոյ դժնդակ սկզբնաւորութիւնը, ովկիանի կոհակներուն վրայ ելեւջող նաւակի մը խելայեղ ուստուսումներով, թափառումներս մէկ անկիւնէն միւսը, անցնումներս մէկ անակէն միւսին: Ու վերջապէս ժամանումը նաւակին բաղդատարար անքոյթ ու նուազ ալեծուփ շուրեր: Եւ անյողգող, թէեւ երբեմն դողդոջուն քայլերով վերելքիս մէջ դէպի դրական կեանքի Գողգոթան, զօրացած երկնային շունչովը սիրոյ, վկայ է այսօր, դո՛ւն, ով իմ մրրկածուփ անցեալիս իտէալը, ով փայփայուած երազ, թէ չի մոռցայ երբէք զքեզ, դո՛ւն, աստղ արշալոյսին, որուն պիտի սլանամ մէկ օր...:

*
*
*

Կէսօրէն ետք Ռուսական շոգենաւային ընկերութեան «Եփրատ»ը եկաւ Պարսից Ծոցէն և Պոլիս պիտի մեկնի: Կը լսեմ թէ Պաղտատի առաջնորդ Կէօմրիւկճեան Սրբազանը վրան է: Նաւակ կը նետուիմ ու կը սուրամ դէպի «Եփրատ»: Միտքս Սրբազանը իջեցնել և նորածին Մարիանէս՝ կնքել տալ է: Գծբաղդարար Միւռոն չունի: Հակառակ 75 ձմեռներուն, գարունի մը պէս թարմ կը գտնեմ Սրբազանը: Արեւոր, ժպտուն ու զուարթ: Վիզս ծուռ կը վերադառնամ ցամաք, ընկերանալու համար ճամբորդներու, որ այդ նաւով Պոլիս պիտի երթան: Շատ են մեկնողները, բոլորն ալ Հայեր: Հարարէն՝ Մինասեանէնք, բանաստեղծ Խանճեանին մայրը, մեր Տիգրանիկն ու Աւետիսը, երկու փոքրիկներ, որ դպրոց կ'երթան: Երեք տարի առաջ Արթինիս մեկնումը կը յիշեմ: Գէորգօֆենք ու մենք կ'ընկերանանք ճամբորդներուն մինչև շոգենաւ: Ճակատս հակած, մտածկոտ եմ ես ու լուռ. նոյն երազին հմայքին տակ կաշկանդուած, անդամալուծուած է հոգիս: Նոր տասնամեակը պիտի սկսի և վաղը իր անծանօթ մշուշապատ յուզումներով պիտի գայ, պիտի անցնի: Սրբազանը՝ սպիտակափառ մօրուքը հովին՝ հոն է, կամըջակին վրայ: Ծերունի, այլ յաւէտ կայտառ: Փայլակի պէս գաղափարը կ'անցնի մտքէս, կը դիմեմ ուղղակի իրեն, և կը խնդրեմ որ խաչհանգիստ մ'ընէ: Սիրով կ'ընդունի կ'իջնէ վար, ու հինգ վայրկեանէն վերն է, գաւաթ մը ջրով եւ լուսաճաճանչ խաչն աջին մէջ բարձրացուցած: Իրմէ չ'ըսպասուած կորովի ու հնչական շեշտերով կ'աղօթէ, մինչ մենք

զլխահակ, հաւաքուած ենք իր բոլորտիքը: Անապատի խոր-
շակներուն նախընթաց հովը՝ սոււելով, կը տարտղնէ մօրուքին
թելերը: Ոսկեայ խաչը օղին մէջ բարձրացած կը շողայ, և իր
ճաճանչները կը զրկէ հեռուն, ձիպուղի, անծայրածիր անա-
պատին, աւելի անդին, Եթովպական միգապատ բարձունքնե-
րուն, ուր հայկական գաղութ մը կը շնչէ ու կ'ապրի հայրենի
յիշատակներէ անբաժան:

Եւ ճառագայթները կ'երթան, կը սլանան, կը սուրան,
հպելով անմխիթար հոգիներու ու թափանցելով լքուած շիրիմ-
ներու խորը, որ լացող չունին: Նման խաչհանգիստ մը ըրած
էր Իզմիրլեան Հայրիկը, Մարմարայի վրան, խորը անյայտացած
նահատակներուն համար: Քանի մը ըրոպէ տևող աղօթքը ծե-
րունի Սրբազանին՝ յաւերժութիւն մը կը տեւէ կարծես: Ու
Խաչը մխրճուած ջուրին մէջ — պանդուխտի հաւաքուած
արցունքներ — աւելի կը շողայ ու կը ցոլափայլի « Եփրատ » ին
վրայ, մեր Եփրատին, հայրենի՛քն է, որ իր մոռցուած գաւա-
կներուն կը զրկէ Սրբազան « աջն ու խաչը » մխիթարանքի և
օրհնութեան:


Աղօթքը լրացած է: Սրբազանը արտասուած լաչը կը
հպանցնէ մեր ճակատներուն վրայէն: Այլ չեմ տեսներ, ոչ զինք
և ոչ ալ իմ շուրջիններս: Ամփոփուած եմ վերստին իմ անց-
եալին մէջ, որ ալ չի՛ ծանրանար, չի՛ խուժեր վրաս, չի՛ ճնշեր
զիս, ու վերստին շալկած կեանքի Խաչը, կը գառնամ սիրոյս
և իտէալիս հետ միասին, սկսելու նոր տասնամեակը, հաստատ
յոյսերով և զօրացած հաւատքով, թէ երկրորդ հանգրուանին՝
իմ սիրելիներուս հետ՝ պիտի գտնեմ զիս, իրական մեր դրախ-
տագեղ Եփրատին ալեակներուն վրայ, հայրենական մատուռին
լուսաճաճանչ խաչին ստուերին տակ, պսակուած իտէալով ու
մոռցած անցեալն ու իր Գողգոթան, Սրբազան Մասիսին քով:

Ճիպուղի. 22 Մարտ, 1914



Վ:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ



Ափուր վանդակ մ'ունիմ լքուած մի անկիւն,
Դեղձանիկըս այնտեղ ինկաւ կուրծիս վրան,
Անշունչ: Լոց: Իր դայլայլիկն ու հծծիւն
Այլ չեմ լսեր, սակայն կուգայ մի վայրկեան,
Որ կ'զգամ զայն:

Կ'որոնեմ մերթ մտերիմ մ'հին օրերու,
Մարզը ծածկեց վաղուց շիրմին իր վրան,
Նայուածքս աղօտ կ'երթայ աստղի մը հեռու,
Եւ անհունին, յիշատակի գերդ խորան,
Ու կ'զգամ զայն:

Տարիներով հեռու իրմէ մոլորուն,
Կ'որոնեմ իմ դրախտագեղ հայրենիք,
Աղօտացա՛ն զիծերն ամեն իր սիրուն,
Աւերն անոր դրա՛ւ ըսին իր կընիք.
Այլ կ'զգամ զայն:

Լերկ, անդալար ափունքներու կապուած արդ,
Կը հարցնեմ թէ խամրեցա՞ւ հին գարուն
Ու վարդենին իր ոստերով գեղազարդ,
Ու կարօտովն անվերադարձ երգերուն,
Դեռ կ'զգամ զայն:

Կ'այրի՛ շիրիմը, որուն տակ մենաւոր
Պիտի մէկ օր իյնա՛յ մարմինս յոգնաբեկ,
Ու որուն վրայ պիտի չիգա՛ն հայրենեաց
Արագիլներ մրմնջել երգ մը բեկբեկ,
Այլ մթագին մոռացումէն շատ անդին,
Կը նախազգամ անմահութիւնն յաւիտեան.
Մ'ը՛սէք թէ կեանքը կը յանգի անդունդին,
Կայ երկիր մ'ուր տառապողներ կը խայտան,
Ես կ'զգամ զայն..:

Ճիպուղի 1 Մարտ, 1912

Ի՞նչ

Կ Ո Ջ Ն Ա Կ

Մի՞թէ չի կա՞ր Եփրատին քով ողբաձայն
 Կանգուն մատուռ մ' ուր հնչէի՛ր իրիկուան,
 Գիւղակն աւեր ու ամայի՞ էր այնքան,
 Որ մեկնեցար այն վայրերէն մոգական,
 Ու թափառիկ հայուն ընկեր՝ կտրեցիր,
 Անցար ալիք, կոհակ, անդունդ ու ովկիան,
 Ու հայրենեաց զաւակներուն ցանուցիր
 Գացիր հնչել երգը պայծառ յարութեան,
 Հնչէ՛ կոչնակ
 Իմ՝ ներդաշնակ,
 Թէ չի մեռան
 Յոյսեր համայն:

Նոր աշխարհին ափեր քեզի են օտար,
 Կ'զգամ, պանդուխտ ես ինձի պէս, ի՛մ՝ կոչնակ,
 Ելեկտրական շողերուն տեղ բոցավառ,
 Կ'ուզես մոմի հեւքն ու մատուռ միայնակ,
 Արժաթահունչ ձայնիդ իբրև արձագանգ,
 Պէտք է անուշ շարականի մեղեդին,
 Հարկ են գեղջուկ մեր հաւատքի երգն ու վանգ,
 Ու հծծի՛ւնը մեր հայրենի զեփիւտին,
 Հնչէ՛ կոչնակ
 Իմ՝ ներդաշնակ,
 Թէ չի մեռան
 Յոյսեր համայն:

Դուն գացիր հոն գերդ յիշատակ անցեալին,
 Մեծ քաղաքաց ժխորին մէջ բարձրացար,
 Շուրջըդ պատրանք ու երազներ կը հալին,
 Այլ դուն յաւէտ կ'ուղղես կոչը վշտահար

Արարատին, — « Տարահայած Հայութիւն,
 « Դարձի՛ր, ալ բնա ինձմէ հեռու մաշեցար,
 « Դարձիր անցեալ սուրբ միութեան օրերուն,
 « Բեր ինձ զրօշը Ազատութեան սիրովառ, »
 — Հնչէ՛ կոչնակ
 Իմ՝ ներդաշնակ,
 Թէ չի մեռան
 Յոյսեր համայն:

Այլ կը մնաս ու կը հնչես ողբազին,
 Գուցէ պանդուխտ մ' ունիս քեզի ունկնդիր,
 Որ նուազկոտ հրաժեշտ կուտայ այս կեանքին
 Նշմարելով գերեզմանը սեւածիր, —
 Կը մրմնջես անուններն իր սիրելեաց,
 Գիւղին անունն ու Եփրատին սիրական,
 Կ'ըսես թէ իր յիշատակն է անմոռաց,
 Թէ հոգիներ պիտի ապրի՛ն յաւիտեան, —
 Հնչէ՛ կոչնակ
 Իմ՝ ներդաշնակ,
 Թէ արդ յարեա՛ն
 Յոյսեր համայն:

Ճիպուղի, 4 Յունուար 1915.



ԻԹ

ԳՐԵԹԷ ՄՈՌՑՈՒԱԾ, ԱՅԼ ՅԱԻԷՏ ՊԱՇՏԵԼԻ

« Ի սրբազանն ազոտակ Սրբոյ Խաչին պարագիր
 « Հանգչին անիւնք՝ որ՛ գվայրն իսկ յարդարւն սրբագոյն,
 « Անմանութեամբ իմրն լի՛ է խաղաղեպն այն մոխիր,
 « Թէեւ չիցէ՛ այլ ինչ անդ, բայց յիշատակ անցելոյն: »

Լօրս Պայրն



ԱՅ ԳՐԻ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԿԱՆՈՒՆԵՐՐԸ, ՀԱՂԽԱՐԻՆԻ ԱՄԵՆ ԿՈՂՄ ԽԱՆՈՂԱՎԱՌ ՈՒ ՍՐՏԱՎՆՂՈՂ յՈՒՂՈՒՄՆԵՐՈՎ ԳՆՆԵԳՆԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿՈՂԻՆ, ՈՒ ԿԱՐՕՏԱԿԷՂ ԱՅՔԵՐ ՍԵՆՆՈՒՆԵՐԸ ԱՆՊԱՄ ԸՆԴՆ ԵՎ ԼԵՈՆԵՐՈՒ ՆԱԿԱՎԵՄԻՆ, ՄԵԾ ՈՒ յԱԼԵՐԺԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻՄ, զՔԱԳԻՆՔ ԹԷ ԿՈՆ ԷՐ ԿԵՂՐՈՆՆՐ ՄԵՈՒԾ յՈՅՍԵՐՈՒ յԱՐՈՒԹԵԱՆ, ԵՐՔ ԱՏԵՆԷ ԸՐ Ի ՎԵՐ ՄԱՆԱԼԱՆՂ ԿՐ ՄՂՈՒԻՆՔ զՈՈՂՈՒ

« Ամբարձայ զաչս իմ՝ ի լերինս,
 « Ուստի եկեսցէ ինձ օգնութիւն... »:

ՈՒ ԳԷՆՈՐԳ ՀԻՆՂԵՐՈՐԳ, ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍԻ ՈՒ ԱՂՏԱՐԱԿԵԳԻԻ ԱՐԺԱՆՆՆՈՒԻ յԱՂՈՐԳ, ՄՈՂԱԿԱՆ շՈՒՆՅՐ ԲԵՐԱԼ ԿԱՐԾԵՍ, ԳԱԼԵՐՈՒ ԱՆԱՎԱՏԻՆ ՈՒ ԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԿՄԱԽՔՆԵՐՐ ԿԵՐԱԿԵՆՂԱՆԱԳՐՆՈՂ, Ե ԵՐՔ ԻՆՔ ՓԱՌԱՈՐ ԿԱՆՈՒՆԵՐՈՎ Կ՛ԵՐԹԱՐ ՕՂԱԿԱՆ ՍՈՒՐՔ ՄԵՍՐՈՎԻ շԻՐԻՄՆ ՈՒ յԻՂԱՏԱԿՐ ՕՐԻՆԵԼՈՒ, ԱՆՂԻՆ ԻՐ ՄԱՐԽԻՐՈՍԻ ԱՆԳԵԱԼՈՎ ԵՐԻԿՍ ԱՆԾԱԼԻ ԵՎԻՍԿՈՎՈՍ ԸՐ, ՏԱՐՈՆԻ ՆԵՐՍԷՍՐ, ԿՐ զՆԱՐ ԱՂՏԻՂԱՏ, Ս. ՍԱԿԱԿ ՊԱՐԹԵԼԻ ԱՆՂՈՒՔ ՂԱՄԲԱՐԱՆԻՆ ԱԼԵՏԵԼՈՒ, ԹԷ ՂԱՐԵՐԷ ԻՎԵՐ ԲԱԳՄԱՀԱՐՀԱՐ ՀԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵԳԻՆ՝ Կ՛ԱՎՐԻ՛Ն, ԿՐ ՂՆՅԵ՛Ն ՏԱԿԱԼԻՆ, ՈՒ ԱԽԻԻ ԱՎՐԻ՛Ն յԱԼԻՏԵԱՆ:

ՍԱԿԱՅՆ ՄԻՆՅ ԵՐԿՈՒ ԱՆՂՈՒՂԱԿԱՆ Ե ԱՆԲԱԺԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ, ՍԱԿԱԿԱՅ ՈՒ ՄԵՍՐՈՎԻ ճԱԿԻՆ ԲՈՂՈՐԱ՛Ծ ԵՆՔ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՆՄԱԿ ՂԱՎՆԵԱՍԱԿՐ, ՄՈՈԳՈՒԾ ՄԻԱԳ զՐԵԹԷ ԱՐՂԱԿՈՒՆԻ ԱՐՔԱՆԵՐՈՒՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԿՍԿԱՆ, ՎՈՒՄՂԱՎՈՒՆԸ, « ԱՍՏՈՒԾՈՅ ՕԾԵԱԼՐ », ՈՐ ԱՅՆՀԱՓԻ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐ ԿՈՎԱՆԱԼՈՐԵԳ, ՔԱՂԱԼԵՐԵԳ ՈՒ ԻՐ ԵՐԿՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆՆՐ ԱՎԱԿՈՎԵԼՈՎ ԾԱԼԱԼԵԳ ՀԱՅ ԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՂԽԱՐԻՆ ՄԷՂ:

ԱՆՅԱՅՏ Է ԻՐ ՂԱՄԲԱՐԱՆՐ, ՈՐ զՆԱՅԻՆՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՍԱԿ ԸՐ զԵՏԵՂԵԼ ԿԱՂԱՐ ԿԻՆՂ ԿԱՐԻԼՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ: ՈՒ ԱԿՆՂԷՏ Կ՛ՍԱՎԱՏԷԻ, ՈՐ ՄԵԾՆ ԳԷՆՈՐԳ, ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՐ, ԸՆՂԿԱՆՐԱԿԱՆ ԿՈՆՂԱԿՈՎ ԸՐ ԵՐԱՆԵԼԵԱԳ ԿԱՐՔՐ ԿՈՂԱԿԷՐ ԱՅՂ ԱՂԽԱՐԿԱԿԱՆՐ, ՈՒ ԵԿԵՂԵԳԻՆ ՏՈՆԷՐ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՆՈՅՆ ՕՐՐ ԵՐԵՔ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՍՈՒՐԲԵՐՐ, ՍԱԿԱԿ, ՄԵՍՐՈՎ Ե ՎՈՒՄՂԱՎՈՒՆ:

**

ՍԱԿԱՅՆ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ՕՐՐ, զՈՐ ԱՅՆՔԱՆ ՓԱՌԱՈՐԱՎԷՍ ՏՈՆԵԳԻՆՔ ԿՈՍ, ՓՐԱՆՍԱԿԱՆ ԱՂՆԻԼ զԱՂՈՒԹԻՆ ԿԱՄԱԿԻՐ ԱՂԱԿՅՈՒԹԵԱՄԲ, ԱՐԱՄԱԳԻՆ ԿՈՂԻՈՎ, ԵՍ ԱԼ ԵՎԻՐԱՏԻ ԿԻՆ ՄԷԿ ՍԱՆՐ, ՈՐՈՆԵԳԻ ՈՒՐԻՂ ՂԱՄԲԱՐԱՆ ԸՐ, ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԳՈՒՆՔՆԵՐ ԳՈՂԵԼՈՒ ԿԱՄԱՐ ՎՐԱՆ:

ՍՐԱԹՈՒՅ ՄՈՔՈՎ զԱԳԻ ՄԻՆՅԵ ՔԱՂԻՓՈՐՆԻԱ, ՄԻՆՅԵ ԵՂԵՄ, ՈՒ ԿՐ ԿԱՆՂՅԻ յԱԼԵՐԺԱՎԷՍ ՄԵԾ ՈՒ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՈՒՍՈՒԳՅԱՎԵՏՍ, ԲՐՕՖԷՍՈՐ ՄԵԼՔՈՆ, ՀԱՅ ԼԵՂՈՒՆ ՈՒ ՈՍԿԵՏՈՒՆՅ ԲԱՐԲԱՈՒՆ ԱՅՂ ԿԻՆԱՎԻ ՍԻՐԱԿԱՐՆ ՈՒ ԵՐԿՐԱՎԱԳՈՒՆ, ԱՆՏԻՏՈՂՈՍ ՄԱԳԻՍՏՐՈՍՐ, ՈՐ ՏԱՐԻՆԵՐՈՎ ՄԵՂԻ ԳՈՒԳԱՂԵԳ ՄԵՐ ՆԱԽՆԻՔՆԵՐՈՒՆ ՄԵՂԻ ԿՏԱԿԱԾ ԱՅՂ ՓԱՌԱՈՐ յԻՂԱՏԱԿԱՐԱՆՐ: ՀԵՌԱԳԱԾ ԿԱՅՐԵՆԻՔԷՆ, ՎԱՅՐԿԵԱՆ ԸՐ ՀԻԹՈՂՈՒԳ ԻՐ ՈՍԿԵՂԷՆ զՐԻՅՐ, Ե ԻՆՔ ԷՐ, ՈՐ ԸՆՂՄԻՂԱՐԱՐ, ՄԵՂ ԻՐԱՐՄԷ ԲԱԺՆՈՂ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆՂՈՒՆՂԻՆ ՎԵՐԵԼԷՆ, ԿՐ ԳՆԳԷՐ զԻՍ, ՎԵՐԱՂԱՐԾՆԵԼՈՒ ԱՂՈՍ ՆԱՅՈՒԼԱԾՔՍ ԱՎԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՍՏՈՒԾՈՅ...: ՓՐՔԻՐԱԾ ԱՍՆԱՅՈՒԼԱԾՔՍ ՄԻՐԱ ԿՈՂՄՐ զՏՈՒՈՂ ԵՎԻՐԱՏԻ զԱԼԱԿՆԵՐՈՒՆ Կ՛ԻՅՆԱՐ ԱՍԱԿ ԸՐ զԵՏԵՂԵԼ ՄԵԾ ՈՒՍՈՒԳՅԱՎԵՄԻՆ ՂԻՐՄԻՆ ՎՐԱՅ:

Ա՛ՐԱ, ՂՈՒՆ ՈՐ ԵՐԿՐԱԼՈՐ ԵՂԵՄԷՆ ԱՆԳԱՐ ԵՐԿՆԱՅԻՆ ԱՆՄԱԿՈՒԹԵԱՆ, ՈՐ ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՂ ԱԼԱՆՂԵԳԻՐ ԱՂՆԻԼ ՂՈՒՆՅՂ, Զ՛ԵՍ ԿՐՆԱՐ, ՔՈՒ ԿՆՅԱԿԱՆ ՈՒ ՏԻՐՈՂ ՂԵՂՏԵՐՈՎՂ ԸՍԵԼ, Ե՛ՐՔ ԱԽԻՏԻ ՎԵՐՂՐ զԱՅ ԱՅՍ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ, ՂՈՒՆ, զՐԵԹԷ ՄՈՈԳՐԵԼԱԾ, ԱՅԼ յԱԼԷՏ ԱՎԱՂԱԵԼԻ՛ ՈՒՍՈՒԳԻ՛ՅՍ, Ե՛ՐՔ ԱԽԻՏԻ ԵՐԳԷ ԲԱՆԱՍՏԵՂԾՐ, ՏԱՐԱՔԱՂԷ ԿԱՅՈՒՆ ԿԱՄԱՐ,

« Ի Սրբազան Հայաստան, Արարատին պարագիր,
 « Յառնուն աճիւնք, որք զվայրն իսկ յարդարեն սրբագոյն,
 « Անմահութեամբ իմրն լի՛ է փոթորկեալն այն մոխիր,
 « Ու ծաղկեցա՛ւ հայրենիք, զերդ յիշատա՛կն անցելոյն: »
 Ա՛ՐԱ ԵՐՔ...:

Ճիպուղի 2 Դեկտմ. 1915



Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ԱՌ ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱԿ

Օրմանեանիս համար

Վարպետ,

Երկար տարիներ առաջ, Իզմիրի Ս. Մեսրոպեան վարժարանը, որը մանկան մը շարադրած մէկ նամակը ունկնդրելով՝ տեսած եմ արցունքին կաթիլը թարթիչնէդ կախուած: Ուրիշ օր մը Օսմանեան խորհրդարանին մէջ միակը եղաք ձեր ընկերներուն, որ « ոճրագործ » բառը գոռալով, Ձեր անունը Հայ մարտիրոսագրութեան մէջ արձանագրեցիք, և այս հեռաւոր մենութեան մէջ, այս անգամ, ե՛ս էի արտասուողը: Եւ ամեն անգամ հանդիպելուս Ձեր խիղախ ու բարձրաթոխ ստորագրութեան, հին տարիներու վրդովը կը խլրտի հասարակածի արևին տակ այրած էութեանս մէջ, ու դէպի հին անմոռաց բարձունքներ կը վերելակեմ: Որովհետև ըսեմ ուղղակի, թէ հիներուն մէջ դո՛ւք միայն նոր, ու շատ նորերէն աւելի թարմ ու դալար մնացիք, ու չի կորսնցուց իր ուժը այն մագնիսը, որ ձեզի՝ դամբանային ու վերածնութեան տարիներուն միանգամայն կը կապէ Հայ կեանքին հետ: Այդ իսկ է սլաւոճառ, որ կը յանդգնիմ ձեզի դիմելու, ձեր խղճմտանքի ձայնին կոչում ընելու այն մթաստուեր ու ցաւագլին հանելուկին համար որ Օրմանեանի Խնդիր կը կոչուի, և որ սկսած է խոռովել նոյն իսկ հեռաւոր ու մոռցուած աշխարհներ բնակող Հայերու հոգին: Ինչո՞ւ դուք, որ Բանին ու Գրչին աստուածային ձիրքերը ունիք, ձեզի ինքնայատուկ որոտագին բառերով, մէկ անգամ գոնէ չի գոռացի՛ք այս տարօրինակ, անսովոր ու անարդար ձգձգումին դէմ, որ կը բնորոշէ Ազգային ժողովի կեանքը ամբողջ:

Վաղը կամ միւս օր՝ Օրմանեան կրնայ մեռնիլ: Այդ հաւանականութիւնը, հոգեկան յայտնի պայծառատեսութեամբ մը, զոր անապատի լոխնակեաց գիշերները միայն կարող են տալ, կ'ըսեմ ձեզի, առանց որևէ կանխակալ մտածումի, մարդկային իրերը շատ բարձրերէն դիտելով: Ի՞նչ պիտի պատասխանէք

դուք ձեր խղճին, երբ կափարիչը գոցուի մոռացումի անդունդին վրայ, դուրսը թողելով մարդկային անարդարութեան ամենէն տխուր և անորակելի արձանը: Որովհետև ընդունեցէք թէ ալ չափը անցաւ: Հինգ երկար տարիներէ ՚ի վեր մեռած է Հայ պատրիարքը, և կը մնայ Հայ ծերունին, ու մանաւանդ Հայ Տաղանդը, որ մեր անունը գիտցաւ անմահ երկերումէջ շրջեցնել համաշխարհային մտաւորականութեան ամենէն մոռցուած անկիւնները: Ես չեմ ճանչցած Պատրիարքը, սակայն հիացած եմ տաղանդին վրայ և այդ անունով է որ կը դիմեմ ձեզի, որովհետև կը դաւանիմ զձեզ ամեն նկատողութիւններէ աւելի բարձր, պաշտող մը ամէն տաղանդներու:

Պատմութեան կ'իշխայ դատել հանրային մարդուն սխալները, սակայն տխրագին ու անբացատրելի է փակել նոյն իսկ եկեղեցիին դռները անոր առջև, որ իսկապէս այդ նոյն եկեղեցիին հին փառքերու երգիչը հանդիսացաւ:

Ձեզմէ, այդ իրաւունքը կուտամ ինքզինքիս խնդրելու, նոյն իսկ պահանջելու, որ արդարութեան առաջին և անտեղիտալի կոչը արձակէք առաջին առթիւ, ու հրաւիրէք որ դատեն ու դատապարտեն զայն, եթէ այդ է արդարութիւնը. վերջ մը տալով սակայն այս յետաձգումներուն: Տրէյֆիւսէ մը աւելի՛ արժանի է Օրմանեան Ձեր գրչին, որովհետև առաջինը՝ օտար իսկ միւսը Հայ մըն է:

* * *

Այնչափ կարճ է ու վաղանցուկ կեանքը, Վարպետ, որ վաղը շատ ուշ կրնայ ըլլալ, ու կան վէրքեր, որ անդաման կրնան մնալ այս աշխարհին մէջ: Ձեզմէ առաջ մանկութեան մտերմիս՝ Ռուբէն Զարդարեանին դիմած էի: Ձեմ սպասել իր պատասխանին և այս բաց նամակը բաց սրտով ձեզի՛ կ'ուղեմ: Հայրապետական Աթոռին պայքարները վերջացան, ու ժամանակը եկաւ հանդարտօրէն դիտելու այն չարաշուք խաչը, որուն վրայ գամուած է Օրմանեան, հանրային զայրոյթին նշաւակ: Կը դիտեմ զայն բանաստեղծի ազօտ աչքերով, իմ մենաւոր գիշերներուս մէջէն, ու կը հիանամ ահաւոր անդորրութեան վրայ այդ մարդուն նայուածքին, որով տեսաւ ինք լեռնամբարձ արհամարհանքի և ամբաստանութեանց կոհակներու կուտակումը իր անձին շուրջ, ու կը ցաւ բռնադատել իր ուղեղը գերագոյն ձերբազատումին: Ժամանակն է այլ եւս,

որ արդարութիւնը տայ իր վերջին վճիռը, անոր համար, որուն աշակերտները կը գրաւեն առաջնորդական աթոռներու մեծագոյն մասը, և որ իր գրչով ինքզինքը երիցս օծեց Հայրապետ:

Ու նոյն իսկ իր յանցասպարտութեան պարագային, թող եկեղեցիին ստուերը չի զլանա՛ն իրեն: Հայր հոն Աստուած մը ունի, որ մարդերէն աւելի՛ գիտէ ներել:

Ասիկա դո՛ւք բացատրեցէք ձեր աստուածային գրչով իր դատաւորներուն:

Ճիպուղի, 6 Յուլիս 1912.



ԼՍ.

Ե Ր Ե Ք Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Ը

(Նոր Աերունդին եւ Օրմանեանի համար)

Ճիպուղի. 12 Մայիս 1912.

Սիրելիդ իմ Ռ. Զարդարեան,

Վերջին նամակիս չի պատասխանեցիր: Միայն Մեղրագետ մը ստացայ, ինչ որ ցոյց կուտայ թէ նամակս ձեռքդ հասեր է: Որոշ չեմ յիշեր գրածս, չեմ կարծեր սակայն թէ քեզի անձնապէս վշտացնող բան մը ըլլար մէջը: Ըսեր էի կարծեմ, թէ քանդումի գործը սկսելէդ առաջ, վերաշինումի ծրագիր մը ունեցիր աչքիդ առջև և այսօր պիտի կրկնեմ նորէն: Տարօրինապէս ախտաւոր սերունդ մը կը հասնի, անարիւն և անընդունա՛կ կեանքի պայքարին լրջօրէն մասնակցելու: Սերունդ մը ապուշօրէն ինքնավստահ, և տխրապէս անկարող, եթերին մէջ ապրող ու անգոյն: Տեսայ մէկ քանի նմոյշներ, ամենքն ալ ապագայապաշտ... կամ Մարքսիստ կամ Կառուցիչ Դպրոցից, ինչպէս կը սիրեն անուանել ձեր կողմը Ազդակեանները: Այդ անհուն քայքայումը նոր սերունդի մտքին մէջ, ուր ոչ մէկ պաշտում գոյութիւն ունի, ոչ մէկ պաշտում՝ յաւերժական գեղեցկութեանց հանդէպ, կը սոսկացնէ՛ զիս: Թոյնը ծծեր են մինչև խօրը իրենց սրտին: Ու քու գրիչդ, զմայլելի երգերուն կարիչ, մասնակի՛ց եղաւ այդ բարբարոս քանդումին: Կ'ըսեմ՝

քեզի, որովհետև մեր անցեալը ինծի այդ իրաւունքը կուտայ, քանի որ մեր պատանութեան, միասին լացեր ու միասին ծիծաղեր ենք...: «Ամենուն Տարեցոյց»-ին մէջ քու և Վերոնիքային պատկերները տեսայ ու լացի: Քու ուրիշ ոչ մէկ պատկերդ այդքան ազդած էր ինծի: Ուրիշ տեղեր, մինակդ, վայրենի բան մը ունիս վրադ, խածան, անհանդարտ, գրեթէ գիշատիչ նայուածք մը: Հող դո՛ւն ես, ինքդ, ճակատդ բանաստեղծի միւսողով օծուն, ու նայուածքդ՝ բոյնին մէջ վարուժանի մը դիւթանքով զեղուն:

Կը տեսնես, սիրելի եղբայր, թէ այս անապատին մէջ կերպ մը վայրենի՛ դարձեր եմ: Փափկանկատութիւններ չունիմ, ոչ ալ ձեռքերուս վրայ շոյելու նրբութիւններ մնացեր են: Բոունցք կը կազմուի ձեռքէն, երբ այս անապատներուն մէջ մարդ կ'աշխատի՛ չարաչար. ու դեռ աւելին պիտի ըսեմ քեզի: Կրօնապատէի որ նոր սերունդի մարտիկները, զլուխին բաց, մեծ անիրաւեալին, Օրմանեանի առջև ծունկի գային ու Վեղա՛յ ըսէին: Շիտա՛կն ըսէ, դուն ալ քու ներսէդ ինծի պէս չե՞ս մտածեր: Այդ մարդուն գէմ չորս տարիէ ի վեր լեռնակուտակ ու անդնդային կոհակներ ելան, ուրիշ մը անոր տեղ պիտի կորսնցըներ մտքի հաւասարակշռութիւնը ու Փրկիչ պիտի երթար շատոնց: Օրմանեան՝ հեզնող ծիծաղ մը շրթունքին՝ հանձարի գերագոյն բարձունքներուն սլացաւ: Ան անհունապէս վեր մնաց ինծի համար, Մանկունիէն ու Արշարունիէն: Եւ ամենէն անաւորը՝ խղճի ձայները լռեցնելու համար, ատենը մէկ անոր ճակտին նետուած ցեխի կտորներն էին, որ վայրկենապէս լուսաւոր աստղի ճաճա՛նչը կ'զգենուն. մարտիրոսութեան պսակին արժանի ընելով այդ մարդը: Ու եթէ Դաշնակցութիւնը հակառակ իսկ էր անոր, պարտքը քու կը էր, իմ բանաստեղծ եղբայրս, ընդվզելու այդ ակներև անարդարութեան դէմ, ու որոտագին կ'անխաւսանեմ մը արձակելու: Օր մը պիտի լսես այդ բառը, երբ թերեւս շատ ո՛ւշ ըլլայ, ու գերեզմանը փակուած ըլլայ Հայ սեծագոյն դիւանագէտին ու գերագոյն անիրաւեալին վրայ:

Փետրուար 5-ին Ռուսիոյ Մեծ Դուքս Պորիս Վլատիմիրովիչը Ճիպուղի եկաւ ու կեցա՛ւ քանի մը օր: Իրմէ տեսակցութիւն մը խնդրեցի իբր «Տէյլի Մէլլ»-ի և «Նիւ Եօրք Հէրբլտ»-ի թղթակից: Իրեն ի պատիւ սարքուած պարահանդէսին, քով

քովի նստած կէս ժամու չափ խօսեցանք հետր: Լսած էր թէ
 Հայ եմ: Անվերապահօրէն խօսեցայ ամեն խնդրի մասին: Ինք
 Մայր կայսրուհիին սիրական enfant gate'ն է եղեր: Յիշելէ
 վերջ, թէ շատ բարեկամներ ունի Հայոց մէջ, ողբացեալ Ման-
 թաշօֆէն մինչև Իշխան Ամատունի, — « Մենք Հայերը մեզմէ
 կը նկատենք ըսաւ: Ձեր վիճակը կը շահագրգռէ զմեզ: Կով-
 կասի մէջ ամենէն նախանձելի դիրք մը կը գրաւէք ու մեր
 բանակին ու նաւատորմին մէջ շատեր ունինք, որ Ռուսիոյ
 փառքին համար տաղանդնին դրած են ՚ի սպաս: »

Ասիլթը յարմար էր. սիրելի եղբայր, և յուզումէս դողո-
 ջուն ձայնով ու աչքերս լեցուած, խնդրեցի իրմէ, որ միջնորդէ
 եթէ ոչ Չարին, գէթ մայր-կայսրուհիին մօտ, որ կովկասի
 բանտարկեալներուն դատը շուտ տեսնուի և արդարութիւն
 ըլլայ: » Պօրիս, աչքերուս մէջ շեշտակի նայելով, — « Ռուսիա՛
 հասնելէս ու գործը քննելէս սոսաջ բան մը չեմ խոստանար »
 ըսաւ, « բայց վստահ եղիր որ հոն հասնելուս, կարելին պիտի
 ընեմ արդարութեան գործադրուելուն համար: » « Հայերը մեզմէ
 են, » կրկնեց նորէն, խասնուած մեր պատմութեան և մեր
 ամենէն փառաւոր պատերազմներուն մասնակից: Դժգոհներ
 կրնան զտնուիլ, որ Ռուս ժողովուրդին արագ զարթնում մը
 ցանկալով կը վտանգեն իրենց գոյութիւնը, սակայն զարթնումը
 աստիճանակա՛ն պէտք է լինի, պայթումի և աւերումի չի
 յանգելու համար: » ...

Անկէ ի վեր դատը, այդ հսկայական խարդախութիւնը
 վերջ գտաւ և Ռուսիոյ ազատամիտ մամուլը անարգութեան
 սիւնին վրայ կապելով խարանեց կը ժինը:

Ի՞նչ պիտի կրնայի պատասխանել Պօրիս դուքսին, եթէ
 իմ արդարութեան գործադրութիւն խնդրած միջոցիս, ճակտիս
 նետէր Օրմանեանի պարագան: Այդ պատասխանը կ'ուզեմ որ
 դուն ինծի տաս, դուն որ հոգ ես չորս տարիներէ ի վեր և
 գիտե՛ս ամեն բան:

Եւ եթէ չի կրնաս, կը կրկնեմ նորէն, հաւաքէ ընտանիքդ
 ու ձագուկներդ, և այս անկիւնը դուն ալ ելիր, եկուր: Բաժնե-
 լու պատառ մը հաց կայ եղբօրդ տունը, հաց մը, մաքուր
 քրտինքով վաստկուած, եւ որուն վրայ արցունք չի կ'այ բնաւ:

Քոյդ
 Ռ. ՈՐՏԵՐԵԱՆ

* * *

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ը

Կ. Պոլիս 6/19 Փետր. 1915

Իմ սիրելի Բանաստեղծ եղբայրս,

Ձեմ գիտեր ինչ անըմբռնելի անկարողութիւն մը նստած
 է եղեր մատներուս վրայ, յետաձգելով միշտ այս նամակս,
 որ վաղուց մտադրուած է եղեր գրելու ձեզի, ի պատասխան
 ձեր մէկ երկու գրութեանց, այնքան կարօտալից ու քաղցր:
 Միւս կողմէն քաղաքական յեղակարծ դէպքեր, որոնք կը յա-
 ջորդեն մէկգմէկու այս անիծեալ երկրին մէջ, տաշեղի կտորի
 պէս կ'աննեն կը տանին մեր մտածումներն ալ ու զգացում-
 ներն ալ:

Ձեր այն երկար նամակը, ուր խօսած էիք ազգային ներ-
 քին կեանքի իրադարձութեանց, պայքարներուն և հոսանքնե-
 րուն նկատմամբ, զիս զարմացուց ու տրտմեցուց միանգա-
 մայն, ոչ թէ անոր համար որ դուք կը քննադատէիք Գաշնակ-
 ցութեան գործունէութիւնը ու կը պաշտպանէիք ուղղու-
 թիւններ ու անձեր, որոնք մենք կը դատապարտենք, —
 ո՛չ, հազար անգամ ոչ: Անկեղծ, ազատ ու անկողմնակալ
 մտքին յարգանքն ունեցած եմ ու միշտ պիտի ունենամ, որքան
 ալ այդ միտքը տրամագծապէս հակառակն ըլլայ իմ համո-
 զումներուս:

Ինչ որ զիս զարմացուց և տրտմեցուց, Սիրելի՛ Ռուբէն,
 այն պահպանողական ոգին էր, որ անհաշտ և անհամաձայն
 գտայ քու բանաստեղծի խառնուածքիդ, քու բանաստեղծի
 հոգիիդ, մէկ խօսքով թռիչքի ու թեւաւոր ձգտումներու քու
 էութեանդ: Դո՛ւ բանաստեղծ եղբայր, որ չես վարանիր, — և
 ոճիւր պիտի ըլլար վարանումդ — Արուեստէն առնելու բոլոր
 նորութիւնները, Գրականութենէն առնելու բոլոր ձեւի ու ար-
 տայայտութեան իսկատպութիւնները, խորհողութեանէն առնե-
 լու բոլոր չափերը, որոնք ժամանակն ու քաղաքակրթութիւնը
 կ'ստեղծեն անդադար, չեմ հասկնար, ի՞նչպէս դատապարտելու
 կ'ելլես կուսակցութիւն մը, որ նոյն բարձրագոյն իտէալով
 կ'առաջնորդուի և սերունդ մը որ նոյն ձգտումները կը ներ-

կայացնէ: Կ'ըմբռնէի՝ եթէ Քասիմ՝ մը, Տէր Անդրէասեան մը կամ զեռ հին ու նոր տիրացուներու ամբողջ փաղանգ մը — ի՞նչ փրօփան նմանութիւն — դատէր այնպէս ինչպէս պարտաւոր էր դատել: Իսկ քե՛զ, բանաստեղծը, հաւատա՛ սրտիս ու հոգեկան եղբայրակցութեանս, չե՛մ ներեր ատիկա:

Եւ յետոյ, ընդունէ որ հեռու ըլլալով կեանքի իսկական կռուանէն. դժուար է քեզի ամբողջովին ըմբռնել ո՛չ հայ կեանքին այսօրուայ իրականութիւնը, ոչ անոր ելևէջները, և ոչ ալ անոր ծոցին մէջ իրարու ընդհարող ուժերուն արժէքը: Ես վստահ եմ թէ՛ գտնուելով միևնոյն պայմաններուն տակ, տեսնելով ա՛յն՝ ինչ որ կայ կեղծիք, անմաքրութիւն ու նեխանք, վայրկեան մը իսկ պիտի չի վարանէիր ոտքով մէկզի հրելու ամեն խոհեմութիւն, և անցնելու պայքարի կողմը: Այսպէս կ'ըսեմ, որովհետև հաւատացած եմ որ պիտի բաղձայիր մեռելութեան տեղ կեանք ու կենսագործութիւն, կեղծիքի տեղ ճշմարտութեան յարգանք, ու ապականութեան տեղ քիչ մը մաքրութիւն տեսնել Հայութեան հոգիին մէջ:

Եւ ո՞ր ժամանակն է և ո՞ր թուականն է, ըսէ՛, իմ եղբայր, որ մեր ազգային կեանքի մէջ ստեղծագործութիւն մտցնողները, նոր ուժ և նոր իտէալներ ներմուծողները՝ չե՛ն ունեցած նոյն պայքարը, նոյն կռիւր, նոյն հալածանքները և նոյն քարերը իրենց կռնակին, — Օտեաններու և Ռուսիանեաններու սերմնաղբ, Գալուստ կոստանեանները, Արծրունիները, ընկերային կեանքի մէջ, և ուրիշներ՝ արուեստի ու գրականութեան մարզերուն մէջ երբ փորձած են նոյն ձգտումն ու նոյն թոխքները:

Կ'ուզէի՞ք որ անշարժութիւնը, մեռելութիւնը ըլլար մեր ցեղին յատկանշող նկարագիրը, մեր ցեղին՝ որ ուրիշ արժանիք ունեցած չէ՛ երբէք, եթէ ոչ Արեւելքի բարբարոս հորդաններու ջուրին մէջ՝ ամեն ժամանակի յառաջագէտ մտքերն ու գաղափարները ներկայացնողը:

Ահա այն հիմնական առանցքը՝ իմ և ձեր մտածողութեան միջև գտնուած չե՛մ ըսեր տարբերութեան, այլ թիւրիմացութեան: Ասով հանդերձ գիտեմ՝ և չե՛մ անտեսեր այն ժամանակաւորապէս և թերեւս անխուսափելի թերութիւնները որ կրնան տեսնուիլ նոր սերունդին, հայ նոր երիտասարդութեան մէջ. գիտեմ թէ անոնցմէ շատերը խակ են զեռ, յաւակնոտ և միևնչև

անգամ ամբարտաւան: Բայց չէ՞ որ ասիկա երիտասարդութեան, ամեն ժամանակի ու ամեն տեղի, հոգեբանական յատկանիշներէն մէ՛կն է: Նայինք փիլիսոփայօրէն երեւոյթին վրայ, ո՞ր երիտասարդութիւնն է որուն ձգտումը էապէս negativ չ'է. մենք կը հաւնէի՞նք մեր անկիւնը, մեզմէ հիներուն մտածողութիւնը, ընթացքը և դատողութիւնները. ինչո՞ւ կը ձգտէինք Հայրենիքին քան թէ Արեւելքին, ինչո՞ւ կը հիանայինք Տէմիրճիպաշեանին ու Զօհրապին և ո՛չ թէ Յ. Գուրգէնին, Պէրպլեբեանին կամ Քէչեանին: Անշուշտ որ, էապէս, մեր հոգին իրաւունք ունէր և չէ՛ր սխալեր, որովհետև այլապէս անկարելի է որ միտքը, հոգին ու կեանքը վերանորոգուի. բայց և անշուշտ ունէինք նաև մեր չափազանցութիւնները, մեր ինքնահաւանութիւնները, ու մեր յաւակնոտութիւնները: Եւ սակայն, կը տեսնե՞ս, այսօր մենք մեզ կը դատենք ու կը խոստովանինք ինչ որ մեր թերութիւնն էր: Թողունք որ նոյնը ըլլայ նաև արդի երիտասարդութեան, և աշխատինք միայն որ ատիկա շուտ ըլլայ:

Երկու խօսք ալ Օրմանեանի մասին, քանի որ նոյնքան թիւրիմացութիւն մըն ալ ձեր մէջ կը տիրէ այդ եկեղեցականին նկատմամբ: Ներել Օրմանեանի, համամիտ եմ ես ալ. բայց պայմանով որ մեր հանրային կեանքին համար գոյութիւն ունենալէ դադրի անիկա: Բայց սրբացնել Օրմանեանը, կը նշանակէ մեր հասարակութիւնը վարժեցնել անբարոյականութեան և բարքերու վատթարացումի: Անհատական գլխութիւնը, համակրութիւնը կամ կակղասրտութիւնը՝ երբէք հասնելու չեն այն սահմանին, որ անիրաւեն հանրային բարոյականին, — բարոյական մը արդէն իսկ նողկալի բռնապետութեան մը տակ կորսնցուցած է իր հաւասարակշռութիւնը, և ընդունակ միշտ դէպի ցածը վազելու: Կ'ուզէք որ ապրի աս ազգը, կ'ուզէք որ գեղեցկութեան ու մեծութեան ընդունակ ըլլայ անիկա. ինչպէ՞ս հապա բծախնդիր ու խստապահանջ չէ՞ք ուզեր ըլլալ հանրային բարոյականին, որ աղբիւրն է անոր ուժին, կենսունակութեան և բարձրացման:

Ինչքա՛ն երջանիկ պիտի ըլլայի, եթէ այս տողերս յաջողէին պարզել թիւրիմացութիւնները, և վերահաստատել ձեր մէջ այն հաւատքը՝ որ վստահ եմ թէ կը մնայ անխախտ դէպի իտէալը և անոր ձգտումը, ինչպէս արուեստի, նոյնպէս կեանքի մէջ:

Թոյլ տուր ապա, հազար ներողութիւն խնդրելու քեզմէ, որ այսքան ուշի մնաց գրութիւնս, և յայտնելու այն անհուն հրճուանքը, որ կը պատճառես ինծի, ատեն ատեն քու գրութիւններովդ: Քու ձայնդ, քու խօսքդ եւ քու պատկերդ՝ կը տանի զիս պատանեկութեան երջանկագոյն ժամերուն, որոնց ետեւէն սիրտս կուլայ միշտ և որոնք ալ պիտի չ'գտնէ՝ երբէք:...

Կարօտով ու գուրգուրանքով

Քոյդ

Ո. ԶԱՐԿԱՐԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ճիպուդի. 6 Յունիս 1915

Սիրելիդ իմ Զարդարեան,

Երկար նամակդ, այնչափ լայնօրէն պարզող օրուան իրականութիւնները՝ ստացայ, կարգացի մտածեցի ու լացի: Մագերուս մէջ ձերմակ իյնալ սկսաւ արդէն, ու կապուած անապատին՝ ինքնակամ աքսորեալ, — իմ կարգիս ես ալ ունիմ քեզի խօսքեր ըսելիք: Ո՛ւր մնաց իմ բանաստեղծ եղբայրս ո՛ւր հին օրերու Զարդարեանը, զոր ունկնդրելով մեր հայրենի լեռներուն զուարթ ու տրտում արձագանգը կը կարծէի լսել: Ո՛ւր են քու անուշ երգերդ: Ինչո՞ւ փշրեցիր քնարդ, դու ինքդ մագնիսացած մեր տարօրինակ դարուն տուայտող մարդկային խուլ ու ընդերկրեայ խաւերու հեծկլտուքէն, մոռցա՛ր մեր սարերն ու ձորերը ու քու սրինգդ փոխեցիր իրար խաչաձեւող հոսանքներու խժալուր փողին: Պիտի չի ճանչնայի՞նք արդեօք զիրար, երբ օր մը վերստին հանդիպէինք իրարու: Պիտի չի նետուէի՞նք իրարու գրկին մէջ: Եթէ այդպէս էր, ինչո՞ւ ապրիլ, տքնիլ ու զիս ճնշող ահաւոր մրցումներու միջեւէն ամեն օր բարձրանալ վեր, աւելի՛ վեր, դէպի փառքի ու յաջողութեան Գողգոթան: Կը յուսայի օր մը իմ մօտս ունենալ քեզի ու քու սիրելիներդ, հաւաքուած նոյն ծովեզրը ու մոռնալ կեանքն ու իր անդունդները:

Գնա ճամբարդ, եղբայր իմ հի՛ն երազներուս, թերեւս քու-

կըդ է շիտակ ուղին: Քու հին մաքուր ու ջինջ ձայնդ յիշելով էր որ առաջին անգամ քեզի կոչ ուղղած էի Օրմանեանի համար:

Խարդախ Լըժինի մը ցուցումներուն վրայ՝ օր մը զայն դաւաճանութեան սիւնին գամեցին, եւ ուրիշ օր մըն ալ դէպի անորակելի անդունդներ սուզեցին եւ այդ ամենը առանց որոշ ու դրական վաստի: Եւ ամենէն վերջ ձեռնպահ մնացին: Բուն թիւրիմացութիւնը կարծելն է թէ ես պաշտպանեցի՝ Օրմանեանը: Անունը ինծի համար նշանակութիւն չունի՝ երբէք: Իմ քննադատածս ալդ ընթացքն էր, դատավարութեան ձգձգումը, որ հինգ երկար տարիներ տեւեց եւ որ բաւ էր ցուլ մ'իսկ ըսպաննելու:

Պահպանողականութիւն կոչուած եղտիւրին մէջ ինկած մը մի՛ կարծեր զիս, որովհետեւ նոյն հին պաշտողն եմ դէպի ազատութեան խոյանքներու: Դաշնակցութիւնը կը դաւանիմ չայ կեանքէն բղխած ու պաշտելի նահատակներու մաքուր արիւնով նուիրագործուած սքանչելի ուժ մը, եւ սակայն աններելի կը դտնեմ նոր սերունդին միտքը — տհաս ու խակ տակաւին — անմարսելի վարդապետութիւններով խճողելու ձրգտումն ու մտայնութիւնը: Ամենքն ալ կ'ուզեն դմեզ ներքնանապէս պառակտուած, բղքտուած գտնել: Ու կը սոսկամ անիշխանութենէն: Եւ ըսեմ՝ դաւանանքս, որ «Սիւլօ»յինն է, — Քրանսացի յեղափոխական՝ որ ականատեսն էր 1795 ի սոսկուամներուն, և կը գրէր Նափօլէօնի երեւման նախընթացին:

« Կը կըրկնեմ՝ պաղարիւնով, թէ ինամակալ աստուածը՝ որ կը կոչեմ հայրենեացս համար՝ բունապէ՛ճն է... պայմանաւ որ հանձարի մարդը լինի: Ռիշլիեօյի մը ամբողջական անտեղիտալիութիւնը կը պահանջեմ: Այդ օրինակ մարդու մը համար ուրիշ բան պէտք չէ, եթէ ոչ հող ու բազուկներ, կայսրութիւն մը ստեղծելու համար: Ֆրանսան չի կրնար վերակազմուիլ իբր մը ազգային մարմին, եթէ նախապէս չի սանձուի՛ վայրի և intraitable Տիրոջմէ մը: Երբ կը կոչեմ բռնապետութիւնը բարձրադաղ՝ յօգնութիւն իմ տարաբաղդ հայրենիքիս, կը հասկնամ կառավարող ուժերու միութիւնը հսկայական ճիւղ մը ձեռքին մէջ, կատաղօրէն կարող, տիրապետութեան նախանձովը այրող և իրապէս բացարձակ: Կ'ուզեմ յափշտակիչ մը, վեհանձն, լուսաւորեալ, որ գիտնայ վսեմ ու արտայայտիչ քրօմուելա-

կանութեամբ մը, իր վրան սքանչացնել տալ և ինքզինքը ակնածելի ընել ժողովուրդի մը, որ ստիպուէր յարգել և օրհնել իր գերութիւնը » : — Անիշխանութենէ փրկելու համար այդ բռնապետը տալ պէտք է Հայուն :

Երկուքս ալ նոյն իտէալին կը ձգտինք, տարբեր շաւիղներէ : Ու յոյսս չեմ կորսնցներ, թէ մէկ օր պիտի վերադառնա՛ս ինծի :

Այդ սրբազան յոյսով ու կարօտով ճակատդ կը համբուրեմ :
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

Պ Ա Յ Ր Ը Ն Ի Մ Ի Ե Ր Գ Ը

Ճիպուղի, 18 Մարտ 1919

Չօհրապ ու Չարդարեան, ինկան տարագրութեան անծանօթ ճամբաներուն մէջ, « Արեւելքի բարբարոս հորդաներու յոլիւրէն » սպաննուած : Օրմանեան ալ ինկաւ իր դողդոջուն քայլերը տառապանքի ճամբուն վրայ արիւնած : Նոյն հայրենիքին համար ինկան երեքն ալ, ազատական կամ պահպանողական :

Մութին մէջ, անապատէն՝ կ'երկարեմ ձեռքերս քեզի, իմ բանաստեղծ եղբայրս, էութիւնս օծուած քու անմահ հոգիով, պիտի գամ վերցնել քու իտէալիդ դրօշը, նոյն խանդավառ խոյանքով, մեր սրբազան հայրենիքին գիրկը :

Ննջէ խաղաղութեամբ, ե՛ս պիտի դառնամ քեզի :



ԼՐ

Մ Ե Ն Ե Լ Ի Ք

Ե Թ Ո Վ Պ Ի Ո Յ Պ Ա Տ Գ Ա Մ Ը



Վ Եթովպացւոց գետերուն անդիի կողմը եղող թևերով հովանաւոր երկիր,

Որ ծովէն՝ պրտուեղէն նաւակներով Ջուրի երեսին վրայէն դեսպաններ կը խրկէ :

Ով արագընթաց դեսպաններ, գացէք Երկայնահասակ ու լերկ ազգին,

Սկիզբէն մինչև հիմա ահեղ ժողովուրդին,

Խիստ զօրաւոր ու ամենը կոխկոտող ազգին,

Որուն երկիրը գետերը կը կտրեն :

Ով աշխարհիս բոլոր բնակիչները,

Ու երկրի բոլոր բնակողներ,

Երբ որ լեռները դրօշակ կանգնուի՝ նայեցէք,

Ու երբ որ փող հնչուի՝ լսեցէք :

Քանզի Տէրը ինծի այսպէս ըսաւ .

Ես հանգիստ պիտի ըլլամ, ու իմ բնակարանէս պիտի նայիմ,

Խոտի վրայի պայծառ տաքութեանը պէս,

Ու հնձոց տաքութեանը մէջ ցողազին ամպի պէս :

Քանզի հունձքի ժամանակէն առաջ

Երբ որ ընձիւղը մեծնայ,

Ու ծաղիկը ազոխ ըլլալով համնելու վրայ է,

Անիկա ճիւղերը յօտոցով պիտի կտրէ,

Եւ ուռերը պիտի փրցնէ, նետէ :

Անոնք մէկտեղ լերանց թռչուններուն

Ու երկրի գազաններուն պիտի թողուին,

Եւ թռչունները ամառը անոնց վրայ պիտի անցընեն,

Ու երկրի ամեն գազանները ձմեռը անոնց վրայ պիտի անցնեն

Ան ժամանակ զօրաց Տէրօջը՝

Երկայնահասակ ու լերկ ժողովուրդին

Եւ սկիզբէն մինչև հիմա ահեղ ժողովուրդին,

Խիստ զօրաւոր ու ամենը կոխկոտող ազգին՝

Որուն երկիրը գետերը կը կտրեն,
Զօրաց Տիրոջը անուանը տեղը՝
Մինն լեռը ընծայ պիտի բերուի:

Մարգարեւորի 6 նասյեայ. Գլ. 3Ը.

Իրապէս անդնդային ու խորհրդասքօղ աշխարհ մըն է Եթովպիան, Ափրիկէի Սև Լեռը, գագաթն ու պատմութիւնը մշտապատ և փայլակներով լուսաշող: Իր ստինքէն կը հոսի աստուածային նեղոսը, իր կրանիթի լեռներէն են կտրուած դարաւոր Սփինքսն ու բուրգերը, իր վայրի անտառներուն մէջ կը մոնչեն առիւծն ու յովազ և փիղերը հոն կը քալեն համբերատար ու ահարկու գնացքով: Կոկորդիլոսն ու գետաձին, վիշապն ու բորենին, հոն կը գեռան, կը հոնչեն, կը սողան ու կը վայեն: Սակայն ամեն բլուրի գագաթ խաչը կը բարձրանայ, խորհրդանիշ կրօնքի ու խաղաղութեան, ճիշտ Հայաստանի նման, ու հոս ալ հաւատքը եղած է այն հաստատուն ապառաժը որուն վրայ փշրած են դարերու համայնաշինչ կոհակները: Եւ ո՞վ չի գիտեր Սաբայի թագուհիին և Սողոմոնի աւանդավէպը, հարաւի չքնաղ զշխոյն, որ մեծ իմաստունին համբաւէն շլացած, նուէրներով հոտաւէտ իւղերով ու Ռփրի ոսկիներով գնաց Քանանու երկիրը: Հոն Սողոմոն Մաքէտայի հիանալի գեղեցկութեան զարնուած, ուղեց գրաւել սիրտը, սակայն թագուհին անդրդուելի մնաց: Սողոմոն մեծ խնձոյք մը սարքեց արևելեան ամեն կարգի համադամներով ու ընթրիքէն վերջ հրաւիրեց Մաքէտան որ իր քով մնայ: «Կը մնամ պայմանով որ զիս չի բռնաբարես» պատասխանեց հպարտ թագուհին: «Պատուոյ խօսքս կուտամ որ քովէս կոյս պիտի մեկնիս ըսաւ Սողոմոն, եթէ քու կարգիդ խոստանաս բան մը չի գողնալ ինձմէ: Այսպէս համաձայնեցան: Քիչ վերջը թագուհին որ ծարաւ էր, պալատին աղբիւրէն ջուր խմեց, զսր տեսնելով իմաստունը գոչեց « ինձմէ ջուր գողցար հետևաբար խոստումէս ազատ կացուցիր զիս »... և Մաքէտա յղացաւ ու Եթովպիա վերադարձին զաւակ մը ծնաւ, Մենելիք անուն, Քրիստոսէ 1000 տարի առաջ:

Մայրը որ հրէական կրօնքը ընդունած էր, զրկեց զայն Սողոմոնի որ կրթեց զայն ու դարձուց Եթովպիա: Այս արքան եղաւ Մենելիք Առաջին, որմէ կը սերի Մենելիք երկրորդ կայսրը:

Այս գողտրիկ աւանդավէպը, որ երգ երգոցի շեշտն ու

անուշութիւնը ունի, ժողովրդային զրոյցներուն հետ հասած է մինչև մեր օրերը, եթովպական հիմնարկութեան վրայ աղօտ լոյս մը սփռելով: Սիրավէպէն վերջ սակայն այդ երկրին պատմութիւնը ամբողջ բաղխումներու ու խորտակումներու արիւզանգ շղթայ մը եղած է, արքաներ յաջորդած են արքաներու, Քրիստոսի կրօնքը թափանցած է մինչև մթաստուեր խորքեր ու եղերերգութիւնը տեսած է Սաչին ու Մահիկին պայքարներուն հետ, բիւրաւոր նահատակներու արեամբ ներկելով խաւարակուռ Ափրիկէն: Հոս ալ նոյն նմանութիւնը մեր պաշտելի Հայաստանին: Անոր համար Եթովպական պատմութեան զլիաւոր գծերը կը փորձուիմ թարգմանովի գետեղել հոս բացատրելու համար այն տպաւորութիւնները որ կը պատկանին յիշատակներուս այս մասին:

— « Մաքէտա մեռաւ 986 ին Քրիստոսէ առաջ և Մենելիք Ա. գահ բարձրացաւ: (Այս թագուհին է որ իր յաջորդներուն հրամայեց փակել արքայական արիւն կրող բոլոր իշխանները Տէպրա Տամօթ լեռան վրայ քաղաքական մրցումներու և պատերազմներու առջև առնելու համար:) Անկէ վերջ մինչև Քրիստոսի 550 թուականը Եթովպական պատմութիւնը զրեթէ անծանօթ կը մնայ:

« 550 ին Սբ. Յրիւմանս սկսաւ քարոզել քրիստոնէութիւնը: Այս սուրբը նաւաբեկեալ մըն էր, որ տեսած էր իր եղբորմէն զատ բոլոր միւս ընկերներուն սպաննուիլը: Երկուքին կեանքին խնայած էին իրենց անտիական հասակին մեղքնալով ու մանաւանդ գեղեցկութեան, և տարին զանոնք Աքսում (մայրաքաղաքը) Ապրէհա թագաւորին, որուն քիչ ատենէն վստահութիւնը գրաւեցին և որ մեծ պաշտօններ տուաւ իրենց: « Սբ. Յրիւմանսի ազդեցութեամբ նոր կրօնքը տարածուեցաւ առանց արիւնահեղութեան: Միայն հրեայ իշխան մը Տիւնաան անուն, որ 320ին յափշտակած էր Արաբիոյ մէջ Եթովպական իշխանութիւնը սպաննել տուաւ Նակրանի (Եէմէնի հին մայրաքաղաքին) կառավարիչը, կինը և 540 քրիստոնեաներ: Այս մարտիրոսներուն վրէժը առաւ Քալէպ յաղթական թագաւորը: Քալէպ իր արքայական թագը զրկեց իբր նուէր Երուսաղէմի տաճարին և ինք հրաժարելով վանք քաշուեցաւ մեր Տրդատին պէս, իր հետ տանելով միայն ջուրի գաւաթ մը և պառկելու փսիաթ մը: Այս հարստութիւնը տեւեց մինչև 900 թուականը, երբ գահուն վրայ Տէլ Նաստ մանուկ

Թագաւորը ելաւ: — Քրիստոնէութիւնը չ'ընդունող հրէաները քաշուած էին դէպի Սէմիան ուր անկախ թագաւորէ մը կը կառավարուէին: 900ին այս գահուն վրայ էր Յուդիթ, փառասէր կին մը որ որոշեց ջնջել Սողոմոնի յաջորդները: Յաջողելով գրաւել Տէպրա Տամօթ լեռը, ուր կը փակուէին արքայական արիւնի իշխանները Մաքէտայէն ի վեր, զանոնք բռնորն ալ մորթել տուաւ: Մանուկ արքան Տէլ Նաատ յաջողեցաւ փախչիլ Շօայի նահանգը, ուր ճանչցուեցաւ իբր վեհապետ: — Յուդիթ և իր յաջորդները թագաւորեցին Աքսուամի մէջ մինչև 1100:

« Սողոմոնի սերունդէն Տէլ Նաատի յաջորդները շարունակեցին տիրել Շօայի մէջ: 1268 ին Շօայի թագաւորն էր Իքօն-Ամլաք և այդ ատեն Տէպրա-Լիպանոսի հռչակաւոր մենաստանին հիմնադիրը Թէքլա-Հայմանութ վանականը, որ Ապունայի (եպիսկոպոսի) հանգամանքով կը կառավարէր քրիստոնէայ եկեղեցիները, որոշեց եթովպական գահուն վրայ բարձրացնել վերստին Սողոմոնի սերունդը: Յաջողեցաւ ալ, սակայն Իքօն-Ամլաք ստիպուեցաւ մեծամեծ զոհողութիւններ ընել: Թաքլա-Հայմանութի ատեն որոշուեցաւ որ եթովպիոյ Ապունան (եպիսկոպոսը) միշտ Աղեքսանդրիայէն պիտի ընտրուէր:

« Ամտա-Սիօն իշխեց 1512—1542 պատերազմեցաւ և հրպատակեցուց հրէաները, ետ մղեց մահմետականները և գրաւեց Ձէյլան: Այս արքային ժամանակ սկսան խաչին ու մահիկի կռիւները, որ 500 տարի պիտի տեւէին: Դաւիթ Հինգերորդ ստիպուեցաւ ետ մղել էմիր Մուֆֆուտի յարձակումները, որոնք վերսկսան Մօհամէտ Կրանյէն, որ ինգքզինքը Թուրքիոյ Սուլթան Սիւլէյման Բ. ի հարկատու հռչակելով գրաւեց Հարարը և թրքական օգնութեամբ մտաւ եթովպիա, տասնևինը տարիներ կողոպտեց և աւերեց երկիրը: Առաւ Շօան, Թէլլրէն, այրեց Անթօթօն և Աքսուամը, և ստիպեց Դաւիթը ապաստանել Տէպրա թաքոր լեռան վրայ: Քաղաքային պատերազմն ալ վրայ հասաւ և Դաւիթ ամեն կողմէ յաղթուեցաւ: Միջոցները հատած, այլ ոչ յուսակտուր, Դաւիթ ափ մը մարդոց հետ ապաստանեցաւ բարձր լեռներու վրայ ու Բորթուկացիներէն օգնութիւն խնդրեց: Ու մեռաւ առանց օգնութիւնը ստանալու մինչ Թուրքերը արդէն տէր Ձէյլայի և Մասաւայի կը գրաւեն ամբողջ ծովեզրը, Սուաքիմէն մինչև Պէրպէրա:

Քլօտիոս Բ. յաջորդեց հօրը, 18 տարեկանին (1540): Թուրքերը տեսնելով կայսեր փոքր տարիքը, որոշեցին զարնել և միանգամ ընդմիշտ վերջացնել եթովպիան: Սակայն պատանի իշխանը երեք յաջորդական յաղթանակներով ետ մղեց ու եթովպական վերագարթնումին նշանը տուաւ: Բորթուկալի թագաւորէն խնդրուած օգնութիւնն ալ հասաւ վերջապէս, Վասքօ Տէ կամայի անդրանիկ գաւկին հրամանատարութեամբ, որուն նաւատորմիդը վոնտեց Թուրքերը Սուաքիմէն ու Մասաուայէն, ջնջեց Թուրք տորմիդը, և 500 մարդով իր եղբայրը Ղըրկեց Քլօտիոսին միանալու:

Վերջապէս Մոհամէտ Կրանյը սպաննուեցաւ ու Թուրքերը ստիպուեցան ետ քաշուիլ: Այս կռիւներուն յաջորդեցին կրօնական խռովութիւնները, կաթոլիկութեան եւ եթովպական եկեղեցիի կողմնակիցները զարնուեցան իրար: Այս անիշխանական վիճակը կը տեւէ մինչև 1855 Թէոտորոս երրորդ, բռնապետ այլ ասպետական կայսրը, որ անխնայ կը նուաճէ ու կը ջարդէ խռովարարները և Աքսուամի մէջ կ'օծուի « արքայ արքայիցն եթովպիոյ »: Արիւնի մէջ կը խեղդէ իր դէմ լաւուած դաւադրութիւնները: Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ կ'ուզէ դաշնադրութիւններ հաստատել: Նաբոլէոն Գ. դեսպան կը ղրկէ իրեն 1862ին, սակայն Անգլիացիներ անպատասխան կը թողուն իր դիմումը: Կայսրը բարկացած բանտը նետել կուտայ Մասաւայի անգլիական հիւպատոսը՝ Քամբրուն: Այս լուրը առնելով Անգլիացիք պատուիրակութիւն մը կը ղրկեն հիւպատոսին ազատ արձակումը պահանջելու համար: Կայսրը այդ պատուիրակութիւնն ալ կը բանտարկէ և հին օրէնքի մը վրայ յենլով իբր բանտարկեալ պատանդ կը պահէ եթովպիա գտնուող բոլոր եւրոպացիները: (Այս միջոցին է Տիմոթէոս Սափրիչեանի « երկամեայ ուղեւորութիւնը ի Հապէշաստան », Եսաթի պատրիարքէն ղոկուած՝ Անգլիոյ խնդրանքով, որ միջամտէ բանտարկեալներուն ազատ արձակման համար, այլ ապարդիւն:) Բանակցութեանց ձախողելուն վրայ Անգլիա 15000 հոգինոց բանակ մը կը ղրկէ Սըր Նաբիէրի հրամանատարութեամբ, որ կուզայ Մակտալան կը պաշարէ, ուր ապաստանած էր Թէոտորոս 5000 հոգիով: 1863ի աւագ ուրբաթ օրը եթովպական բանակը կը յաղթուի: Կայսրը կ'առաջարկէ անձնատուր լինել պատուաւոր պայմաններով, կը մերժուի: Ասոր վրայ Թէոտորոս յուսակտուր, հաւաքեց իր մնացած զօրքերը և ըսաւ թէ

որոշած էր մինչև մահ կոուլի և թէ անգլիական գնդակներէ վախցողները ազատ էին մեկնիլ իր քովէն: Շատերը մեկնեցան վատօրէն: 16 հոգի միայն մնացին կայսեր քով ու նախընտրեցին կտոր կտոր ըլլալ անգլիական գնդացիներէն: Մինակը կանգուն՝ իր հաւատարիմ ծառային Ուալտա Կապրայի հետ, ու չիյնալու համար թշնամիին ձեռքը, թէոտորոս իր ուղեղը պայթեցուց միջնաբերդին միացող աւերակներուն վրայ: Հակառակ իր խիստ նկարագրին՝ քաջ մըն էր ան և կը մարմնացնէր եթովպական ցեղին խրոխտութիւնը:

Կը յաջորդէ Եօաննէս՝ որ կը յազթէ Եգիպտացիներուն ու խտրիվին զաւակը գերի բռնելով, իբր պատիժ, ճակտին վրայ սուրով խաչի նշանը կը գծէ: 1881-1883 Ֆրանսա կը գրաւէ Օպօքը (Ճիպուղին), Անգլիա Զէյլան, Պուլահարը ու Պէրպէրան և Իտալիա Մասաւան: Եօաննէս չ'ընդդիմանար իտալական զրաւման, պայմանով որ ծովեզրը միայն պիտի մնար: Իտալացիք հակառակ իրենց խոստման սկսան յառաջանալ դէպի ներքնաշխարհ: Փորձեցին կայսեր դէմ ապստամբեցնել Շօայի թագաւորը Մենելիք, սակայն Մենելիք նուրբ դիւանագէտ, մտիկ ըրաւ իրենց, ընդունեց բերուած նուէրները այլ... տեղէն չի շարժեցաւ: Այս միջոցին կայսրը զբաղած էր երկիրը պաշտպանել Մէհտի Մուհամմէտի դէմ, որ ամբողջ Նուպիան գրաւած, ու Կօճամ հասած էր: Եօաննէս յարձակեցաւ ու յաղթեց Մէհտիին, սակայն պատերազմին մէջ ինկաւ քաջաբար: Իտալացիք օգտուած էին Եօաննէսի դժուարութիւններէն և վերագրաւած Տօկալին և Շօայի թագաւորը որ կը նախատեսէր իր մօտաւոր բարձրացումը ի գահ կայսերական, ստորագրած էր անոնց հետ Ուշալիի դաշնագիրը: Մենելիք Բ. Սողոմոնի սերունդէն, կայսր հրատարակուելուն պէս Իտալացիք Եթովպիոյ վրայ թևարկութիւն յայտարարել փութացին հիմնուելով Ուշալիի դաշնագրութեան 17-րդ. յօդուածին վրայ որուն իտալերէն բնագիրը կ'ըսէր, « Ն. Վ. Եթովպիոյ կայսրը պարտաւոր է օտար տէրութեանց հետ իր բանակցութիւնները վարել իտալական կառավարութեան գործակալներու ձեռքով, այլ եթովպական բնագիրը, « կրնա'յ » կ'ըսէր փոխանակ պարտաւոր էի: Մինչև 1894 Մենելիք զբաղեցաւ ներքին թշնամիները նուաճելու եւ կայսրութեան միութիւնը ամրապնդելու: Իտալացիք սակայն կը յառաջանային դէպի երկրին խորերը եւ զրեթէ ամբողջապէս գրաւած էին թիկրէի

նահանգը: Մենելիք այդ պահուն իմացաւ միայն դաշնագրութեան իտալական բնագրին իմաստը, զոր արդարացի բարկութեամբ չեղեալ անվաւեր հոչակեց և Բաս Մանկաշան զրկեց Պարաթիէրի զօրապետին դէմ, որ ետ մղելով Եթովպացիները, յաջողած էր գրաւել Ատուան: Մինչև այդ ատեն արինահեղութեան առջև առնելու համար Մենելիք վճռական քայլ մը առած չէր: Ուզեց միջորդութեանց դիմել ու նոյն իսկ Գերմանիոյ կայսեր համակ մը ուղղեց « դարերէ ի վեր այլակրօններու ծովին մէջ կղզիացած Սրբագան Եթովպիոյ համար » իր բարեացակամ միջամտութիւնը խնդրելով:

Նամակը առանց բացուելու ետ զրկուեցաւ իրեն...:

1893 Սեպտ. 17ին ուղղեց Եթովպական ազգին իր հոչակաւոր պատգամագիրը, որուն հետեւեալ մասերը հոմերական երգի մը սարսուռն և տպաւորութիւնը կը թողուն:

— « Թշնամի մը կտրեց անցաւ ծովը: Բռնաբարեց մեր սահմանները, կործանելու համար մեր հայրենիքն ու կրօնքը: Ամեն բանի հանդուրժեցի և երկար ատեն բանակցեցայ մեր այնքան տառապած հայրենիքին նոր վիշտեր խնայելու համար: Այլ թշնամին կը յառաջանայ շարունակ, ու խլուրդի պէս մեր ժողովրդոց և երկիրներուն հիմը կը փորէ: Հիմակ այլ եւս բաւական է: Ս. Երրորդութեան օգնութեամբ որոշած եմ պաշտպանել մեր հայրենիքը, և զօրութեամբ ետ մղել յարձակողը որ խօսք հասկնալ չ'ուզէր: Թող ան որ կտրիճ է ընկերանայ ինձի, և ան որ ուժ չունի թող աղօթէ մեր ջանքերու յաջողութեան համար: Թող ոչ մի'ն ետ մնայ, թող ամենքը քալեն իրենց հայրենեաց և երդիքին համար:

40,000 զօրաց գլուխը անցած անձամբ, կայսրը թայիթու կայսրուհիին ու Բաս Մաքոնէնի հետ, յառաջ քալեց եւ ջնջեց Մաժէօր թօզէլիի զօրասիւնը: Մաքոնէն գրաւեց Ատուան: Իտալացիք բանակցիլ ուզեցին: Մենելիք 2500000 Քր. ի տուգանք մը պահանջեց եւ Իտալիոյ երկրակալական բաղձանքներէ հրաժարումը: Քրիստիի նախարարութիւնը, որ դժուար կացութեան մը մէջ կը գտնուէր, հրամայեց Պարաթիէրի սպարապետին յարձակիլ Մենելիքի վրայ և ամեն գնով յաղթութիւն մը տանիլ:

Զօրավարը գիտնալով հանդերձ թէ անկարելի էր յաղթել, ստիպուեցաւ հնազանդիլ նախարարական հրամանին: Արդիւնքը եղաւ իտալական ջախջախումը: 10,000 իտալացի սպանուած

ահի քրիստոնէութիւնը ընդունած, ամուսնացած էր Մենելիքի աղջկան հետ և զաւակ մը ունեցած Լիճ Եասու անուն: Այդ մանուկ թողը իր քով բերել տուաւ, ու որոշեց զայն հոշակել իր գահուն յաջորդ:

Աչքի առջեւ ունիմ եթովպական ժողովուրդին այդ պահուն իր ուղղած պատգամազիրը, իր անդամալոյծի անկողնէն և չեմ դիմանար զայն օրինակելու հոս, իբր մեծ կայսեր ու մեծագոյն հողի մը վերջին յիշատակը: Այդ պատգամագրէն քիչ վերջը Մենելիք կ'երթայ խառնուել իր հայրերուն, ինք երկրորդ Սողոմոն, ու իմաստնագոյն աւելի:

ՊԱՏԳԱՄԱԳԻՐ ՎԱՄՆ ԼԻՃ ԵԱՍՈՒՅԻ, ԺԱՌԱՆԳ
ԵԹՈՎ ՊԱՎԱՆ ԳԱՀՈՒՆ

Յուդայի ցեղին առիւծը յաղթեց:

Մենելիք Բ. ընտրեալն Ասուծոյ, արեայ արեայիցն Եթովպիոյ Մեր սիրեցեալ ժողովուրդին,
Ողջոյն:

Շնորհակալ ենք Ամենակարող Աստուծոյ, որ մեզ թուրաբեց կառավարել խաղաղութեամբ մեր երկիրը:

Մեր թագաւորութեան պարծանքը ժողովուրդին մեզ հանդէպ ցոյց տուած սէրն է:

Նուիրեցինք կեանքերնս մեր ժողովուրդի բարգաւաճման համար:

Եւ եթովպիոյ երջանկութիւնն ու զարգացումը մեր վարձատրութիւնը եղաւ:

Մեր կեանքին նշանաբանը Սողոմոն իմաստունին սա խօսքը եղաւ. « Թողէք ձեր գործերը Յաւիտենականին և ձեր նպատակները պիտի իրագործուին »:

Հոս պատիւ կ'ընծայենք բոլոր անոնց, որ օգնեցին մեզի մեր ձեռնարկին մէջ, անոնց որ չի զլացան իրենց աջակցութիւնն ու արիւնը հայրենեաց խաղաղացման համար, անոնց որ օտարէն եկած վտանգին ժամանակ, սլացան դէպի սահմանագլուխ, մեր նախնիքներուն ժառանգութիւնը, մեր երկրին ամբողջութիւնը, ու մեր ընտանեկան պատիւը պաշտպանելու համար և անոնց, որ խաղաղեցումէ վերջ, զօհեցին ինքզինքնին գործով, ամբապնդելու շէնքը, զոր բարձրացուցինք այնքան երկար տարիներու ժամանակամիջոցին: Ձեզի համար, իմ շատ սիրական ժողովուրդս, որ ձեր սիրով, նուիր-

րումով և անձնագոհութեամբ, աջակցեցաք մեր թագաւորութեան երջանկութեան, աստուածային օրհնութիւնը կը հայցենք ձեզի համար:

Մենք ամեն ինչ ըրինք մեր հայրենիքը արդիական քաղաքակրթութեան երկիրներու աստիճանին բերելու համար, սահմանները ճշգրեցինք, և այնպիսի բարեփոխումներ ներմուծեցինք, որ Աստուծոյ օգնութեամբ՝ մեր երկիրը օրինակ հանդիսանայ ամբողջ Ափրիկէի մէջ: Թուրաբեցինք որ եւրոպական քաղաքակրթութիւնը գայ միանալ մեր հնամենի քաղաքակրթութեան: Մեր կարելին ըրինք իւրացնելու համար եւրոպական քաղաքակրթութեան լաւագոյն մասերը, և միշտ նոյն ընտրանքը պիտի ընենք:

Մեծ եւրոպական պետութիւններէ շրջապատուած, որ Ափրիկեան երկիրները եկած են, բերելու համար Եւրոպայի լոյսը մանկութեան մէջ գանուող ժողովուրդներու, մենք պարտինք մեր կարգին, խոհեմութեամբ, օգնել այդ ժողովուրդոց քաղաքակրթութիւնը:

Աստուծոյ վրայ ունեցած մեր վստահութիւնը, օգնեց զմեզ Եւրոպացիները մեզի բարեկամացնելու, ու միասին անոնց հետ, կ'աշխատինք ամայութիւնները ծաղկած երկիրներ դարձնելու համար:

Մեր գործը շատ աւելի դժուար է քան թէ անոնցը: Մեր յաջողութեան համար, պէտք է որ խաղաղութիւնն ու ներդաշնակութիւնը տիրեն մեր մէջ: Պէտք է որ ձեռք ձեռքի տանք, մէկ նպատակի համար, — Քիչ հայրենեաց Քիչ-Քիչներ:

Մենք երէկուան ժողովուրդ մը չենք: Մենք հնամենի ազգ մըն ենք: Պատմութիւն մը ունինք դարաւոր: Բոլոր աշխարհի աշքերը մեր վրայ կը նային: Ար տեսնեն մեր գործերը, ու մեզմէն մեծ գործեր կ'սպասեն: Պիտի ցուցնենք զմեզ արժանի ուրիշներուն յարգանքին, արժանի՝ մեր անցեալին:

Սակայն բարի թագաւորի մը հոգը միայն իր կեանքի ժամանակամիջոցին բարիք գործել չէ՛. նա պարտի մտածել նաև ապագան: Պէտք է որ իր կառուցած շէնքը մնայ կանգուն նաև անոնց համար, որ պիտի գան իրմէ վերջ: Պէտք է որ խաղաղութիւն ու համաձայնութիւն ձգէ ժառանգ իր յաջորդներուն: Պէտք է որ ժողովուրդը պահէ իր անունն ու լաւ յիշատակը:

Անոր համար, որպէս զի ամբապնդենք այն, որ Աստուած օգնեց մեզի ընելու, որոշեցինք հուշակել, թէ ընտրեցինք իբր մեր յաջորդը կայսերական գահուն, մեր սիրելի թողը, Լիճ Եասուն: Ամեն բան ըրինք, կրթելու համար զինք ժողովուրդին սիրով, կրթելու օրինապահութեան և արդարասիրութեան մէջ, և վստահ ենք թէ

ամեն բան պիտի ընէ. շնորհիւ ամենակարող Աստուծոյ, մեզմէ վերջ
ձեզ լաւապէս կառաւարելու համար: Անձնուիրութիւնը, սէրը և
հպատակութիւնը որ ցուցուցիք մեզի, վստահ ենք թէ պիտի փո-
խանցէք անոր: Նմանապէս վստահ ենք, թէ այս յայտարարութիւնը
մեր բոլոր հաւատարիմ հպատակներուն սիրտը ուրախութեամբ
պիտի լեցնէ, անոնց, որ ամեն բանէ աւելի հայրենեաց պատիւը և
փառքը կը սիրեն:

Ատիս-Ապապա, 27/7/1908

* *

Ձի տրուեցաւ ինձ տեսնել զինքը: Սակայն ամեն Տիրէ
Տափա, Հարար կամ Ատիս Ապապա ելլելուս, լսեցի իր մեծ
անունը երկիւղածութեամբ ու սիրով արտասանուած: Գեկտ.
15ին 1915 փակեց աչքերը, համաշխարհային պատերազմէն
մէկ տարի առաջ:

Քանի անգամ գացի արքայական պալատը, իր մար-
մինը ամփոփող մատուռին առջև հիացումէն շլացած՝ աչքե-
րէս արցունք մը սրբելու: Ու դեռ կը տեսնեմ՝ նահապետ ու
յաղթական կայսեր ալևոր դէմքն ու անուշ ու բարի աչքերը,
ան որ մարդասպանի մը մահապճիորը արձակելէն վերջ, գահէն
վար կ'իջնէր, ու կ'աղերսէր, որ կեանքը շնորհէն իրեն.

Մե այլ հոգիով լուսասփիւռ վեհապետը,

« Երկայնահասակ ու լերկ ժողովուրդին,

« Խիստ զօրաւոր ու ամենքը կոխկոտող ազգին

« Որուն երկիրը գետերը կը կտրեն,

« Եւ որ Զօրաց Տէրոջը անուանը տեղը

« Սիոն լեռը ընծայ բերաւ ».

Իր սքանչելի կեանքն ու քրիստոնեայ կայսրութիւնը, և որ
կոտորածէն ու սուրբերու սարսափէն հալածական Հայութեան
զաւակները իր հայրական գիրկը ընդունեց, անոնց նոր հայ-
րենիք մը պարգևելով:



Լ. Գ.

Մ Ե Ն Ե Լ Ի Ք

Աւարակուռ Ափրիկէի կուրծքին վրան,
Ուր հորիզոնը կ'երկարի՝ դէպ՝ ովկիան,
Ըմբոստ լեռներն ուր ամայքէն կը թռչին

Ամբաւութեան,

Հնչեց մէկ օր ձայնն « Առիւծին Յուդայի »

Որոտումի նման գոռաց մէկ վայրկեան.

Սարսուռ մ'առին անապատներն ամայի

Եւ անսահման:

Փայլակնացայտ նայուածքն իբրև Արամազդ.

Կայծակին շողն առաւ իրեն գերզ մական,

Ու ծնրազրեց իրմէ մեծ մէկ Աստուծոյ,

— Ազատութեան:

Յեղերու մութ, անկերպարան քառուկն,

Ծնունդ տուաւ իր մեծագոր կայսրութեան.

Ու խորտակեց Ատուայի մէջ մոլորուն

Սէզ Եւրոպան.

Ձինկաւ երբէք: Մ'նաց միշտ վէս ու հսկայ.

Մէկ օր միայն իր հուր աչերն մոռայեցան,

Ու լացաւ ան բաղդին վրայ հեռակայ

Հէք Հայութեան:

Ճակատն օծուած Հայուն անմահ միւռոնով.

Գիրկը բացաւ տարահալած մեր ցեղին,

Եւ զգացինք մեզ անծանօթ իր գորով.

— Գութի՛ ոգին...:

*

Արշալոյսներն իբրև պսակ քու ճակտին,

Հանգչէ՛ անդորր, արդ հայրենեացդ ախոյեան.

Որ կեանքիդ մէջ սլացար անուշ ու անգին

Անմահութեան:

Արծուերոյնը ամպերէն վեր կ'ապրի՛ դեռ.

Ու ցեղդ հօր՝ պիտի ապրի՛ յաւիտեան,

Պիտի գոռան անտառներուդ մէջ շանթերն

Ազատութեան:

Ճիպուղի.

ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ



մեն եթովպացի՝ դատաւոր ծնած է: Որոշ օրինազիրք մը գոյութիւն չունի: Վէճ մը, դատ մը, կռիւ մը ունիս որ և է մէկուն հետ, քաղաքը, գիւղը կամ անապատին մէջ, դէմդ ելլող առաջին եթովպացին կը կեցընես գոչելով:

« Պա՛ Մենելիք » (յանուն Մենելիքի): Անցորդը, որչափ ալ որ ստիպողական գործ ունենայ՝ պարտաւոր է կենալ անշարժ, ստանձնել դատաւորի հանգամանքը, ունկնդրել երկու կողմին և վճիռ մը արձակել՝ դարձեալ « յանուն Մենելիքի »: Եթէ դատը կնճոտ է, երկու կողմէն բնիկ փաստաբաններ կը ներկայանան, որ իրենց երգող լեզուին բոլոր գանձերը կ'սպառեն համոզելու համար դատաւորը: Ամէն խօսք իրենց մշտաշարժ լեզուին մէջ հատու փաստ մը կը դառնայ, երբեմն կը գոռան, նոյն իսկ կ'արտասուեն: Իրարու դէմ գրաւի կ'ելլեն:

— « Կ'երդնում որ ի՛մս է իրաւունքը, և ապացուցանելու համար խօսքերուս ճշգրութիւնը, թող կ'որսնցնե՛մ հրացանս եթէ սուտ կը խօսիմ »:

— « Ե՛ս ալ կ'երդնում թէ ի՛մս է իրաւունքը և հրացանս ու ջորի՛ս գրաւ կը դնեմ իբր ապացոյց խօսքիս ճշգրութեան »:

Ու ճարտասանական հեղեղները կը հոսին, գրաւները աստիճանաբար կը բազմապատկուին, նիստը, աւելի ճիշդը կանդնումը կրնայ տեւել ժամերով, մինչև որ յոգնին, քրտնին և հեւասպառ դառնան: Վայրկենական դատաւորը՝ ստիպուած է մտիկ ընել երկու կողմին, հարցաքննել, մոլորեցնել, ու վերջապէս վճիռը արձակել « յանուն Մենելիքի »: Անկէ վերջ միայն կրնայ շարունակել ճամբան,

Իբր յատկանշանական՝ երկու մանր պատմութիւն կը յիշեմ, որ յիշատակներուս մէջ անջնջելի մնացած են:

Ֆիթավրարի Աբթա Կօրկիս, զինուորական մըն է ու շատ տարիներէ ՚ի վեր պատերազմական նախարար: Մաքուր համբաւ մը ունի և իրեն համար կարելի է ըսել « միակ անկաշառելի բարձրաստիճան եթովպացին »: Շատեր փորձած են

նուէրներով ներկայանալ իրեն: Ծայրաստիճան քաղաքավարութեամբ ընդունած է զիրենք և նուէրները: Սակայն նոյն օրն իսկ երկու վաճառականի գնահատել տալով նուէրներուն փոխարժէքը եթովպական օղակ ոսկիի ձեւով, իր մէկ թիկնապահին ձեռքով կը զրկէ նուիրատուին, ըսելով թէ « պատերազմական նախարարը շատ գոհ մնաց ձեր ընծաներէն եւ ի փոխարէն կը խնդրէ որ դուք ալ ընդունիք այս փոքրիկ յիշատակը »: Ֆրանսայի դեսպան Մ. Պրիս պատմած է ինծի ասիկա եւ շատերն ալ հաստատած են: Արդ Աբթա Կօրկիս բնածին տաղանդ մը ունի իբր դատաւոր, ու Մենելիք շատ անգամ իրեն կը զրկէր կնճոտ դատերը վճռելու համար:

Օր մը երկու հազարապետներ վիճելով, կռուելով, ահագին խուճրով մը կ'ելլեն Մենելիքի առջեւ: Մէկ հազարապետը գիշերը երազ մը կը տեսնէ, իբր թէ միւս հազարապետին կնոջ հետ անպատշաճ վիճակի մը մէջ գտնուած է: Առտուն այդ երազը կը պատմէ միւս հազարապետին և ընկերներուն, կատակի ձևով եւ առանց նպատակի: Միւսը սաստիկ կը զայրանայ եւ Մենելիքէն բարձրագոյն արդարութիւն կը պահանջէ: Մենելիք շուտով, երկուքը միասին կը զրկէ Աբթա Կօրկիսին, յանձն առնելով որ ինք դատէ խնդիրը. Աբթա Կօրկիս համբերութեամբ մտիկ կ'ընէ երկուքն ալ, ու վերջապէս կը դատապարտէ զրթբաղդ երազատեսը:

« Շնութիւն գործած ու վատահամբաւած ես, հետեւաբար պէտք է որ քու ամենէն աւելի սիրած մէկ առարկադ իբր տուգանք յանձնես անիրաւեալ կողմին: Ըսէ՛ ունեցածներուդ մէջ ի՞նչ բան ամենէն մօտն է սրտիդ »:

Դժբաղդ մարդը շուտով աչքերով ջորիին կը նայի, հիանալի կենդանի մը արծաթեայ ու ոսկեգօծ կազմածքներով, որ հոն կեցած էր: « Աշխարհի վրայ այս ջորին կը սիրեմ ամենէն աւելի » կը մրմոյս: Աբթա Կօրկիս խորամանկ ժպտով մը գեղանի կնոջ ամուսինին կը դառնայ և « Առ ջորին հեծիր ու մեկնէ » կը հրամայէ: Դատը շահելուն համար հպարտ ու փքացած հազարապետը կ'աշտանակէ ազնիւ կենդանիին վրայ ու քսան քայլ կը հեռանայ, երբ Աբթա Կօրկիս ետ կը կանչէ ու կը հրամայէ որ վար իջնէ ջորիէն ու կենդանին իր տիրոջ դարձնէ:

« Իր երազին մէջ որչափ իրական հաճոյք որ զգաց դա-

տապարտեալը, դուն ալ անոր համահաւասար երջանիկ եղար:
Յանուն Մենելիքի՛ դատը վերջացած կը հռչակեմ.....:

* * *

Քաֆայի թագաւորը ապստամբած էր «արքայից արքային»
դէմ, ու Մենելիք երկար տարիներու արիւնահեղ կռիւներէ
վերջ, Րաս Վալտա կօրկիսի ձեռքով յաջողեցաւ նուաճել ու
գերի բռնել ապստամբ արքան: Հնամենի սովորութեան համա-
ձայն, գերի թագաւորը, շղթայակապ, ու կոնակին վրայ խո-
շոր քար մը առած, պարտաւոր է ծնրադրել կայսերական դա-
տարանին մէջ, ուր Մենելիք շրջապատուած իր աւագանիէն,
պիտի դատէր ու պատիժի վճիռը տար ապստամբին դէմ:

Քաֆայի թագաւորը հոն էր շղթայակապ ու խոշոր քա-
րին ներքեւ ընկճուած Մենելիքի առջեւ՝ որ բարկութենէն կայ-
ծակնաշող աչքերը չօրս կողմ կը դարձնէ: Նախարարներն ու
աւագանին, կանխելով կայսեր մտածումը.—

« Ի մահ 'ի մահ ապստամբը » կը գոռան:

Մենելիք կը ցնցուի, կ'իջնէ վար գահէն, կ'ուղղուի դէպի
ընկճուած ըմբոստ արքան, իր ձեռքով քարը վար կ'առնէ
կոնակէն և հատիկ հատիկ, յուզումէն դողացող ձայնով.

— « Ելի՛ր, եղբայր իմ, կ'ըսէ, ինձի համար՝ իմ շողոքորթ
նախարարներս ու աւագանիս քեզմէ շատ աւելի յանցապարտ
են որ կը մղեն կայսրը՝ իր յարկութեան միջոցին՝ յանցաւոր մը
դատելու ու մահուան վճիռ արձակելու »:

... Ու Քաֆայի թագաւորը մինչև իր մահը հլու և հաւա-
տարիմ հպատակը մնաց Սողոմոնի յաջորդին:

Ու մտածել թէ այդ նահապետական երկրին մէջ հիւպա-
տոսական դատարաններ հաստատուած են, ուր եւրոպեան
օրէնքն ու փաստաբանները նետած են իրենց ցանցապատ լա-
բիրիինթոսները, ու թոչնակներու ճոռողին ու առիւծներու
մոնչիւնին հետ, քիչ ատենէն ալ պիտի չի լսուին սիրելի ու
նուիրական բառերը —

« Պա Մենելիք »....:



ՍԱՀՄԱՆ ԱԳԻԾԸ

(Անցնելէ առաջ մեծ պատերազմին յիշատակներուն, չեմ գիտեր ինչու աչքերուս առջեւէն կ'անցնին իզմիրի գեղածի-
ծաղ օրերը, այնչափ տրտմանոյշ Մայիսներով արփաւէտ :
Այն կեանքէն քանի մը մոռցուած երգի բեկորներ կը հասնին
ինծի տակաւին, կը ծաւալին էութեանս մէջ ու կը վրդովեն
հոգիս: Ու կարապին պէս, որ պիտի փակէ աչքերը, այն տո-
ղերը կը կրկնեմ — Սահմանագիծ վերնագրին տակ — քանի որ
քայլերուս առջև անդունդ մը կը բացուի, և այնպիսի երգեր,
կեանքիս մէջ այլևս պիտի չի կրնամ երգել երբէք:)

1

Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ւ Ն Տ

Մութին մէջէն ան խօլարշաւ
Կո՛ւրծքը ընկճած ովկիանին տակ,
Կը բոլորէ՛ գէրօն ամբաւ
Կոյր օրէնքի մը հպատակ:

էութիւնը հալած կ'եռայ,
Կը թաւալի ինք իր վրան,
Ու ցնցուելով մերթ կ'երերայ
Ամայութեան մէջ անսահման:

Այլ օրէնքը կը պահէ՛ զայն,
Իր ծիրին մէջ, յար նոյն միջոց,
Արփին կեղրոնն է յաւիտեան,

Զուր կը ժայթքէ անզուսպ լավան,
Անդունդը զո՛ւր բանայ իր ծոց,
Արդէն գծուած է իր ճամբան:

* * *



Ռ. ՈՐԲԵՐԵՍՅԱՆ 1900

Կեանքն ալ ըլլար թող անոր պէս
Կեանքը յաւերժ մութին ընկեր,
Ու վաղանցուկ գիշերէն վերջ
Կուրծքն արշալոյս մը բորնկէր:

Կրակոտ սրտով մնար յաւէտ,
Արեւոտ յոյս մ'իրեն կեդրոն,
Հոգ չէ՛ թէ այդ երանաւէտ
Կեանքի ծիրը ըլլար զէրօն:

Հմայքն հզօր ամայութեան
Թող չի հանէ՛ր զայն իր ճամբէն,
Իղձ ու փափաք չունենա՛ր ան,

Ու միամիտ սուրար, եռա՛ր
Մինչև ընկճէ՛ր անլոյս շիրմէն,
Երազներու մէջ բոցավառ:

Իզմիր



2

Դ Ե Ղ Ձ Ա Ն Ի Կ Ս

Երջանի՛կ ես ինձմէ՛ իմ հէ՛ք դեղձանիկ
Բացիր աչերդ ու վանդա՛կը տեսար դուն,
Դեռ չի սիրա՛ծ զարնան բուրումն ու ծաղիկ
Կեանքը չ'ապրած թոխներով ոստոստուն,
Սընարիս քով հատար տրտում ու մենիկ:

Գոնէ՛ Մայիս մը չանցուցի՛նք միասին,
Հատա՛ր անուշ, մելամաղձիկ շեշտերով,
Ծաղկին սէ՛րը երգեցիր դու տրտմագին,
Ձուր խնդրելով խանդաղատանք ու գորով,
Բազը ողբա՛լ որոշած էր քեզ լաժին:

Աչքերը բաց՝ կարծեցի թէ կ'ապրի՛ս դեռ,
Երբ շարժեցի՛ կամացուկ մը ինկար վար,
— Գինովցե՛ր է ըսի մտքէս անտարբեր,
Առի, կուրծքդ դողղտջ, սիրտըդ կը հեւար,
Ու ձեռքիս մէջ հատար մենիկ, անընկեր:

* * *

Երջանի՛կ էր սակայն իմ հէ՛ք դեղձանիկ,
Բացաւ աչքերն ու վանդա՛կը տեսաւ ան,
Չ՛զգաց Մայիս, արեւ, բուրում ու ծաղիկ,
Սիրոյ ցաւեր իր կուրծքին տակ չ'այրեցան,
Ու չի տուին ճակտին խորշում ու ալիք:

Կարծեց գուցէ թէ կեանքն ե՛րգ մ'է մենաւոր,
Տած նախանձը չի խափանե՛ց ձայնն իրեն,
Կեղծ մտերիմ մը չի սլատոնե՛ց սիրտն անոր,
Ու դերձ բաղդին մրրիկներէն հովերէն
Գնաց յածիլ եթերին մէջ հեռաւոր:

Ես կը մնամ սիրտըս լեցուն յոյսերով,
Ու կը համբեմ հոգւոյս տենջերն անցեալին,
Երգ չունիմ ես, շեշտերըս ցուրտ ու թոթով
Ես չի հատած ինձմէ՛ առաջ կը հալին:
Կը զալարիմ մոռացումըդ յիշելով...:

Իզմիր



3

Ժ Ա Ս Ա Յ Ո Յ Ց Ս

Մտերմութեան հին յիշատակ
Մերթ կուրծքիս վրայ իմ մանկային
Բաբախեցիր սրտիս հետ տաք
Երբ ժաւերը խուսափէին
Երազներով լեցուն համակ:

Նկար հետքս օտար երկիր
Ու մտերի՛մքս եղար դուն,
Յաւած կեանքիս իմ կարեկիր,
Ու զերդ հրեշտակ հսկող արթուն,
Զիս մենաւոր չի թողուցիր:

Կ'ըսէիր թէ վիշտը կ'անցնի
Սլաքներուդ հետ յամրընթաց,
Կուգան օրեր նոր, յուսալի,
Եւ աչքերուս արտասուածաց
Օր մ'արշալոյսը կը փայլի...

* * *

Երջանկութիւնը մոոցուց քեզ,
Սլաքներըդ ալ չե՛ն դառնար,
Ու չեմ յիշեր հին հրակէզ
Բոպէները լուռ, վշտահար,
Որ այրելով անցան կեանքէս:

Ալ չե՛մ համրեր թուշող վայրկեան,
Թէն կուրծքիս սեղմած հիմակ,
Քեզ, անցեալի մտերմական
Իբրև անոյշ սուրբ յիշատակ,—
Ես արդ ժպտիմ անհունութեան:
Իզմիր 1899.



4

Գ Ի Ի Ղ Ի Ս Ժ Ա Մ Բ Ա Ն

Կեանքի նաւակն հետք չի թողուց իր ետին,
Մոռացումը առան ինձմէ ամեն բան,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման:

* * *

Հոգիս սակայն կը յիշէ՛ քեզ,
Դուն ծաղկաւէտ գիւղիս ճամբան,
Ուր քալէինք գառնուկս ու ես,
Դէպի պուրակն ու բուրաստան,
Անմեղութեան երազին պէս:

Ու քովիկէզ դողդողազին
Սահէր աղուոր վճիտ առուն,
Մերթ կամուրջին ու մերթ մարզին
Տակ պահուելով կ'երթար հեռուն,
Ամայութեան իբրեւ ոգին:

Բարակ, նիհար քանի մը ճիւղ
Կը գատուէին վտիտ բունէզ,
Մին կը դիմէր դէպ' անշուք գիւղ,
Կը տարածուէր, կ'ըլլար անհետ,
Բոլորելով խրճիթն ու հիւղ:

Մին մագըլցէր բլուրն ՚ի վեր,
Միւսը կ'իջնէր ձորակէն վար,
Ուր ուռնին կուտար ստուեր,
Ու սրինգն իր երգը կուլար,
Զոր կըլնէին գարնան հովեր:

Զմրան ալ երբ ձիւնն սալիտակ,
Կը գտնէր մեզ շուրջ թոնիրին,
Անհետ կ'ընէր իր ծալքին տակ
Մեր հին գիւղին վտիտ ուղին,
Ինչպէս մարգերն ու մանիշակ:

* * *

Տաշուած քարէ ուղիղ ճամբան
Կը տանի զիս արդ ի ծովափ,
Կը ճմլըւի՛ հոգիս սակայն,
Մտածումով մը հրատապ,
Ու կը թռչիմ հին մանկութեան:

Հոն՝ փակ թէն՝ սակայն աղուոր
Ու երփնազե՛ղ էր հորիզոն,
Հմայքներով լի բիւրաւոր

Անմեղութի՛ւնը խայտար հոն
 Ճամբուն վրայ ոլոր մոլոր:
 Մին՝ մազլցէր բլուրն ի վեր,
 Միւսը կ'իջնէր ձորակէն վար,
 Ուր ուռենին կուտար ստուեր,
 Սրինգն ալ իր ե'րգը կուլար,
 Ջոր կրկնէի՛ն գարնան հովեր:

* * *

Կեանքի նաւակն հետք չի թողուց իր ետին,
 Մոռացումը առաւ ինձմէ ամէն բան,
 Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
 Յիշատակն ալ կ'անցնի երգի՛ մը նման...
 Իգգիտ



5

Հ Է Ր Պ Է Ր Թ Ս Բ Է Ն Ս Ե Ր [*]

Կ. Շահինեան բարեկամիս յիշատակին.

Խորխտ ու վէս Ալպիոնի բարձունքին
 Վերև կեցած կը նայի
 Կը սևեռի՛ լուռ դարերու անձկագին
 Եւ անդունդին ամայի:
 Ովկիանը կը թաւալի ոտքին տակ,
 Կոհակներու կուռ շղթան
 Կ'ուզայ փշրել... Կը մտածէ ան մինակ
 Հիմա տխուր ու անձայն,
 Ընկերները գացին և ինք առանձին
 Մեռած դարու մեծ հսկան,

[*] Այս քերթուածը գրեցի, երբ 1987 դարը մեռած էր այլ մտքի հսկան կ'ապրէր տակաւին:

Հեզնոտ ծիծաղ մը փակցուցած շրթունքին
 Դեռ կը կենա՛յ անսասան:

* * *

Կ'ապրի՛ ան դեռ, ոչ մի՛ն անոր չափ սակայն
 Սիրեց շիրիմն ու դափնին,
 Մեռած կրօններն ու աստուածներն հնութեան
 Սիրտն ընտրեցին իր բազին:
 Եւ ինք կանգնած դարերու վրայ փլատակ
 Յնորագերձ իր հոգին
 Խորհող միտքի յուզումներով բովանդակ
 Հարցերն ուղղեց անդունդին...
 — « Ինչո՞ւ, ի՞նչպէս... »: Մեծ անհունը սակայն լուռ,
 Անարձագանգ թողուց զայն,
 Չեփիւուն հեծեց, — « Ահա ալեակն ու փրփուր,
 Կեանքն ալ անոնց է նման »...:

* * *

Կ'ապրի ան դեռ ու ճակատովն իր ճաղատ,
 Կը մտածէ՛ անձկագին,
 Կը դիտէ զո՛ւր երկինքը գորշ, միզապատ,
 Ու կը յառի՛ կոհակին.
 Ամբաւէն սոսկ վարագոյրով մը զատուած,
 Դեռ աչքկապո՛ւկ կը խաղայ,
 Չի՛ յիշեր թէ ինք հիւլէ՛ մ'է՛, Ան՝ Աստուած,
 Ան՝ Յաւիտեանն, ինք՝ տղայ:
 Չերգեր բնաւ, այլ կ'որոտայ, անգիտակ՝
 Թէ ձայները աշխարհին
 Դեռ չի հասած ամբաւութեանն անյատակ,
 Քիչ մը հեռուն կը մարին...:

* * *

Կ'ապրի ան դեռ, ու մտածել թէ կրնար
 Երազներով ծաղկահիւս
 Սահի՛լ ինչպէս վտակները դողահար,
 Կարկաչաձայն, սիրայովոգ,

Եւ կամ հողի կրնար զաւակ մ'ըլլալ ան,
 Հիւզակին մէջ ամփոփուած,
 Ու մրափե՛լ լուս ժամերուն գիշերուան,
 Պատրոյցի մը դէմ՝ առկայծ.
 Ու սեղմելով ճակատն յոգնած, ալեւոր,
 Իր սիրելեացը կուրծքին,
 Ննջէ՛ր մինչև մեծ Գունը զար ու անդորը,
 Հանգչեցընէ՛ր իր հոգին:

* * *

Կ'ապրի ան դեռ բարձունքին վրան անսասան,
 Ու դէպի վե՛ր կը նայի,
 Իր աչքերը Անծանօթը չի տեսա՛ն
 Անգունդներն ալ ամայի
 Իր հարցերուն արձագանգը չի բերի՛ն...
 Կ'զգայ թէ կ'արձ է ճամբան,
 Է՛հ, անշշուկ կ'անցնին օրերն ու տարին,
 Կը մօտենայ իր վախճան:
 Իր մեկնումէն առաջ սակայն գոնէ տա՛ր,
 Հին երազներն հրավառ,
 Ու միամիտ հոգիներու վշտահար
 Երջանկբլթի՛ւնը ե՛տ տար...:

Իզուհի

6

Ա Ռ Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

Արշալոյսին հետ բոցավառ ու բոսոր
 Ժպիտն ու յոյսն էիր կեանքիս մանկային,
 Ու դէպի քե՛զ կ'երկարէի իմ անգօր
 Թուերն, Աստուա՛ծ սիրակապոյտ Մայիսին:

Ամեն տեղ դուն կը ցոլալիր ժպտագեղ,
 Մերթ Աղաւնի, ու մերթ Ծերուկ մը ժպտուն,
 Այլ ինձ համար Յիսոսն էիր միշտ անմեղ,
 Ինձ պէս մանուկ, Մօրըդ գի՛րկը սիրասուն...:

Ու կ'ուզէի անցնիլ կապոյտն հորիզոն,
 Գոզըդ երգել, չի հառաչե՛լ յաւիտեան,
 Կը յուսայի գտնել քնար, երա՛զ հոն,
 Մշտածիծաղ աշխարհ մ'առանց մթութեան:

* * *

Տարիները գացին... ու Գունն հեռացար
 Հատիկ հատիկ երազներըս խամբելով,
 Ծուրջըս կ'իյնան վարդ ու տերև զալկահար,
 Ու ճակատիս կը զարնէ ցուրտ աշնան հով:

Ա՛խ, երանի չի գիտնայի՛ թէ աշխարհ
 Կուրծքը հուրով ինձպէս հիւլէ՛ մ'է չնչին.
 Ամայութեան մէջ սուրացող անբարբառ,
 Որ կը դիմէ մութ, սառուցիկ ոչնչին...:

Կը դողայի մերթ ովկիանէն մոնչող,
 Պատրանքն անցա՛ւ, պիտի սառի օր մ'ալ ա՛ն,
 Չայներ լռե՛ն պիտի, մարդն ալ դառնայ հող,
 Ու դուն միայն, պիտի մընա՛ս յաւիտեան...:

Կապոյտին մէջ վնտոեցի մերթ Գու պատկեր,
 Գիտութիւնն արդ վի՛հը բացաւ անդնդոց,
 Ու կորուսի՛ Գեղ, սմանկութեա՛նն իմ Լ՛նկեր,
 Կասկածներու ովկիանին մէջ ալեկոծ:

Կ'ուզեմ հանգչիլ, մտածումներն այս ահեղ
 Թողնուլ կ'ուզեմ ժպտին առջև նուազկոտ,
 Բոպէ՛ մը գէթ մանկանայի և անմեղ
 Փափաքներըս ե՛տ դառնային ինձի մօտ...:

Գիշերին մէջ այս ահաւոր ու տրտում,
 Դարձի՛ր, անուշ երազ կեանքիս մոլորուն,
 Օ՛հ, մի՛նա՛կ եմ քեզ կ'աղաչեմ՝ անդադրում,
 Դարձի՛ր Աստուած իմ մանկայի՛ն օրերուն...:

Իզուհի



Ք Ն Ա Ր Ի Ն (*)

Ծանօթ. — «Քնար՝ համաստեղութիւն մըն է շրջապատուած Ծնիկ, Մէծ և Փոքր Արջ, Վեշտոկ և Կոյո համաստեղութիւններէն: Քնարին պայծառագոյն տասոյն է Վեշտոկ, որ 120 դար ետք՝ մեր հիւսիսային բևեռի աստղը պիտի ըլլայ»:

Քամիլ Գլամարիոն.

Շնիկին խուլ հաչիւններէն քիչ մը վեր,
Ու քիչ մը հեռուն Արջերէն, որ կը մտածեն լռին,
Դրացի մեծ Վիշապին, ահեղ ու գալարուն,
Քնար, դուն կը դառնաս պտոյտն յաւիտենից:

Որո՞ւ քնարն ես դուն, — է՛հ, թերևս մոռցուած,
Ո՞վ կը հպի լոյսէ ու շողէ թելերուդ,
Կոյսէն հեռու, որ միշտ քեզ կը նայի անձկոտ,
Կարծես կուլա՛ս, այնչափ աղօտ, աղւոր, թրթրուն:

Ու վրադ կը փայլի Վեկան, կապո՛յտ,
Վեկան, սիրտը անոր, որ սիրեց չի սիրուած,
Վեկա՛ն, քովըդ թերևս արև մ'անհուն,
Իսկ հոս՝ կաթիլ մը լոյս, նայուածք մը հրեշտակի:

... Բայց կը լացընես զիս, Քնար,
Դու երբեմն զեղեցի՛կ երևցար ինձի.
Արդ՝ յիշատակ մոռացումին ահաւոր,
Անդնդային, անվերադարձ օրերուն:

Կը ցոլանաս վերէն ովկիանին մէջ մոնչող,
Անհունութիւն մ'հեռու՝ դուն կը ժպտի՛ս անոր,
Կը մեղքընա՛ս անոր, գուցէ մեր կեանքին ալ,
Որու մըմունջ նուազ՝ կ'անհետանա՛յ, կ'անցնի՛:

Մեր մէջ անդունդ մը կայ մեզ իրարմէ զատող,
Սակայն շողերդ հոգիս կ'այլե՛ն ամեն զիշեր,
Ու ես որ շուտ պիտի հատնիմ, կը մեղքընա՛մ,
Ցուրտ անդունդներն ու լուռ մինակութիւնն յաւերժ

(*) Արասանուած առաջին անգամ Իգմիր Գրասէր ընկերութեան հանդէսին:

Քեզի սոսկում չե՞ն տար, Քնար, ու գիշերն ամայի
Սարսուռ չի՛ տար հոգւոյդ:

Բայց չէ՛, թերևս երբեմն, երբ ալևոր Աստուած
Չանձրացած իր անհուն կեանքէն, որ իսկա՛յ է և իսկալ չունի,
Կ'անցնի քովէդ ալ,
Եւ իր նուրբ մատներով,
Որոնցմով շողը, ծաղիկն ու ժպի՛տը ստեղծեց,
Մոռցուած երգ մը կը զարնէ,
Երգն հին յաւիտեանին,
Յիշատակի երգն իր տխուր,
Երգը մինակութեան...:

Ե՛ւ կամ թերևս Քնարն ես Կոյսին.
Որ հրեշտակ մը սիրեց,
Ու չի սիրուած մեռաւ.
Տիեզրի մէկ անկիւնն,
Անհունութեանը մէջ,
Ուր լուռ է ամէն բան...:

Կամ Քնարը բոլոր անոնց,
Որ չ'երգեցի՛ն հոստեղ,
Զսպուած հառաչներով, կանո՛ւլս,
Սև հոգը գրկեցին...
Կամ թէ Քնարը բողոքներուն
Տառապած ազգերու,
Գիշերներու անվերջ,
Կամ Քնարն ես փշրած վաղուց
Անտէր, մինա՛կ թողուած

* * *

Բայց չէ՛, դեռ կը յիշեմ, դեռ տասներկու տարուան,
Երբ դեռ ծիծա՛ղ էի, նախկին սիրով առլի
Օր մը երգեցի՛ր դուն ու ես հեռուն
Մտիկ ըրի երգիդ ու ցաւագին լացի...:

Այն օրէն ետք այլ ևս դուն չ'երգեցիր բնաւ
Անդունդը մրմուռաց ինծի երգը անյուսուլթեան,
Ճակատագիրն ալ սև ամպ մը քաշեց իմ և քու մէջ, Քնար,
Ամպը սև մոռացման...

Այն օրէն ետքը մերթ կայնած ծովի մը քով,
Խո՛ւլ հեզնութիւն, մտիկ ըրի կոհակներու խոռով,
Պատկերդ անոնց մէջ կը ցոլար շատ զիշերներ,
Բայց դուն հոն ալ, ամսոս, հոն ալ չէիր երգեր...:

Որոնեցի շատ անգամ փրփուրին մէջ ալեհեր,
Կայծ մ'արշալոյս քու վառած հին հրդեհին յիշատակ,
Ու չի գտայ ու զգացի թէ կեանքս ինձմէ կը սահէր,
Իտէալիս տեղ կ'անցնէր անէութիւնն անյատակ:

Հիմակ հեզնել սորվեցայ պատրանքները աշխարհին,
Ձի ցնցեր զիս ծովն անեղ իր ամեհի սարսուռով,
Անհունին դէմ իսկ խրոխտ, անտարբեր է իմ հոգին,
Երջանիկ եմ ես մինակ, իմ մելանուշ երգերով:

**

Հարիւր քսան դար ետք բեւեռին վրայ սառնուտ,
Պիտի երթաս լսել խուլ մոխնչը հովերուն,
Հոն ուր ոչ ծաղիկներ կը փթթին ոչ շուշան,
Ուր զիշերն երկար է, լուութիւնն ալ անհուն:

Դուն բեւեռին վրայ ու ես շիրմիս խորէն,
Դուն ամենքը պիտի դիտես, ես ալ գուցէ զգամ,
Երբ բնութիւնն շարժի ու մրրիկներ գոռան,
Լոկ երկուքնիս անշա՛րժ պիտի ըլլանք, երբ կը շարժի՞ն հա-
մայնք...:

**

Երգէ՛ Քնար, հնչէ՛ երգը անհունութեան,
Կուրծքիդ վրայ ալ եթէ ինձ պէս էակներ կան,

կրկնէ անոնց ալ թէ կեանքն աշխարհի վրայ,
Վիհի մը զո՛ւսն է լոկ, դունն ճամբուն մթութեան...:

Կուրծքիդ վրայ ալ եթէ ծով մը կը մոնչէ
Իմ բարեւներս անձկոտ անո՛ր ալ հաղորդէ,
Ես հոս ծովէն հեռու՝ ծովին քաշեմ՝ կարօտ,
Ամպ մը ծովէն ծնած, որ մօրը չի՛ դառնար:

Իմ էութեան խորէն քեզ կը գոռամ՝ ի զո՛ւր,
Գնա՛, Քնար, դարձիր պտոյտը յաւիտեան,
Տիեզերքը լա՛յն է, դուն երազուն, ազուոր,
Աշխարհի վրայ ովկիանն ու տառապողն մինա՛կ թող մոնչեն...
Իզմիր.



8

Փ Ա Փ Ա Ք

Ո՛չ, թաղարիս խամբած ծաղիկ,
Վերափթթիլըդ չե՛մ ուզեր,
Թող չի դառնա՛ն դարնան հովիկ
Ու հոգիիս մարած յոյսեր:

Ինծի մնաց լոկ մի երազ,
Միակ փափաք մ' երանաւէտ,
Պատրանքներու մէջ վաղահաս
Դեռ կը մխայճ, կ'այրի՛ լաւէտ:

Սին բաղձանքներ գտան վախճան,
Մին կը մնա՛յ դեռ նուաղկոտ,
Անուշ, ամբիժ, անդաւաճան
Մտերմութեա՛ն քաշեմ կարօտ. . .
Իզմիր.



Ա Ն Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Գարունները միշտ հիներն են,
Վարդածիժաղ ու բոցանոյշ,
Սմպեր կապոյտ, աչքեր մեղոյշ
Գինովութի՛ւն մը կը բուրեն:

Այեակներ նոր են յաւիտեան,
Վազն արշալոյսն է նոր դարուն,
Վիշտեր սրտէն փախչին հեռուն
Ու միանան հին մթութեան:

Երազանքի քա՛ղցր են օրեր,
Լոյսով, բոյրով շաղուած յաւէտ,
Կեանքի ուղին միշտ արփաւետ
Ծաղիկներու մէջն է պահուեր:

Գետը պղտոր չէ՛ ալ հիմակ,
Վճիտ ջուրով կը ծաւալի
Լուսնկային զերդ հայելի,
Լճակի պէս անդորր համակ:

* * *

Հոգին սակայն չ՛ողեր հաւտալ,
Ամեն բան կե՛ղծ կուգայ կարծես,
Մութի՛ն մարող ասուպին պէս
Կ՛ողգէ ինք ալ մութի՛ն երթալ:

Կը վերածնին հին գարուններ,
Թոչունները կուգան նորէն,
Վէս արծիւներն ալ ամպերէն
Կը սլանան աւելի վեր:

Կ՛որոնեմ՝ զուր ու սրտաբեկ,
Ձեզ չի տուի՛ գերեզմանին,
Շուրջըս համայնք վերածաղկին,
Մտերմութի՛ւն, հաւատք, սէր էք:

Իզմիր

Տ Ն Ա Կ Ս

Բաղդը քեզ ալ ինծի նման
Մոխիր դարձուց ու քու քովիկ
Մենիկ թողուց վտակ, հովիկ,
Իրենց երգովը բաժանման:

* * *

Անտառներու մէ՛ջն էր անի,
— Մէկ քանի սիւն ու սեւ պատեր,
Մէջքերնին կոր, իրար բռներ,
Հին օրերու զերդ ծերունի:
Ու իր խարխուլ պատերէն վեր
Մագլցէին բաղեղն ու վարդ,
Ու կտուրին տակն իր զուարթ
Ծիծառներու կային բոյներ:

Մէկ սենեակ էր ու մէկ օճախ
Ու հեւացող լոկ մի ճրագ,
Ու կեանքն ալ որ կ'անցնէր արագ,
Մէկ իտէալ ունէր, աւա՛ղ...

Ժպիտներով լեցուն առկայծ
Մէկ վերջալոյս կը հատնէր հոն,
Ու կարմրագեղ մեր հորիզոն
Գալարներու մէջն էր փակուած:

Հին տնակին քովիկն ի վար
Կարկաչելով սահէր վրտակ,
Կ'երթար պահուիլ մարգերուն տակ
Սիրամրմունչ ու դողահար:
Ծիծառն անվախ կուգար իմ՝ քով,
Ու ձմրան ալ ճնճողկն անտէր
Իր փշրանքը ափէս կ'ուտէր
Ու կը թռչէր բիւր երգերով:

Կ'որոնեմ

Ձիւնը երդիքը կը ծածկէր իրեն տակ,
Փոթորիկէն հիւղակն ամբողջ կը զողար,
Բայց մեզ ինչ հոգ, երբ ճարճատուն, մշտավառ
Օճախին մէջ՝ դեռ չի մ'արած էր կրակ:

Մէկ կանթեղը բա՛ւ էր մեզի,
Թէև զեղին ու հեւացող,
— Փոյթ չէ՛ ստուերն՝ երբ լիաշող
Երանութիւնը կը հոսի...:

Այդ կանթեղին շուրջ լծուաւ իմ՝ նախկին ճիչ,
Երազներս հոն ծընան զուարթ կամ տխուր,
Մայրս հոն տուաւ արագիլի մէկ փետուր,
Գրէ՛ ըսաւ, ա՛յս թող լինի քու գրիչ...:

Մէկ հիւղակը՝ մեզի բաւ էր
Թէև անշուք, խարխուլ ու հին,
Չմեռներու թէև քամին
Չայն տերեւի պէս կը շարժէր...:

Կանթեղին շուրջ ժպտուն աչքեր փակուեցան,
Սիրելիներ ծեր հիւղակը թողուցին,
Ու հոն երգող մնացին լսի առանձին
Թափառիկ հովն ու վտակը ողբաձայն...:

* * *

Կ'երազեմ՝ զո՛ւր աչքերըս փակ ու գրչին
Չոր ինձ տուաւ սուրբ մայրենի
Սէրն՝ ազուր օր մ'ը գարնանի
Գեռ չի տուած իմ՝ հրածե՛շտը վերջին,

Կ'ուզեմ երգել, քեզ, իմ տնակ մանկութեան,
Երբ դուն իմ բիւթ յոյսերու պէս
Այսօր անշուք փրատակ մ'ես,
Ու կը մնաս մոռացումէն անբաժան...:

Չի զիմացար քեզ սիրողներն երբ գացին,
Կարօտդ զքեզ զարձուց մոխիր,
Երազիս պէս սին ու պատիր,
Ու դուն մեռած՝ չե՛ս սպասեր իմ՝ դարձին...:

Այլ երանի՛, երբ ամենքը քեզ մոռցան,
Կտակ, հովիկ, քովըդ թոչին,
Ու փշրելէն ետք իմ՝ գրչին
Անոնք զքեզ պիտի երգեն յաւի սեան. . .
Խզմիս



Մ Ե Ր Դ Ա Ր Ը Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Ա Ռ Ջ Ե Ւ (')

Հաւաքուեցան երկինքի մէջ
Բոլոր դարերը անցեալին,
Անոնք որ լսած էին « Եղիցի շոյսը »,
Անոնք որ տեսած էին մանուկ Մարդը,
Կիսամերկ, խորշոմ, ալևոր դարեր:
Ծոնցան ինչպէս հովին տակ ցորենի հասկեր
Աստղերու բոյլերը սարսուռ զգացին,
Աստուած կուգար:
Ան կուգար նոր արևներ ստեղծելով,
Հսկայ ու միշտ ահեղ, վսեմ ու միշտ խոնարհ,
Ու տիեզերք կ'երգէր « Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ... »:

Բազմեցաւ յաւիտենական գահին վրայ,
Ու յիշեց մեր աշխարհը,
Մեր մոռցուած հիւլէ աշխարհը,
Որ կը թաւալէր մութին մէջ:

Յօնքը պոստեց Եհովան,
Տիեզրին վրայ լուսութիւնը թանձրացաւ,
— « Տամեկիններօրդ՝ դարը թող գայ » գոտաց նա,
Ու հին դարեր ծոնցան նորէն,
Հաւատքի, յոյսի, սիրոյ դարեր...:

Չեռքը Ռուսական մուշտակէ ձեռնոց,
Վրան տևտոնեան փափուկ վերարկու,

(*) 19րդ դարուն համար, գրուած 1899ի վերջին օրերուն:

Երեսը փարիզեան շպար,
Սիրաբանելով մահուան հրեշտակին հետ,
Որուն դեղին գոյնը կարմրած էր հմայքէն,
Անգլուհիի մը պէս յառաջ անցաւ մեր դարը:

Միշին դարերը՝ վայրահակ թէև,
Յանկուլթեան սարսուռ մը անցաւ իրենց մէջէն,
Ճգնաւոր դարերը դողացին
Երբ մեր դարուն վճիտ ձայնը հնչեց,—

« Տէ՛ր, մարդկութիւնն յառաջ գնաց,
« Բու անունիդ նոր տաճարներ,
« Գիտութեան նոր վառարաններ,
« Երջանկութի՛ւնն տուի երկրին... »

Ընդհատեցա՛ւ յանկարծ իր ձայն սիրահունչ,
Ու դարերու պատկառելի ամբոխէն,
Աղաղակ մը վեր բարձրացաւ ողբագին,
Յիսուսի դա՛րն էր որ կուլար բարձրաձայն...:

Գունատեցաւ Աստուծոյ դէմքն ու հրային
Նայուածքով մ'ուր Արդարութիւնը կ'այրէր,
« Պատմութիւնը թող տայ վճիռը » զոռաց...:

Ու պատմութեան հրեշտակն եկաւ անողոք,
Հիւսիսի ցուրտ հովերուն պէս սառուցիկ,
Դէմքը ողորկ, իբրև մարմար անզգայ,
Ու քանի մօտ կուգար աղուոր մեր դարուն,
Գեղեցկութիւնն անոր կ'ըլլար փլատակ:

Շպարները թափեցան նախ այտերէն,
Ու նայուածքը մելանուշ,
Տեղի տուաւ բորենիի նայուածքին,
Ու պատուեցաւ ձեռքի մուշտակը փայլուն,
Տեսնուեցան գայլի թաթեր, ճիրաններ,
Ուզեց ողբալ .. կարծես օձ մը կը շէջէր....

* * *

Երկինք՝ դողաց. արևները մարեցան,
Դարեր համայն մթութեան մէջ թաղուեցան,
Յիսուսի դարը մնաց հոն վշտաբեկ,
— « Տէ՛ր, նոր դար մ'ալ սիրոյս համար », մրմնջեց:
Իզուհի



Կ Յ Կ Տ Ո Ւ Ր Խ Օ Ս Ք Ե Ր

* * *

Ձեմ փափաքած ես բնաւ լացող ամբոխ մ'իմ վրաս,
Հասնելէս ետք չե՛մ ուզեր դափնիներու յիշատակ,
Բաւ է ինձ մէկ հողակոյտ ամայութեան զերջ երազ,
Ինձի բնիկը՝ մէկ գառուց, ու երգող՝ մէկ ծիծեռնակ:
Պօրտէ՛լիօ

Գիւղն ամայի ու տրտուտ էր այն գիշեր
Փոթորիկը կ'որոտար,
Ու փրփրած ծովն անդունդէն դուրս կը քշէր,
Մտրակելով անդադար.
Փրփուր-օձեր կը սողային մութին մէջ,
Երկինքն առած էր սարսուռ,
Կոհակները փշրուէին բիւր, անվերջ.
Ժայռերու վրայ սայրասուր:
Ուռած ամպեր հեծկլտալով խուժէին,
Ծոցերնին լի՛ փայլակ, շող,
Դէպ՝ անորոշ մէկ անկիւնը անհունին,
... Երազներուս պէս մաշող...:

* * *

Արշալոյսին՝ բայց կը փոխուի՛ն ամեն բան,
Բնութիւնն անվերջ ցաւ չունի՛,
Կոհակն՝ ալեակ պիտի ըլլայ սիրաձայն.
Մըրիկն ալ երգ թռչունի:

Երանի թէ հոգին ալ լոկ մէկ գիշեր
Յուզուէր, հանգիստ առնէր նորէն,
Ու հեռանա՛ր ցուրտ ափերէն,
Երկրին, մոռնար և ալ բնաւ չի յիշէր...:

Վայրկեանները կարմիր են արդ ու տոգոյն,
Եւ անաւոր ու անլոյծ Քէն (X)
Մաս մըն ալ ա՛ն կ'առնէ կեանքէն,
Ու կը տանի անյուսուլթեան մոլորուն...:

* * *

Կոհակներըդ ամէն ափեր կը թըջեն.
Ալիք ալեաց կը հետեւին անդադար,
Ծովա՛կ, կայլակ մ'ալ դո՛ւն առ իմ՝ աչքերէն,
Արցունքս այրող այս ափերէն հեռո՛ւ տար...:
Իզո՛ր



Կ Յ Կ Տ Ո Ւ Ր Խ Օ Ս Ք Ե Ր

Յոսսացի թէ այն դարունը երազուն
Պիտի տեւէր յաւիտեան
Ծերութիւնը դեռ չի հասած աղաղուն
Իր ժամերով մ'ենութեան:

Յոյսի նաւակս անցաւ իր լոյս-հետքին հետ,
Յիշատակ մ'ը չի թողուց,
Մին չի յիշեր իր ստուերը սիրաւետ,
Ընդխարհ մոռցած է վաղուց...:

* * *

Գէթ մէ՛կն ըլլար սրտի վիշտերն հասկըցող,
Ու գիտնար թէ հէք հայրենեաց
Կարօտովը ես կ'իսայրեաց,
Կը մխամ՝ հոս ու կը գնամ՝ ի թաց հող:

Գէթ մա՛յրս ըլլար օրօրանիս քով լացող,
Մէկ մ'ալ երգէր անուշ օրօր,
Սիրատոգոյն ու մենաւոր
Աչքերէս ալ վաղէր սիրոյ շաղն ու ցօղ:

* * *

Սիրածներըս հատիկ հատիկ դարձան հող,
Եւ հոս մենիկ զերդ տարագիր
Հորիզոնը դիտեմ՝ անծիր,
Գուցէ մին կա՛յ սրտի վէրքերն հասկըցող...:
Իզո՛ր



Ս Գ Ա Ի Ո Ր Մ Ա Յ Ր

Ա. Ա. Վ.

Նոր գարնան հետ նոր ծաղիկներ բուրեցին,
Չե՛խիւռ, ա՛լիք պար բոնեցին խանդավառ,
Բնութիւնը մոռացկոտ է... առանձին
Եւ անժըպիտ մնաց մայրը վշտահար:

Տարին կ'անյնի և աչքերով իմ ազօտ,
Չուր կ'որոնեմ այն դալկահար պատանին,
Ամայութիւն մը կը սառի հոգւոյս մօտ.
Յիշատակներ դիս դէպի վի՛հ կը տանին:

* * *

Անհունին դէմ՝ ցցուած մենիկ նոճիկներ,
— Շիրմի խոշոր մոմեր սեւ սեւ մուխերով,
Վտակն անոնց քով երգելով կը սահէր,
Սիրահարկա՛ջ՝ զոր լսէի՛նք անխռով...:

Չէ՛ն հասնէր հոն կոհակներ մօրնչող,
Եւ ստուերին տեղ ցաւատանջ՝ Պայրլնին,
Հովուուհի մը կը թափառէր սիրաշող.
Իր սրինգին նուագներով երկնային:

Հոն ամեն բան Արեւելքն էր սիրաբոյր,
Մեղկ զիշերներ ու լուռ ցաւեր սիրանոյշ,

Ուր հալէի՛ն սիրտն՝ հառաչող, աստղը՝ լուս,
Ու ժամերը երազաւէտ ու քնքոյշ...:

•

Շուտ խամրեցան ծաղիկ օրեր աշնան մօտ,
Նոր գարունը մեզ չի բերա՛ւ անոնցմէ,
Հիմակ այրող ցաւ մ՛աչքերէս իմ անձկոտ.
Արտասուքի հուսկ կաթիլներ կը քամէ...:


Կը մտածեմ, շատեր կ'երգեն գարնան հետ,
Թիթեռնիկներ կ'ըմպեն ծաղկի ցօղն ու շող,
Հազիւ ապրած՝ գուցէ կ'ըլլամ՝ վաղն անհետ,
Եւ ինծի հետ իմ երազներն ալ մաշող...:

* *

Նոր գարնան հետ նոր ծաղիկներ բուրեցին,
Զեփիւտ, ալիք պա՛ր բոնեցին խանդավառ,
Բնութիւնը մոռացկոտ է... Առանձին
Եւ անժպիտ մնաց մայրը վշտահար:

Տարին կ'անցնի և աչքերով իմ աղօտ
Զուր կ'որոնեմ՝ քեզ դալկահար պատանի.
Քեզ կը յիշեմ արտասուեալին ու անձկոտ,
Երբ այրող ցաւը զիս վհին կը տանի...:

Իզմիր



Ծ Ա Ղ Կ Ա Ն Ո Յ Ի Ե Ո Ճ Ի Ն



Ապակեպատ ծաղկանոցին մէջ լեցուն
Թաղարները շարուած էին քովէ քով,
Շուշան ու վարդ կը ծաղկէին գո՛նգոյն,
Թէև աշունն հասած էր ցուրտ երկինքով:

Արևն հազիւ ամպերէն վար կը մաղուէր,
Քամին կուլար իր տխրահունչ մեղեդին
Կը մօտենար ձմեռը ցուրտ, ալեհեր,
Ծաղկանց հոգին տանելու մութ անդունդին:

Այլ այդ սիրուն արուեստական գարնան մէջ
Կը ժպտէի՛ն վարդ, մանիշակ իրարու,
Կը հեզնէին սարսուռներով բիւր, անվերջ,
Գուրսը հեծող փոթորի՛կը ահարկու:

Այդ ծիծաղկոտ ծաղիկներուն զրացի,
Անկիւնի մը մենութեան մէջ անընկեր,
Դալկատերև նոճեատունկ մը դիտեցի,
Լերան ծնունդ, զոր բազղը հոգ կը նետէր:

Նկուն զիրքով, անշարժ ու լուս, մահուան պէս,
Ճակատն հակած ծաղկանոցի փեղկերուն,
Օտար հոյի տրտում գաւա՛ղն էր կարծես,
Որ քշուած էր հոսանքէ մը մուրրուն:

*

« Ինչո՞ւ տխուր ես » հարցուցի յուզմունքով,
Հոս տաքուկ օ՛դ կայ... ծաղիկներ քեզի մօտ,
Փոթորիկէն հեռու կեանքը անվրդով
Կ'անցնի բոյրի, սիրոյ կեանք մը անձկարօտ:

Նոճին շարժեց իր տերևներ դալկահար,
Հասակէս ցո՛ւնց մը սահեցաւ դառնագին,
Կարծեցի թէ լո՛իկ թէև անբարբառ,
Այլ մրմունջ մը կուգար մօտէն թաղարին:

— « Զիս դարձուցէք հին լեռներուն ամեհի,
« Տարէք ասեղ մրրիկներուն ցուրտ աշնան,
« Այս թաղարի կեանքը կե՛ղծ է, ամայի՛,
« Տերևներըս փոթորկին տակ թող չորնան:

Թող ունենամ գարնան՝ անձրև, ձմրան՝ ձիւն,
Ա՛խ, չե՛մ սիրեր գարուններ որ յաւիտեան
Զիպ՛տի խամրին...: Զիս տարէք հին լեռներուն,
Ուր նոճիներ չունին փականք ու պատեան...:

Կը սիրեմ հոն խաղալ հետը փոթորկին,
Եւկիւղ չի՛ տար հոն ամպին շանթն ու կայծակ,
Հեգնտա զիտեմ պիտի հեղեղն զայրագին,
Որ կը սուրա՛յ դէպի անդունդն անյատակ...:

* *

Քանի մը օր անցաւ, գացի հոն նորէն,
Ծաղիկները բացուել էին ժպտագին,
... Մենիկ անկիւնն զրկուած իր թաղարէն,
Կեղծ զարուհին մէջ խամրած էր հէք նոճին...:
Իզմիր



16

Հ Ո Վ Ի Ի Ը

(Յուլիս 21 ի յիւսուսակիւն)

Օրորակիս մօտը նստած,
Մայրս անուշ երգելով
Ինձ շա՛ս անուտ հո՛ւն էր արած,
Խաչանուտն կնկելով:

Այսպէ՛ս երգեց մերթ Մասիսի մի որդին,
Հրեշտակային իր մանկութեանն յիշատակ,
Երբ անծանօթ էր իրեն վիշտն անյատակ,
Ու մօր համբոյրն էր իտէ՛սլը սրտին:

« Ա՛յն ու խաչը քեզ պահապան, քեզ ընկեր, »
Մայրը կ'երգէր մանկան զուարթ ու ժպտուն,
Կեանքը երա՛զ մ'էր այն անուշ օրերուն,
Երբ գորովի աչքն օրրանին կը հսկէր:

* *

Օրրոցն անցաւ, զարոցին մէջ նոյն մանուկ
Կովկասի վէս բարձունքներուն ստորեւ,
Գնաց վայլել արշալոյսին իր արև
Ազատ բաղդին հարուածներէ յեղյեղուկ:

Մայրը չիկա՛ր, այլ ծերունի, ալեւոր
Ներսէ՛սն հոն էր, Աշտարակի մեծ որդին,
Որ խա՛չ զրոշմեց մանկան ամբիժ ճակատին,
Ու ցոյց տուաւ անոր ճամբան հեռաւոր:

* *

— « Քալէ՛ » գոռաց, « կեանքի փշոտ ճանապարհ,
Ա՛յն ու խաչը քեզ պահապան և ընկեր,
Դիմագրաւէ՛ վտանգներու անվեհեր
Սուրա՛ ընդմիշտ մի եռանդով բոցավառ »:

Լոեցին մօրն ու Ներսէսին երգն ու ձայն,
Այլ յիշատակն անոնց մնա՛ց իր սրտում,
Որ կը գոռար, կ'արձագանգէր անդադրում,
Ա՛յն ու խաչը քեզ պահապա՛ն յաւիտեան...:

« Քալէ՛... » և նա իր յուսալից օրերուն՝
Քալեց մենիկ փարած խաչին լուսաւոր,
Սիրտն ամայի, էութիւնը վիրաւոր,
Այլ անյողզող սլացքին մէջ դէ՛պ անհուն...:

Կը տեսնեմ զայն սևերու մէջ ՚ի Սիօն,
Ուր կը դիտէր Գեթսեմանին, Գողգոթան,
Ա՛յն ու խաչը իրեն ընկեր պահապան,
Արտասուելով կը դիտէր փակ հորիզոն:

Կը տեսնեմ զայն ծովափին մօտ զերդ Հովիւ,
Օր մալ իրեն դարձած աչերն Հայութեան,
— « Լուսաւորչին Աթո՛ոն, բսին, քեզ արժան », —
Այլ բաղդն ուրիշ կո՛ղմ թաւալեց իր անիւ:

* *

Արտասուլթոր յառած Կովկաս մի վայրկեան,
Կը դիտէ հոն լեզու, կրօն, ոգեվար,
« Տէ՛ր, կը գոռայ յուզուած շեշտով վշտահար,
Ո՛ւր Ա՛յն ու խաչը պահապան Հայութեան... »:

Ու կը նայի ու կը յուսայ դեռ անձայն,
Գառնուկները հատիկ հատիկ կը մեկնին,
Նա կը կրկնէ դեռ եռանդովն անմեկին,
« Ա՛յն ու խաչը Ձեզ պահապա՛ն յաւիտեան... »:
Իզմիր

ԴԱՄՐԱՆԱԿԱՆ

(Մասթէոս Մամուրեանի դագաղին առջև)

Սգակիր հանդիսականք.

Այս սևապատ դագաղը, եկեղեցիի խնկաբոյր այլ տխրամած մթնոլորտը, ու վերջապէս անմոռնչ տխրութիւնը, որ հազիւ երբեմն հեծկլտանքներով, այլ միշտ առատահոս ու անդադրում արցունքներով երևան կուգայ, դեռ չե՛մ ուզեր, չեմ կրնար հաւատալ անոնց և ոչ մէկին, որոնք երազային աշխարհի մի տարօրինակ զառանցանքը լինիլ կը թուին, ու կը կարծեմ թէ հաւաքուած ենք ամենքս վերստին Ս. Հովիւսիմեանի սրահը, ալևոր գրագէտին, բաղմարդիւն ուսուցչին, իր ցեղին համար տառապող, քրտնող ու տքնող մշակին մի նոր յորելեանը, մի նոր աստուածացումը տօնելու բովանդակ հայութեան ծափերուն միջև: Օ՛հ, բարեկամի՞դ, մի անծանօթ զաւառի հեռաւոր զաւկի՞ն պիտի վիճակի եղեր ողջերթը հեծկլտալ սգաւոր դագաղիդ, ի՛մս Մամուրեան...:

Տարի մը ու վշտահար աշնան օրեր նոր անցան այն անմահութեան անմոռնալի օրէն ի վեր: Ակնթարթի տեւողութիւն մը հազի՛ւ կը թուի այն, երբ յիսուն տարիներու մաշեցնող, սպառող աշխատութիւններուն տակ դեռ անխորշոմ ու անկնճիռ իր ճակատին անմահութեան համեստ դափնին կը բոլորէինք, ու մենք ծերուկ դարուն ազագուն զաւակները, հաւաքուած իր շուրջը իր որոտագին ձայնին կ'ունկնդրէինք, որ մարգարէի շեշտերով, անցեալի վրայ սաւառնելէ ետք պահիկ մը կը պատուէր ապագայի անթափանց քօղը, և մեր աչքերուն անտես, բարձրութեան, մեծութեան և ճշմարտութեան հեռաւոր ու փշալից ուղիները մատնանիշ կ'ընէր ու կարծես զգալով իր մօտակայ լուսութիւնը, կտա՛կը կ'ընէր մեզի, իր կեանքն ու աշխատասիրութիւնը, իր յարատեւ, աննկուն և անընկճելի նկարագիրը կտա՛կ կը թողուր մեզի: Իր ձայնը միւս աշխարհի անդունդներէ՛ն կը հնչէր կարծես: Եւ արդէն քանի մը տարիներէ ի վեր այս աշխարհէն չէ՛ր,

հիւրի մը պէս, կամ յետամնաց անցորդի մը պէս կը շրջէր, ու մենք կը կարծէինք թէ շատ տարիներ ունի տակաւին անցընելու մեղի հետ:

Պատրանքը աւելի սոսկալի պիտի լինի զինքը սիրողներուն համար, որոնք այսօր զինքը հողուն պիտի յանձնեն, ու վաղը, միւս օր, գալ տարի դեռ պիտի կարծեն տեսնել զինքը, զլիակոր, փաթթուած հաստ վերարկուին մէջ, պիտի կարծեն լսել իր ձայնը, մտերմական ու սրամիտ ասուլիսներ շողացնելով, պիտի մտածեն հանդիպիլ իր գրչին, միշտ երիտասարդ, ուժեղ, բոցեղ ու հրալից և այն ամենը, ափսո՛ս, ցաւագին պատրանքներ պիտի լինին միայն:

Ըսի թէ քանի տարիներէ ի վեր յետամնաց հիւրի մը պէս կը շրջէր մեզի հետ: Մի՛ գարմանաք ըսածիս, սգակիր հանդիսականք, զոնէ տարօրինակ պիտի չի թուի ըսածս ամեն անոնց որ տեսան տարաբաղդ ծերունին իր վաղամեռիկ Վահէյն գերեզմանին վրայ, զաւակին դիակը գրկած, ու լսեցին իր ըսածները հոն, « երթաս բարով, Վահէ՛ս, շուտով պիտի գամ քեզի միանալ »: Իր խօսքը կը պահէ այսօր Մամուրեան, կ'երթայ հոն գրկել իր սիրասուն Վահէն: Այն ատեն իսկ կ'երթար, եթէ չ'ունենա՛ր հոս երկրորդ սրտի հատոր մը, կամ մանաւանդ եթէ զինքը հոս մնալու ստիպող չ'ունենար այն տարաբաղդ ու վշտահար հրեշտակը, խեղճ տիկին Մամուրեանը, որ երեսուն և հինգ տարի ամբողջ պահապան հողին եղած էր և որուն վիշտը այս բոպէին ամենքը, ամենքը կը լացնէ իրեն հետ: Ու մահը արհամարհելու համար, ծիծաղելու համար վրան, թոյլ տուէք որ այս մէկ երկու բառով ակնարկ մը նետեմ այն աստուածային, գերմարդկային սիրոյն վրայ, որով սփոփուեցաւ, որով զօրացաւ ու շողաց բովանդակ կեանքը Մամուրեան ընտանիքին: Հին ամբիժ դարերու արժանի հովուներգութիւն մըն էր այն, առանց անոր՝ Մամուրեան զօրեղ երզիժաբան մը, ահռելի հեզնող մը պիտի ըլլար գուցէ: Այդ պաշտելի սէրը յղկեց քննադատի տաղանդը, որ պահ մը կ'ահաբեկէր ամբողջ իր հակառակորդներու բանակը: Մարդկային սխալական ու վաղանցուկ յուզումներու մէջ այդ ձայնը կը բարձրացնէր զՄամուրեան երկրաքարշ իրականութիւններէ վեր, ու իրեն կուտար իրաւամբ այն բարձրագոյն տեղը, որուն ակնդէտ, գեռ տարի մը առաջ ծափահարեց ամբողջ հայութիւնը: Մահը, որ այսօր կը կարծէ բաժնել այդ երկու էակ-

ները, կը վրիպի իր հարուածին մէջ: Տիկին Մամուրեան կը մեկնէր այսօր անշուշտ ինք ալ, եթէ տակաւին իր հրեշտակի ու մօր կրկին խնամքներուն պէտք ունեցող զաւակ մը չունենար, վշտահար Հըանդը, որ իր հօր վերջին կամքով, ինքզինք զբականութեան, ժողովուրդին համար ասլրելու վշալից ուղիին ծայրը կը գտնէ այսօր:

Անցողակի յոբելեանը յիշեցի: Ատիկա մեծ մարդուն կեանքին վերջին ցոլքը եղաւ: Ասկէ վերջ Մամուրեանի ապրիլը մեկնելու մօտ ուղեւորի մը հրաժեշտի պտոյտին նմանեցաւ, իր բարեկամներուն քով: Անկէ վերջը ամփոփուեցաւ Մամուրեան, ու եթէ ազգային թշուառութիւններ շարունակ արցունքի կաթիլ մը կը կախէին իր յաւէտ տամուկ ու խոնաւ արտեւանունքէն, ինք օրէ օր աւելի կը վերանար աշխարհէն ու կը մօտենար Աստուծոյ և յաւիտենական ճշմարտութեանց քով կը տաքցնէր իր ցաւագին ու վշտահար հոգին: Վահէն օղակ մը կ'ըլլար, Անհուն Աստուծոյ և մեծ հոգիի մը միջև: Իր վերջին գործը կրօնի և հաւատքի անուշուշտութիւններով զեղուն թարգմանութիւն մը կ'ըլլար, զոր զողոզով այլ տակաւին ամուր գրչով, կը նուիրէր իր քառասուն տարիներու անմոռանալի բարեկամին, իր իսկ բառերով « գահագուրկ հայրապետին », Մելքիսեղեկ Սրբազանին, ու կ'ըսէր անոր, թէ « Սրբազան, ձեր դէմքը տեսնելով, ձեր սիրտը ճանչնալով, զիս մօտեցած կ'զգամ Աստուծոյ: » Վշտահար Սրբազանը հօս, անշունչ դիակիդ առջեւ է ահաւասիկ, գլխիկոր ու արտասուածութոր, պահ մը վե՛ր առ գլուխդ և ըսէ՛ մեզի, թէ արդեօք անդրաշխարհի անծանօթ ափունքին մէջ հանդիպեցա՞ր Աստուծոյ, ո՞ Մամուրեան: Մահէն քանի մը օր առաջ իր հին պայքարներուն ընկերակից մտերիմը, Չիլինկիրեան, երբ կը մօտենար հիւանդի անկողնին, « Քեզ տեսնելով՝ աչքերս վե՛ր կը նային », կ'ըսէր Մամուրեան: Այդ վե՛րը, մեզի նորերուս համար այնքան մշտապատ, կը բացուէր Մամուրեանի աչքին, և հոն իր հրեշտակ Վահէն կ'ընդնշմարէր, լուսափետու՛ր իբրև հրեշտակ:

Մահն ալ վսե՛մ եղաւ Մամուրեանին: Մինչև վերջին օրը պահեց իր կարողութիւնները, ճանչցաւ իր սիրելիները մէկիկ մէկիկ, ամենուն մէյմէկ խօսք ըսաւ հրաժեշտի և օրհնութեան: Կրօնքի մխրթարութիւնը վայելելէ յետոյ, վերջին րոպէին, երիցս իր հրեշտակը կանչեց ու Մարիամ եկաւ իր

ահուելի պարտականութիւնը կատարել, փակելով թևարեկ արծուին աչքերը: Հանգիստ քնացաւ, անմահութեան արշալոյսին մէջ արթննալու համար կարծես, թէ և վիշտը արծանի՛ կը փոխարկէր հոս՝ իր ընկերուհին, զաւակը, ու վշտահար հարսը որ երկու տարուան մէջ այս երկրորդ անգամ կ'արտասուէ ցաւագին:

Ինչ որ մխրթարանք մըն է իրեններուն, և ինչ որ իրաւամբ « գահագուրկի մխրթարութիւն » կը կոչէր Չիլինկիրեան, սա է թէ Մամուրեանի տեղը պարա՛պ կը մնայ: Անցնող դարը նախանձո՛տ էր: Իր մեծագոյն զաւակները առաւ ու հե՛տը տարաւ: Մենք, հինին ազգոուն զաւակները, պէտք ունէինք տակաւին բարձր, իտէալական ներշնչումներու: Ո՛վ պիտի լինի մեզի Մենտոր և ուղեցոյց:

Բաղդին ահուելի մէկ կատակովը իր մեկնելէն ետք ողջ կը մնայ Մամուրեանի ծերուկ, հարիւրամենի մայրը: Այս է եղե՛ր ճակատագիրը: Այդ խեղճ կիներ զեռ զաւակի մահուան համար արցունք ալ պիտի թափէ եղեր մարած աչքերէն:

Կը շուարիմ և ասկէ վերջ կ'զգամ, թէ ըսելիքներս անկապ հառաչներով լեցուն խօսքեր պիտի ըլլան: Երթաս բարով Մամուրեան: Վերջին օրերուդ երջանի՛կ եղար զոնէ սիրելիներուդ բազկայ մէջ, ու եթէ հիմա կրնաս զիտել վերէն մեզ, եթէ կրնաս տեսնել մեր անհուն վիշտը, ըսէ՛ քու բարեկամ Աստուծոյդ, որ մեզի՛ ալ տայ հաւատքի սպեղանին: Դու պարտքդ կատարեցի՛ր, զբականութեան ալևո՛ր մշակ, բայց զոնէ գրի՛չդ, անմահ գրիչդ հոս թողէ՛ր, ո՛ Մամուրեան:

Իգլիս 5 Յունուար 1901



ԴԱԼԿԱՅԱՐ ԴԵՄՔԵՐ



Այն յիշատակը իր հանդարտիկ մենութեանը մէջ թող մնայ: Անոր քով կը վախճամ երթալու թէ և հոն ոչ մեռած սրտի մը դամբանը կայ, ոչ ալ սիրուած երգի մը մարելու մօտ սօսաւիւնը կը հեծկլտայ: Անոր քով երթալուս գիտեմ թէ կեանքը աւելի արագ պիտի ապրիմ: Ճամբան կորսնցուցած

վտակի մը նմանող անցեալիս պիտի հանդիպիմ. — վտակ՝ որ ձիւնապատ, ալեւոր լեռներու բարձունքներէն սկիզբ առաւ կարկաչահոս ու մելաձայն, դարուվար, ոլոր մոլոր ուղիներ գծեց, անցաւ, վտակ, մարգերու մէջ պահուած կա՛մ անդուհդէ մը զահավէժ, վտակ, իր մենութեան տխուր, զուարթ ճիշեւրո՛վը երջանիկ, ու վտակ, այրող աւազներու մէջ շոգիացած, թափառիկ ամպերու ընկե՛ր անկայուն:

Այն յիշատակը թող մնայ իր հանգարտիկ մենութեանը մէջ: Անոր քով երթալուս՝ կեանքը աւելի արագ պիտի ապրիմ: Վայրկեանէ վայրկեան, բեւեռի սառ շունչը և այրեցեալ կլիմաներու կրակը իրարու պիտի խառնուին կուրծքիս տակ: Քանի մը բոպէ իսկ հին օրերով ապրիլը, սուր չարչարանք մըն է հողիս:

* * *

Գիւղին կիներէն շատերը աղւոր էին. կ'ըսէի բարեկամիս, երկու երեք զաւաթով ճակատս կրակ դարձնելէ ետքը, բայց Վարդերեսնց Տիւրիկը մէջերնին մէկ հատիկ էր: Վեց եօթը տարու բղէզներ, դպրոց գացած ատեննիս, ցուցամատնիս շըրթունքնուս վրայ, գաղտուկ մը կը նայէինք իրեն, երբ հոսով մը կ'անցնէր քովերնէս, երեսին քօղքը կէս մը վար քաշած, Աղջիկնութեան ատենէն աղւորութիւնը առածի կարգ անցեր էր: Կարգուիլը չի փոխեց իր հին համբաւը: Գիւղին աղւոր Տիւրիկը մնաց, թէ հարուստ ու թէ գեղեցիկ: Լուսնի պէս աղւոր զաւակներ ունէր, ու երբ անոնց գլուխը անցած կ'երթար ափիօն հաւքելու իր խաշխաշի արտերէն, քօղքը երեսին վրայ կիսափակ, մենք դպրոցի բղէզներ, մեր հայրերուն օրինակին հետեւելով, կը կենայինք ետեւէն նայելու: Մեղմէն աւելի չարերը իրենց մայրերէն խրատուելով քար կը նետէին անոր: Ան ոչ ետին կը դռնար ու ոչ ալ կը թողուր զաւակներուն մեղի հետ կոխ ընելու: Հպարտ գեղեցիկն էր: Ուրիշ կիներ՝ բամբասանքը կ'ընէին, — երեսը շատ բաց կը թողու եղեր, հագած լաթին ապրանքը խաս չէ եղեր, մագերը աղջիկի պէս կը հիւսէ եղեր, վերջապէս իրենց պզտիկ խելքերուն հասածին չափ կը բամբասէին: Տիւրիկ պատասխան անգամ չէր տար:

Կիրակիները կուգար եկեղեցի և իրեն չափ գեղեցիկ Աստուածածնի պատկերին առջև ծունկ դրած իր գիւղացի մօր աղօթքը կ'ըսէր մտքէն: Եկեղեցիին սուրբի պատկերներուն

մէջ, մեր գիւղական նկարիչները ամենէն աւելի աշխատած են Ս. Կոյսի նկարին վրայ: Գիւղերը ամեն մատուռի մէջ կը հանդիպիս Հայր Աստուծոյ մը պատկերին, ծերուկ, զառամած, քիչ մը խուլի կերպարանքով, Յիսուսին կը հանդիպիս իր կեանքին բոլոր շրջաններուն, ժպտուն մանկութենէն, գլխահակ մկրտութենէն, ահաւոր խաչելութենէն մինչև փառաւոր յարութիւնը: Աստուածածնին սակայն միշտ գեղեցիկ է, իր ցաւերուն մէջ սրտին սուր մը մխուած գեղեցիկն է այն, իր երջանկութեանը մէջ, զաւակին փարած գեղեցիկն է, ու տաք սիրոյ մը պակասը, ծերուկ Հայր Յովսէփի մը ներկայութիւնը իր մնայուն կուսութեան զաղափարով միայն կրնան գոյութեան իրաւունք ունենալ:

Տիւրիկ՝ ենթարիներ հագած այդ գիւղացի Աստուածածնի պատկերին կ'երթար ըսելու իր աղօթքները: Ամուսինը հասարակ, սովորական գիւղացի մըն էր: Տուներնին տիկնոջ անուսով կը ճանչցուէր:

Իր մեծ զաւակին հետ մէկտեղ, երեք տարուան դասակցութենէ վերջ, մէկ օր ելանք պանդխտութեան: Ես՝ դպրոցէ դպրոց շրջելու, ուր որ կանչէին դիս պարտականութիւնն ու բաղրը: Տիւրիկին տղան մեծ քաղաքներու մէջ գնաց բաղդ փնտռելու, օտարի այն կեանքով, որ սիրուած դէմքերու կարօտով կը հալի, կը մաշի ինքնիրէն, անարև մնացած բոյսերու նման:

* * *

Իզմիր առաջին անգամ եկած տարիս հիւանդանոցին մէջ հանդիպեցայ պանդխտութեան առաջին ընկերիս: Անցեալէն խոյս տուող մենաւոր օրերուս՝ ոչ լսած էի մեր գիւղին վրայ ոչ ալ առիթ ունեցած էի յիշելու Տիւրիկին տղան:

Հովը՝ քով քովի իրարու հետ խաղցող երկու ամպի բեկորներ կը քշէ կը տանի, կը հեռացնէ իրարմէ: Անոնցմէ մէկը լեռներու վրայէն կը փախչի բամպակի պէս գզուելով, մերթ որոտալով, մերթ արտասուելով, միւսը լուռ խաղաղութեամբ կ'երթայ լճակներու վերելը թափառիլ, սիրոյ երգերու մեղանուշ հծծիւնը ծալելով իր մէջ: Այդ երկուքը օր մը կը հանդիպին իրարու նոյն ովկիանին մէջ: Մէկը գուցէ քիչ մը ուշ, բայց վերջապէս երկուքը պիտի հանդիպին իրարու:

Ինձմէ փախչող անցեալիս վայրկենական մէկ գեղին ցոլքը

եղաւ հիւանդանոցը մինաւոր պառկած այդ տղան: Ան ինծի հին օրեր բերաւ ետ, ու ահոելի տազնապ մը անցուցի այն մինաւոր գիշերը, երբ լսեցի թէ փոխանակ իր երկիրը գառնալու, Աստուածածնի առջև լացող մօրը այդ խեղճ տղան, տրտում ու անբարեկամ մեկներ էր աշխարհէն: Մէկ մը մտածեցի թէ գուցէ պարտականութիւնը իմս էր մօրը իմացնելու տղուն մահը բայց վերջը խորհեցայ թէ մայրը պիտի արտասուէր, ու կնոջ մը լալուն որևէ կերպով պատճառ եզոզը ոճրագործ մը սեպած էի միշտ: Ձի գրեցի բան մը ու մոռցայ, ինչպէս մոռցուած էր այն հողակոյտը, որուն տակ կը հանգչէր իմ պանդխտութեան առաջին ընկերս, հեռաւոր լեռներու հատած մէկ զաւակը:

* * *

Ձի գրելս քաւեցի՝ դառնապէս:

Աղխատեալնաւի կանաչ սեղանին շուրջ կը հաւաքուէինք այն տարին, ժողովուրդի գթութեան իբր միջնորդ, տարաբաղձներու հետզհետէ եկող անցող խումբի մը մեր կրցածին չափ օգտակար ըլլալու համար:

Եկող գացողներէն շատերը հին ծանօթներ էին ինծի, ես իրենց անծանօթ:

Շատերուն անունը մանկութենէս լսած, վիզերնին կախ ու տրտմազին, կը տեսնէի որ գերագոյն ճիգով մը հազիւ կը զսպէին ինքզինքնին, ապրուստ մը բերող զործ մը խնդրեալու համար: Որչափ ալ առատաձեռն իզմիրցին՝ սակայն որոշ գիտեմ թէ շատ քիչ էր ընձեռուած օգնութիւնը, իրարու վրայ դիպող տառապանքին հետը բաղդատելով, ու շատ անգամ, ստիպուած, բացասական պատասխան մը կուտար դիմողին ընկերութիւնը:

Իրիկուն մը ժամանակը անցած էր ու ժողովը ցրուելու մօտ, երբ սևերու մէջ պլլուած, ալեւոր մազերով կին մը ներս մտաւ: Գրամնիս հատած էր արդէն և ոչի որոշումը առաջուց տուած, երբ ձայնով մը որ ոսկորներուս մինչև ծուծը զող հանեց,

« Ես փարա չիմ ուզի, ըսաւ, ընծի ճար մը էրէք, զաւակս գտնամ, էնուր համար ոտքով իմ գեղէս ճամբայ ինկեր կը փնտռեմ: Լսեցի որ հոս է եղեր: Ընծի իմ զաւակս գտէք: Այ մարդ մարդասանք չունիմ՝ աշխրբի վրայ: Էկայ որ զաւակս գտնիմ, տանիմ իր պապին սնախը վառէ »:

Տիւրի կն էր: Մեր գեղին աղւոր ու հարուստ կինը: Երեսին մորթը ճամբայի արևէն այրած, այդ կինը ոտքով քալելով յառևանհինգ օրուան ճամբայ կտրեր էր, իր մէկ հատիկ սղջ մնացած զաւակը գտնելու համար:

Քրտինք մը ուղղեց ճակատս, երբ հիւանդանոցի մէջ մոմի պէս դեղին ցոլքերով այրող ու հատնող տղան յիշեցի: Ժամանակը ու վիշտը ալևորած, դառամած ու ընկճած էին այդ մայրերու գեղեցկագոյնը, սակայն հիմակ ալ հոգիով աղւոր Տիւրի կն էր ան:

Աստուածածնի պատկերին հին գոյզը, որուն սրտէն քիչ ատենէն զաւակին մահուանը սուրն ալ պիտի անցնէր:

« Մէկալ տղաքս թաղեցի, աս մէկ հատիկ տղաս մնաց, Ձեր իզմիրն է եղեր: Ասչափ ատեն է գիր մը չի գրեց: Խեղճ զաւակս: Ասի յիսունը հինգ օր է գեղէն ելլալս: Ես փարա չիմ ուզեր ձրգմէն: Իմ զաւակս գտէք »:...

* * *

Գուրս ելայ սրահէն առանց բան մը ըսելու: Այ չի վերադարձայ հոն: Այդ դժբաղդ մօր ստուերէն փախչիլ կ'ուզէի: Ան՝ մտածումներուս վրդով ու խոճվք կուտար շարունակ: Մեռելոցի օր մը գերեզմանատունը հանդիպեցայ իրեն, նորէն: Հետիոտն գիւղէն մինչև հոն գալը չէ՛ր յոգնեցուցած զինքը, բայց զաւակին, վերջին մէկ հատիկ զաւակին մահը մէջքը կտարած էր իրեն: Պանդուխտի գերեզմաններուն մէկէն միւսը կը շրջէր, իր զաւակինը կը փնտռէր, առանց գտնելու: Ու վերջը շապէս յոգնած, անյայտ, անանուն շիրմի մը վրայ ծոկով կը մրմնջէր ինքնիրեն.

« Ձա՛ւակս, նամակ, թուղթ չի գրեցիք, աղէ՛կ: Բարև մը չի խաւրեցիր այնչափ տարի: Իմ քովս չի մեռար որ չի լա՛մ Ան ալ աղէկ: Ա՛խ, տեղդ գտնայի, քու վրա՛դ լայի »:...

* * *

Ձեմ գիտեր թէ հիմա ուր է խեղճ կինը: Գուցէ կը քալէ: աղւոր աչքերը պղտոր, մազերը ցիրուցան, սևերու մէջ պլլուած, կը քալէ կեանքի մթութեան մէջէն: Եւ եթէ օր մը յոգնած, ընկճի զողորմուն, իր կարգին, անյայտ գերեզման մը պիտի ունենայ ինք ալ, զոր ոչ մին պիտի գայ փնտռել: Գիւղին Աստուածածինը, իր գեղեցկութեան մէջ, նորէն մինակ, անզոյգ է հիմակ:

Իզմիր

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

(Մահուանը առթիւ)

Սիրելի Հրանդ,

Դամբանականիս ամփոփումը յանձնարարեցիր ինձ ընել: Բառ մը չեմ յիշեր խօսածներէս. գոնէ պիտի չի կրնամ դասակարգել զանոնք. հոմերական երգի մը վերջին հատուածն էր երէկուան հանդէսը, ցուրտ մահուան չէ՛, անմահութեան և աստուածացման հանդէ՛սն էր այն:

Արտասանած բառերուս վերյուշումին համար պէտք է աչքի առջև ունենամ նորէն իր դազադը, որուն մէջ կը հանգչէր մեղրամոմի գունատութեամբ ծիւրած մարմինը, պէտք է նորէն զգամ իր մարած նայուածքին հատցնող տառապանքը ու ամենէն աւելի՛ տեսնեմ՝ այն փառայեղ ամբոխը, որ ծնրադրեց մեծ մարդու մը երկրային մնացորդներուն առջև ու լացա՛ւ դառնագին:

Երէկը անցած է շատոնց, ու գիշերի այս տրտմագին լուութեան մէջ անկիւնս քաշուած կը մտածեմ, հազուագիւտ կեանքերու պէս անզուգական մահե՛ր ալ կան. կը մտածեմ թէ երէկուանն ալ անոնցմէ մէկն էր:

Անոր պիտի չի հանդիպի՛մ այլևս ու նոյն իսկ հանդիպէի ալ եթէ այս պահուս, բան մը պիտի չի տեսնէի՛, այնչափ աղօտացան աչքերս:

« Գուցէ ասիկա իր վերջին փառքը պիտի ըլլայ, վիշտերով լեցուն փա՛ռք մը », կը գրէի Արեւելիին՝ հիւանդանոցի Յոբելեանին առթիւ: Այնպէ՛ս ալ եղաւ: Երեկուան փառքը վիշտ չունէ՛ր իրեն հետ: Վերջին օրերու լքումին վարձատրութի՛ւնն էր, իր մենաւոր ու արտասուագին բոպէներուն փոխարինութի՛ւնն էր երեկը:

« Անոքիկ եմ ես և այրի

« Եւ իմ օրս է տարածամեալ,

« Ի Գերեզմա՛ն գլի, հակի,

Հոգիս թաւալ...: »

Եւ իրապէս այրիացած ու անոքիկ, լքուած իր մեծ բարեկամներէն, որոնք զինքը կանխեցին ղէպի անդրաշխարհի բար-

ձունքը, հիւրի մը պէս, յետամնաց անցորդի մը շուար մուրը նայուածքովը ապրեցաւ վերջին քանի մը տարիները:

Անհետացող սերունդի մը վերջապա՛հն էր կարծես: Յիշողութիւնը՝ որչափ ալ հատցնող, հոգիիս առջև կը պարզէ հիմա իր անցեալը ամբողջ: Ներսէս Աշտարակեցիին սա՛նն էր եղած: Ուրիշ երկինքի մը գաւակ, մնած տարբեր զեփիւններով, մեր հանրային կեանքին մէջ կ'երևնայ նախ իբր տեսուչ Երուսաղեմի ժառանգաւորացին և իբր խմբագիր Սիօն կրօնաթերթին: Մուրատեանյ սև վեղարը կ'անէր հոն, հին կողմնիկ Սիօնին կը փոխարկուէր ու քանի մը երկար տարիներ կ'աշխատէր անշուշտ և յուզումնալից, շատ մօտէն կը սեւեռէր Գողգոթային, է՛հ, ուրիշ ափունքի՛ մը վերապահուած էին իր Գեթսեմանին ու Գողգոթան:

Անկէ վերջը կ'անցնի Իզմիր, տակաւին երիտասարդ ու վառվուռն, տարիներու անձուկ շրջանի մը մէջ մոզական գաւազանով մը կարծես զարնուած կը կանգնին կրթական ու բարեգործական հաստատութիւններ:

Մուրատեանցի անունը կ'արձագանգուէր ամենուրեք և անոր հետ Իզմիրցիին անունները, համբաւները կ'ընթանային մինչև աշխարհի չորս ծայրերը: Ու վայրկեան մը եկաւ, շլացուցիչ, ասպետական հովերով առի վայրկեան մը, երբ հանրութեան քուէն Մուրատեանցը կը կոչէր մեր եկեղեցիին նուիրապետութեան գերագոյն աստիճանին:

Մելքիսեղեկ կաթողիկո՛ս:

Այդ վայրկեանը փառաւոր էր և անմոռանալի: Իր արժանիքին ներքև Շահնուրի, իր մտերիմին սուր գրիչը իբր լծակ, Մուրատեանց բարձրացաւ մինչև անմերձենալին:

Բազդը անանկ որոշած չէ՛ր սակայն: Այդ ընտրութիւնը իր Գողգոթան եղաւ: Այդ ընտրութեան բեկանումը անարկուեղաւ իրեն համար:

Մեծ անկումներու միջոցին մարդ գլխու պտոյտ կ'ունենայ, իր առանցքն ու հաւասարակշռութիւնը կը կորսնցնէ: Նոյնը եղաւ Մուրատեանցին համար ալ, անոր համար պատմութեան անաչառ վճիռներ շուարումի մը պիտի հանդիպին պատասխանատուութեանց ճշտումին ատեն:

Ծանր, տրտմաշուք ու սիրտ ճմլող բան մը ունէր իր մեկուսացումը Գատը Գիւղի իր մենարանը: Աստուած զարկած էր կարծես իրեն:

Անկէ վերջինները զեռ երէկի ղէպքերն էն, սիրելի Հրանդ: Հինգ տարի առաջ Իզմիր կը դառնար նորէն, սակայն տխրութեան ծալքերը ճակտէն չանհետացան երբէք: Իր ձեռքով պսակեց 40 տարուան բարեկամին ճակատը յորեկանի դափնիով, իր ձեռքով պիտի փակէր անոր աչքերը, ինք նախագահեց հիւանդանոցի Յորեկանին, և անիկա իր վերջին փառքը եղաւ:

Չէ՛, իր վերջին փառքը երէկուանն էր, ափսո՛ս որ չէր՝ կրնար զգալ այլ ևս:

Եկեղեցիին գաւիթը ամփոփեցինք իր մարմինը: Անկէ յարմար տեղ մը չէ՛ր կրնար ըլլալ Մուրատեանցին համար: Մամուրեան նախընտրեց իր սիրական զաւկին քովիկը, Սրբազանը՝ պսակուած եկեղեցիին վրայ, իրեն յաւիտենական հանգստավայր՝ անկէ հեռու տեղ պէտք չէ՛ր մնալ յաւիտեան:

Կաթողիկոս չիկրցաւ ըլլալ, բայց հոգիով կիլիկիոյ արժան կաթողիկոս մը ծնաւ, ինչպէս կ'ըսէր ինծի տրտմազին ժպտով:

Ու վերջին երկուշարթին, մարմնական ուժերը սպառելու մօտ՝ քեզի՛ կը հարցնէր ինծի, սիրելի Հրանդ: «Հիւանդութեան պատճառով չիկրցայ պարտքս կատարել, կ'ըսէր հեալով ու դողդոջուն, պէտք էր որ մտերմիս զաւակը ե՛ս առաջնորդէի իր խմբագրի փշալից ասպարէզին մէջ»: «Պիտի ըսէի Հրանդին, աւելցուց իր հին պաշտելի ժպտով, որ մօրը Մարիամին բարեպաշտութիւնը ու Մամուրեանին ալ փիլիսոփայական բարեպաշտութիւնը նշանաբան ընտրէ իրեն...»

Ասոնք իր հոգեվարի խօսքերն են, սիրելի Հրանդ: Իմ պարտքս էր որ ըսէի քեզի:

Սակայն ինծի... ինծի բան մը չ'ըսաւ վերջին անգամ: Նայեցաւ միայն, վերջին օրը կէս օրին, երբ ծոցեցայ համբուրելու իր ձեռքը: Այդ երկու աշխարհներուն միջև թափառող նայուածքը պիտի չի մոռնամ կեանքիս մէջ: Անոր մէջ կարգացի մտերմութեան խուսափող գորովը, որ հետեցեալ իմ կեանքիս, Գատր գիւղէն մինչև Իզմիր, ամբողջ տասը տարիներ անոր մէջ կարդացի կարօտն իր հեռաւոր սիրելիներուն, մաշող կարօտը իր մօր գերեզմանին, որուն քով ամփոփուիլ էր իր սիրական բաղձանքը:

Ալ չե՛մ կրնար զրել: Գրիչը կը դողայ ձեռքիս մէջ: Կարծես թէ կ'զգամ զինքը, իր ստուերը, հոս է, մօտիկս, որ պիտի ժպտի ինձ:

Գիշեր բարի: Յտեսութիւն, Սրբազան...:

Իզմիր 17 Յուլիս 1905

ԳԵՐԵՉՄԱՆԷՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻՆ ԵՐԿՈՒ ՆԱՍԱԿՆԵՐԸ

Ա.

904 Հոկտեմբեր 15 26
Մանիսա

Սիրելիս Որբերեան,

Որոշած ես մշտնջենապէս բանաստեղծ մնալ, որքան քու քերթուածներուդ մէջ — որոնցմէ վերջինը Անտոնեանի այս օրերուն «Օաղիկ»ի մէջ հիանալի էր պարզապէս, — այլ նաև բոլոր յետին մանրամասնութեանց, ոչնչութեանց մէջ իսկ: Տարիներով կարօտցած նամակի մը տեղ ինծի կը զրկես անապատական երգիչի մը, հասկնալի հագներգուի մը հաւանականաբար՝ մէկ պատկերը, ձեռքը քնար մը բռնած, որ առանձին անուած սակայն, հիմակուան կեանքիդ խորհրդանշանն ըլլալ կը լուր ինծի. գիտեմ թէ այդ ֆնարը պիտի ընկերանայ քեզի, ուր որ ալ ըլլաս դուն, Հոմերոսի ծննդավայրէն մինչև անապատներու խորը, մինչև Մենելիքներու թագաւորութեանց սահմանները, որովհետև մայրդ բանաստեղծ ծնած է զքեզ:

Բայց դուն ատեն մը մտերիմ մըն ալ էիր ինծի, թէև այսքան երազամոլ նորէն, ինչո՞ւ հիմա առաջինը այնքան փոխուած ու վերջինը միշտ նոյնը մնացեր է: Ճիպուղիէն մինչև Զարդարեան տո՞ղ մը միայն ու պիտի ներէի՛ր դուն ինծի եթէ նոյնպէս փոխարինէի քեզի:

Գիտնայիր թէ որչափ կարօտով փնտոցի քեզ Իզմիր հասնելէս ետք, և մանաւանդ որչափ պէտքդ զգացի, կարելի չ'պիտի ըլլայ երեւակայել քեզի, թէ ինչ տագնապալի ամիսներ անցան վրայէս մինչև այս օրը ուր կը գտնուի՛մ Մանիսա:

Եղբայրական յարգանքներս Տիկնոջ, և իմ կողմէս քու շրթունքներէդ համբոյրներ փոքրիկ Որբերեանին:

Բարեկամդ
Ռ. Զարդարեան



Բ

R. ZARTARIAN

Oulitza Docteur C. Tchomeko N. 96
Philippopolie (Bulgarie)

1903 Սևտ. 22

Ֆիլիպպե (Պիլիպպե)

Միրելիս Որբերեան,

Անէծքի ծովը՝ անէծքի երկրէն, այիքի մը պէս մեղ դուրս
նետեց ահա այս օտար փոփոխութիւններուն վրայ, ուր կը քաշենք
հայրենիքին սգաւոր բայց վրէժխնդրութեան դրօշակը, և անոր
տակը կը նստինք: Խարբերդէն Իզմիր, Իզմիրէն Պուլկարիա
անդարձ պանդուխտի երկայն ու տխուր հետքով ճամբան, ան-
հատնում, բազմաճիւղ, ոմանք յանգելով աշխարհին մէկ ծայրը,
ոմանք՝ միւս անձանօթ մէկ կէտը, շատեր հեռաւոր Ամերիկան
ու հատ մըն ալ անապատներու ցնորական տարածութիւններ-
րէն անդին՝ Հապէշիստան, ուր կը տնկէ իր վրանը ու կը նստի
երիտասարդ բանաստեղծ մը: Ճակատագրին անիծապարտ
ձեռքը երկինքէն՝ Հայու վիշտն ու ոսկորներն է որ կը ցանէ
ամեն կողմ, որոնցմէ ստիպուած է ահա ներկայ հայ սերուն-
դին երգիչը իր մոայլ ու ցաւազին երգերուն ներշնչումը հա-
ւաքել, և կ'երեւակայեմ հիմա, սիրելի Որբերս, անապատնե-
րու յաւիտենականապէս անսահման հորիզոնները թեւածող
ներշնչմանդ վսեմութիւնը ու պիտի խնդրեմ եղբօր իրաւուն-
քով, որ անկէ արծուի քանի մը թև, քանի մը փետուր փրցը-
նես ու ասդին, մեզի խրկես:

Հոկտ. 13ին լոյս կը բերենք « Ռազմիկ » լրագիրը, որուն
մէկ յայտարարութիւնն ալ ահա քեզի կը խրկեմ՝ այս անգամ՝
Պալքանեան Դաշնակցական շրջանին ձեռնարկութիւնն է թեր-
թը, որուն խմբագրական հոգը ինձի է յանձնուած: Ու ընկեր-
ները կը սիրեն քեզ: Կարօտցեր են երգերդ և որ ամենէն բաղ-
ձալին է, կ'սպասեն որ « Ռազմիկ » ի տեական աշխատակիցն
ըլլաս քու հեռաւոր բոյնէդ, բերելով մեզի հոգ ցրուած հայ
կեանքին եղբայրութիւնը, որմէ մենք ալ մեր կողմէն կարօտով
պիտի խրկենք քեզի: Երգեր, երբ ներշնչումդ յանկարծ, անա-
կընկալ պարագայի մը կուգայ սղծագուրելու զգացումներդ ու

հոգիդ, երբ Հուրը չի՝ պակսիր արդէն քեզի: Երկրին մեր ամե-
նէն աւելի մօտաւորութեան նպաստաւորեալի հանգամանքովը
միշտ աւելի շատ ու թարմ լուրեր պիտի կրնայինք խրկել
« Ռազմիկ » ով:

Կարօտներու փունջ մը խրկելով քեզի, անձկութեամբ
կ'սպասենք քու առաջին գրութեան:

Շատ համբոյրներով քուդ
Ռ. ՉԱՐԴԱՐԵԱՆ



Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ը

Ճիպուդի, 14 Ապրիլ 1919

Միրելիս Զարդարեան,

Երկինք

Սեւ Ծովէն Միջերկրական, Մասիսէն Տորոս, պիտի ազա-
տագրուի Հայաստան: Վերէն կը տեսնես հիմակ վրէժի և ազա-
տութեան դրօշը, ծաւալուն այնչափ սիրած հայրենեացդ
վերեւ: Հայ Բանթէոնին մէջ պիտի կանգնուի արձանդ, որուն
վրան անապատներու բանաստեղծը պիտի գայ զրոշմել երկու-
տող.


« Ինկաւ, շիւմին վայրը մնաց անձանօթ —
« Հայրենիքը եղաւ իրեն գերեզման »...

Կարօտալի համբոյրներով
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ



ԼՁ

Մ Ե Ծ Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը



Օ Ր Ս Գ Ր Է Ս Հ Ա Տ ՈՒ Ա Ծ Ն Ե Ր

1

Վ Ե Ր Յ ի ն Գ Ե Ր մ ա ն ա կ ա ն ք

Ճ ի պ ու ղ ի, 1 Օգոստոս 1914



Ուտուն. ժամը 1: Մնապատներու դամբանային լուծ-
թիւնը կ'ընդհատի յանկարծ խոր ու դողդոջուն,
ահաւոր ու տարածուն ձայնէ մը, որ գետնաշիրիմներու խորէն
կը ծաւալի, վերջին դատաստանին փողին նման: Ընդոստ ան-
կողնէս վար կը նետուիմ ու կ'երթամ դէպի ծովափ: Արշալոյսին
կողմը կարմրած է արդէն: Գէպի արևմուտք, ծովախորշին
կողմը բիւրաւսը լոյսերով շողացող հսկայ մը կը յառաջանայ
մուխ ալիքները ճեղքելով:

Ահաբեկու շոգենաւ մըն է: Քաղաքը կ'արթննայ բոպէի մը
մէջ ու սոմալիները իրենց երկայն սիլուէթներով ծովեզրը կը
դիմեն: Շոգենաւը կը շարունակէ իր ահարկու սուլումը օդին
ալիքները դողացնելով: Գերմանական Քրիսթիան 10-րդ շոգե-
նաւն է, թիւրպինաւոր, ամենավերջին կատարելագործութիւն-
ներով օժտուած:

Նաւապետը կ'իջնէ ցամաք, դեղին մօրուքով, կապոյտ
աչքերով հսկայ մը: Մթնոլորտը ելեքտրականութեամբ լեցուն
է: Հեռագիրները իրարու կը յաջորդեն: Եւրոպա բռնկած է
կամ մօտ այրելու:

Մինչև իրիկուն անորոշ վիճակ: Իրիկունը շոգենաւային
ընկերութեան գործակալը ինծի կուգայ, ձեռքը հեռագիր մը:
Համպուրկէն է, գործակալին շնորհիւ Քրիսթիանի նաւապե-
տին ուղղուած:

« Ամեն գործողութիւն դադրեցուր և շոգեպինդ Մասաւա
գնա: »

Մինչև առտու հեռագիրը վար դնել կ'որոշէ գործակալը:
Գիշերը՝ խաղաղ, այլ ահարկու: Երկինքը անամպ, այլ վայր-
կեանք մէկ ելեքտրական լոյսի հեք մը: Չեմ քնանար:

2 Օգոստոս 1914

Առտուն ժամը 6: Համպուրկ Ամերիքա գծին Ֆրանսացի
գործակալը զիս միասին կ'առնէ Քրիսթիան կը տանի: Նաւա-
պետը կամրջակին վրայ կը քալէ ջղաձիգ և անկանոն քայլե-
րով: Հեռագիրը կ'առնէ, և իբր թէ պողպատէ լախտի հարուած
մը իջած ըլլար գլխուն, աթոռի մը վրայ կ'իջայ կապոյտ աչ-
քերը արցունքով լեցուն, ճակատը կը ձգէ բազուկին վրայ, ու
հոգեվարի հանդիւնին նման երկիցս կը մրմնջէ:

« Տարաբաղդ Գերմանիա, տարաբաղդ Գերմանիա »:

Երկու վայրկեան չի տեւեր ցնցումը, կը կանգնի նորէն,
խողովակէն վար քանի մը հակիրճ հրամաններ կուտայ, ձեռքը
կ'երկարէ սուլիչին չուանին, ու ծովերու Լևիաթանը դողալ
կ'սկսի: Կէս ժամ չի տեւեց, խարխալը վեր առին, ու նաւը
բռնեց անհունին ճամբան, երբ ընկերս ու ես նաւակին մէջ կը
դառնանք ձիպուղի:

Քրիսթիան կը մեկնէր սուրալով երազային ուրուականի
մը նման, ահագին դրօշը ծփացնելով հարաւի խորշակին առջև:
Նաւապետը ինկած է նորէն աթոռին վրայ, դէկը թողած նա-
ւուղիդին, ու ճակատը բազկին վրայ ձգած: Կը դիտեմ դրօշակը
ընդերկար: Անոր ծալքերուն սարսուռները հոգիիս կ'անցնին:
Տարիներէ ի վեր այդ դրօշը իր մթաստուեր մղձաւանջին տակ
պահեց մարդկային կեանքը, իր մահուան չափ սև, անյուսու-
թեան պէս սպիտակ, և արիւնի պէս բոսոր երիզներուն ներքև
կապեց, կաշկանդեց ամեն ազատական խանդավառ խոյանքներ
և տարուէ տարի, օրէ օր աւելի խրոխտ և աւելի ահարկու
դարձաւ: Ուզեց իր ստուերը նետել ամեն ծովերու վրայ, մոռ-
նալով թէ անհունը չի՝ կաշկանդուիր, ամեն հայրենիքներու
վրայ, չի յիշելով թէ անոնք են միակ և իրական անմահները: Ու-
զեց արիւնի շաւիղներու մէջէն քալել և բարձրանալ մինչև
բարձունքը մեր յաւերժական Մասիսին, իր ճամբուն վրայէն
ջնջելով, անհետացնելով ազնիւ ու ազնուական Հայուն տարա-
բաղդ բեկորները:

Օժովափ հասնելուս նայուածքս կը հանդիպի միւս դբօշակին, միւս եռագոյնին, որ մէկ դարէն աւելի է հոմանիշը եղաւ Ազատութեան, Հաւասարութեան և Ազգերու Եղբայրակցութեան: Ան ալ բարձրադիտակ ձողին գազաթը կը ծփայ եւ կը ծաւալի յոյսի և սիրոյ սրբազան ողջոյնը զրկելով բոլոր ճնշուած ու նահատակ ժողովուրդներուն:

Քրիսթիան հեռու է արդէն, այնչափ հեռու, որ մշուշին մէջ հազիւ, անորոշ կէտի մը պէս կ'երևնայ: Այդ աննշան կէտին վրայ է անշուշտ տակաւին սեւաստուեր եռագոյնը, ու շիկագոյն մագերով, կապուտաչուի եւ անհուն վիշտերով լեցուն նաւապետը, որուն գուցէ անգամ մըն ալ պիտի չի հանդիպին այս անապատ ափունքները:

«Տարաբա՛ղդ Գերմանիա, տարաբա՛ղդ Գերմանիա»...

Եւ սակայն կրնար երջանկագոյնը ըլլալ Գերմանիան, եթէ միայն յիշէր թէ փոխանակ բիրտ ուժի և տիրապետութեան մոլուցքին, պարտականութիւն ունէր ազդակը հանդիսանալու համաշխարհային եղբայրակցութեան իրականացումին • ու եթէ յիշէր շիրիմն ու յիշատակը, անցեալն ու ապագան, ու թողուր իր հսկայական տորմիդները տանիլ ամեն ծովերու վրայ խաղաղ աշխատանքի ու քրիստոնեայ քաղաքակրթութեան օրհնութիւնները, փոխանակ ամեն կողմ ցրուելու անյազ փառասիրութեան, նախանձի, վրէժի և ատելութեան թունայից սերմերը:

Իսկապէս տարաբաղդ, տարաբաղդ Գերմանիա:

Քրիսթիան չ'երեւնար այլեւս: Հրավառ արևը՝ ծովը բոսորագոյն ներկած է: Յատկանշական պարագայ: Արիւնի ծովը իր մէջ ընկղմած է գերման հսկան... Իմ հայրենեաց արեան ծովը:

Մ Ա Ր Ս Է Յ Յ Է Չ Ը

1914, Օգոստոս 2 ժամը 2 կեսօրէն վերջ,

Մէսաժըրի մը եկած է ու երկու հարիւրի չափ ճամբորդներ հաւաքուած են Քափե սը շա Բեի սրահը: Գաղթականներ են Էնտո-Շինէն, որ աշխատանքի շրջան մը լրացուցեր Ֆրանսա կ'երթան օդափոխութեան, նոր ուժ, նոր արիւն պիտի առ-

նեն: Կեանքի ամեն հասակ իր ներկայացուցիչը ունի մէջերնին, 1870ը տեսնող ծերունիներ ու նոր դարուն ազազուն զաւակներ կը խօսին, կը վիճին, կը խմեն, ու կ'երգեն երբեմն: Հայ գաղութն ալ հոն է, իր սովորական անկիւնը: Տարօրինակ իրողութիւն, որ ոչ մին Եւրոպայի մասին կը խօսի, Աւստրիոյ վերջնազիրը, Ռուսական զօրաշարժը, Գերման յուզումն ու ազգերու որոտումը անտարբեր կը թողուն մեր անապատային անկիւնը հաւաքուած ուղեւորներու խումբը: Յանկարծ դամբանային լուռութիւն մը կը տիրէ: Տեղակալ Տրբուի, Ճիպուղիի պաշտպան զօրաց հրամանատարը ներս կը մտնէ սրահէն, ձեռքը հեռագրի կապոյտ թուղթ մը բռնած:

«Ֆրանսա ընդհանուր զօրաշարժ հրամանագրած է »:

Բոպէ մը միայն տեւեց լուռութիւնը, բազմութեան շունչը բռնուած, կեանքը դադրած կարծես, երբ եօթանասունը անցուցած ալեւոր ծերունի մը, ոտքի ելաւ և արտասուազին ու որոտազին Մարսէյէզը երգել սկսաւ: Եւ ամբողջ ամբոխը՝ ոտքի էր. կիներ, աղջիկներ, մանուկներ, պատանիներ, երկու հարիւրէն աւելի, շատերը սեղաններուն վրայ բարձրացած, երգեցին, գոռացին, յուզեցին ու բռնկցուցին: Ֆրանսան իր կոչը կ'ուղղէր աշխարհի և անապատը արձագանգ կուտար հրաւերին, մարտիրոս Ազատութիւնը առիւծի պէս կը ցնցէր իր բաշերը, պատրաստակամ դիմազրաւելու բռնապետութեան հորդաներուն:

Ու Հայերս ալ երգեցինք: Եւ աշխարհի վրայ ոչ մէկ ցեղ մեզի չափ իրաւունք ունէր գոռալու Մարսէյէզին աստուածային վանգերը: Ու սրահին մէջ զառանցանքի պէս բան մը տիրեց մէկ րոպէ: Շատեր իրարու վիզ փաթթուեցան ու տղայի պէս, հեծկլտալով լացին: Ծերունիները, որ 1870ին տեսած էին Ալգաս Լորենի բաժանումը յօշոտուած հայրենիքէն, նոր նշանուած երիտասարդները, որ հայրենիքի բազինին պիտի երթային նուիրել իրենց սիրտն ու բազուկը, ու Ֆրանսուհին եղբրաբաղդ ու խորխտ, որ պիտի գնար ժան Տ'արքներու և Մատամ Ռօլաններու դրօշը բարձրացնելու սնգամ մըն ալ:

Եւ անդադար, հետզհետէ աւելի որոտուն շեշտերով Մարսէյէզը կը գոռար: Կը փորձուիմ հոս արտագրել այդ դիւցազնական երգին զոյգ թարգմանութիւնները մեր հին ու նոր լեզուներով:

Սիրվիօ Բէլլիքօյի « Բանսի իմ »-ին, Հիւկօյի Թշուառներուն հետ այդ երգը մեր յեղափոխութեան նուիրական երրորդութիւնը կազմած է կէս դարէ ի վեր:

Լ Ա Մ Ա Ր Ս Է Յ Յ Է Ձ

(Թարգմանութիւն Պետրոս Թէրզեանի)

Արիք, որդի՛ք դուք հայրենեաց,
Հասեալ է արդ մեզ օր փառաց,
Դրօշ բննութեան յարիւն թաթաւ
Կանգնի ընդդէմ՝ մեր դիմագրաւ
Լուսյք՝ ՚ի դաշտս պատերազմաց
Չահեղ գոչիւն վայրագ զօրաց,
Գան խողխողել ՚ի գիրկըս ձեր
Չորդիս, կանայս ձեր ՚ի սուսեր,

Հա՛ւյ՛ օ՛ն, ՚ի դէն քաղաքացիք,
Կազմել ըզգունդ քաջամարտիկ,
Օ՛ն, դիմեսցուք տալ ՚ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ:

Ձի՛նչ կամի այդ հրոսակ գերեաց
Մատնիչ, դաւող թաղաւորաց
Ո՛ւմ՝ այդ անուր Լ՛անարգ շղթայ
Ո՛ւմ՝ ի վաղուց պատրաստեալ կայ,
Ձինչ նախատինք մեզ, Գանդիլացիք,
Յո՛րպիսի յոյզս վառիլ պարտիմք,
Մատնել զմեզ վատք յանդգնին
Ի գերութիւն անդ ՚ի նախկին.

Հա՛ւյ՛ օ՛ն, ՚ի դէն, քաղաքացիք
Կազմել ըզգունդ քաջամարտիկ,
Օ՛ն, դիմեսցուք տալ ՚ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ:

Ձի՛նչ, ժրտիցե՛ն այդ վաշտք օտար,
Լինիլ երկրիս հրամանատար,
Ձի՛նչ այն վարձկան փաղանգք անաստ
Չգոռ մեր մարտիկս անկցե՛ն տապաստ:

Այլ աղէ՛, տէր, ձեռք ս:որկաց
Արկցե՛ն ըզմեօք ըղլուծ չարաց,
Եւ տիրապետք անարգ անդրէն
Լիցի՛ն բաղդից մեր տընօրէն

Հա՛ւյ՛ օ՛ն ՚ի դէն քաղաքացիք,
Կազմել ըզգունդ քաջամարտիկ,
Օ՛ն, դիմեսցուք տալ ՚ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ:

Դողացէ՛ք բո՛ւնք, և դուք դրճօժանք,
Կուսակցութեանց մեծ անարգանք,
Ձի՛ ձեր խորհուրդք հայրենասպան,
Վարձս ընկալցին զիւրեանց արժան.
Համակ՝ զինի՛ նդդէմ՝ ձեր ՚ի մարտ
Թէ՛ զիւցագունք մեր անկցին արդ,
Վերկենցաղէ զայլըս երկիր
Մղել ճակատ վրէժ ինդիր.

Հա՛ւյ՛ օ՛ն ՚ի դէն քաղաքացիք,
Կազմել ըզգունդ քաջամարտիկ,
Օ՛ն, դիմեսցուք տալ ՚ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ:

Նուիրական սէր հայրենեաց,
Օգնեա ՚ի վրէժ, մեր կուռ բազկաց,
Ազատութիւն մեզ կաթոգին
Ընդ քո պաշտպանս մարտի՛ր ուժգին,
Արդ՝ յաղթութիւն ընդ մեր դրօշու
Հասցէ թող ձայն քո քաջագոռ,
Եւ թշնամիք քո ոգեսպանք
Տեսցեն զմեր փառս, քո դյաղթանակ:

Հա՛ւյ՛ օ՛ն ՚ի դէն, քաղաքացիք
Կազմել ըզգունդ քաջամարտիկ,
Օ՛ն, դիմեսցուք տալ ՚ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ:

Լ Ա Մ Ա Ր Ս Է Յ Է Ձ

(Թարգմանութիւն Մեսրոպ Նուպարեանի)

Օն, հայրենեաց արի՛ զաւակք
Փառաց օրը հասած է մեզ,
Գոռ բռնութեան ահա դրօշակ
Մեզ դէմ կանգնած է սիգապէս,
Դաշտերուն մէջ կը լսէ՞ք ձայն
Ջօրականաց բիրտ ու վայրագ,
Ձեր բազկաց մէջ մորթել կուգան
Ձեր ամուսինքն և ձեր զաւակք:

Օն ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէք Ձեր գունդեր,
Յառա՛ջ, յառա՛ջ մի պիղծ արիւն
Թող լուայ ձեր դաշտեր:

Այդ հրոս գերեաց, այդ մատնիչներ
Այդ վատ արքայք ի՞նչ միտք ունին,
Որո՞ւ համար հաստ շղթաներ
Վաղուց հետէ կը պատրաստուին:
Մե՛զ, ո՛վ ֆրանսեանք.....: Ի՞նչ նախատինք,
Ինչ յոյզ զայրոյթ զգալ պէտք ենք:
Նոքա կ'ուզեն որ մատնուինք,
Հին գերութեան և կ'սպասե՞նք:

Օն, ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէք ձեր գունդեր,
Յառա՛ջ, յառա՛ջ, մի պիղծ արիւն
Թող լուայ ձեր դաշտեր:

Ի՞նչ, հրոսակներ օտարական
Մեր հայրենեաց պիտ' ըլլա՞ն տէր,
Ի՞նչ, այդ վաշտեր անարգ, վարձկան
Պիտ' տապալե՞ն մեր կտրիճներ:
Մե՛ծրդ Աստուած, ստրուկ ձեռքեր
Մեր ճակատներն ծոկե՞ն պիտի,
Եւ սինլքոր բռնապետներ
Հանդիսանան տէ՛ր Ֆրանսայի:

Օն, ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէ՛ք ձեր գունդեր,
Յառա՛ջ, յառա՛ջ, մի պիղծ արիւն
Թող լուայ ձեր դաշտեր:

Վախցէ՛ք ժանտեր, դուք, դրուժաններ,
Կուսակցութեանց, ո՛հ, նախատին,
Վախցէք, մատնիչ ձեր խորհուրդներ
Հուսկ պատիժնին պիտ' ընդունին,
Ձի ամեն մարդ ձեզ դէմ զինուոր:
Եւ թէ իյնան մեր դիւցազներ
Երկիր իսկոյն կ'արտադրէ նոր,
Ձեզ դէմ կուտի՛լ միշտ անվեհեր:

Օն, ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէ՛ք ձեր գունդեր,
Յառա՛ջ, յառա՛ջ, մի պիղծ արիւն
Թող լուայ ձեր դաշտեր:

Ֆրա՛նսեանք, իբրև վեհանձ կոռուղ
Չարկէք հարուած կամ խնայեցէք,
Գու՛թ ունեցէք ձեզ դէմ զինուոր
Տկար հոգի զոհերուն հէք:
Այլ արիւնուոլտ այն հրէշներ,
Այլ Պուլյէի ընկերներ ժանտ
Բոլոր անգութ այն վագրներ
Որք իրենց մօր պատուէն արգանդ:

Օն ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէ՛ք ձեր գունդեր,
Յառա՛ջ, յառա՛ջ, մի պիղծ արիւն
Թող լուայ ձեր դաշտեր:

Սէր հայրենեաց նուիրական
Մեր վրիժառու բազկաց օգնէ,
Ազատութի՛ւն մեզ սիրական,
Պաշտպաններուդ կողմէն կուուէ,
Ուժգին ձայնովդ յաղթութիւն թող
Վազէ, մտնէ դրօշներուդ տակ,
Եւ ոգեսպառ գձուձ ոսոխ
Տեսնէ մեր փառք, քու յաղթանակ:

Օն 'ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէ՛ք ձեր գունդեր,
Յառա՛ջ, յառա՛ջ, մի պիղծ արիւն
Թող լուա՛յ ձեր դաշտեր:

Հայկական խումբը աչքերն իս արցունքով, սրտերն իս վրէժով, իրարու երես նայեցանք: Բնազդաբար Մարսէյէզը երգող եօթանասնամեայ ծերունիին ձեռքը համբուրեցի, ան ալ վզիս փաթթուեցաւ: Ձի գիտցայ իր անունը, ոչ ալ ինք իմս: Չեմ կարծեր թէ աշխարհի վրայ պիտի զինքը վերատեսնեմ: Եւ առանց մեր շուրջը նայելու խմբովին դիմեցինք զօրանոց: Ֆրանսայի կոչին պատասխանող առաջին կամաւորները մենք եղանք: Բնազդը կը մղէր մեզ այն կողմը, արդար դատին կողմը, երկար դարերէ ի վեր մեր ցեղին կուրծքին տակ ամփոփուած խոյանքն էր որ կը պոռթկար, մեր մատաղ կեանքերը զոհաբերելու համար ազատութեան նուիրական բազինին առջև: Ահա կամաւորներուն անունները:

1. Տրդատ Խոյեան Պօլսեցի, հանրածանօթ քահանային երիտասարդ առիւծի պէս զաւակը:
2. Օննիկ Քիրէճճեան. Գատրգիւղ էն, որ վայրկեան մը երիտասարդ թուրքերու հաւատացած, միացած անոնց, կանուխէն զգացեր էր դառն յուսախաբութիւնը ու խլեակի պէս այս ամուսնին էր նետուեր:
3. Պերճ Պապան, Իզմիրի Մեսրոպեանէն ինծի աշակերտած, ու ինծմէ տարի մը վերջ հոս եկած տարագրութեան վրանը պարզելու համար:
4. Հայկ Տամպուրաճեան Իզմիրցի կրակոտ պատանին:
5. Հայկ Թուրումպաճեան Իզմիրէն, Մեսրոպեանի աշակերտ, ու երկիցս նուիրական ինծի համար:
6. Եղուարդ Սէֆէրեան, Եւդոկիացի, Բերայի էսաբանէն աւարտական, անապատի որդեգրին քով տարիներէ ի վեր պաշտօեայ, գրեթէ զաւակ:
7. Մաքսուտ Այնաճեան, Պօլսեցի, կեանքի յուսախաբութիւններուն ենթարկուած, այլ միշտ անընկճելի:
8. Մուսուլու Իզմիրցի Հայ Կաթողիկ, զգայուն և ազնիւ պատանի մը:

9. Չէրքէզլի, Աղեքսանդրիայէն Հայ Կաթողիկ, նախորդին պէս, այլ աւելի կրակոտ ու խանդավառ:
10. Ռ. Որբերեան, — կեանքի թափառականը:
Ճիպուղիի Հայ գաղութէն կը մնար միայն Արթաքին, Օրթագիւղէն, յիսունըչորսը անցուցած, և որ սակայն մեզի հետ էր հոգիով ու անցեալով:
Վաղը պիտի երթանք առտուն կանուխէն, զօրանոց, մարդանքի: Մէսաժրին մեկնեցաւ արդէն, ու քաղաքը քնանալ սկսաւ:
Անհուն յուզումի մը ներքեւ ընկճուած՝ կը փակեմ աչքերս:

5

Մ Ե Կ Ն Ո Ղ Ն Ե Ր Ը

Ognusnu, Ukyaknaker, Znyaknaker.

Յնորական արագութեամբ դէպքերը կը յաջորդեն իրարու: Բսան երկու օրուան դիւցադնական դիմադրութենէ մը վերջ կը ջախջախուի Պելճիգա: Գերմանները կը հասնին Բարիզի դուռը: Մարնի հսկայ ճակատամարտը կը մղեն ու կ'ստիպուին ետ քաշուիլ: Թնդանօթներու որոտը սակայն չի հասնիր մինչեւ հոս, ուր մենք ալ, զինուորականի հագուստով՝ հրացանը ուսերն իս մարզանքի կե'րթանք: Շոգենաւները կուգան իրարու ետև ու կը տանին ամեն անգամ մեր խմբակէն քանի մը հոգի: Եթովպիոյ խորերէն կուգան կը հասնին զօրակոչի տարիքը ունեցող երիտասարդ ֆրանսացիներ, մեզի կ'ընկերանան քանի մը օր, կը մարզուին ու կը մեկնին: Շատ անգամ առտուն ժամը չորսին կ'սկսինք քալել արդէն, տանեակներով ու համաչափ քայլերով: Օրական մինչև քսան քիլօմէթր ճամբայ կը կտրենք Սեպտեմբերի այրող արևին տակ, աւազի կոյտերու մէջ կը խրի ոտքերն իս, սուր քարերէն կը ցաւի, սակայն չենք զգար: Մեր հասակին բարձրութեան պատճառով Ֆրանսացի Ռօպէրթին ու ես միշտ գունդին առջևէն կը քալենք: Մարզանքէ վերադարձին հեասպառ եմ, երկար տարիներէ ի վեր լճացած արիւնս ակամայ շարժիլ կ'սկսի, ու կամքիս բովանդակ կորովին պէտք ունիմ չ'իրնալու համար: Ֆրանսայի համար, հայրենեաց համար, ազատութեան համար, յառա՛ջ: Առաջին մեկնողները տեղակալ Վիժիէն ու իր կիներ եղան: Վիժիէն հին

զինւորական մըն է, տասներեք գաղթային ճակատամարտներու մասնակցած ու պատուոյ Լէզէոնի ասպետ: Պատերազմի հրատարակութեան յաջորդ օրը հեռագրեց Ռազմային նախարարին իբր կամաւոր իր արիւնը առաջարկելով Ֆրանսայի: Նախարարը պատասխանեց անմիջապէս: Ֆրանսան, այսինքն քաղաքակրթութիւնը պէտք ունի ամեն անձնուէր հողիներու աջակցութեան: Կինն ալ մեկնեցաւ իբր կարմիր խաչի հիւանդապահ:

Հավրէզը անցաւ ծայրէ ծայր լեցուն Մատակասքարի զօրքերով: Ասեղ ձգելու տեղ չի կար: Ես ու Պապանան պահակ կարգուած էինք կամրջակին վրայ: Ճիպուղիէն զօրք պիտի չի կրնար առնել: Շոգենաւը խարիսխը վեր առնելու վրայ, կը տեսնենք կախուած չուանի մը վրայէն երիտասարդ մը որ կը մագլցի, ձեռքը, երեսը մրտած շոգենաւ կ'ելլէ ու կ'անհետանայ բազմութեան մէջ, մինչև վարը ոստիկաններու նաւակին մէջ իրարանցում մը կը տիրէ: Տիւ Պօսքէն է եղեր, երիտասարդ ճարտարագէտ մը, որ Ֆրանսա կը փախչի: Պատերազմի յայտարարութենէն ի վեր քանի անգամ խնդրագիր տուած էր որ զինք ճակատ դրկեն: Մերժած էին առարկելով թէ Ճիպուղի ալ իրեն պէտք ունին: Չէր դիմացած և հիանալի անկարգապահութեամբ մը նաւ կը նետուէր, երթալ Գերմաններուն դէմ կռուելու համար: Քանի մը վախկոտ ու բացառիկ դէմքերէ զատ, որ պահուիլ կը նախընտրէին, Տիւ Պօսքէի ոգին էր որ կը տիրէր ամենուն, մանաւանդ Հայոց մէջ, կռուիլ, արիւնը նուիրել Ֆրանսայի—հայրենիքներու հայրենիքին համար: Ու մեկնեցան իրարու ետև, Տրդատ Խոյեանն ու Օննիկ Քիրէճեանը, Հայկ Տամպուրաճեանն ու Հայկ Թուրումպաճեանը, Մուսուլլուն ու Չէրքէզլին: Ամենուն հետ միասին գացի մինչեւ շոգենաւ, իրենց ճակտին իմ և հայրենեաց համբոյրը դրոշմելով: Վերջին մեկնողը երկաթուղիի ընկերութեան պաշտօնեայ Հայ մը եղաւ, որ պաշտօնին բերումով Ճիպուղիի և Տիրէ Տավայի միջև, եթովպական հողի վրայ, փոքր կայարան մը կը բնակէր, Այիշա անուն: Թղթերու մէջ կը գտնեմ իր մէկ գրած նամակը, պարզ, անուշ այլ ափսո՛ս, հիմակ այնչափ տրտմագին:

Այիշա 15 Սեպտ. 1914.

... Ռ. Որբերեան

Ճիպուղի

Իմացայ թէ Ճիպուղիի հայ երիտասարդները Ֆրանսա պիտի մեկնին իբր կամաւոր և թերեւս մէկ քանի օրէն ճամբայ ելնեն: Եթէ անպատեհ չէք գտներ, ձենէ պիտի խնդրէի որ տեղուդ զինւորական հրամանատարին իմ կողմէ թարգմանաբար աղաչէիք, որ զիս ալ իբր կամաւոր Ֆրանսական բանակին մէջ ընդունի և մեկնող հայ զինւորներուն հետ միասին ես ալ ճամբայ ելնեմ: Եթէ երբէք ընդունուի խնդրանքս, Հայկին միջոցաւ թէլէֆօնով կ'իմացնէք ինձի, որով յաջորդ օրը կ'իջնեմ Ճիպուղի և առաջին առթիւ շոգենաւ կը մտնենք:

Մ'նամ խորին յարգանօք ձերդ
ՕՆՆԻԿ Յ. ՊԱՇՊԱՉԻՐԿԵԱՆԵԱՆ

Յ. Գ. Սոյն փափաքս միշտ իմս չէ: Երեկ Եգիպտոսէն հօրմէս առած նամակիս մէջ կ'ըսէր հայրս. « Եթէ երբէք ես քու տարիքդ ունենայի, Ֆրանսական բանակին մէջ իբր կամաւոր ծառայելու կ'երթայի », ինչ որ հօրս փափաքն է:

Նոյն

Պատասխան չի տուի իրեն: Կը մտածէի թէ մեր թիւին բաղդատմամբ գրեթէ ամբողջութիւնը պատասխանած էր զոհաբերութեան գերագոյն կոչին, ու գոնէ մէկ երկու երիտասարդ ալ մեր հայրենիքին համար մնալ պէտք էին: Ես ինքս կ'ուզէի, կը պահանջէի մեկնիլ, սակայն ուրիշի մը համար, խղճիս առջև պատասխանատու մնալ չէի՝ ուզեր, չէի՝ կրնար: Միւսները մեկնած էին արդէն, երբ օր մըն ալ Օննիկը վար իջաւ եկաւ և յայտարարեց թէ ինք ալ որոշած էր մեկնիլ: Եթէ չի թողու և արգիլես, պիտի մեռնի՛մ ըսաւ: Սեղմեցի ձեռքը և « գնա՛, տղաս, Աստուած հետդ ըլլայ » ըսի: Ընկերացայ իրեն հրամանատարին մօտ, կամաւորութեան ձևակերպութիւնները կատարուեցան, ու գացինք շոգենաւ: Կարծես թէ մահուան ուրուականը կը քալէր հետերնիս: Կը նախազգայի, թէ այլ ևս պիտի չի վերատեսնէի զինքը:



Թ Ո Ւ Ր Ք Զ Օ Ր Ա Կ Ո Ջ Ը

Հոկտեմբերին հոս հասաւ տաճկական զօրակոչին յայտարարութիւնը: Եթովպիոյ թուրք ընդհանուր հիւպատոս Մազհար Պէյ հաղորդեց ինծի պաշտօնական նամակով մը, յանձնարարեալ, յոյս յայտնելով թէ « Ճիպուղիի Հայ մեր եղբայրները (Էրմէնի գարսաշարընը) պիտի փութային օսմանեան հայրենիքին հրաւերին պատասխանել »: Նամակին շահագրգռական մասը հոն է, որ ապագայ զօրքերուն բռնելիք ճամբուն ուղղութիւնը կը գծէր անտեսագէտ հիւպատոսը: Եթովպիայէն խումբ խումբ հոս պիտի զրկէր հպատակ զինուորագրեալները, ու խնայողութեան համար փիւնիկեան հնամենի փոքր առագաստանաւերով պիտի մեկնէին Հոտէյտա, և այդ քաղաքէն պիտի հետևէինք թուրք պատերազմական նախարարին հրահանգներուն: Աւելորդ է ըսել թէ այս նամակն ու հրաւերը մեր ծիծաղը միայն շարժեց: Վախ մը միայն կը մնար: Հապա եթէ թուրք հիւպատոսը եթովպական կառավարութեան ձեռքով բռնի զրկել ուզեր Հայերը: Դիսեցի իսկոյն Ճիպուղիի կառավարիչին, որ խնդիրը հաղորդեց Փարիզ Գաղթային նախարարին: Երկու օրէն պատասխանը եկաւ: « Եթէ թուրք հիւպատոսը բռնի զինուորագրել և զրկել ուզէ Եթովպիոյ հայերը, Ճիպուղի կը պահէք զիրենք ֆրանսական զրօշին պաշտպանութեան տակ: Ու մեր կառավարութիւնը պիտի հոգայ պատասպարեալներուն բոլոր ծախսերը »:

Պաշտելի՛ Ֆրանսա: Ու մտածել թէ այդ եղերաբաղդ օրերուն ի՞նքը Ֆրանսա՞ն անհուն վտանգի անդունդին եզրը կը գտնուէր:

Մազհար պէյ չի գոհացաւ մէկ նամակով: Յանձնարարեալ երկրորդ նամակ մըն ալ գրեց, հաղորդելու համար թէ անոնք որ զօրակոչին չի պատասխանեն անձամբ և կամ 15 ոսկի վճարելով, իբր դասալիք հրացանի պիտի բռնուին: Այդ նամակն ալ կարդացինք ու զամբիւղը նետեցինք նախորդին պէս: Մտածումը առաւ մեզի սակայն: Որո՞ւ ղէմ էր թուրքիոյ զօրակոչը: Ու եթէ այս հեռուոր մոտցուած անկիւններուն մէջ իսկ իժը կը խլրտէր ու կը շէնէր, ցոյց տալով վաղուց փշրած ակոսները անգօր, ի՞նչ պիտի ըլլար Հայաստանի հաւատարիմ

հայերուն վիճակը որ ամեն կողմէն իրենց կուրծքերուն ղէմ մղուած սուրերու մէջ պիտի մնային: Եւ ասպետական Ֆրանսան շատ հեռուն ու Աստուած շատ բարձր էր մարտիրոս Հայաստանէն:

Հայոց այս արհամարական լուսթիւնը Մազհար պէյի երկրորդ յուսախաբուութիւնը եղաւ: Առաջինը եղած էր Եթովպիա երթալու համար առաջին անգամ Ճիպուղի եկած օրերուն: Կուգար ինք օսմանեան հայրենիքին կողմէ երևութապէս, սակայն իսկականին մէջ իբր համիսլամութեան առաքեալ, Մենելիքի խաղաղած քրիստոնեայ կայսրութիւնը հիմէն փորելու համար: Ճիշտ հոս գտնուած միջոցին, Ճիպուղի հիւր եկած էր Շէյխ Ահմէտ, Եէմէնէն, ժամանակին Գահիրէ Ալ Ազհարի աշակերտած, ու հիմակ Եէմէն թուրքիոյ ղէմ ապստամբութեան զրօշը բարձրացուցած: Երկուքը միասին, հիւպատոսն ու Շէյխը իմ տունս հրաւիրեցի, ինչպէս նաև Ճիպուղիի արաբ երեւելիները: Եէմէնի թուրք բանակէն փախստական սպայ մըն ալ թարգմանի պաշտօնը կը կատարէր: Երկարօրէն խօսեցան իրարու հետ, առաջ աննշան նիւթերու շուրջ, սակայն Մազհար պէյ հետզհետէ ոգևորուեցաւ ու նոր Ռէթիմին փառաբանութիւնը ընել սկսաւ: Շէյխ Ահմէտ լուռ էր, կը թողուր որ միւսը խօսի աւելի յուզուած ու ցնցուելով:

« Մենք թուրքերս և արաբները եղբայր ենք կ'ըսէր Մազհար պէյ, կրօնքն է մեր հայրենիքը, ու խալիֆան, Աստուած կեանքը երկարէ, մտադիր է Արաբիոյ ամէն կողմ երկաթուղիի գծեր բանալ, հաղորդակցութիւնները զիւրացնել, կրօնական դպրոցներ հաստատել: Միայն պէտք է որ արաբները իրենց զէնքերը վար դնեն ու հաւաքուին Մարգարէին մեզի աւանդ ձգած նուիրական զրօշին շուրջը:

Շէյխ Ահմէտ ահարկու ծիծաղով մը, ջղաձգօրէն խնդալ սկսաւ, կողերը բռնած, շնչակտուր, գրեթէ վայրագօրէն կը խնդար:

« Արաբները և թուրքերը իրարու եղբայր, կարէլի՞ բան է, և կամ զիս հեգնել կ'ուզես, Մազհար պէյ: Մեր երկիրը դարերէ ի վեր աւերեցիք ու անհուն գերեզման մը դարձուցիք և որ սակայն իր կարգին թուրքիոյ շիրիմը պիտի ըլլայ: Արաբներն էին, որ մարգարէին սուրբ զրօշակը տարին մինչեւ Սպանիա, ամեն կողմ՝ Ալհամպրաներ, Ալ Ազհարներ հիմնելով,

քանի որ ձեր ցեղին կրօնքը եսթադանը և հաւատքը անպաշտ պաններուն ու տկարներուն հանդէպ արիւնարբու գազանութիւնը եղաւ: Չէ՛, Արաբիան մաս չի՛ կազմեր այլևս անպարտ արիւնի վրայ ձեր հիմնել երազած կայսրութեան: Արաբական խրոխտ ու աղնիւ ցեղը, դարերէ ի վեր նահատակուած, բըռնակալութեան առջեւ պիտի չի ծնրադրէ՛ երբէք:

Ոչ շէյխը, ոչ ալ հիւպատոսը կը խնդային այլևս: Հեգնական ծիծաղը սակայն անցաւ իմ՝ շրթունքներէս ու պրկեց: Նման ծիծաղ մը թերեւս ունենամ մէկ օր գերեզմանիս մէջ, մահուան և ունայնութեան հանդէպ, գանկերու յաւերժական ծիծաղը:

Հիւպատոսին երրորդ և դառնագոյն յուսախաբութիւնը տեղի պիտի ունենար սակայն Եթովպիոյ մէջ. ուր ուզեց թուրքերու շնական դիւանագիտութեամբ լուսաճաճանչ խաչը տեղափոխել արեան լիճերու մէջ լողացող մահիկով:

Հայերը չի պաասխանեցին իր զօրակոչին և առանց սակարկելու իրենց արիւնը. աւելի եռանդով փարեցան Ազատութեան հայրենեաց Ֆրանսայի սրբազան դրօշին:

5

Տ Ա Ս Ն Ա Պ Ե Տ

Բանակին մէջ պարզ զինուորը, երկրորդ կարգի զինուորը երջանկագոյնն է. իր ուսին վրայ բեռ մը ունի, — նիւթական բեռ, որ մինչեւ երեսունևհինգ քիլօի կը հասնի, սակայն ատկէ զատ միայն իրեն տրուած հրամանները ճշտապէս ու արագօրէն գործադրելու հոգը ունի: Քանի աստիճանը բարձրանայ նիւթական բեռը կը թեթեւայ, այլ բարոյականը կ'սկսի, — պատասխանատուութեան բեռը: Ամիսէն աւելի է տասնապետացու աշակերտներու խումբին մէջ եմ: Տուած են մեզի « Զինուորին կրթութիւնը » վերնագրով տետրէն մէյմէկ օրինակ ու գրեթէ ամբողջութեամբ, ծայրէ ի ծայր գոց գիտեմ արդէն: Հրացանս ու սուլինս մաքուր են ու փայլուն, կը քակեմ, կը յղկեցնեմ ամեն օր. համագգեստիս կոճակները նմանապէս: Զինուոր եմ, այսինքն գործօն հիւլէ մը, շամանդաղ մը, անշուք մէկ շողը այն ասպետական բանակին, որ Արդարութեան համար կը մարտնչի: Թուրքիան արդէն հրատարակեր է պա-

տերազմ, իր ձեռքով փորելով կորստեան անդունդը, ու միանալով ազատութեան թշնամիներուն. ինք՝ դահիճ Ազատութեան: Պատերազմին վերջնական ելքին մասին ալ կասկած չունիմ: Գերմանիան եթէ չի պլծէր իր ձեռքը թուրքին ճիրաններուն մէջ դնելով, կրնար գուցէ յաղթուիլ, սակայն փառքով յաղթուիլ: Իր ճակատին վրայ դաւաճան դահիճներու հետ եղբայրակցած ըլլալու խարանին ամօթը դրոշմուած պիտի չունենար: Ամբողջ աշխարհի Հայութիւնը, Թուրքիայինն ալ մէջը ըլլալով, խանդավառ խոյանքով նետուած է ոսկմաղաշտ: Հարիւրաւոր միլիոններով ժողովուրդներ դէմ՝ դէմի կեցած կը մարտնչին, կը բզքտեն զիրար: Փոքրիկ, երէկ դեռ անշուք ու աննշան, այլ յաւերժապէս դիւցազնական իմ՝ ցեղ, դուն պիտի ըլլաս գուցէ աւազի հատիկը որ ճակատագրին նժարին մէջ նետուելով, աստուածային արդարութեան կողմը պիտի հակեցնես դայն, ու ես աննշան հիւլէ քու փառքիդ մասնակից պիտի ըլլամ:

Կոյր հնազանդութիւն մը չէր պահանջուեր մեզմէ, ոչ ալ պողպատի կարգապահութիւն մը: Ամենէն յետին զինուորը իր եւէն բան մը, բնազդ կամ հանձար, բերել պարտ էր՝ մեծ նպատակին իրականացման համար: Մեր յարաբերութիւնները պետերուն հետ բիրտ երկիւղէ աւելի անուշ ու եղբայրական էին գրեթէ: Վախէ աւելի սէր ու յարգանք կը տիրէր շարքերուն մէջ: Վարձատրութիւնն ու պատիժը նոյն յարգանքով կ'ընդունէինք, տեղակալ, հարիւրապետ, հրամանատար, զընդապետ, զօրավար, սպարապետ ու մարաշախտ, ուղիղ գծով կը յանգէին նոյն լոյսի համասփիւռ կեղրոնին, Ֆրանսայի, ալսինքն հայրենեաց:

2 Դեկտ. 1914

Քննիչներու խումբին առջեւ անցուցի քննութիւնս: Վարկածներու և մարզանքի մասին անթերի եմ: Լաւ ուսումնասիրել էմ զինուորական դիրքերու ձեւափոխումները: Նշանառութեան մէջ հինգերորդ եմ, այսինքն վրիպած: 12 տարիներ ձիպուղիի արեւին տակ այրած աչքերս կորսնցուցեր են իրենց ուժն ու սրութիւնը: Յանցանքը իմս չէ, սակայն յանցանք ըլլալէ չի դարիր: Քննութեան արդիւնք. Պերճ Պապանան կ'անցնի տասնապետ, ու ես միայն առաջին կարգի զինուոր կ'անուանուիմ: Կեանքի սովորական ընթացքն է այս: Աշա-

կերտները պիտի գլեն անցնին իրենց վարպետները: Չեմ նախանձիր, ու սրտազին կը սեղմեմ՝ ձեռքը: Իր փառքին մէկ մասը իմ կը նկատեմ՝ իրաւամբ:

5 Դեկտեմբեր 1914.

Այսօր հարիւրապետ Տրբուի աչքիս առջեւ զրաւ օրակարգի տետրը: Քննիչ մարմնին նոր որոշման համեմատ ես ալ տասնապետ անուանուած եմ: Տուաւ ինծի նոր աստիճանիս բոսորագոյն երիզները, զորս անմիջապէս թեւիս վրայ անցուցի ու հրաման առնելով տուն վազեցի: Խեղալեզ կը սեղմեմ՝ կուրծքիս վրայ գառնուկներս: Կեանքիս գերագոյն մրցանակն էր կարծես, խեղճ մայրս, որչափ պիտի արտասուէր երանութենէն զիս համազգեստով եթէ տեսնէր: Կէսօրէն վերջ մարզանք: Հրացանը ուսիս՝ կը քայլեմ, ճակատս աւելի բարձր, մարմնոյս բեռը չեմ զգար, թոչունի պէս: Զիդերուս մէջ տասը Հէրքիւլէաներու ուժը կը բիւրապատկուի: Թող պահանջեն, ու պատրաստ եմ յենակէտը ըլլալ աշխարհ բարձրացնող: Տկար կուրծքս թող խորտակի, հերիք է որ քաղաքակրթութիւնը յառաջ քալէ և ազատագրուի՝ Հայաստան:

6

Դ Ա Ր Զ Ո Ղ Ն Ե Ր Ը

7 Դեկտեմբեր 1914

Գիշերը զօրանոցը պառկեցայ, իբր օրուան տասնապետը: Ժամը 10ին հնչեց պառկելու փողը, գունդը հաւաքուեցաւ կարգով, ճշտեցի ամբողջութիւնը և հրամանով բացականերու ցուցակը պատրաստեցի և ամենքը խշտեակներուն վրայ տեղաւորուած տեսնելէ վերջ քաշուեցայ սենեակս: Պատուհանները բաց են, լուսինն ու աստղերը իրենց անուշ լոյսը կը ցանեն ճակտիս վրայ ու թեթեւ դեփիւռ մը իր յաւերժական երգը կը մրմնջէ: Տունէն մաքուր սաւան զրկեր են, մոմ՝ մը ու կարդալու գրքեր: Ու մտածել թէ Ֆրանսա ու Կովկաս իմ ընկերներս ձիւնի ահաւոր փոթորիկներուն տակ, մինչեւ կէս մէջքերնին սառած ջուրի մէջ խրամներու կեանքը կ'ապրին աւելի ճիշտը կը մեռնին, թշնամի գնդակներու տարափին տակ: Երկինքը կը դիտեմ: Ծիշտ գէնիթին վրայ Հայկ համաստեղութիւնը կը փայլի, վառաւոր ու հսկայական, իր մէջքին

միաշար երեք հիանալի աստղերով, զոր «Նափօլէօնի դօտի»ն անուանակոչեց Լայրցիկի համալսարանը, երբ անցեալ դարու սկիզբի հսկան երրորդ անգամ Պերլին կը մտնէր իր անյաղթելի լէգէոններու գլուխը անցած...: Նափօլէօնի դօտին մեր Հայկին մէջքը: Հինգերորդ ամիսն է արդէն պատերազմին, և իր դամբանին խորը, էնվալիտի գմբեթին ներքև կ'զգայ արդեօք Ս. Հեղինէի ուրուականը Գերման թնդանօթներու անհուն ու անվերջ որոտումը: Կէս զիշերին զօրանոցին շուրջ քննական պտոյտս կը կատարեմ: Երկաթուղիի գծին երկու կողմը՝ աւաղներուն մէջ թաղուած Սօմալիներ կը քնանան: Բուն կեանքը գուցէ անոնց կեանքն է, առանց իտէալի եւ առանց փառասիրութեան: Կը դիտեմ, կը նախանձիմ՝ ու կ'անցնիմ:

Առտուն ութը զինուորի գլուխ անցած Ֆրանսայէն եկող շոգենուր կ'ելլեմ իբր պահակ: Մարնի ճակատամարտէն վերաւոր և ապաքինող զաղթային զինուորներ կան իբր ճամբորդ որ էնտօշին կ'երթան հանգիստ առնելու: Առանց բացառութեան զեղին ու զալկահար են ամենքն ալ: Կան որ ձեռքերնին թողած են հոն, ուրիշներ ոտքերնին, կամ մէկ ու երկու աչք: Բայց զեղին, գրեթէ կանանչագոյն են ամենքն ալ: Օրերով մնացեր են կրակին տակ ու քիչերը կան որ լսել կրնան: Ոմանց համար ճանձի բզզիւնը որոտում կը թուի ու կը սարսուտն, ուրիշներն ալ բան մը չեն լսեր և ալ պիտի չի լսեն բնաւ: Կամրջակին գլուխը կեցած կը դիտեմ անցնիլնին: Նաւապետը կու գայ ձեռքս կը սեղմէ ու սրահը կը տանի, անկիւն մը, ուր յիսնամեանի հսկայ մը զարեջուրի գաւաթին առջեւ նստած կը խոկայ լոխ: «Բեզ կ'ուզեմ՝ ներկայացնել իրեն, գաւաթ մը բաղիսէ հետը և դիտէ միայն, ուրուսական մըն է» կը մրմնայ ականջիս նաւապետը:— «Տօքթոր Բիէր, բարեկամս Որբերեանը կը ներկայացունեմ:— կամաւոր է և հայ»:

Զսպանակէ մը մղուածի պէս ոտքի կ'ելլէ, ձեռքս կ'առնէ ձեռքին մէջ ու քովը կը նստեցնէ: Պատուհանին լոյսը կը զարնէ դէմքին ու կը սոսկամ: Գոյնը մութ կանանչ է: Առանց նախաբանի կ'սկսի նախ քանի մը կցկտուր բառերով, որ չեմ հասկնար այնչափ արագ արտասանուած և իրարու խառն, զոգրոջուն...: «Պատերա՛զմը, պատերա՛զմը, միայն է՛ն տեսայ ինչպէս որ էր: Ամբողջ Սեպտեմբերը անցուցի Մարնի եզերքը, Մանուրիի հետ շարժուն հիւանդանոցին իբր բժշկապետ: Օրե-

րով կուրցնող ու թունաւոր սումբերու տարափին տակ մնացի, կարմիր Սաշի բոլոր ընկերներս մեռան իմ քով ու մահը չուզեց, չի տարաւ զիս ալ: Վիրաւոր չի կար որ խնամէի, բոլորը կը մեռնէին, ժօֆրի հրամանին համեմատ, ափ մը հող աւելի չի տալու համար թշնամիին: Գեղի սնտուկները ջարդ ու փշուր եղած էին, պէտք ալ չիկար դեղի: Ե՛ս ալ բանակի բժշկապետ, կտորած սուլին մը սոսած, սկսայ փորել հողը ու թաղել, թաղել, մեռածները թաղել: Մէկ դիշերուան մէջ եօթը հարիւր հողի թաղեցի, ամենքն ալ երիտասարդ, իմ գաւազն ալ միասին: Պատերա՞ղմը, տղաս, միայն է՛ս տեսայ, ինչպէս որ էր:» Ու խուլ հեծկտուքով մը գաւաթը կ'առնէ ու կը զարնէ գաւաթիս ու կը խնդայ: Խնդուք չէր, ջիղերու կծկում՝ մըն էր աւելի, և ահաւոր պարագայ, դէմքին կեւը միայն կը խնդար, մէկ աչքը միայն, մընչ միւս այտին վրայէն կաթիլ կաթիլ արցունքները կը սահէին: Իսկապէս մեծ պատերազմին ուշուականն էր, որ կ'արձանանար հոն, ջիղերու և կամքի փլատակ մը:

Սրբազան Ազատութիւն, երջանիկ են անոնք՝ որ Մարնի ալիքները ներկեցին քեզի համար իրենց մաքուր արիւնով և այն անմահ ափերուն վրայ քնացան, ու տարաբաղդ այս դէմքերը դալկահար, որ դատապարտուած են ապրելու տակաւին, յիշելու, խնդալու ու նոյն ատեն յաւերժապէս արտասուելու համար:

Կամրջակէն վար պիտի իջնեմ: Նաւը ճամբայ պիտի ելլէ: Երկու վիրաւոր իրարու հետ կը խօսին: Մէկը ձայնը կորսնցուցած է ու կը փսփսայ կարծես: Միւսը, որուն թիկնոցակին վրայ, զինուորական մետայլն ու Պատուոյ լէգէոնի և պատերազմի խաչերը կը փայլին, վէսօրէն կը բանայ կուրծքը, ութը հատ գնտակի և մէկ սուլինի հարուած ստացեր է ճիշտ կուրծքին, ու չէ՛ մեռած: Արտին վրայ սպիտակ տեղ մը կայ որ վերքի նշան չունի: Մատը կը դնէ հոն և « գնդակի համար հոս տեղ մը կայ տակաւին, բայց գերման հրացանները պիտի չի գտնեն տեղը », կ'ըսէ իր ընկերոջ ու ժպտով մը հերոսական, կը յաւելու. « Երեք ամիսէն նորէն ճակատ պիտի վերադառնամ: »

Ագնիւ, դիւցազնակա՛ն պատանի, իրաւունք ունիս, Գերման գնդակները Ֆրանսայի սրտին բաբախած վայրը պիտի չի գտնե՛ն երբէք: Արեգակը չի՛ մեռնիր:

Մ Ա Ն Է Ն Ա Ի Ե Լ Ի Ն Ջ Օ Ր

Պիտի մեկնի՛մ, է՛ս ալ կ'ուզե՛մ մեկնիլ ու նետել զիս համաշխարհային հրաբուլխին մէջ: Հարիւրապետ Տրբուլի չի բաժնէր փափաքս, բարեկամներս որոշակի կը հակառակին: Բայց ես սկսած եմ զիս դասալիք նկատել: Տուն կուգամ, Արուսեակս ու Մարիանէս կ'առնեմ գիրկս, ու պաղատազին արտօնութիւն կը խնդրեմ՝ մայրերնէն: Ան լուռ կը մնայ: Պիտի երթամ Տարտանել, քիչ օրէն դաշնակիցները իզմիր պիտի մտնեն, ես ալ հետերնին, պիտի երթամ գաւազն, Յարութիւն-Վրոյրը ազատել, որ իզմիր ամերիկեան դպրոցը փակուած է: Երկար մտածումներէ վերջ կ'երթամ՝ կառավարիչը գտնել, արտօնութիւն ուղելու համար, որ առաջին շոգենաւր առնեմ: Երկար ատենէ ի վեր կը ճանչնանք զիրար: Ճիպուղիի գաղութին ընդհանուր քարտուղարն էր որ ատենէ մը ի վեր կառավարչի փոխանորդ անուանուած է: Նիհար, կարճահասակ, սև փայլուն մազերով ու մօրուքով, համակրելի երիտասարդ մըն է ու մանաւանդ հայասէր, ինչ որ զիս հոգիով կը կապէ իրեն: Գողտրիկ ժպտով մը կ'ընդունի զիս: Լուրեր կը հարցնէ իմիններէս, մանաւանդ Յարութիւնէս, որ փակուած է իզմիր: Այցելութեանս նպատակը բացատրող առաջին բառերուս, կ'ընդմիջէ զիս ու վճռապէս կը հակառակի: « Ֆրանսա իր գաղութներուն մէջ ալ աշխատող ուղեղներու և բազուկներու պէտք ունի, և Ճիպուղին իր կրցածէն աւելին տուաւ հայրենեաց: Պատերազմը միայն խրամներու մէջ չի՛ մղուիր, այլ տնտեսական կռուանի վրայ: Տարիներէ ի վեր Ճիպուղիի արևին շտակ այրած մարմինդ պիտի չի դիմանայ կլիմայի յանկարծական փոփոխութեան, ու հիւանդ ու խեղճ զինուոր մը պիտի ըլլաս հոն, քանի որ պարտականութիւնդ հո՛ս ալ կրնաս կատարել: Ու յետոյ դուք, Հայերդ մեր յուսացածէն աւելի տուիք: Չեզմէ՛ շատերը մեկնեցան ճակատ, ու թողէք մեզի հաճոյքը մէկ երկու հոգի ալ մեր մէջ պահելու: Օր մը ձեր հայրենիքն ալ պէտք պիտի ունենայ իր գաւազներուն: Դարձեալ ազատ ես ուզած ուղիդ ընտրելու, հոս երեսի վրայ թողելով ընտանիքդ ու տարիներէ ի վեր հիմնած գործդ, բայց ես պաշտօնապէս պիտի հակառակիմ մեկնելուդ: »

ժամէն աւելի այդ լեզուն բոնեց, ու գլխիկոր մեկնեցայ քովէն, առանց տուն հանդիպելու, զօրանոց զացի:

Յաջորդ օրը, կիրակի իրիկուն լուր կը տարածուի, թէ կառավարիչը անձնասպան է եղեր: Չեմ հաւատար ու խենդի պէս կառք մը կը նետուիմ ու իր տունը կը վազեմ: Մինչեւ կէսը անկողնին վրայ ինկած, շրջահարը գետինը՝ որուն գնդակը ուղղակի սրտին է անցեր: Հոն են իր խումբ մը բարեկամները, ու բժիշկները, ամենքն ալ լուռ ու թախծազին: Հեծկըլտալով արտասուել կ'սկսիմ: Քիչ վերջը արդէն ամենքն ալ գիտէին եղբարբաղք երիտասարդին պատմութիւնը: Կտակը գտան: Իր մէկ պաշտօնեային կնոջ, խենդի պէս սիրահարած է եղեր ամիսներէ ի վեր: Կինը գեղանի ֆրանսուհի մը և իր կարգին սիրահար իր ամուսնոյն, տեղի չի տար փորձութեան և իբր քոյր կը ջանայ դարմանել սիրահարին վշտահար սիրտը: Չի յաջողիր: Երիտասարդը յուսահատ մահուան որոշումը կուտայ: Իր կտակը հազիւ երկու վայրկեան մնաց աչքիս տակ ու դեռ կ'այրի սիրտս: Նախ ներում էր խնդրեր իր ծերունի մօրմէն, զինք առանց ուղեւուն լացնելուն համար: « Դուն ալ պիտի « ներես ինձի, իմ պաշտելի իտէալս, որ չի յաջողեցայ իբր « եղբայր սիրուելով գոհանալ, ու կը նախընտրեմ մահուան « մէջ փնտռել վիշտերուս մոռացումը: Քեզի ամեն օր նամակ « ներ գրեցի, առանց յանդգնելու զանոնք քեզի հասցընել: « Դարակիս մէջ են անոնք, կնքուած պահարանով: Առանց « բացուելու կ'ուզեմ որ այրուին անոնք: Քեզմէ յիշատակ « մէկ օր ձեռքիդ փունջէն պատահմամբ ինկած դափնէձաղիկ « մը ունիմ, ու ժապաւէնի կտոր մը: Բարեկամներէս կը խընդ « բեմ որ սրտիս վրայ, սնտուկիս մէջ գնեն խամրած ծաղիկն « ու ժապաւէնը:...

« Ու յետոյ, և ամենէն աւելի, « ներէ՛ ինձի, Ֆրանսա»...:

Իր եղբայրն ալ ռազմաճակատին վրայ ինկաւ, փառքի դաշտին վրայ ու ծերունի մայրը բոլորովին մինակ մնաց աշխարհին վրայ:

Ֆրանսան ներեց զաւելիդ, զժբաղդ մայր, կորիւններէդ մին ինկաւ ազատութեան բազինին վրայ, ու միւսը սիրոյ խորանին առջեւ, ու Սէրը, ափսո՛ս, միշտ մահէն աւելի հզօր է ու հայրենիքներէ աւելի յաւերժական:



Տ

Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն *



Ձատիկ գիշեր, « Բրիստոս Յարեա՛ւ » կ'երգէին, խաւար հիւղակն անգամ՝ լուսով ողորուն, Երանութեամբ կը շողար, —... վերածնունդ երազներու երկնային, Փթթումը նոր մոխիր դարձած յոյսերուն, Ու նոր կեանքի նոր քրնար:

Այլ մենք անխօս, լուռ, իրարու նայեցանք, Քեզմէն հեռու, մեր անուշիկ Յարութիւն, Ծովին սարսուռ, լուսնին՝ շող Եկան մեր քով, այլ ոչ մի ձայն արձագանգ, Ամայքներէն հասաւ մեզի մոլորուն, Մեր սրտերուն քով մաշող...:

Անդունդներ կան մեզի բաժնող իրարմէն, Հառաչներով լցինք զանոնք, այլ ափսո՛ս, Որոնեցինք զո՛ւր քու ձայն, Ո՛ւր ես, տըղաս, այլուր յոյսերը կ'երգեն, Այլ մենք մենիկ, արցունքներով վշտահոս, Կ'սպասենք զո՛ւր յարութեան:

Ով Յարութիւն մեր վշտակէց հայրենեաց, Ով Յարութիւն տարահալած Հայութեան, Ով մեր սրտին Յարութիւն, Քեզ կը կոչենք հառաչներով վերասլաց, Քեզի համար կը տառապինք յաւիտեան, Ըսէ՛, արդեօք ո՛ւր ես դուն...:

Մեր քայլերը դողդոջուն են ու տըկար, Աչերն աղօտ, արցունքներով կը մարին,

* Ձատիկ իրիկունը գրեցի այս սուրբը: Մեր Յարութիւն—Վրոյր գտնակին անուան տօնն էր: Ինքը՝ Իգմիր և պատերազմէն ի վեր լուր կամ նամակ չեկր սուած: Մայրն ու ես՝ միմաւոր՝ յիշեցինք զինք ու լացինք...
Ռ. Ռ.

Վըրանիս ուժ չի մնաց,
Մոայլէն ետք արեւը ե՞րբ պիտի գար,
Ե՞րբ ծաղկէին պիտի յոյսերն անցեալին,
Ու բաղձանքներն հայրենեաց...

Յիսո՛ւս, միայն երկու զիշեր հեռացար
Մայրէջ ու դուն չի դիմացա՛ր բաժանման,
Յարեար ու զայն զրկեցիր,
Ե՞րբ ամոքես պիտի սրտեր վշտահար,
Ե՞րբ դարձրնես պիտի մեզի սիրականն
Իր ծընողաց տարագիր...:

Ճիպուղի. Զատիկ, 1913.



Գ Ա Ի Ա Ձ Ե Ն Մ Ի Ն Չ Ե Ի Շ Ի Թ Ո Ի Ն Ք

« Զէ՛նք, ուղմանիւթ, զէնք, ուղմանիւթ », ահա ինչ որ կը պակսի դաշնակիցներուն: Գերմանիա քառսունևչորս տարիէ ի վեր զիզած է լեռնակուտակ իր չորս հարիւր քանները, ու հսկայական թնդանօթներն ու գնդակները, քանի որ դաշնակիցները առանց որևէ միութեան գծի, զրեթէ վախնալով հաւատալու տիեզերական աղէտին հաւանականութեան, երեսի վրայ թողած են ամեն բան: Անգլիա իր մեկուսացած ապառաժին վրայ կանգուն, արհամարհանքով մերժած է նոյն իսկ իր հեռատես զաւակներուն Լորտ Ռօպէրթսի և Նօրթհքլիֆի ազգարարութիւնները, կրթնած իր ահարկու տորմիլին, որ դարերէ ի վեր ամեն ծովերու գերիշխանութիւնը ապահոված էր իրեն: Չէ գուշակած զրեթէ հազարաւոր մեթր բարձրութենէ թռչող զէրլինները, ոչ ալ ծովերուն ներքեւէն սուրացող ընդծովեաները: Կամաւոր են զինուորները, պարտադրեալ զինուորագրութիւն գոյութիւն չունի:

Ֆրանսա իր մարդկայնական ազնիւ սկզբունքներուն կառնած, չէ կրցեր գուշակել թէ գերման ընկերվարութիւնը պարզապէս մէկ ճիւղն է լրտեսական այն անհուն դրութեան, որուն համար ամեն միջոց որ գերման աշխարհապետութեան կը

տանի՛ ներելի է: Հազար թնդանօթ ու քանի մը միլիոն փամփուշտ աւելի եթէ ունենար Ֆրանսա, Մարնը գերման բանակին ու երազներուն գերեզմանը կրնար ըլլալ: Ռուս բանակին վիճակը աւելի խղճալի է: Պէրտան հրացաններ ունին և կրայի կամ լրպէլի փամփուշտ: Բրուքներ ունին 73ի գնդակներով, ու հազար հինգհարիւր քիլօմեթր տարածութեամբ ճակատի մը վրայ իրենց սուխններով կը յարձակին թնդանօթներու դէմ որ քսան քիլօմեթր հեռուէն կը շանթահարեն, առանց տեսնուելու: Իտալական բանակը անմատչելի բարձունքներ վերելակելով զբաղած է: Կեդրոնի կայսրութիւնները պատնէշներու ետեւ ամրացած, կը զարնեն անխնայ, մէկ քայլ ետ կ'երթան հարիւր քայլ յառաջանալու համար: Բրիտանական տորմիլը զրեթէ զամուած է և անշարժ հիւսիսի մշուշներուն մէջ և ընդծովեաները հոն կերթան զարնել զինքը: Գերմանիա կը յաշողի ամեն կողմ և ազգերը շուարած իրարու երես կը նային: Ահարկու մեքենան իր բիւրաւոր աչքերէն կայծակներ ժայթքելով կ'ընթանայ յառաջ: Յաղթելու կամքն է որ զինքը կը մղէ: Ամեն բան հաշուած, կշռած, ձեւած, չափած է կիլյոմ: Կեսարի, Շարլմանեի, Նափոլէոնի թագերը աղօտացած են և անարժէք իր անյագուրդ աչքերուն: Մերուկ Աստուծոյ թագն է իր փառասիրութեան կեդրոնը: Աշխարհի Աստուածը կ'ուզէ ըլլալ ինք: Կը մոռնայ թէ աշխարհի աստուածութիւններուն ճակտին փշեայ պստկ մը պէտք է կապուիլ, ու խաշուել՝ պարտին իսկապէս աստուածանալէ առաջ: Եւ իր ապառաժէ կամքին առջև երեք պողպատեայ պատերու կը հանդիպի: Նախ Ֆրանսայի դիւցազնական սլացքը: Երկրորդ պաղարիւն Ալպիոնի չ'ընկճուելու կամքը: Ու երրորդ բոլոր ճնշուած ու նախատակ ժողովուրդներու չի մեռնելու կամքը:

Gott strafe England! Այս վայրենի ազաղակը կը թռչի կիլյոմի կոկորդէն: Կը փորձէ անգլիական « փոքրիկ բանակը » Մանչի ծովը թափել: Չի յաշողիր: Ֆրանսական ու անգլիական հեռաւոր գաղութները կը հասնին մայր հայրենեաց օգնութեան: Պարտադրիչ զինուորագրութիւնը կը քուէարկուի, և ամբողջ Անգլիա և Ֆրանսա գէնքի ու ուղմանիւթի հսկայական գործարաններու կը փոխարկուին: Պատերազմի մէջ այն է յաղթական, որ իր հակառակորդէն քառորդ ժամ աւելի կըրնայ դիմանալ: Պիտի դիմանան դաշնակիցները. նոյն իսկ քառորդ դար, պիտի գահուին բիւրերով, այլ պիտի դիմագրաւեն:

Տարտանելի արշաւանքը կը ձախողի, հոն ինկան իմ բարեկամներէն Մէ՛ւրը Տրֆիթի Ուայլին, Ատանայի նախորդ անգլիական հիւպատոսը, ու տեղակալ Շօտրօն, որ զինուորի առաջին հրահանգները տուաւ ինծի: Սակայն Տարտանելը այն մեծ եղերերգութեան մէկ աննշան տեսիլն է միայն: Յափրացած ու զինովցած այդ վայրկեանական յաղթանակէն, թուրքիան իր ամբողջ ուժը կը դարձնէ Հայութեան դէմ, և 1913ի ահաւոր ոճիրը կը գործուի, ամբողջ ցեղ մը բնաջնջելու ծրագիրը կ'իրագործուի: — « Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն... »:

* * *

Փարիզէն զէնքերու գնումին Ռուսական Յանձնաժողովը՝ Քօնթուար տը ձիպուղիի միջոցով ինծի կը յանձնէ Եթովպական կառավարութենէն տասը հազար պէրտան ու մէկ միլիոն փամփուշտ գնելու համար բանակցութիւնները վարելու գործը: Երեք տարի առաջ Ճաբոնէն գնուած են այդ զէնքերը, Ռուսօ Ճաբոնական պատերազմին աւարէն մնացած մաս մը: Քօնթուարի տնօրէնը բարեկամս Սիկիյէն կ'ըսէ թէ եթէ յաջողիմ գնել այդ զէնքերը, վերադառնալով ճամբով կովկասի ճակատը պիտի ղրկուին, ուր Ռուս բանակը զէնքի պակասը կը քաշէ: Իւրաքանչիւր զէնքի հարիւր ֆրանք զին կուտան, դրամատան քով վարկը կը բանան ու ֆրանսական դեսպանին ուղղուած յանձնարարագրով մը ճամբայ կ'ելլեմ Ատիս-Ապպա: Երկաթուղիի գիծը նոր լրացած է և առաջին ճամբորդը կ'ըլլամ վայրաշարժով մը Ատիս-Ապպա հասնող: Այդ առաջին ուղեւորութենէս բան մը չեմ յիշեր: Երեք օր երկաթուղիին և իմ մէջ բանտուած մնացի, առանց դուրսի տեսարաններով շահագրգռուելու: Գործի յատակագիծս պատրաստեցի իր ամեն մանրամասնութիւններով, կրկնելով ես ինծի շարունակ, թէ պիտի յաջողիմ, անշուշտ պիտի յաջողիմ... կովկասի համար: Եւ իսկապէս, ծրագիրս լաւ լարուած մեքենայի մը պէս առաջին վայրկեանէն գործել սկսաւ: Հասնելուս ինծի կը հանդիպի եղբայրս Մարգար Միրզան, որուն կը բացատրեմ քանի մը խօսքով ամբողջ խնդիրը: Իր անվերապահ աջակցութիւնը կը խոստանայ և կուտայ: Յաջորդ օրն իսկ կը տեսնեմ նախարարապետը Պէթուատատ Հայլէ կօրկիսը, կը սակարկեմ իրեն հետ զէնքերուն զինը ու տրուելիք նուէրներուն քանակը:

Իրիկունը կ'երթայ զահաժառանգ Լիճ Եասուլին հետ կը խօսի ու համաձայն կը մնայ: Գին ու նուէր միասին հաշուելով իւրաքանչիւր զէնք իր յարակից փամփուշտով յիսուն ֆրանք, պիտի արժէ այսինքն համագումար 300000 ֆրանք, քանի որ Ռուս խմբակը ինձմէ մէկ միլիոնի պիտի գնէ: Տարբերութիւնը 300000 ֆր. շահ: Նախարարապետը Մարգարին ներկայութեան ձեռքը կ'երկարէ ու կ'ուզէ ձեռքս առնել սակարկութիւնը կնքելու համար: Վերջին վայրկեանին կը վարանիմ ու կ'ըսեմ թէ կ'ուզեմ խօսքը վերջացնելէ առաջ այցելել զէնքերը: Իրաւունք ունիս կ'ըսէ, իրիկունն ժամագրութիւն կուտանք: Պանդոկ կը վազեմ ուր Քօնթուարին Տնօրէնը Սիկիյէն բանակցութեան ելքին կ'սպասէր անհամբեր: Անմիջապէս ջորիները կը նստինք և փամփուշտի գործարանը կ'երթանք ուր պահուած են զէնքերը: Ճամբան պանդոկէն մինչև զէնքերուն տեղը ժամ մը կը տևէ: Այդ մէկ ժամը կեանքիս երջանկագոյն երազը ապրեցայ: Երկար տարիներու մաքառումներէ ու պայքարներէ վերջ բազում կը ժպտէր վերջապէս, կ'ըսէի ես ինծի և ինչ տարօրինակ գրեթէ ահարկու ժպիտ: 300000 ֆրանք շահ, կէս միլիոն, խելքս պիտի կորսնցնեմ գրեթէ: Եւ ինչեր պիտի չ'ընեմ այդ գումարով: Նախ Ուսուցչաց օգնութեան սնտուկը պիտի հիմնեմ, կամաւորներուն պիտի օգնեմ, ազգիս բիւրաւոր վիշտերը դարմանելու պիտի աշխատիմ: Միջոցն ու կարողութիւնը պիտի ունենամ սրտիս յաւերժական խոյանքներուն թոխչք տալու: Սիկիյէ ինձմէ աւելի ջղայնացած է: Բառ մը չենք փոխանակեր իրարու հետ: Վերջը կ'իմանամ թէ Ռուս խմբակը երկու հարիւր ֆրանք զին տուած է Քօնթուարին իւրաքանչիւր զէնքի համար, որով գործը եթէ յաջողէր Քօնթուարն ալ մէկ միլիոն ֆրանք պիտի շահէր: Ու ես ինծի կը կրկնեմ. « Ուսուցիչներու հանգստեան սնտուկ, կամաւորներ, տառապանք, Հայաստան »: Կը հասնինք, գործարանին վարիչը իրլանտացի Հրմֆրիզ կ'ընդունի մեզ: Կ'ուղղուինք զէնքի մթերանոցը, դուռը կը բացուի ու նկուղի մէջ իրարու վրայ նետուած կը տեսնեմ հազարաւոր հրացանները, տարիներով անձրևին տակ մնացած, բորբոսած, և շատ!րը անձանաչելի ցեխակոյտի մը վերածուած են: « Միւս կէսն ալ մաքսին մթերանոցը կը գտնուի » կ'ըսէ Հրմֆրիզ: Առանց բռն մը արտասանելու կը մեկնինք: Յոյսին կէսը խորտակուած էր, միւս կէսին կը կառչիմ խելայեղօրէն: Ուղղակի կ'երթանք մաքսատուն,

ուրիշ նկուղ մը ցոյց կուտան մեզի, ուր նոյն վիճակը և աւելի կծու բորբասի հոտ մը կը տիրէ: Հոս ալ հրացանները ցելխակոյտի մը վերածուած են: Ու կը տեսնեմ՝ այս անգամ՝ ալ նուազիւր, անյայտանալը տարիներէ ի վեր փայփայած սիրելի երազներու: Ընկերս ինծմէ աւելի ընկճուած է, սակայն կապոյտ ակնոյցին ետև աչքերուն արցունքը չ'եմ տեսներ: Պանդոկը հասնելու հայելիին մէջ դէմքս կը տեսնեմ: սոսկալով ետ կ'ընկրկիմ, այնչափ դեղնահար: Ըսեմ՝ անկեղծօրէն, թէ վայրկեան մը դեւը փորձեց մեզի, հարստութեան ու փառքի դեւը, գնել եղածին պէս ու մաքրելով զրկել զէնքերը: Երկուքս ալ իրարու նայեցանք, սակայն վայրկեան մը միայն: Կովկաս պիտի երթային հրացանները, Կովկաս, այսինքն Հայաստան: Ձեռքս դողալով հեռագիրը կը խմբագրեմ՝ Քօնթուարին ուղղուած, ըսելով թէ փոտած են հրայանները, ու հապճեպով մը ծառային կուտամ որ հեռագրատուն տանի: Այլ բան չեմ յիշեր՝ Իրիկուան ուշ ատեն Մարգարը եկաւ և զիս անկողնիս վրայ նետուած գոռաւ, կուրծքս անգոր հեծկլտուքներով խորտակուած:

Երանութեան ու փառքի վաղանցուկ երազ, որ քանի մը ընդէ լուսաւորեցիր անապատներու թափառականին կեանքի մոայր. շնորհակալ եմ քեզի: « Գաւաթէն մինչև շրթունք հեռաւորութիւնը », որ այնչափ դառնօրէն ցնցեց էութիւնս, ելեքտրական նոր հոսանք մը սահեցուց մեռած ջիղերուս մէջէն, ու յարութիւն առաւ պողպատէ կամքը, կեանքի պայքարէն յաղթական ելլելու, արհամարհելով բաղզն ու իր բիւր խաբկանքները...:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵԼՃԻԳԱՅԻՆ

Ա.

Ճիպուղի 20 Օգոստոս 1913

Վեհափառ թագուհի,

Գիւցազնութիւնը պելժ ազգին, որ գոհուեցաւ քաղաքակիրթ աշխարհի վրկութեան համար, քաջութիւնը, որուն օրինակ տուաւ, զայն մարտիրոս Հայաստանի քոյր կը հանդիսացնեն: Ամեն օր նա կը վերագրաւէ թշնամիէն կոխտուած իր հայրենի հողին մէկ մասը, և ատով կը տեսնենք Արդարութեան, Ազատութեան և Խաղաղութեան արեգակին բարձրանալը:

Կըզգանք մենք Անոր համար, անոր պատիւին ապրող մարմնացումը եղող արքայական Վեհափառ ամուլին համար, անհուն յարգանք, ելախտագիտութիւն ու գորով: Ու հայ բանաստեղծը խոնարհաբար կը խնդրէ Վեհազնիւ թագուհիէն, որ հաճի ընդունիլ ներփակ ոտանաւորը, իբր ցոլացումը մեր հողիին:

Ձայն Ձեզի կը նուիրենք, Վեհափառ թագուհի, վստահ թէ պիտի չի մերժէք մարտիրոս Հայաստանի աղօթքն ու արցունքները:

Այս առթիւ կը մնանք Նորին Արքայական Վեհափառութեան ամենախոնարհ ծառայ

Ռ. ԱՐԲԵՐԵԱՆ

Առ Նորին Վեհափառութիւն

Եղիսարէք թագուհի Պելճիոյ.

Ֆրանսի Ռազմադաշտ:

Բ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ
Թագաւորին եւ Թագուհւոյն

Լա Բանկ, 3 Սեպտեմբեր 1913

Պարոն,

Թագուհին կարդաց բանաստեղծութիւնը, զոր
բարեացակամ փափկանկատութեամբ զրկեր էիք իրեն:

Չափազանց զգածուած ձեր համակիր զգացումներէն, Նո-
րին Վեհափառութիւնը ինձ կը յանձնէ ուղղել ձեզ իր լաւա-
ւագոյն շնորհակալիքը:

Պատիւ ունիմ կատարել այդ պարտականութիւնը եւ
խնդրել ու ընդունիք իմ մեծարանացս հաւաստին.

Վասն Քարտուղարին
Բանբեր Սոսիալ-Դեմոկրատիկ
POUTAQUE



L'ARMÉNIE A LA BELGIQUE

*Viens, ma fille, c'est ta mère qui t'appelle.
Tu ne me connais pas? Oh, c'est tout naturel,
Regarde mes yeux... Te font-ils peur? Je suis aveugle...
J'ai pleuré tant de siècles que j'ai perdu mes larmes.
Mais je te sens martyre. Viens que je t'embrasse.
Viens, repose ton front sur le sein maternel,
Et pleure... Moi, je n'ai plus de larmes!*

*Moi, martyre d'Orient, j'avais perdu la lumière
Depuis bien longtemps. La Foi? Je n'y croyais plus,
Mais toujours là, dans une attente suprême,
Je restais bras tendus, vers l'horison lointain:
Personne ne me répondait, pas même la Mort!*

*Mais j'entendis ta voix, c'était hier,
Tu chantais là, il n'y a qu'une minute,
Tu chantais là l'Amour, la Foi et l'Espérance,
Puis tout d'un coup, silence, et un moment plus tard,
C'était cri d'agonie et de désespoir,
Terrible... Je l'entendis ici au Mont Ararat.*

*C'était une nuit pareille, je m'en souviens encore,
J'ai vu l'ombre d'une âme, chancelante, indécise,
L'horreur peinte sur son front, et, elle aussi,
Eperdue comme toi, s'est réfugiée ici.
C'était ta sœur; l'as-tu donc oubliée?
As-tu donc oublié la Pologne Martyre?*

*Je ne pus rien lui dire. Elle était si souffrante,
Pâle, elle tremblait comme l'oiseau perdant son nid.
Mais toi, qui as sacrifié la fleur de ta jeunesse,
Sur le sublime autel de la Liberté sainte,
Viens, ma fille, viens que je t'embrasse!*

*Je suis la Reine et l'Âme du Paradis perdu:
J'ai vu Dieu, là où quatre fleuves sacrés
Murmurent et chantent encore. L'épée en feu de l'ange
Frappa mon cœur; mais moi je suis restée,
Immobile, Statue d'Espoir et de Douleur!*

*Et les déluges des siècles passèrent sur mes printemps.
J'ai vu des trônes tomber, des monarchies croulantes,
Autour de moi, Hélas! et mes aiglons
Cherchèrent en vain comme nid les vagues des océans,
Les glaciers des Pôles et les déserts immenses!*

*J'y suis. Viens ma fille, repose toi une minute
Pleure! Tu peux pleurer, tu es belle et jeune encore,
De plus tu es martyre pour l'éternelle Justice,
« Dieu n'est pas trop haut, ni la France trop loin »
Vois du mont Ararat blanchir la Liberté!*

*Dans la rue des peuples, Toi, ô sainte Belgique
Aimée des dieux, Toi, première victime,
As donné tout ce que tu avais ; mais attends,
Dans les cyclones qui hurlent, dans les abîmes qui grondent.
Entends ! Dieu te parle.*

*Vois la fière Albion, et la Rome éternelle,
La protectrice de la Foi, la grande et sainte Russie,
Et la Serbie sublime et la Montagne Noire,
Adorent ton souvenir. Vois la France des lumières
Tresse avec des lauriers une couronne pour ton front !*

*On doit mourir, hélas ! pour être immortelle,
Pour les printemps il faut les froides tempêtes, d'hiver,
Pour le bonheur du monde la Croix du Golgotha,
Pour la Justice mourante il faut mourir Belgique !*

*Viens, ma fille, détends toi, ne pleure pas,
C'est l'Arménie martyre qui parle à la Belgique,
Regarde mes yeux. Te font-ils peur ? Je suis aveugle.
J'ai pleuré tant de siècles que j'ai perdu mes larmes,
Mais la vengeance suprême gronde dans mon âme,
Viens repose ton front sur le sein maternel,
Et pleure... Moi, je n'ai plus de larmes !*

Djibouti, le 12 Août 1915

(Այս ռսանաւորին հայերէն բնագիրս կորսնցուցեր եմ: Սուրէն Պարբեւեան շահ գեղեցիկ ու տառացի քարգմանութիւն մը հրատարակած էր Գահիրէի «Հոսանք»-ին մէջ, գոր սիրով ու հանոյնով պիտի օրինակէի հոս, եթէ զիս կանի մը սիրողներ չի պնդէին տառապանքով քարգմանութիւն մը ունենալու իրենց փափաքին վրայ: Կը համակերպիմ ու վերստին կը քարգմանեմ ճրանսերէնէն, առանց յանգիւրու ուշադրութիւն դարձրնելու, նոյնը պահելու դիտումով ռսանաւորին հոգին:)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՆՃԻԳԱՅԻՆ

*Եկ՛ուր, դուստր իմ, մայրդ է որ քեզ կը կանչէ,
Ձիս չե՛ս ճանչնար, օ՛հ, բնական է ատի,
Դիտէ՛ աչերս, վախ կ'ազդե՛ն քեզ. կոյր եմ ես,
Այնքան դարեր լացի, որ ալ կորուսի՛
Իմ արտասուք, ... այլ մարտիրոս քեզ կ'զգամ,
Ե՛կ, համբուրեմ՝ քեզ ու ճակատդ հանգչեցուր
Գրկիս վրայ մայրական ու արտասուէ
Ես արտասուք չունիմ՝ այլ եւս...*

*Ես՝ մարտիրոսն Արեւելից կորուսեր
Էի լոյսը վաղուց ու լոյս հաւատքին
Ձէի՛ հաւտար, այլ միշտ հոն
Կը մնայի սպասումով գերագոյն,
Կը մնայի անզօր թեւերս երկարած
Դէպ՛ հեռաւոր հորիզոն.
Ափսո՛ս, ոչ մին կուտար կոչիս պատասխան.
Ոչ իսկ Մահը ազատարար...*

*Ու գիշերին մէջ լսեցի ձայնդ երէկ,
Դուն կ'երգէիր, պահիկ մ'առաջ էր միայն,
Անմահ Հաւատք, Յոյսն ու Սէր,
Ապա յանկարծ լրոտւթիւն ու քիչ մը վերջ
Անյուսուածեան, հոգեվարքի ճիչ մ'էր որ
Մինչեւ Մասիս կը հասնէր...*

*Նման գիշեր մ'էր կը յիշեմ՝ տակաւին,
Տեսայ ստուերն հոգիի մը դողգոջուն,
Ճակտին սարսափ նկարուած,
Ու քեզի պէս խելայեղ քո՛վս էր եկած,
Արծուերոյնիս մէջ փնտռելու ապաստան,
Շուար մոլոր քայլերով:*

*Տառապանո՞ծ ու տարբաղդ քոյրդ էր ան,
Ժամանակը ջնջե՛ց իր դէմքը մտքէդ
Ու մոռցա՛ր դուն հէք նահատակ Բողոնիան...*

Ոչինչ կրցայ ըսել, այնքան տրտում էր,
 կը դողըղըղոր տժգոյն, բաղդէն հալածուած,
 Բունակորոյս զերդ թռչուն,
 Այլ զոհեցի՛ր դուն որ ծաղիկ քու հասակ
 Ազատութեան սուրբ խորանին վրայ վսեմ,
 Եկո՛ւր, դուստր իմ, եկուր որ քեզ համբուրեմ...

Ես՝ կորուսեալ Դրախտին ոգին, թագուհին,
 Տեսայ զԱստուած հոն՝ ուր գետեր չորեքին
 Նուիրական կը մրմնջեն, կ'երգեն դեռ:
 Հրեղէն սուրն հրեշտակին սիրտըս զարկաւ
 Այլ ես մնացի զահուս վրայ անսասան,
 Յոյսին, Յաւին զերդ արձան:

Ու դարերու ջրհեղեղները անցան
 Փթթինազեղ զարուհներուս վրայէն,
 Տեսայ շուրջս խորտակումը պետութեանց,
 Անկումը վէս գահերու,
 Եւ արծուիկներս, ափսո՛ս, ի դուր վնտոեցին,
 Բոյն՝ կոհակաց ու բեւեռի սառնուտքին
 Ը՛Անապատի ամայքին մէջ անսահման:

Ե՛ս եմ, դուստր իմ, եկուր վայրիկ մը հանգչէ,
 Լաց. կրնան լալ. դեղափթիթ ես դուն դեռ
 Ու մանաւանդ մարտիրոս,
 Յաւերժական Արդարութեանը համար.
 «Աստուած վեր չէ՛ ոչ ալ Ֆրանսան շատ հեռուն»
 Ազատութեան շողա՛լը տես Մասիսէն:

Ազգաց խոյժին մէջ սրբազա՛ն Պելճիզա,
 Աստուածներէն սիրուած դուն զոհ առաջին,
 Տուիր ինչ որ ունէիր,
 Բայց սպասէ և ունին դիր Աստուծոյ,
 Տես ոռնացող ուրականէն ու գոռացող անդունդէն
 Եհովան քե՛զ կը խօսի...:

Հպարտ Ապիոնն յաւերժական Հոովմին հետ,
 Ու սուրբ Ռուսիան, պաշտպանը սուրբ հաւատքին,

Վսեմ Սերպիան ու Սեւ Լեռ,
 Գու յիշատակըդ կը պաշտեն ու Ֆրանսան
 Լոյսերու մեծ Ֆրանսան դալար դափնիով.
 Ճակտիդ պըսա՛կ կը հիւսէ:

Անմահնալու համար հարկ է մեռանիլ,
 Գարնանց համար սառնամանի՛քը ձմրան,
 Բարօրութեանն աշխարհի
 Համար հարկ են ցաւի Սաչն ու Գողգոթան,
 Ու մահամերձ Արդարութեան ալ համար
 Պէտք է մեռնիլ, Պելճիզա...:

Եկուր, դուստր իմ, հանգչէ՛, ալ մի՛ արտասուեր,
 Գեզի խօսող Հայաստա՛նն եմ մարտիրոս,
 Դիտէ՛ աչերս, կո՛յր եմ ես,
 Դիտէ՛ աչերս, վախ կ'ազդե՞ն քեզ, կո՛յր եմ ես.
 Այնքան դարեր լացի, որ ալ կորուսի
 Իմ արցունքներ, այլ հոգւոյս մէջ գերազոյն
 Սուրբ վրէ՛ժը կ'որոտայ.
 Ճակատըդ դիր կուրծքիս վրայ մայրական
 Եւ արտասուէ, ես արտասուք չունի՛մ ալ...:

Ճիպուղի 12 Օգոստոս 1915



Տ Ա Ր Ա Գ Ի Ր Ա Ր Ք Ա Ն Ե Ր

1916 Ապրիլ 15

Պելճիոյ դիւցազնական Ալպէրը իր հիանալի ընկերուհիին հետ կառչած է իր հայրենեաց արեւմտեան կողմը բարբարոս հորդաներէ գերծ մնացած ափ մը հողին: Սերպիոյ Բիէրը իր անպարտելի բանակին բեկորներուն հետ բռնած է տարագրութեան ճամբան: Դժբաղդազոյնը սակայն Սեւ Լեռի ծերունազարդ ու հոկայ թագաւորն է, Նիքօլան: Իր նախնիքը թուրք

արշաւանքին դէմ ճակատ տուին դարերով, ու հիմակ, Հապլւ-
պուրկի և Հոհենձոլլէրնի զիշատիչ արծիւները եկեր են տեղա-
հանել զինք իր արծուերոյնէն: Գոբաղդ տարազի՛ր արքաներ...:

Այսօր Վլատիվոսթոքէն եկան Ֆրանսա գացող առաջին
ռուս զինուորները Լօհվիցքի գօրապետին հրամանատարու-
թեան ներքեւ: Զօրապետն ու սպաները ինծի եկան: Զօրավա-
րին ձեռքը համբուրեցի: Ռուս բանակը մտած էր Հայաստան
և ըսի իրեն, թէ իբր Հայ երախտապարտ էի Սրբազան Ռու-
սաստանին: Լօհվիցքի մեկնեցաւ հիւպատոսին տունը և սպա-
ները քովս մնացին: Երկար ժամեր անցուցինք ու մանաւանդ
իրենցմէ մին Ուքրանիոյ կոստրոսներուն սերունդէն և ուղ-
ղակի ժառանգ՝ անապատի կեանքիս հազուադիւտ բոլորները
ապրիլ տուաւ ինծի: Ալեքսանդրո-վօլ է եղեր, հայուհի մը սիրած,
ամուսնացած հետը ու քանի մը բառ հայերէն ալ կը խօսէր:

« Կինս ըսաւ թէ հոս հայ բանաստեղծի մը պիտի հանդի-
պիմ ու յանձնարարեց որ լուսանկարդ ու ձեռագիրդ զրկեմ
իրեն: Սակայն դուն աւելին պիտի ընես: Այս իրիկուն կար-
միր Խաչի ի նպաստ հանդէս մը պիտի տանք: Ընկերներուս
կողմէն պիտի խնդրէի որ բան մը գրէիր հոս, մեր ներկայու-
թեան ու կարգայիր իրիկունը: Այդ գրելիքդ պիտի զրկեմ
լուսանկարովդ միասին կնոջս »:

Շամբանեան արդէն հրդեհած էր ճակատնիս: Բոլորակ մը
կազմեցին ու խայտազին երգել սկսան, մինչ . գօրազունդին
ռուս քահանան շրջանակին մէջտեղ կը պարէր: Գրասեղանիս
առջև անցած և ամփոփուած իմ մէջ, գրեցի « Սև լեռի Նիքօլա
թագաւորին բողոքը առ Աստուած »: Կարդացի իրիկուան հան-
դէսին ու բնագիրը յանձնեցի բարեկամ սպային, որ լուսա-
նկարով միասին զրկեց կովկաս:

ՍԵՒ ԼԵՌԻ ՆԻՔՕԼԱ ԹԱԳԱՒՈՐՆ ԱՌ ԱՍՏԻԱԾ*

ՄԱՍՆԱԿՈՐ ԱՐՏՕՆՈՒԹԵԱՄԲ ԶՕՆՈՒԱԾ Ն. Վ. ՆԻՔՕԼԱՅԻՆ

Աստուած,

Ոչ մէկ տեղ կար իմ երկրիս մէջ ամայի

Ուր առուներ երգէին ու ծաղիկներ ու դալարներ ժպտէին,

* Այս ներուածը զրկեցի տարապոլ մեծ ամուսնականի, ի Ֆրանսա որ չափա-
զանց յուզիչ նամակով մը պատասխանեց: Ներկայ քաղվանութիւնը ժրանսերէնէն՝
Պարբեւեան բարեկամիս կը պարտիմ ու կ'արտասպիմ իր «Հոսանք»էն: Բ. Ո.

Սև ժայռեր միայն՝ վերեւն անեղ վիհերուն,
Որոնցմէ խոյս կ'ուտային գարուններն և ուր ձմեռը կ'իշխէր
Բոյնի մը տե՛ղն էր լոկ արծուին համար և իր ձագերուն
Ուր մորիկն յաւերժական իր հեծկլտանքը կ'որոտար,
Փոքրիկ անկիւն մ'աշխարհի, մօտիկ այնքան կապոյտ երկնից
Բայց կոթողն էր անիկա հպարտ ճակտով ու անվկանդ,
Որ քամահրած էր կոհակները բնուածեան .
Այնքա՛ն երկար դարերով...: Պէ՛տք էր որ ան անհետանար...
Պէ՛տք էր որ ժանտ մարդասպանը Հապսպուրկներուն
Վրաս արձակէր իր հրոսներն և խոշտանգուած ես ծերունի՝
Աքսորական հեռանայի՛ հայրենիքէս աւեր ու քանդ
Եւ ապաստա՛ն վնտրոէի գիրկն այն վսեմ երկրին,
Որ է ՖՐԱՆՍԱՆ .:

* * *

Լացած չէի՛ ես երբէք, ո՛վ Աստուած, բայց Դուն տեսար
Իմ արցունքներս գիշերներուն մէջ այն մռայլ .
Կ'ըսեն թէ Դուն զիս կը թողուս, թէ Դուն ի՛նքդ զիս կը զարնես,
Բայց ճակատս ես չե՛մ ծներ, և միշտ յոյսով ահադձուն՝
Կը հաւատա՛մ արդարութեանդ ու սրբազա՛ն յաղթանակի՛ն...:
Արդէն սեմին վրայ մահուան՝ ես կը տեսնեմ, կ'ուզեմ տեսնել
Ազատութեան արշալոյսը Լովչէն լեռան վերեւ ծաթած,
Ու կը լսեմ անգամ մըն ալ իմ սարերուս վրայ սեաւ
Խրոխտ երգերը ռազմաշունչ իմ ամենի արծուիկներուս...:

* * *

Տեսա՛յ արդէն, ո՛վ Հաւատքի Պաշտպան, ո՛վ Սուրբ Ռուսիա,
Սուրիդ կայծակն, որ Կովկասի բարձունքներէն
Մուրթ Արեւելքը կը ճեղքէր դէպի Դրա՛խտը խաւարամած,
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ վրիժառու:
Տեսա՛յ տղաքը Ֆրանսային պողոփատէ հողիներով,
Որ Մարնի ու Վէրտէճնի վրայ անմահ դաշտերուն
Վայրագ գազանը կ'զգետնէին:

* * *

Օ՛հ, մօտալուտ է վրէժը, միսիթարուի՛նք,
Յուսանք, ո՛վ աքսորի իմ եղբայրներս, Բիէ՛ն, Ա՛լպէր,

Դողդոջուն են քայլերս, աւա՛ղ, և այլ ևս ես չե՛մ կրնար
 Ձեր շարքերուն մէջ կոռելիլ, ո՛վ դուք, Ազգե՛ր մարտիրոս:
 Բայց Աստուծոյ կ'աղօթեմ և Ան ինձի կ'ունկնդրէ,
 Այո՛, իր պա՛րտքն է այդ, պէտք է լսե՛ս զիս ո՛վ Աստուած,
 Եթէ արդա՛ր ես, ինչպէս կը հաւատամ — : Աչքերս իսպառ
 գոցելէ առաջ,

Թոյլ տուր, թոյլ տուր ինձի տեսնել բոնապետութեան
 Խորտակումն առ յաւէտ: Եւ իբր հանգիստ շնորհէ ինձի
 Շիրի՛ մ'ազատ ի Ձէթինէէ, — և քո՛ւկդ ըլլայ արքայութիւնդ...:



12

ԲՈՒԱԼԻԻՆ (« Le POILU »)

... Ու բոնակալը կը կարծէր թէ Ֆրանսա այլասերած՝
 Պիտի բաւէր փողը զարնել որ պատնէշները իյնային.
 Կը յուսար թէ բաւ էր ցանած անմիութիւն ու մատնութիւն
 Ազատութեան եղբայրութեան դիմակներուն տակ ոսկեզօծ,
 Չուր կը կարծէր թ'անգղի գայլի լէզէոններն իր երբ գային
 Մեծ ժողովուրդը դողահար անոնց չիպ'տի՛ դիմագրաւէր
 Ու դիւրին որս բարբարոսին իր առջեւ ծունկ պիտի չոքէր,
 Եւ ինք գոռոզ պիտի դիմէր դէպ' աշխարհի մայրաքաղաքն
 — Անմահ Փարիզ — կը սխալէր, հոն էր Բուալիւն հաստա-
 տակամ...:

Արիւնը իր նախնիքներուն երակներուն մէջ չէ՛ր սառած
 Ու սրբազան հուրը կ'այրէր հողիներու անդունդին մէջ,
 « Հայրենիքը ի վտանգի՞ » ու խոյանքով մը գերագոյն
 Բոլոր աչերը եռագոյն սուրբ դրօշակին վրայ յառած
 Ու հեռաւոր որոտման պէս Մարսէյէզին գոռ շեշտերով
 Վերապրեցան անմահ օրերն յեղաշրջման անցեալ դարուն,
 Երբ նոյն Բուալիւն ետ կը մղէր եւրոպեան բիրտ բոնակալներ...:

* Poilu բաւարձի, մագեղ կը նշանակէ: Մեծ պատերազմին ժամանակի զինուոր-
 աները poilu կը կոչուէին: Ներկայ Բերուածք ի նպաստ Կարմիր Խաչի Երկրորդ հանդէ-
 սի նախ Գրեցի եւ արժանանուեցաւ: Հայերէն արձակ քարգնանութիւնը կուսաւ հոս:

Ու կ'երազէր Կիլյօմ՝ Փարիզն առնել զարնել սիրտն աշխարհի
 Անցնիլ վսեմ՝ Յաղթանակի հոյաշքեղ կամարին տակ
 Եւ Լինվալիտն ու Սէն Տրնին զընալ ուր արգ կը քնանան
 Մեծագոյն կայսրն ու Մեծ արքան, ըսել անոնց ստուերներուն
 Թէ Ֆրանսան ջախջախեցի և արձակեց իր հորդաներն,
 Այլ Բուալիւն կը շնչէր դեռ, Մարնը հոն էր յաւերժական
 Եւ ստուերը Պօնաբարթի, ժպտուն ինչպէս հին օրերուն,
 Սթէնթօրի պէս կ'որոտար « Ֆրանսայի քաջ զինուորներ
 Արի՛ք, յառա՛ջ, դէպի Պէրլին » ...:

Օ՛հ, բոնապետը չի՛ հաւտար, ալ չի՛ հաւտար իր աչքերուն,
 Իր գայլերը ետ են մղուած ու յոյսերը թաւալզըլոր,
 Կայսրութիւնը կը կործանի, կը նայի շուրջը շուարուն
 Իր ընկերներն հոն են, հեռուն, մին մեծ դահիճն արևելից
 Միւսն իշխան մը ուրացող և ապերախտ մի հայրասպան,
 Ու չորեքին հազագնեքէ նոյն աղաղակը կը հոնդայ
 « Չարնե՛նք Ֆրանսան » —

— Բոնաւո՛րներ, լոյսն չի՛ մեռնիր...:

Դահիճ դժբաղդ Պելճիգային ու մարտիրոս Հայաստանին
 Բազըը հոն է ու ջղածիզ իր մատներով գրեց արդէն
 Քու ամպամած ճակտիդ վրայ « Մանէ թէկէդ Փարէս » անեղ...
 Անարժան ես նոյն իսկ արտուո՛ւ մինակութեանն Սէնթ Էլէնի,
 Ուր աքսորի տարիներուդ որոճայի՛ր ոճրիդ վրայ...:
 Կ'ուզեմ որ շատ ապրէիր դուն անհուն շիրմաց յաճախանքով
 Լուվէն, Թէրմօնտ ու Հայաստան, իմ դրախտագեղ Մալաթիան,
 Տեսնէիր միշտ շրջապատուած հէք գոհերուդ ստուերներով,
 Ատելավառ զարկին ներքե քու ձեւագե՛ղծ խրճմտանքիդ,
 Որ տեսնէիր քու աչքերով Ազատութիւնն յաւէտ ազատ,
 Ալգաս Լօրէնը Ֆրանսական և զգնիլը մահէդ առաջ
 Քու անիծեալ անունըդ վէս մոռացումով մշուշապատ...:
 Որովհետեւ չի յիշեցի՛ր անդունդները ճակատագրին
 Մութ ու պատրաստ ընկղմելու Ատտիղանները իրենց մէջ
 Ու կամովին մոռցար նոյն իսկ Սուրբ օրէնքը յաւերժական,
 Թէ Բուալիւն աւելի վեր ու Ֆրանսայէն հզօրագոյն
 Կան, կը մնան Լոյսն ու անմահ Արդարութիւնն աստուածային:

Ճիպուղի 13 Մայիս 1916

ՓԵՏՈՒՐՆԵՐԴ ՈՒՐ ԹՈՂԻՐ

Ճիպուղի 4 Նոյեմբեր 1916

Նաևերը կուզան իրարու ետեւ, շարան շարան ու անդադրում: Նոր Քալէտոնիայէն հաստ շրթունքներով ու տափակ ճակատ Քանաքներ, էնտօշինէն դեղին մոմի գոյնով մանր ու գաճաճ Աննամցիներ, Մատակասքարէն կանանչի գաղնոդ Հովաններ, ամենքն ալ կ'երթան արեւմուտքի ռազմաճակատը, ազգերու խառնուրդին մէջ հալելու համար: Այս իրիկուն Բէրլինին շոգենաւ մը եկաւ, հինգ մղոն հեռու խարսխեց և առտուն ժամը վեցին պիտի մեկնի: Մինչև կէս գիշեր կը կենամ վաճառատունը: Դուրսը մարդ մարդասանք չի մնար: Սրճարանը շատոնց կը փակէ դռները: Ամեն մարդ կը քնանայ, անյոյաներէն ու դժբաղդներէն գատ: Քունը ծանրացած է իմ ալ թարթիչներուս վրայ և արդէն երեք դռները փակած, կ'պատրաստուիմ վերջին երկուքն ալ գոցել ու վեր ելլել հանգչելու, երբ գլորելով, և սայթաքելով երկայնահասակ երիտասարդ մը ներս կը մտնէ ու կ'իյնայ աթոռի մը վրայ: Կարճ տափատ հագած է, խաքի գոյնով, ծունկին ջիղերը պրկուած: Մօրուք ու պեխ չունի վայեկեան մը առաջ ածիլուած ու յրդկուն երեսով: Աչքը կապոյտ բայց ծովի անհանդարտ ու քիչ մը պղտոր կապոյտը: Անգլիացի մըն է անտարակոյս, իրիկունը եկող շոգենաւէն դուրս ելլող միակ ճամբորդը: Ուխտի մը կ'ուզէ. կը հասկըցընեմ փափկօրէն թէ սրճարան չեմ բանեցըներ ու թէ գաւաթ մը ջուր կրնամ տալ, եթէ ծարաւ ունի: Կարծես թէ չի լսեր ու պատասխան չի տար: Կը նստի անշարժ, աչքերը առանց թարթելու: Քառորդ մը, կէս ժամ: Ջղաձիգ շարժումով մը վաճառատան չորրորդ դուռը կը փակեմ ու լամբարը վար կ'իջեցնեմ մարելու համար: Երիտասարդը ուշադրութիւն անգամ չի դարձներ ու կը կենայ գամուած: Կամ գինով է և կամ խենդ կ'ըսեմ ինքնիրենս և վախնալ կ'սկսիմ:

— Ժամանակը շատ ուշ է ու շոգենաւ դառնալ պարտիս, եթէ ոչ վերջը մակոյկ չե՛ս գտներ:
Իբր թէ ես չըլլայի խօսողը և ինքը մինակ ըլլար, աչքերը

կը փակէ ու կը մնայ արձանի պէս: Ձեռքս ուսին վրայ կը դնեմ մեղմով. չի՛ շարժիր: Կը ցնցեմ: Յանկարծական շարժումով մը ձեռքս ետ կը մղէ և արձանի դիրքը առանց փոխելու լուռ արտասուել կ'սկսի: Կը շուարիմ, կը կծկեմ շրթունքներս ու մտքէս կ'ըսեմ թէ գինովի մը հետ գործ ունիմ: Կարծես հասկցաւ մտքէս անցածը, բռնեց ձեռքէս ու քովը նստեցուց:

« Ես գինով չեմ, Որբերեան, տարիուկէս առաջ ասկէ անցայ ու երկու ժամէն աւելի խօսեցանք իրարու հետ: Ես Մաք Լիրին եմ, Սէյշէլեան կղզիներու Ռատիօ - հեռագրական կայանին տնօրէնը: Երկուք էինք. բարեկամս պատերազմի յայտարարութեան յաջորդ օրը իբր կամաւոր մեկնեցաւ Լոնտոն, ես ծովակալութեան հրամանով պաշտօնիս վրայ մնալ ստիպուեցայ: Տարիուկէս առաջ եկած ատենս, Անգլիա կը թողէի խեղճ մայրս, ու հրեշտակի պէս նշանածս: Ծերունի մայրս երկարամեայ հիւանդութեան պատճառով անկողին գամուած, աղօթելէ զատ բան մը չէր կրնար ընել, մինչ նշանածս առաջին օրէն կարմիր խաչի հիւանդապահներուն միացաւ: Առաջին ամիսները կանոնաւոր կերպով կը գրէր ինձի և այդ հեռաւոր մենութեան մէջ իր նամակները կուզային ամօքը բաժանումի դառնութիւնը: Սէյշէլեան ապառաժին գազաթը լքումը հոգելի կերպով բղքեց սիրտս: Գիշերները մինչև լոյս Ռատիօյի ընդունարանները կապած ականջիս կ'սպասէի անքուն յուսալով շարունակ ովկիանի խորերէն համնող փսրտութէ մը ձեռք բերել Գերման նաւատորմին ուր գտնուելուն տեղեկութիւնը, այնքան թանկագին իմ հայրենեաց համար: Ամիսը մէկ անգամ թղթաբեր շոգենաւը կուզար, առանց սպասուած նամակը բերելու: Հեռագրեցի քանի անգամ ու պատասխան չ'առի: Ամիս մը առաջ քարթ մը ստացայ իմ սիրականէս մանր ու սուր գրերով, առ, կարգա, եթէ երբէք արցունքներս տակաւին հետք մը թողեր են թղթին վրայ: »

Ձի կրցայ ընդմիջել զինքը, այնքան արագ ու հապճեպով կը խօսէր ու նոյն ատեն արցունքները կը հոսէին առատօրէն ու անընդհատ: Իրօք մանր ու սուր էին ֆարթին գրերը, կարծես յատկապէս սիրտը ծակծկելու համար շարուած: Ահա պարուհակութիւնը:

— « Սիրելի ճօնիս,
Իրաւունք չունիս ինձի համար իրար անցնելու: Հեռագրերուդ չի պատասխանեցի ու այս վերջին երկտողս պիտի ըլլայ: »

Վաղը պիտի ամուսնանամ բարեկամիդ հետ, որուն հանդիպեցայ հիւանդանոցը և որուն մէկ սրունքը աչքիս առջև կտրեցին: Խնամեցի զինքը իմ ամբողջ հոգիով և այսօր առաջին անգամ փայտակներու վրայ յենած մինչեւ պարտէզ եկաւ իմ հետ. ինծի կրթնեցաւ ու կեանքս ամբողջ իր նեցուկը պիտի ըլլամ: Քեզմէն կը նախընտրեմ զինքը, որովհետև ան գիտցաւ կատարել պարտականութիւնը հայրենեաց հանդէպ: Գնաց զիւցազնի պէս կոռեցաւ, մինչ դուն նախընտրեցիր ովկիանին հեռուները դասալիք ու պահուած մնալ: Ընդունէ, սիրելի ճօնիս, թէ իմ նկարագիրս ունեցող հոգիի մը համար անտանելի և ահուկ պիտի ըլլար, օր մը քու թեւդ մտնել պտոյտի մը համար, ու լսել ընկերուհիներուս հեղնական ծիծաղը — « Դասալիք, աղաւնեակի պէս երկչոտ, փետուրներդ ո՞ւր թողիր »:

« Լոնտոն պիտի չ'երթամ, լսեղճ ծերունի մայրս պիտի չի համբուրեմ: Պիտի երթամ ուղղակի ճակատ, խրամներուն մէջ գտնելու գերագոյն հանգիստը մահուան ու խաղաղութեան: Պիտի մեռնիմ զիւցազնի պէս: Բայց ըսէ՛ ինծի յանցա՞նք էր իմս եթէ Սէյշէլներու Ռատիօյի կայանը մնացի ծովակալութեան հրամանով: Իրաւունք ունէ՞ր ըսելու ինծի

« Դասալիք, երկչոտ աղաւնեակի փետուրներդ ո՞ւր թողիր »
 Եւ առանց պատասխանի սպասելու ու ձեռքս չի սեղմած ելաւ դանդաղուն քայլերով գնաց մութին մէջ անհետ եղաւ՝ Շուարուն աչքերով նայեցայ իր մեկնած ուղղութեամբ ու կարծեցի տեսնել մահուան ուրուականը որ կը հետեւէր իրեն զանկերու ահարկու ծիծաղով ու կրկնելով արձագանգի նման
 « Դասալիք փետուրներդ ո՞ւր թողիր... »



Թ Օ Ր Բ Ի Լ Ա Շ Ա Ր

Մէսսաժըրի, Իտալական, Հավրէզ, Թրանսաթլանթիք, քանի շոգենաւներ ընկղմեցան, ծովուն մէջ, իրենց խորունկէն զարնուած: Անոնք որ կուգան Միջերկրականէն, Մատակասքար կամ Ծայրագոյն Արեւելք երթալու համար, առժամապէս

ազատածներն են, որ երկու կամ երեք ամիս զարնուելու վախը չունին: Բայց երբ վերադառնան, անորոշ սոսկում մը կը պաշարէ էութիւնս: Կը կենամ ժամերով քարափին վրայ, կը դիտեմ իրենց հսկայական սիլուէթները, կ'ելլեմ վրանին ու կ'այցելեմ առաջինէն մինչեւ երրորդ բոլոր սրահները, ու վերադարձիս կ'ամփոփուիմ իմ մէջ, աչքերս փակած, կարծես թէ մտերիմ մը համբուրած ըլլայի վերջին անգամի համար: Նաւերը հոգի՛ ունին: Ելեքտրականութիւնը որ սարսուռով մը կ'անցնի իրենց մէկ ծայրէն միւսը, ցոռկին ու կողերուն զարնուող կոհակներուն ճողքիւնը ու հասարակածի փոթորիկներուն վայնասունը, ու մանաւանդ քառեակ թելերը որ կը կապեն երկու կայմերուն գագաթները Ռասիօյի անտես ու հիանալի յորձանքներուն, աս ամէնը տարօրինակ էակի մը կը վերածեն ծովերու հսկան, գերմարդկային ու գրեթէ հակաբնական, անիրական: Անոր համար ահարկու է անոնց մահն ալ:



Աթոս, Բօրթոս, Անտրէ Լըպօն ու Բօլ Լըքա, Մէսսաժըրիի չորս հսկայագոյն շոգենաւներն էին. չորսն ալ նոյն ձեւով ու մեծութեամբ կերտուած, Ծայրագոյն Արեւելից գծին համար: Աթոս, Բօրթոս... ու մտքով կը տեղափոխուէի Իզմիր, ուր գրականութեան նահապետին տունը կը հաւաքուէինք Մամուրեան Աթոնն էր, ես՝ Բօրթոսը, Տիվրիկեան Արամիս ու Հրանդ Տարդանեանը: Անոր համար ամեն Աթոսը գալուն, մշուշներուն մէջ ալեղարդ Մամուրեանը կը կախէի տեսնել: Նաւուն հրամանատարը Քօմանտան Տօրիս, կարճահասակ ու ալեւոր էր Մամուրեանին պէս, և անոր նման կապուտաչուի, ու մտերիմ մը այս տողերը գրողին: Վերջին անգամ գալուն՝ Ճիպուղիէն Սենեկալցի զօրքերու խումբ մը առաւ Ֆրանսա ճակատը տանելու համար: Խումբին ենթասպաներուն մէջ էին հրամանատար Քօլօնա Տիսթրիան, երկայնահասակ, ալիսոցաւոր հսկայ մը, որ մեր անապատ աշխարհին մէջ իր կեանքը մագնիսացնող Ֆրանսուհիի հմայիչ աչքերուն հանդիպեր էր ու կը յուսար պատերազմէն վերջ սիրոյ երազը իրականացնել, ու Սէրժան Վէնսան, թուխ ու սև աչուի համակրելի երիտասարդ մը, Ճիպուղիի հիներէն, արդէն ամեն ճակատներու վրայ կռիւ տեսած, մօրը մէկ հատիլը, որ կը դառնար նորէն ուղղմաճա-

կատ: Մէրժան Վէնսան նշանուեր էր Ֆրանսա, ու կուրծքին վրայ կը պահէր նշանածին մանրանկարը, իբր հմայեակ. և ամեն ինձի հանդիպելուն, գուրգուրանքով ցոյց կուտար պատկերը, ըսելով թէ գերման գնդակներուն դէմ հրաշալի արգելիչ մըն էր: Հետերնին ելայ Աթոսին վրայ ու չեմ գիտեր ինչու ամենուն հետ գրկախառնուեցայ, համբուրեցի Տօրիսը, Քօլօնա Տ'իսթրիան և Վենսանը, նոյն իսկ Սենեկալցի հսկայ տասնապետը որ հիանալի սև ճակտին խորը աղանիւի ժպտուն ու պճլտացող աչքեր ունէր:

... Տասը օր չիտեւեց, հեռագիրը շանթահարեց զմեզ, Աթոսը թորթիլահար ընկղմեր է Միջերկրականի մէջ: Էնտօշին էն եկող կիներ, մանուկներ, ծերունիներ, ազատեր են Սենեկալցիներուն հիանալի անձնուիրութեան շնորհիւ. Քօմանտան Տօրիս չէ ուզեր ապրիլ Աթոսէն վերջ ու կամրջակին վրայ կանգուն մինչեւ վերջը, սուզեր է նաւուն հետ անդունդին մէջ: Քօլօնա Տ'իսթրիա ու Վէնսան, երկուքն ալ իրենց պաշտօնին գլուխը, հսկած էին ազատուածի գործին, և հրաւնայա՞, որ Սենեկալցիները իրենցմէ առաջ նետուին նաւակ ու հեռանան վտանգէն, հակառակ անոնց պաղատանքին: Երկուքն ալ կանգուն, ճակատնին բարձր, հոգինին աւելի վեր, սուզած են նաւուն հետ: Վերջին վայրկեանին սակայն, կը մտածեմ թէ Վէնսան դողացող ձեռքերով հանեց կուրծքէն իր պաշտելիին լուսանկարը ու Քօլօնա Տ'իսթրիա փրփրադէզ ալիքներու մէջէն խորասուզեց նայուածքը դէպի հեռաւոր ձիպուղիի ամալու թիւնները ու կեանքի չիրականացած երազին գերագոյն մնաս բարովը մրմնեց...: Քանի մը օր տեւեց Աթոսին սարսուռը հոգիս մէջ: Աղօտ աչքերուս առջեւ Յունուարի ցուրտ օր մը բացուած փոս մը կը խորունկնար, ուր կ'ամփոփէինք տարիներ առաջ սև վշտահար Աթոսը, ալեզարդ Մամուրեան...:

* *

Ամենէն աւելի սակայն ճէմնային ընկղմիւն էր որ զիս ցնցեց ու լացուց — հին շոգենաւ մը, որ երկար տարիներէ ի վեր Մատակասքարի գծին վրայ կը բանէր: Տասնեկինգ տարի առաջ մեզ ձիպուղի բերող շոգենաւն էր, տախտակամածները այն ատենէն մաշած, կողքերուն սև ներկը պատառ պատառ ու կարմրախառն, որ սակայն՝ գէշ աղէկ՝ կը քալէր ճամբան, թանկագին ծառայութիւն մը մատուցանելով, իրմէ սպասուա-

ծէն աւելի: Դանդաղաքայլ էր աւելի, ու տարօրինակը այն է որ պատերազմի առաջին տարիները մասնաւոր բաղաւորութեամբ մը խնայուած էր իրեն բաղդէն, ուրիշ աւելի տոկուն ու գեղատեսիլ շոգենաւներ գացած էին ծովուն խորը, ճէմնան կը սուրար շարունակ, կարգ մը ծերունիներու նման, որ կը շարունակեն կեանքի վերելքը, վաղաժամ՝ ինկողներու խումբի մը մէջէն անցնելով, հեզնող ժպիտ մը իրենց շրթունքին վրայ: Մարսիլիայէն մեկնումին ճէմնային հրամանատար կ'որոշուի և պաշտօնին գլուխը կ'անցնի անմիջապէս Քօմանտան Մէրիք Քրիմէ անուն փոքր շոգենաւին նախկին հրամանատարը: Քօմանտան Մէրիք պաղարիւն գիւցաղն մըն էր:

Ամիսներ առաջ Միջերկրականի մէջ երեք ժամուան կռիւէ մը վերջ գերման ընդծովեայ մը յաջողեր էր ընկղմել, իր փոքրիկ շոգենաւին վրայի փոքրիկ թնդանօթը գործածելով: Ընդծովեան տեսնելով Քրիմէի պղտիկութիւնը և կաղնի կաղ ընթացքը, ուզեր էր խնայել թորթիլը, և արձակ համարձակ ծովին երեսը ելլելով թնդանօթի հարուածներով ընկղմել ուզեր էր զանի: Երեք ժամ տեւեր էր անհաւասար կռիւը, ու վերջապէս գերման Գողիաթը փոռեր էր ծովին խորը: Քրիմէն Մատակասքար հասնելուն, Քօմանտան Մէրիք գտեր էր Ֆրանսահան՝ ծովակալութեան մէկ հեռագիրը, որով իբր վարձ իր քաջագործութեան Պատուոյ Լէգէոնի սպայ կ'անուանուէր, ու պատերազմի խաչն ու զինուորական շքանշանը կը շնորհուէր իրեն: Քրիմէն ձիպուղի վերադառնալուն հիանալի ընդունելութիւն սարքեցինք իրեն քանի մը բարեկամներով վաճառատանս մէջ ու տօնեցինք շքանշանները և անոնց արժանապէս տիրացող համեստ գիւցաղնը: Ինձի համար երկիցս նուիրական էր Մէրիք, Պոլսոյ հայկական ջարդերուն Ղալաթիոյ քարափը գտնուող Ֆրանսական Օրթեկա շոգենաւին երբեմնի երկրորդը, որ կամրջակին վրայ եռագոյն դրօշ մը նետած, երկու ձեռքը ատրճանակ, ետ մղած էր հայաստան ամբոխը: Նոյն ասպետական նկարագիրը պահած էր Մէրիք, աստիճանէ աստիճան իր բարձրացումին, նոյն իտէլապաշտ հոգին, որ ամեն ձիպուղիէն անցնելուն, կուգար քանի մը ժամ իմ քովս կանգ կ'առնէր ու կը հարցնէր գուրգուրանքով

« Ի՞նչ լուրեր Հայաստանէն... »:

Ընդծովեային ընկղմումին յաջորդող իր քանի մը երթեւեկները անհանդարտ ու արկածալից եղան: Գերման միւս ընդ-

ծովեաները ամեն զնով կ'ուզէին վրէժնին հանել, ու քանի անգամ հալածեցին Քրիմէն: Ծովակալութիւնը ուզելով պահել Մէրիքի կեանքը, ուրիշ աւելի մեծ շոգենաւի մը հրամանաւ տարութիւնը տուաւ անոր: Տարօրինակ իրողութիւն, ընդծովեաները ալ չի հալածեցին Քրիմէն ու սկսան հետաադնել այն շոգենաւները, որոնց համանատար կը կարգուէր Մէրիք: Եւ այդ պարագան իսկ է ամենէն ահարկուն ու անբացատրելին: Գերման լրտեսական զրութիւնը իր կաշուն ու լայրծուն ցանցերուն մէջ առած էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, պատերազմին երկրորդ տարուան մէջ անպիտական ծովակալութեան մէկ գրագիրը կը բռնուէր հրացանի, ապացուցուելով թէ ծրարութեամբ գերման նաւային սպայ մըն էր, Փարիզի մէջ զեղաշքեղ դերասանուհի մը կը զարնուէր իբր լրտեսուհի և քանի հարիւրներ: Ու Քօմանտան Մէրիք ամեն զալուն կ'ըսէր որոշակի, թէ ինք նշանակուած էր իբր կեղրոն Միջերկրականի գերման ընդծովեաներուն ատելութեան: Սակայն միշտ կը ծիծաղէր, կը հեգնէր, ու կը վերսկսէր իր արկածալից ուղեւորութիւնը: Ֆրանսական ծովակալութիւնն ալ կարծես համոզուած էր Մէրիքի փայլուն աստղին ու ամենէն վտանգաւոր նաւերու հրամանատարութիւնը իրեն կը յանձնուէր: Ճէմնան այդ նաւերէն էր: Եզրիտոսի և Սուրիոյ բանակին համար մէջը լեցուն ռազմամթերք: Վերջին ժամուն Մէրիք կը նշանակուի հրամանատար: Միջերկրականին մէջտեղը ընդծովեան կը հասնի իրեն ու փոխանակ ծովուն երեսը ելլելու, խորունկէն կարծակէ թօրբիլը: Նաւը վայրկենապէս երկուքի կը բաժնուի, ռազմամթերքի պայթիւնին ահուկի որոտումով: Մի քանի հարիւր ճամբորդներէն միայն տասներեք հոգի ազատեցան: Մէրիք չի կար անոնց մէջ: Անկէ վերջ քանի անգամ եկաւ Քրիմէն, կաղն ի կաղ ու հեւալով: Անոր հասած օրերը սուգի օրեր էին ինծի համար: Ով ահաւոր տարիներ Արդարութեան եւ Ազատութեան պատերազմին, որ կեանքի ու երիտասարդութեան յենակէտը զէպի անդրաշխարհ դարձուցիք, հակառակ մռայլ մղձաւանջներու անհետացումին յաղթանակի արշալոյսին ընդ առաջ, զեռ ընդ երկար պիտի մթազնէք մարդկութեան հորիզոնը, պլլուած ձեր հեղձուցիչ շոգիներով ու մշուշներով, կտրատուած անհուն ու որոտագին փայլակներով, ու ձեր քառսին վրայ գլխահակ, պիտի որոնենք մտերմական պայծառ ու շոգացող նայուածքներ, փակուած առյաւէտ, երբ

ձեր խորերէն բիւրաւոր ոգեվարի հառաչներ պիտի արձագանգեն յաւիտեան:

« Աստուած, Հայրենիք, Ազատութիւն, Մայրիկ... »

.*

Նաւապետ ու նաւաստի, անոնք որ կեանքերնին կապած են ծովուն ալիքներուն, ընդհանրապէս հետերնին կենդանի մը կ'ունենան, կատու մը, շնիկ մը կամ թռչուն մը, որուն վրայ կը կեղրոնացնեն իրենց սէրն ու գուրգուրանքը մինչև ցամաք հասնելնին: Աթոսին մէկ նաւաստին խոճկոր մը ունէր, ընտանեցած, որ տիրոջը հետ սեղան կը նստէր, ու նոյն խըշտեակին մէջ կը կծկտէր կը պառկէր: Ուրիշ նաւաստի մըն ալ սարդի մը սիրահարած էր, որուն համար պարապ ժամերուն ճանճեր որսալով կ'գրաղէր: Ճէմնային երկրորդ սեղանապետը Սիամի կատուներու ընտանիք մը ունէր, հայր մայր ու երկու զաւակ, հիանալի ու ազնիւ ցեղ մը կատուներու, փայլուն, գորշագոյն ամբողջ ջիւղ, զրեթէ առանց ոսկորի, շոյուելու համար յատկապէս ստեղծուած կարծես: Քանի անգամ ուզեցի գնել չորսն ալ ու ցամաք հանել: Սեղանապետը մերժեց շարունակ: Օր մըն ալ ինծի հաճոյք պատճառելու համար ձագուկներէն մէկը տուաւ ու տուն բերի: Անունը Մինու դրին, ու քիչ ատենէն այնչափ ընտանեցաւ, որ կարծես մեր ընտանիքին մէկ անդամը եղած ըլլար: Կ'ըսեն թէ կենդանիները չեն խօսիր: Մինուն կը խօսէր, աչքով ունքով, շարժումներով: Շատ անգամ կուլար ու կը խնդար: Հիւանդ պառկած մէկ օրս խենդի մը պէս ցատկեց անկողնին վրայ թաւշապատ թաթիկները դրաւ կուրծքիս վրան ու ժամերով կեցաւ խորունկ նայուածքը աչքիս սեւեռած անշարժ: Ճիպուղիի կատուները վայրենի, բիրտ ու անընտել, միշտ ճանկել ու խոշտանգել կ'ուզէին Մինուն, որուն փափուկ ու ազնուական գեղեցկութիւնը մնայուն հակապատկերն էր իրենց չոր ու չար նկարագրին: Տարիէն աւելի ապրեցաւ քովերնիս, ու տարօրինակ զուգադիպութիւն, յանկարծ հիւժիլ սկսաւ, Ճէմնային թօրփիլահար լինելուն լուրը հասած օրերուն: Հալեցաւ հատաւ մոմի պէս: Մինունին ընտանիքը Ճէմնային հետ ընկղմած էր ծովերուն խորը, մենք ալ Մինուն, մեր տան ետեւը ծովին ափը պզտիկ հողակոյտի մը տակ ամփոփեցինք: Ինծի ուխ-

տավայրի մը պէս եղաւ այդ հողակոյար: Հոն կ'երթամ շատ անգամ՝ յիշելու բոլոր կենդանիները, աղնուազգի ձիերը, թղթատար աղաւնիները, դեղձանիկները, շնիկներն ու կատունները, որ նոյն քառասին մէջ անհետացան, պատերազմին յորձանքին մէջ ու որոնց դիւցազնական փառքը ո՛չ մէկ երգիչ անմահացուց:

Հանգչեցէք դուք ալ խաղաղութեամբ, ով անխօս ընկերներ մարդկային տառապանքին ու փառքին:



Ա Ն Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն



ՁԱՏՈՒԹԵԱՆ խորանին առջև ձիպուղիի հայ գաղութէն երեք հոգի տուինք ողջակէզ:

Օննիկ Քիրէճեան

Տրդատ Խոյեան

Օննիկ Պաշպաղիրկեանեան.

Օննիկ Քիրէճեան առաջին մեկնողներէն եղաւ, պզտիկ մարմնի մը մէջ մեծ հոգի մը, Ֆրանսա գնաց և առաջին ահարկու յոգնութիւններէն ընկճած, փլատակ դարձած ետ եկաւ ձիպուղի սիրտը ու կուրծքը խորտակած: Երկար չի դիմացաւ և առաջին հայ կամաւորը ձիպուղիի հրատապ աւագներուն տակ կը հանգչի հիմակ փայտէ պարզ ու սև խաչի մը ներքև: Մահուան նախընթաց իրիկունը զիս քովը կանչած էր: Գացի: Մայրը, եղբայրը և քեռորդիները կը կանչէր: Աչքերը իմ մատներով փակեցի:

Երկրորդը՝ Տրդատ Խոյեան՝ Ֆրանսա, Սուէնի ռազմադաշտին վրայ ինկաւ քաջի պէս, կուրծքը թշնամիին դէմ դարձուցած: Պատերազմական նախարարութենէն հերոսական մահուն պատուոյ սեւագիծ վկայականը դրկեցին, զոր հօրը պիտի զրկեմ:

Երրորդը՝ Օննիկ Պաշպաղիրկեանեան « անհետացած » է:

Տարիներով յուսացի թէ պիտի կրնայի հետքը գտնել, գերիներու, կամ վիրաւորներու ցանկին մէջ: Ամէն կողմ որոնել տուի: Յոյսս կտրած եմ այլեւս: Արդէն ինք վերջին, գրեթէ բռնի մեկնողը եղաւ, որ գիտէր, թէ մեռնիլ կ'երթար: Իր մայրն ու հայրը, երկիցս գրեցին ինծի Եգիպտոսէն, չի պատասխանեցի: «Անհետացած» էր, այսինքն յոյսի աղօտ նշոյլ մը կը մնար, զոր սակայն կ'ստիպուիմ մարել, այնչափ յոյսերուս նման: Անհետացած՝ ուսմբերու տակ, թունաւոր շոգիներու մշուշին մէջ, փլատակներու ներքև, ինկա՛ծ, որ ազատագրուի՝ Հայաստան:

* *

Տարիներ վերջ կ'ստանամ հետեւեալ նամակը Տրդատին հօրմէն:

Կ. Պոլիս — Գրեալը կղզի, 2 Յուլիս 1919

Ռ. Որբերեան

Ճիպուղի

Աղնուայարգ բարեկամ,

Թերեւս լսած էք մեզի պատահած դժբաղդութիւնը — տարաբաղդ Ազգանոյշիս դժբաղդ մահը, Տէր Աստուած զձեզ և ձեր սրտահատորները պահէ պահպանէ:

Ոչ նուազ մտատանջութիւն ունինք հինգ տարիներէ ի վեր մեր Տրդատէն բնաւ տեղեկութիւն մը չունենալնուս, հակառակ քանիցս մեր դիմումներուն: Արդ ազնիւ բարեկամ, ձեզ դիմելով կ'աղաչեմ, ի սէ՛ր Աստուծոյ, հաճեցէք երկտողով մը մեզ տեղեկացնել թէ այժմ ո՛ւր կը գտնուի Տրդատս, եւ եթէ ատկէ մեկնած է, ե՛րբ և ո՛ւր գացած: Իսկ եթէ Աստուած մի՛ արասցէ, ուրիշ դժբաղդութիւն մը պատահած է, դարձեալ խնդրեմ իմացնել մեզ, որպէս զի լանք ու սգանք մեր սև ճակատագրին վրայ, վասն զի չեմ կրնար երեւակայել թէ Տրդատ տեղդ գտնուած և առողջ եղած ըլլայ և գէթ երկտողով մը տեղեկութիւն չի տայ մեզ: Բարեմաղթելով անխառն երջանկութիւն և ամեն բարօրութիւն Ձեզ և ձերայնոց համար, ողջունիւ սիրոյ և օրհնութեան,

Աղօթարար

ՎԱՀԱՆ ՔՉ. ԽՈՅԵԱՆ

* *

Օննիկ Քիրէճեանին ծերունի մայրը, եթէ կ'ապրի դեռ և Օննիկ Պաշպազիրիեանեանին ծնողքը, նոյն հարցը պիտի ուղղեն ինծի, ու պիտի լացընեն զիս: Ի՞նչ ըսեմ իրենց, ի՞նչ պատասխանեմ:

Արտասուեցէ՛ք տարաբաղդ ու երջանի՛կ ծնողներ, հայ անմա՛հ կորիւններու, ու համբուրեցէ՛ք ազատ հայրենեաց եռագոյն ու գեղածաւալ դրօշը, զոր ձեր զաւակները պարզեցին իրենց զիւցազնական ու փառաւոր անկումով:



ՄԱՐԳԱՐ ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ

Արցունքէն մթազնած են աչքերս, երբ իր յիշատակի ծաղկին նման դարկահար դէմքը ուրուագծել կը փորձուիմ, տրտմազին այս նկարներու շարքին մէջ: Իզմիրի Վանանդեցիներուն վերջին շառաւիղն էր: Ահա իր ազգաբանութիւնը.

Ա. Տէր Յովհան Միրզա Վանանդեցի, քահանայ, վարժապետ ու քերթող, Արփիական ու Ոսկեդար Հայաստանի անմահ երգիչ, որ անցեալ դարու սկիզբին, Հայաստանի շունչն ու զեփուր կը բերէր դէպի Հոմերոսի հայրենիքը:

Բ. Տ. Մարգար Միրզա Վանանդեցի քահանայ, վարժապետ ու քերթող, առաջինին արժանընտիր զաւակ, և յաջորդներուն հիանալի հայրը:

Գ. Մարգիս, Յուսիկ, Յովհաննէս, Նշան և Օհան Միրզա Վանանդեցի, շողագին աստղերու բոյլ մը, որ լիւռնական թուականներուն Իզմիրը հրահրեցին, հիմնադիր անդամները Վասպուրական թատրոնին ու սոխակները մեր մոռցուած ու տարաբաղդ հայրենեաց:

Դ. Եւ անոնցմէ Յովհաննէս երկու զաւակ թողուց ազգին: Մին «Հայաստան երկիր դրախտավայր» երգը, որ տակաւին կը ծաւալի ու կը սաւառնի երկնասրլաց Արարատին վերեւ, ու միւսը Մարգար, սքանչելի հայ մը, որուն մելանուշ հոգին, ափսոս, խառնուեցաւ իր ողբացեալ հօր յօրինած երգին շեշտերուն:

Սովորական կեանք մը չէր իրր: Իզմիրի պատանութեան շրջանին ինք առաջի՛նն էր, որ կիրթ ու գործունեայ երիտասարդներու խմբակի մը հետ հիմնեց ընկերութիւն մը, աղքատ այլ յառաջագէ՛մ սաներ ու սանուհիներ Եւրոպա զրկելով կըրթել տալու համար: Իզմիրէն մեկնեցաւ Ճիպուղի իրր իր քեռայրին Մաթիկ Գէորգօֆի նոր հիմնած առեւտրական տան պաշտօնեայ, անկէ մեկնեցաւ Ատիս Ապապա, իրր վարիչ նոյն տան և ամբողջ տասնեւվեց տարիներ անցուց հոն ու խիզախ և անձնուրաց գործունէութեամբ պատկառելի ու տիպար դիրք մը գրաւեց: Այդ 16 տարիներու միջոցին երեք ամիս միայն մեկնեցաւ, այցելելու համար Տիրէ Տավա իր ողբացեալ քրոջ գերեզմանին և Իզմիր իր անտիական հասակի յիշատակներուն: Վերադարձաւ Կորէն ամփոփուելու համար փոսկրէ աշտարակին մէջ, իր անցեալի իտէալին ծնրադիր, որովհետև զրական կեանքի փոթորիկներուն մէջ հայուածքը սեւեռած պահեց յարժամ նուիրական ու սրբազան նպատակին, որ էր օրին մէկը հիմնել հաստատութիւն մը հայ աղքատիկ սաներ Եւրոպա զրկելու և բարձրագոյն կրթութիւն մը տալու համար: 1917 Յուլիսին իջաւ Ատիս Ապապայէն Եւրոպա մեկնելով իր փլատակ առողջութիւնը դարմանելու համար: Տասնեւվեց տարիներու տաժանելի յոգնութիւնները խախտած ու աւեր դարձուցած էին իր մարմինը: Ութը օր հազիւ մնաց մեր տունը: Ութը օր հրաժեշտ առնելու համար իր Մարիէն, ութը օր մնաս բարովի զսպուած հեծկտուք մը: Ընկերացանք իրեն մինչև շոգենաւ: Ու կ'ընկերանային իրեն Ատիս Ապապայի հայ զաղութին մաղթանքները վաղափոյթ վերադարձին համար, որովհետև գրեթէ ամենուն, առանց բացառութեան, ինք եղած էր եղբայրական ձեռք մը երկարող նեղութեան եւ անկումի օրերու միջոցին: Հեռագրեց Բօրթ-Սայիտէն, հեռագրեց Մարսիլիայէն, իր մեզի ուղղած վերջին մնաս բարոյները եղան անոնք:

Սեպտ. 19 ին սուր թոքատապ մը կ'զգեսնէ զինքը Փարիզի մէկ անկիւնը: Քանի անգամ իր քոյրը Մարին կը կանչէ: Ինչո՞ւ արդեօք չենք լսեր մեզ կանչող սիրելի հոգիներու վերջին հառաչները: Փարիզի հովիւր Վոսաճապուհ, Վանանդեցիներու հոգին եղբայրը, ու զարմիկը Արամ՝ Տէտէեան իր շնորհալի կնոջ հետ սնարին քով կը գտնուին՝ Փակեցին անոնք

սեւ ու պայծառ աչքերդ, իմ սիրելի՛ Մարգարս, սակայն Մարիդ, զոր կը կոչէիր, հեռո՛ւն էր, ու աչքերդ կ'իսարաց, կարօտով մեկնեցար աշխարհէն:

* * *

Իր կտակով, ունեցած, այնչափ երկար տարիներու տըքնութեամբ շահած զրամին մէկ տասներորդը Իզմիրի բարենպատակ հաստատութիւններու կը թողու հաւասար չափով:

Ս. Ստեփաննոս և Ս. Լուսաւորիչ եկեղեցիներ,

Հայ որբանոցներ,

Ազգ. Լուսաւորչեան հիւանդանոց,

Մեսրոպեան վարժարան:

Ու գիտակ իր հոգիի փափաքին, քոյրը հազար անգլիական ոսկիի ֆրանսական պարտաթուղթ յանձնեց Հայ. Բարեգ. Ընդհ. Միութեան անոր տարեկան հասոյթովը Հայաստանցի հայ վարժապետի մը աղքատիկ այլ յառաջադէմ մէկ զաւակը Եւրոպա զրկելու համար մնայուն կերպով « Մարգար Միրզա սան » անունով:

* * *

Փարիզ, Սէնթ Ուէնի գերեզմանոցին մէկ անկիւնը կը հանգչի առժամայ կերպով Վանանդեցիներու վերջին շառաւիղը: Օր մը, մօտաւոր ապագային, իր սիրական քրոջ հետ պիտի երթանք փոխադրել զինքը Վանանդ, հոն, ուր « Հայաստան երկիր դրախտավայրի » մելահունչ շեշտերը պիտի օրօրեն իր ցաւատանջ այլ անմահ հոգին, հայրենական մատուռին ստուերներուն ներքե:

* * *

Ինկան շատեր իտէալին ուխտաւոր,
Դեռ չ'ողջունած ազատութեան արշալոյս,
Երբ մարեցա՛ն մեր յոյսերը բիւրաւոր
Խաբկանքներու քառսին մէջ միզասոյգ,
Տարագրութեան տաժանքէն վերջ մաշեցնող
Երբ յաղթական կը ժպտէի՛ր ժիր, արթուն,
Եղբայր, ափսո՛ս, դու գրկեցիր օտար հող,
Վաղաթարշոմ ծաղկի մը պէս ինկա՛ր դուն...:
Այլ երազներդ թողուցիր մեզ կտակ,

— « Թող մենք անցնինք այլ ապրի՛ թող Հայաստան

— « Թող թարշամի՛ մարդկային սին յիշատակ

— « Ու հայրենիքը վերածնի՛ յաւիտեան, »...

... Հոն ուր նախնեաց քու ստուերներ սիրական
Քեզ կ'սպասեն կարօտակէզ, դողդոջուն,
Կ'երդնում, եղբայր, աճիւնիդ վրայ սրբազան,
Թէ անմոռաց պիտի մնաք կեանքդ ու դուն...



Ե Ր Թ Ա Ք Բ Ա Ր Ո՛ Վ

(Եփրատ Գօլէճի ուսուցչապետներուն, Թէնէքէճեանի, Նահիկեանի, Փրօֆ. Որբերեանի և Պուճիզանեանի յիշատակին. պատմաբան, աստղագէտ, դաստիարակ ու բարոյախօս, — որք ի Տէր կատարեցան վերջին կոտորածներուն, իրենց սիրելի սաներուն ու սանուհեաց հետ:)



ԻՇԱՏԱԿԻ մշուշներով պարուրուած
Շրջմոլիկ հուր իբրեւ կ'ուզեմ՝ այրի՛լ ես,
Ասուպի պէս երազներով միզամած,
Ու բուրվառի խունկին նման վշտակէզ,
Անդնդայած:

* * *

Անապատներ ծիծառ չունին
Գարունները չե՛ն համնիր հոս
Ու դայլայլին տեղ թոչունին
Փոթորիկը որոտախօս
Իր յորձանքին մէջ կը տանի
Տերեւն հոգւոյս մշտամոլոր
Ու կը թօշնի՛ն իմ երբեմնի
Երազները, յոյսեր բոլոր:

Ծաղկազարդի ոստեր դալար
 Նաւասարդի երգն ու ծիծաղ,
 Ու բաղձանքներ հին բոցավառ
 Միրամրմունջ ձայներ նուաղ,
 Խոյանքն անհուն իմ անցեալին,
 Իտէալի շողիկն ու շաղ,
 Մտերմութիւնք կարօտագին
 Արդ յիշատա՛կ եղան, աւա՛ղ...:

Ուսուցիչներն իմ մանկական օրերուն,
 Ո՛ւր էք դուք,
 Ձեր վիշտերով իմ հոգին է գալարուն
 Յեղյեղուկ...:

Կ'ըսեն թէ հո՛ն, պատնէշին վրայ դուք ինկաք
 Անվեհեր,
 Մինչ հոս ձեր սանը՝ հողմածուփ մի խլեակ,
 Մշտերեր,
 Կ'ապրի դեռ կեանքը մահերէ դառնագոյն,
 Ու դողդոջ,
 Կ'որոնէ զո՛ւր դալար յոյսի մի գարուն
 Ու բողբոջ:
 Ա՛խ, ո՛ւր գացիք, ո՛ւր ձեր շեշտը սիրահունչ,
 Ո՛ր աստղին
 Մէջ ձեր հոգիք գորովալիր, անմրմունջ,
 Կը փայլին...:

* *

Կը յուսայի ուղղել ուղիս մի օր հոն
 Եփրատին ափն հաստատել բոյն մի անշուք,
 Դալարներով գտնել պարփակ հորիզոն
 Ու մանկական իմ ժպիտն ու արտասուք:

Խորշում ճակտիս դրոշմէիք մի համբոյր,
 Ձիա տանէիք անվերադարձ անցեալին,
 Արահետները գիւղակիս ծաղկաբոյր,
 Ուր յուշիկներս աստղերու պէս կը փայլին:

Ո՛ւր էք հիմակ. սպասէի՛ք ինծի գէթ,
 Կանչէի՛ք զիս ու սուրայի ձեզի մօտ,
 Ու ձեզի հետ թող իյնայի փշաւէտ
 Անէացման վիհերուն մէջ մշուշոտ...:

* *

Չորսն ալ քովս են լուռ ու տրտում այս գիշեր,
 Չորսն անբաժան, մտածկոտ, ինձ կը նային,
 — Այլ անպատում՝ երանութեամբ լի աչեր
 Չեղուն անուշ երազներով երկնային:

Մին՝ պատմաբան, որուն համար վարագոյր
 Չունին այլեւս մութ անցեալն ու ասպզան,
 Կը հծծէ դեռ ձայնովն իր մեղմ ու տխուր,
 — « Հայուն պայծառ արշալոյսներ պիտի գան... »

Մին՝ աստղագէտ, անսահմանին ուխտաւոր,
 Յոյց կուտայ ինձ մի նոր անծիր հորիզոն,
 Ուր աստղերու շարժումին մէջ բիւրաւոր
 Կը հանդիպին անհունութիւնն ու գէրօն:

Բարոյագէտ միւսը՝ ձեռքովն իր ճակտին
 Կը փայփայէ փշեայ պսակն մի վայրկեան,
 — Անմահութիւնն ու Խաչ, կ'ըսէ միասին
 Ճակատագիրն են հէք Հայուն յաւիտեան...:

Ու չորրորդը՝... Ա՛խ, զարմիկս է դողդոջուն,
 Կ'երկարէ ձեռքը, զիս գրկել չի՛ կրնար,
 Կը նայի լոկ զերդ վիրաւոր մի թոչուն,
 Ու կը սարսռա՛յ տերեւի պէս դալկահար...:

Ի՛մս Որբերեան, դո՛ւն ալ մենիկ զիս թողիր,
 Ով հաւատքի, յոյսի զինուո՛ր անվեհեր,
 Արդեօք տոհմին մեր թափառիկ, տարագիր,
 Հոգիի մէկ նահատակը չէ՞ր բաւեր...:

* *

Մութն անաւոր կը խուժէ վրա՛ս անդունդէն,
Կը նայիմ՝ շուրջըս, ոգիներն սիրական,
Երազի պէս անհետացեր, գացե՛ր են,
Ալեակներու զերդ սարսո՛ւռը ողբաձայն:

Երթաք բարո՛վ, մտերիմներս անցեալին,
Անապատի՛ն թողէք զիս,
Թող երազներս հուր աւազին մէջ հալին
Ու վշտակո՞ծ իմ հոգիս
Թող ապրի կեանքը մահերէ դառնագոյն,
Մոռացումի, մենութեան,
Պիտի սպասեմ՝ պայծառագեղ օրերուն,
Գաղափարին յաղթական
Ու պիտի գամ օր մ'արտասուել թանկագին
Ձեր սրբազան շիրմաց քով,
Ծածկել զանոնք խաչանշան մեր դրօշին
Նուիրական ծալքերով...:

* * *

Երթաք բարո՛վ, Եփրատին ափը նորէն,
Ձերդ պահապան շիրիմներու մենակեաց,
Մինչեւ հրացայտ վրէժի սուրը՝ բարձրերէն,
Փայլատակէ՛ պատգամն Հայուն Հայրենեաց
Ազատութեան...:

Ճիպուդի, 5 Օգոստոս 1916



ԼԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՒ ԽԱՉԵՐԸ

1918 Փետրուարի վերջերը Անգլիոյ թագաւորը Dame Grand Cross պատուանշանի մեծ խաչը կուտար Ալեքսանտրա և Մէրի թագուհիներուն, ու Լէյտի Նօրթհքլիֆի, — երեք կիներ որ պատերազմի առաջին օրէն պահապան հրեշտակի դերն էին կատարեր անգլիական բանակին վիրաւորներուն համար: Լէյտի Նօրթհքլիֆ, կիներ մամուլի Նաբօլէոնին, որ իբր Բրօքականտի նախարար ինգլիները գերազանցեց, — իր իսկ ծախքով հիւանդանոց մը հիմնած էր սպաներու համար, ու զթուլթեան քրոջ մը անձնուիրութեամբ կը խնամէր զանոնք: Բարեկամիս Հարտուէնի հետ, որ Լոնտոն կը մեկնէր, հայկական ոսկեայ խաչ մը զրկեցի մեծ բարեկամի տիկնոջ, հետեւեալ նամակով.

Ճիպուդի 10 Ապրիլ 1918

Տիկին,

Սրտի անհուն հրճուանքով մը լսեցի թէ Ն. Վեհափառութիւն թագաւոր կայսրը Ձեզ շնորհած է «Տամ կրանտ Բրօս»ի մեծագոյն պատուանշանը: Թոյլ կուտա՞ք անապատի Հայ բանաստեղծին, որ այս առիթով զրկէ Ձեզ յարուցեալ Հայաստանի խաչը: Ան՝ պիտի յիշեցնէ Ձեզ ու Ձեր մեծանուն ամուսնոյն, Արարատի ստորոտը մարտիրոս, անպարտելի ու դիւցագնական մեր ցեղը, որուն զաւակները ինկան ամեն ճակատներու վրայ, դաշնակիցներու կողքին, և որոնց ոգեվարի վերջին վայրկեանները չի լուսաւորուեցան զթուլթեան քրոջ մը հրեշտակային ժպիտով:

Պատերազմի այս մթազին օրերուն, վերջնական յաղթանակի հաստատ հաւատքով, կը համբուրեմ Ձեր ձեռքերը:
Ռ. Որբերեան

* * *

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Ը

Լոնսոն, 12 Մայիս 1918

Սիրելի Պ. Որբերեան,

Ձեր բարեկամ Պ. Հարտուլինի միջոցով ստացայ « Հայաստանի ոսկեայ խաչը »: Ինձի համար քաջալերութիւն ու ներշնչում է նոյն ատեն տեսնել՝ թէ հեռաւոր անապատներու խորերէն այնչափ շահազրգուծիւն ցոյց կը տրուի հայրենիքի անցուղարձերուն մասին: Ե՛ս ալ վստահ եմ թէ ամենուս համար պիտի անցնին այս մթազին օրերը: Թոյլ տուէք ինձ յաւելուլ, թէ ձեր խաչին ինձի առթած հաճոյքը նուազագոյն չէր ն. Վեհափառութեան շնորհած պատուանշանի հրճուանքէն:

Ձերդ անկեղծօրէն
ԽԷՐԻ ՆՕՐԹՆԷԼԻՔ

Crewe House

Լոնսոն, 7 Մայիս 1918

Սիրելիք իմ Որբերեան,

Կինս շնորհակալութեամբ ստացաւ ձեր ղրկած Հայաստանի խաչը:

Ռազմաճակատէն կը վերադառնամ: Տարակոյս չունիմ թէ պատերազմին ելքը նպաստաւոր պիտի լինի ամենուս համար, սակայն կասկած չիկայ թէ ան շատ երկար պիտի տեւէ տակաւին: Ֆրանսացիք և Անգլիացիք հիանալի քաջութեամբ կը կռուին, ինչպէս նաև Ամերիկացիք: Յաղթանակը ապահով է:

Քոյդ անկեղծօրէն
ՆՕՐԹՆԷԼԻՔ



11 ՆՕՅԵՄԲԵՐ 1918, ՋԻՆԱԳԱԳԱՐ

Իրիկուան ժամը 10ին հասաւ աւետարեր հեռագիրը, թէ կնքուած է զինադադարը: Հինգ երկար տարիներու մղձաւանջին յաջորդող երանութիւնը զառանցանքի փոխուեցաւ այն գիշեր: Շատեր արտասուելով իրարու գիրկ նետուեցան:

Յաջորդ օրը թղթատարին յանձնեցի հետեւեալ նամակը.

Ճիպուդի, 12 Նոյ. 1918

Վեհափառ թագուհի,

Այս նամակը Ձեզ պիտի գտնէ ձեր մայրաքաղաքին Պրիւքսէլի մէջ, վերածնեալ հայրենեաց գիրկը: Մոռցուած է անշուշտ անապատի բանաստեղծը, որ 1913ին, աքսորանքի ահաւոր օրերուն, Ձեզ ղրկեց « Հայաստանը Պելճիգային » եղերերգը: Ան չի դադրեցա՛ւ մէկ վայրկեան աղօթելէ և արտասուելէ Ձեր և իր հայրենեաց համար: Ձեր ղիւցաղնական ամուսինն ու դուք, փրկեցիք Պատիւն ու աշխարհի Ազատութիւնը: Անոր համար թոյլ տուէք որ մեծ յաղթանակի յաջորդ օրը, ներփակ ղրկեմ ձեզ, մարտիրոս այլ անմահ Հայաստանի Խաչը: Ձեր արիական կուրծքը զարդարող ազամանդակու ռքանշաններուն քով, յիշատակի մը պէս դալկահար, այլ մասունքի մը չափ նուիրական պիտի լինի այն. — մասունքը մէկ միլիոն նահատակներու, որ ինկան տարագիր, առանց ողջունելու իրենց նուիրական հայրենեաց ազատութիւնը:

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

Առ Ն. Վեհափառուքիւն Եղիսաբեր Թագուհին Պելճիոյ Պրիւքսէլ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Ը

Պրիւքսէլ, 4 Յունուար 1919

Պարոն,

Թագուհին ստացաւ Ձեր « Հայաստանը Պելճիգային » և « Մեր ցեղը » քերթուածները ու ոսկեայ գեղեցիկ խաչը, զոր ղրկած էք մեծ յաղթանակին յաջորդ օրը: Ն. Վեհափառութիւնը չափազանց զգածուած Ձեր զգացումներէն, կը ղրկէ իր սրտազին մաղթանքները Ձեզ ու Ձեր վշտահար հայրենակիցներուն համար:

Վասն Առեւտրորէ
V. Godefroid

ԵՐՐՈՐԴ ԽԱՉԸ



ԱՐՏԱԿԱՆՈՒԹՒՆԻՆԴ Է մեկնիլ : Ազատագրուած Հայրենիքը պէտք ունի իր անձնուէր դաւակներուն : Դասալիք ու դաւաճա՞ն է այն Հայր, որ խուլ կը մնայ Արարատէն համնող կողմին :

Այսպէս ըսաւ Տելեմաք Թիւթիւնճեան, եզիպտահայ պատուական երիտասարդը որ Օայրագոյն Արեւելքէն դարձին երկրորդ անգամ կը հանդիպէր ինծի, մէկ գիշեր, այսպէս ըսաւ ու մեկնեցաւ առտուան ժամը երեքին : Ժամերով խօսեր էինք իրարու հետ : Անապատի այն անկիւնը սկսաւ մեր մտերմութիւնը, զոր հետս մինչեւ գերեզման պիտի աանիմ :

Իր բաժնուելէն վերջ մտածեցի երկարօրէն, կրակ կտրած ճակատս ձեռքիս մէջ առած : Հոգիս նոյնացած էր ամայքներու լոխնաւէտ անդորրութեան, կամ փոթորկավար կոհակներու ծփանքին հետ : Անապատն ու ովկիանը մագնիսացուցած էին էութիւնս :

Պարտականութիւնս է մեկնիլ ու պիտի երթամ, նետուիմ պայքարի մրրկածուփ յորձանքին մէջ : Նոր անդունդներ ու նոր բարձունքներ պիտի հանդիպին կթոտ ու դողդոջուն քայլերուս : Սակայն ճակատս բաց ու անվեհեր, Հայր մը պէս պիտի անցնիմ պատնէշին վրայ, խրոխտ ինչպէս հնութեան ձորձազգեաց մենակեացները, որ մարգարէ անունը առնելով դէպի Աւետեաց Երկիրը կը սուրային :

Եւ այն անմոռանալի և անդնդային գիշերը, զգացի ծանր և ահաւոր Խաչին իյնալը ուսերուս վրան, — հանրային գործիչի Խաչին, ու դարձայ դէպի Մասիս, դէպի Հայաստանի Գողգոթան : Ու եթէ իյնամ պատնէշին վրայ, գէթ հայրենի հողին մէջ պիտի ննջեմ ու հանգչիմ, ու քեզմէ, մատաղ կեանքիս ու մոխիր դարձած յոյսերուս փոխարէն, անանուն ու սեւաներկ քու Խաչը կ'ուզեմ, իմ Մայր Հայաստան, անփառունակ իմ շիրմիս վրայ հակած, նկուն, տրտմազին այլ անմահ յաւերժական ու յաղթապանծ :

Ճիպտադի. 13 Նոյ. 1919:



ԼԸ

ԱՆԱՊԱՏԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ

(Յուսուեսրէս քանի մը էջ)



ՐԳԷՆ շատ ամիսներէ ի վեր սկսեր էի քանդել ու տարտոգնել այնչափ երկար տարիներու տաժանագին շանքերով կառուցած գործս ու տնակս : Նախ հեռուներէն սկսայ : Չսպուած հեծկլտուքի պէս հատ ու կտոր նամակներ գրեցի Ճաբոն, Չինաստան, Ամերիկա ու Եւրոպա, դէմքով անծանօթ իմ թղթակիցներուս, որոնց հետ կերպ մը նիւթականէն աւելի հոգեկան հաղորդակցութիւն էի ստեղծեր վաղուց : Աւելի դիւրին էր մնաս բարով ըսել անոնց, որ ճակտիս կարմիրն ու աչքերուս արցունքը պիտի չի տեսնէին ու պիտի չի գուշակէին երբէք : Պատասխանները չուշացան հասնիլ, կաղնիին ճիւղերը տապարին ներքև կ'իյնային, հատու և անողոք, վաղածամ մահուան մը սարսուռներով լեցուն : Ու կարծես գինովութեան անգիտակից խոյանքով մը նետուեցայ Եթովպական բարձունքները, շուարմուրը քայլերով, գացի վերջին անգամ այցելել հայ գաղթականութեան : Ասոնցմէ շատերուն ճիպտադի հասնիլը տեսեր էի հեռաւոր կոտորածի սարսափներէն հալածական, որ տարիներու ընթացքին տեղաւորուեր, բոյն ու երգիք էին շիներ, սրտերնին հայրենեաց կարօտովը այրած ու խանդավա՞ռ շարունակ : Երազի պէս անցայ ամենուն քովէն :

Ատիս Ապապայի եւկալիպտոսի անտառներուն մէջ հասած ու անոնցմէ հեռացած պահուս, ուժգին ու որոտագին, Յովհ. Ասատուրեան բարեկամիս ձայնը կը զոռար—

« Կեցցէ՛ Հայաստան ... » :

Վանի աննման ու հայրենասէր դաւակ Յակոբ Բաղդասարեանի նահապետական բնակարանին մէջ Վարագն ու ծոփը կ'ողջունէի : Մեր և անմահ Պէրպէրեանի Միհրդատ Թէրգօնցին ու Քիրմաստիի Տէր Վահանիս հարազատին՝ Սուրէն Չաքրեանի հետ՝ գլուխ գլխի, եղբօրս՝ տարաբաղդ Մարգար Միրզային նուիրական յիշատակները կ'ոգեկոչէի : Չմշկածագէն մտերիմս Միքայէլ Թօփճեան, Մալաթիայէն զարմիկս Գէորգ Որբերեան ու մնացած բոլոր Հայերը ու գերեզմաննոցը մեր վաղամեռիկ Տօքթոր Յովհաննէս Տէօվլէթեանը :

Հ Ա Ր Ա Ր

Հրանդ Մինասեան ու Եսայի Կարիկեան բացակայ էին, քանի մը օր շրջեցայ դրախտագեղ իրենց պատնէզներուն մէջ: Այդ երկուքն ալ աշխատութեան դիւցազուններ, տարբեր ուղիներէ բարձրացեր են դէպի յաջողութեան և անկախութեան գագաթը և իրենց հետ բարձրացուցեր Հայուն անպարտելի նկարագրին դրօշը: Լեռներու վրայ է իրենց բնակարանը, մտաբերելու համար կարծես Մասիսը ու Տաւրոսը և օր մը դէպի հոն սլանալու համար: Եւ սակայն իրենք մինակ չեն. մեր ամենէ համեստ գաղթականներն անգամ՝ իրենց կարգին, ապացոյցներ են այն հզօր անհատականութեան որ մեր ազգային կեանքը կը բնորոշէ: Տեսայ ու սեղմեցի ամենուն ձեռքերը:

Ու գերեզմանոցը « հոգւոց » մը կարգացի ծերունագարդ Նիկողոս Պալպալեանի վրայ, որ խոստումը կատարեց իր տաժանագին զրկանքներով հաւաքած փառաւոր հարստութիւնը կտակելով անկախ Հայաստանի մէջ որբանոց-կրթարանի մը հիմնարկութեան համար, և որ հանգչեցաւ

— « Հաստատ յոյսով, այլ պարտասեալ կարօտովն հայրենեաց », ինչպէս գրեր են շիրմաքարին վրան: Մնաս բարով մըն ալ մեր երկու մանկատի հրեշտակներուն Տիրան Գէորգօֆի և Նուպար Մինասեանի որ հոն կը ննջեն, այդ օտար երկինքներուն ներքև ...:

Տ Ի Ր Է-Տ Ա Վ Ա

Աւելի երկար ու տառապագիւն եղաւ բաժանումս այս քաղաքէն: Ճիւղողի հասած օրէս, գրեթէ ամեն տարի, ամառուն տաք օրերուն՝ հոն կ'երթայինք ընտանիքով, հասարակածի հրատապ արեւներէն խուսափելու համար: Հոն էի շիներ բուրաստան-բնակարան մը, « Նոր Տնակ », զոր « Villa Arousayag » էինք անուաներ և որուն մէջ այնչափ երջանիկ և այնչափ վշտալից օրեր էինք անցուցեր: Տարիներու ընթացքին քանիներ եկան մեզի դրացի, ծանօթ ու մտերիմ, ու քանիներու անվերադարձ մեկնումը ճմլեց սրտերնիս, մարդոց և ստուերներուն, կեանքին ու յիշատակին հետ խօսեցայ, ապրեցայ այրեցայ ու մխացի՝ վերջին անգամ: Սրտիս այնչափ մօտ ու

հնամենի բարեկամութեամբ շաղուած հոգիիս՝ մեր տունէն քիչ մը հեռուն կը բնակէր այնպիսի Պետրոս Վարժապետեանը ազգային զրականութեան սիրահար ու հայրենեաց կարօտովը սրտազեղ: Ճիշտ մեր զիմացն էին Հրանդ Մինասեանէնք, որոնց սրբազան նպատակներուն իրագործումը վստահ եմ՝ թէ մէկ օր երախտապարտ պիտի թողու բազմաչարչար Հայաստանը, աւելի հեռուն՝ Օննիկ Շահվէթիլը Իզմիրի ազնիւ ու ազնուական զաւակ, որ մտերմական կ'ապր եղաւ անմոռանալի անցեալին ու մեր միջեւ ու մեր Հրանդ փափագեանը, որուն ճակտին ամուսնութեան նուիրական նարօտը ինձի՝ վիճակուեցաւ կապել: Ու բոլոր անոնք որոնց անունը կը վրիպի յիշողութենէս, մեծն ու պղտիկը, ունեւոր կամ անտուն, անհուն խանդաղատանքով սեղմեցի ձեռքերնին, ամենուն աչքերը նոյն մտածումով ազօտացան ու խոնաւցան, նոյն լուռ հարցումը ուղղեցին ինձի ու ճակատագրին, — « Մենք ե՞րբ պիտի հաւաքենք մեր տարագրութեան վրանները, կտրենք մեզի բաժնող անդունդները, ու քու գիրկդ նետուինք, Մայր Հայաստան... »

« Եւ այս երկրին անբոյր, փշեայ ծաղկունքով »
 փունջ մը կապած զացի մնաս բարովի մեր սիրելի քրոջ Սրբուհիին գերեզմանին, ու կարծեցի լսել վերստին իր մրմունջը—
 « Երանութեան վայրկեանները ետ չեն գար,
 « Սիրելիներս, քիչ մ'ալ ինձի մօտ կեցէք,
 « Ձիս հոս մինակ մի՛ ձգէք... »:

Ճ Ի Պ Ո Ի Դ Ի

Մինչեւ Ապրիլ պիտի մնանք տակաւին, անոր համար սախալուեցանք թողուլ մեր սեփական բնակարանը բարեկամ վարձակալի մը, Թօզէլիին — Կարիպալտեանի մը արժանաւոր զաւակ, Իտալացի ու սրտով՝ Հայ: Մենք փոխադրուեցանք զիմացը հնդկիկի մը տուն, որուն պատուհաններէն կը տեսնուէին մեր տունը, աւելի անդին ծովը ու Թաճուրայի երկնածրար լեռները: Յորեկը մինչեւ իրիկուն սրնտուկները կազմելու և գամելու զբաղած ենք, արեւելեան կարասիներ, գեղազիտական առարկաներ, փղոսկրէ ու պղինձէ արձանիկներ, ամենքն ալ հետերնիս տանիլ կ'ուզենք, ոչ մի՛ն մեր ետին պանդուխտ թողուլ, որովհետև այդ անշունչ իրերը

մէյ մէկ յիշատակներ են, տարիներով մենք զիրենք զիտեր ու սիրեր ենք, իրենք ալ մեզ: Մասնաւոր զուրգուրանքով մը տեղաւորեցինք զրադարանիս երեք հազար հատորները, այդ անխօս ու անդաւաճան մտերիմները սնապատականի մեր կեանքին:

Ու երբեմն իրիկուան դէմ, յուզուած, յոգնած ու պարտասած կ'երթայինք մինչև Հոլմպուլի, մեր պարտէզը ուր երկու հազար հինգ հարիւր արմաւենիներ, ճիւղերնին իրար խառնած և անապատի անծանօթ սարսուռներով լեցուն՝ կը խոկային տրտմազին: Պարտէզի տնակին տանիքը մեր սիրական ժամադրավայրն էր: Օդին մէջ կարծես առկախ, աւելի մօտ հիանալի, ջինջ ու աստղաշող երկինքին, կ'զգայինք զիմացէն, շուրջէն, հեռուներէն, անապատին ու ծովուն, անհուն խաղաղութեան վեր բարձրանալը դէպի մեզ, ու ծաւալիլը մեր յոգնատանջ ու յուսարեկ հոգիներուն վրայ:

Կեանքի անհուն յորձանքին մէջ, ուր կը գնամ նետուիլ, այդ լուծեան օծումն ու ներշնչումը պիտի պակսի՞ն ինձի, արմաւենեաց ճիւղերուն սարսուռն ու հմայքը սարերով ու անդունդներով բաժնուած պիտի լինին հոգիէս...

Վերջին անգամ մինակս գացի, աւազանին մօտ, Նորիայի ջրամբարձ մէքենային քով, կեցայ ժամերով: Թեթեւ զեփիւռ մը սուշելով կ'երգէր ու վայրկեանը մէկ խողովակին ջուրերը դուրս կը նետուէին փրփրացայտ ու հեծկտազին: Ուշ ատեն մեկնեցայ քայլամուտը, մեկնումէս առաջ սակայն, ինձի հետ աւազանին քարերուն կոթնած արմաւենիին բունին պլլուեցայ ու անհարթ ու դերբուկ կոճղը համբուրեցի, իբր թէ մտերիմս եղած ըլլար...

Կիրակի առտու

Café de la Paixի դուրսը նստած են Մաթիկ Գէորգօֆ և Յովհաննէս Ասատուրեան, ներսի կողմն ալ 14.13 Հայ պատանիներ ու երիտասարդներ, ոմանք՝ տեղացի, ուրիշներ՝ Եթովպիայէն իջած: Երկու ջոջերը իրարու հետ տաք խօսակցութեան մը բռնուած են: Գէորգօֆ, լուրջ, պաղարիւն ու հազիւ լսուելու չափ ցած ձայնով, մինչ Ասատուրեան մշտապէս զոռացող, շարժուն և ամբողջ էութիւնը ելեքտրական ցնցումով լարուած: Երկուքն ալ տարբեր նկարագիրներ, այլ մինչ առաջինը սկիզբէն մինչև վերջ տրամաբանական ուժգնու-

թեամբ մը հետապնդած է յաջողութեան ու փառքի ճամբան, երկրորդը անհանդարտ ու կրքոտ յարձակող մը եղած է բաղդին վրայ, ու թէև մէկ երկու անգամ՝ զրեթէ զգետնուած, կրցեր է խիզախ թափով մը վերականգնիլ ու որոտալ—

« Excelsior ! Կեցցէ՛ Հայաստան »...

— « Ես կը նուիրեմ, պայմանով որ դուն ալ նուիրես մէկ հատ » կ'ըսէ Գէորգօֆ:

— « Ընդունեցի՛ » կը գոռայ Ասատուրեան:

Կը հասնի՞մ ստուերի պէս քովերնին ու երկուքին ձեռքերը կը միացնեմ իրարու, կնքելով վերջնական դաշինքը: Հայաստանի Հանրապետութեան մէյ մէկ սաւառնակ կը նուիրէին երկու Հայերը, իւրաքանչիւրը յիսուն հազար ֆրանք արժէքով:

Գէորգօֆի Սաւառնակին անունը ե՛ս դրի — « Մարտիրոս » — իր հօրը անունով:

« Իմս Փայրուս թող կոչեն, սիրական կնոջս անունով, կ'ըսէ Ասատուրեան, ու մատներով՝ սովորականին պէս, խոնաւ թարթիչէն կախուած կաթիլ մը կը սրբէ կ'անհետացնէ: Վայրկեան մը յետոյ ներսի երիտասարդութիւնը դուրս կը խուժէ, կը բոլորուի շուրջերնիս, շամբաների գաւաթները շրջան կ'ընեն ու կը խմենք հայրենասէր նուիրատուներու և Մայր Հայաստանի կեանքին:

Ճիպուղիի վերջին երանութիւնս եղաւ այդ դէպքը: Մեր շուրջ բոլորուած պատանիներու, երիտասարդներու աչքերը աստուածային շողով մը կը փայլէին: Նուիրական օրինակը մազնիսացուցած էր զիրենք — չըսին թէև, սակայն կրցայ կարդալ անոնց ամենուն մէջ անսասան կա՛մքը, Հայուանհուն կորովին ցոլացումը, որպէսզի օրին մէկը իրենք ալ կարենային իրենց կարգին սուրալ թոչիլ 'ի Հայաստան, շքեղ ու լիաբուն նուէրներով ծանրաբեռն:

Յաջորդ օրը հիանալի զուգադիպութիւն — թղթատարը բերաւ այն պաշտօնագիրը, որով Մաթիկ Գէորգօֆ կ'անուանուէր Հայաստանի դիւանագիտական առաջին ներկայացուցիչ Եթովպական արքունեաց մօտ:

Մնաք բարո՛վ, Հայուն Աստուածը ամենուղ հե՛տ, իմ սիրական գաւակներս ու եղբայրներս...

Ծ Ր Ա Գ Ի Ր Ս

Անհուն է երազներուս, յոյսերուս ու Բաղձանքներուս նման:

Ա.

— Անցեալով ու մականունով նոյնացած մեր որբութեան սերունդին հետ, պիտի որոնեմ՝ ու պաշտպանեմ՝ լքումի անկիւններուն մէջ տուայտող տարաբաղդ որբերը, մեր մտաւորական գրչի ու հոգիի հսկաներուն և ուսուցչական խումբին, որ ինկան պատնէշի վրայ և որոնցմէ շատերուն երբեմն մոլորատանջ եղբայրակիցը եղալ իննսունական թուականներուն:

Բ:

Անապատի անկիւնէս կը գուշակեմ՝ ու կ'զգամ անմիջական պէտքը մտերմական ձեռք մը երկարելու մեր այն երգիչներուն ու գրչի աշխատաւորներուն որ հրաշքով մը գերծմնացին համայնակուլ սարսափներէն, և որ սակայն Հայուն փառքն ու անմահութիւնը կը քնարերգեն, ապրելով հանդերձ « Դժնդակ կեանք մը մահերէ՛ դաւնազոյն... »:

Պիտի գտնեմ Չերագն ու Փորթուզալեանը, Մըրեանն ու Թէոդիկը, Անտոնեանն ու Էսաճանեանը, կրտսեր եղբայրս Սահակ Մեսրոպն ու Չիֆթէ-Սարաֆը, Սեթեանն ու Մալէգեանը ու բոլոր միւսները, վերապրողներու սերտ եղբայրակցութիւն մը նուիրագործելով: Պիտի հանդիպիմ՝ Չօպանեանին որ քսան և հինգ տարիներէ ի վեր Հայ արուեստին ու տաղանդին հրաշալի թարգմանը հանդիսացաւ: Չեռքս պատահմամբ Չօհրապին մէկ նամակը անցաւ և զոր կը փորձուիմ արտագրել հոս, Արշակ Չօպանեանի ուղղուած:

Բերա. 17 Նոյեմբ. 1915 Երկոռչարթի

Սիրելի բարեկամս,

Այս վայրկեանիս Պ. Շահ Մուրատեան, որուն հետ թէյ կ'առնէինք, թելադրութիւն մը ըրաւ ինծի, զոր ես ինքնաբերաբար չի յղանալուս համար ամօթով եմ, այն է քու գրական և ազգային կրկնապէս գեղեցիկ գործունէութիւնդ տօնել, յորեկեանական հանդէսով մը:

Իմ արդարացումս սրւոր մէջն է, որ ես զքեզ միշտ երիտասարդ նկատած եմ, թէև տկար յաճախ առողջութեան տեսակէտով, երիտասարդ տաղանդովդ և առոյգովդ, ինչպէ՛ս կ'ուզէիր որ յորեկեանդ մտածէի: Եւ սակայն իրաւ է որ զրեթէ

քառորդ դար մը անցաւ այն օրերէն, այն յաւէտ անցեալ և անդառնալի օրերէն ի վեր ուր այստեղ սկսար մեր պզտիկ խումբին մէջ դուն՝ կրտսերը մեր ամենուն, առաջին զէմքն ըլլալ ու պարտաւորել զմեզ, ծափերու սպասողներս, որ մենք զքեզ ծափահարենք:

Որքա՛ն շուտով տարիները անցան, սահեցան, ի՛նչ եղեւ. նական պատահարներ անցան մեր վրայէն, ի՛նչ յոյսեր և ի՛նչ յուսախաբուցութիւններ, մենք հոս տաժանքին մէջ ապրեցանք, դուն հողկէ մեզի պէս, մեր ցաւովը տառապեցար:

Միսմինակըդ ըրիր, ինչ որ շատեր միացած չէին կրնար ընել, մինակդ. — սարե՛րն ալ մինակ կ'ըլլան, — զրական վաստակդ միշտ ազգային կեանքովը աուցուն, որքան արուեստական կատարելութեամբ ճոխացած, վաստակեցար:

Եւ ինչ որ ամենէն յարգելին է քու աշխատութեանդ մէջ դուն հիանալի երկիւղածութեամբ մը նուիրեցիր ինքզինքդ փշրանքներն ու նշխարները հաւաքելու մեր գրական անցեալին, ճիշտ անոր, որ ամենէն մոռցուածը ու լքուածն էր:

Բայց ես քու ներբողներդ ընելու չեմ, թէ որ ողջ մնամ՝ կ'արտասանեմ ու կը թուեմ՝ զանոնք պե՛տք եղած բե՛ռե՛ն. իմ ըսելիքս սա է որ իսկոյն փարեցայ, ցնծութեամբ փարեցայ զքեզ, քու տաղանդդ և քու հայկական սիրտդ տօնելու սրխալի գաղափարին:

Ուստի հոս մասնախումբ մը պիտի կազմեմ՝ քեզ սիրողներէն, ու քու վրադ հիացողներէն, որոնք շա՛տ են, իսկոյն գործի պիտի ձեռնարկեմ: Կը ինդրեմ որ ինծի հասցնես միայն մտերմաբար կենսազրական ծանօթութիւններու հետ գրական ասպարէզին մէջ մուտքիդ մասին որոշ տեղեկութիւններ, զորս առանց քեզի չեմ կրնար թերեւս դիւրութեամբ հաւաքել:

Սիրով կը գրկեմ զքեզ

Պ. ՉՕՀՐԱՊ

Յ. Գ Մեր դժբաղդ դատին համար կ'աշխատիմ՝ զիշեր ու ցորեկ.: Աստուած օգնէ անոր, քանի որ մարդիկ կը հեռանան անկէ նորէն: Գ. Զ.

* *

Մեծ նահատակին բաղձանքը պիտի իրագործեմ, ազատ հայրենեաց դրօշին ներքեւ — Հայրենիքին յորեկեանը — ու իր

տեղը՝ միւս անմահը Լեւոն Բաշալեան ու հին սիրելի խումբէն Տր. Պօղոս Քօլօլեան և Երուանդ Օտեան, պիտի խնդրեմ որ զան ու բերեն դափնիէ պսակը վերապրող բանաստեղծին ալե-խորշոմ ճակատին...:

Գ.

« Trust not for freedom to the Franks,
« They have a king, who buys and sells,
« In native swords and native ranks
« The only hope of courage dwells, »

Lord BYRON

Կազմակերպել ամուր հիմերու վրայ, Հայ Համագաղթային հօօր եղբայրակցութիւն մը, ցնցել ու բոցավառել ազգայնա-կան զգացումները թմրած այլասերած հոգիներու մէջ, հելլէն և իսրայէլեան ժողովուրդներու նման, և ովկիանի անդունդ-ներով իրարմէ բաժնուած տարահալած հայութեան զաւակ-ները միացնել իրարու ու կապել Մասեաց բարձունքին վրայ ծաւալող ծփացող մեր եռագոյն նուիրական դրօշին:

Եթովպական արծաթապատ գոյգ վահաններ պիտի տա-նիմ հետս Փարիզ իբր նուէր ու մանաւանդ իբր ազգարարու-թիւն: Մին պիտի յանձնեմ Պօղոս փաշա Նուպարի ու միւսը՝ Պ. Աւետիս Ահարոնեանի: Առաջինը՝ ալեղարդ նահապետ, ազ-նիւ ու ազնուական, վշտահար կաթողիկոսին ու բազմաշար-չար հայութեան ներկայացուցիչ, Հայ « Սիմէոն Ծերունի », որ տարիներէ ի վեր Մեսիային գալստեան կ'սպասէ, իր դողդոջուն բազուկները ընդ առաջ երկարած, ու երկրորդը Հայաստանի մանուկ հանրապետութեան պատգամաւոր, Աբովեաններու սերունդէն՝ հայրենեաց ցաւերովը այրած ու մոխի'ր դարձած: Պիտի յանձնեմ վահանները իրենց ու ծնրաղիբ՝ պիտի գոչեմ—

« Արտաքին թշնամեաց դէմ, հայրենեաց կուրծքին ուղ-ղուած նիզակներուն ու տէգերուն դէմ, մեկ նակաս պաշտպա-նեցէ՛ք Հայաստանը: Ու քաղաքականութեան մանուածապատ լաբիւրինթոսներուն մէջ Չեզի հետ և ամենուս առաջնորդ առէ՛ք Ակնայ ազնուական զաւակը Գաբրիէլ Նորատունկեան, մեծագոյն հայ զիւանագէտը, որուն ուղղուած են բովանդակ հայութեան նայուածքները »...:

Դ.

Չնչել մուրացկանութեամբ ազգ փրկելու դրութիւնը, պահանջել անխտիր բոլոր հայերէն գերագոյն զոհողութիւն այս վճռական վայրկեաններուն համար, յաջողցնել ներքին փոխառութիւն մը համարառու մարմիններու հակակշռին ներ-քև, ամենախիստ հակակշռի ենթարկել ազգին ելեւմուտքը, և անխնայ ջախջախել ձրիակեր, մակարոյծ ու զեղծարարները հայ կեանքին ու պատուին: Ու միանգամ ընդ միշտ անհետա-ցրնել Հայուն ճակատին ամօթի կարմիրը, չի թողելով որ օտարները մեր տառապանքն ու անօթութիւնը ցուցադրեն ամեն բեմերու վրայ ու դադրի'նք համաշխարհային բարիա-ներ նկատուելէ:

Ե.

Անհուն ուշադրութիւն դարձնել կրթական գործին, հիմ առնելով քրիստոնէական կրօնի առողջ իտէալներն ու սկզբունքները. չի մոռնալով մէկ վայրկեան թէ այդ սիրոյ, զոհողութեան և անձնուրացութեան փշալից ուղին եղաւ մեր հայրերունը քսան դարերէ ի վեր, և ան միայն պիտի առաջ-նորդէ գմեզ դէպի տիեզերական եղբայրակցութեան գերագոյն իտէականը: Ու պիտի առաջարկէի որ մեր նուիրական եռա-գոյնին կարմիր շերտին վրայ, հայութեան սրտի արիւնին վրայ, սպիտակ ու լուսափողփող մեր ԽՄԶը աւելցնէինք, որուն սեւեռելով, իրենց ոգեվարի վայրկեաններուն, հայ քա-ջորդիներ, Յոյսի անհուն սփոփանքով ու մխիթարուելով, փա-կէի՛ արծուի նայուածքին:

Զ.

Կամուրջ ու եթէ ոչ իրական միութիւն, գէթ կենսական խնդիրներու շուրջ համագործակցութիւն ստեղծել ոռուսահայ և թրքահայ հատուածներուն միջև ու ջանալ որ գէթ նոր սերունդը ձուլուի ու միատարր ազգ մը կազմէ, յառաջդի-մութեան նոյն ձգտումներով ու նոյն իտէալով ոգեւորուած: Փութացնել ցանկալի արշալոյսը այն օրուան ուր բոլոր հայերը կարենային գոռալ —

- « Ամենայն տեղ մահը մի է
- « Մարդ մի անգամ կը մեռնի.
- « Այլ երանի որ իւր ազգին
- « Ազատութեան կը զոհուի »—.
- « Տուր ինձ ձեռքդ, եղբայր եմք մենք,
- « Որ մրրկա՛ւ էինք զատուած,
- « Բաղդին ամեն ոխ չարանենց
- « Ի մի համբոյր ցրուին ի բաց,
- « Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
- « Քան զանձկալի եղբայր անուն... »

է

Հակառակ ամեն ցաւազին յուսախարութիւններու, չի շեղիլ մեր երախտագիտութենէն հանդէպ զիւցադնական Ֆրանսային: Ժամանակները կը փոխուին, մեղի հակառակ զիւանագէտները կ'իյնան, և օր կուգայ որ Վէրտէճնի և Մարնի Ֆրանսան, լուսապսակովն իր ճակտին, կը կանգնի հերարձակ ու կորոտայ բոլոր գերի և ընկճուած ազգերուն, իր ու քաղաքակրթութեան պատգամը —

« Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն »:

ը

Ձի մոռնալ երբէք մեր մեծ իտէալը ու հայ ցեղին հզօր անհատականութիւնը ուղղել անյողղող ու անսայթաք դէպի անոր իրագործումը, Մասիսէն Տաւրոս, կայքը հին դրախտին, ամենքը, ամենքը մեր եռագոյնին նուիրական ծալքերուն տակ...:

թ

Արտաքին քաղաքականութեան մէջ՝ պարագաներու համեմատ՝ սիրտը անջատելու ռադիկէն, ափ աննել զուրը ամեն բարի կամեցողութիւններու, գործածելով խայծը ամենահզօր շահուն ու եթէ մեր մեծ այլ արիւնաքամ դաշնակիցները Ֆրանսան, Անգլիան ու հզօր Ամերիկան լքեն զմեզ, զիմել Սպանիայի կամ Ճաբոնի, հոգատար պետութեան մը հովանիին ներքեւ ապահովել զոնէ տասնամեակ մը խաղաղութեան, մինչև մեր հարիւր հազարաւոր որբերը հասնին ու տէր դառնան իրենց ճակատագրին և « հանուրց հիւսիսականաց իսկապէս վեհագոյն » Հայաստանի...:

ժ

Անմիջական ուշադրութիւն դարձրնել և տիրանալ անպատներուն մէջ մնացած տարագրութեան բեկորներուն, որբերուն (և այրիներուն եղբայրական գուրգուրանքով իննամեկ զանոնք ու մեղմացնել ջանալ ահաւոր մղձաւանջը, որուն ներքեւ անդամալուծուած են իրենց անտիական էութիւնները: Բուժել ջանալ անոնց հոգին ու մարմինը, քաջալերել ամուսնութիւնները և ընտանեկան բոյնի մը խաղաղութեան օժումը ծաւալել Հայ Տառապանքի այդ զոհերուն վրայ: Արտասահմանի իւրաքանչիւր Հայ՝ որ կարող է ստանձնել մէկ կամ մէկ քանիներու հոգատարութիւնը, լաւագոյն նուէ՛րը տուած պիտի լինի մեր վիրաւոր այլ ազատ Հայրենեաց:

Ճիպուդի 2 Ապրիլ 1920

Փարիզի Հայկական Համագումարը իր նիստերը փակած չէ՛ տակաւին: Պիտի կրնամ հասնիլ ժամանակին ու մասնակցիլ իբր Եթովպահայ կրտսերագոյն գաղութին պատգամաւոր: Առիթը պիտի ունենամ և կամ ինձի իրաւունք պիտի տամ պարզելու և ընդլայնելու ծրագիրս, անապատներէն հասած ուխտաւոր, միութեան և համերաշխութեան աղաղակը պիտի բարձրացնեմ, անհատական շահերէ ու կուսակցական նկատումներէ աւելի վեր՝ պիտի ստիպեմ որ նայուածքները մեր մէկ միլիոն նահատակներու ստուերներուն մշուշին մէջէն դառնան դէպի յաւերժական, ազատ ու յաղթապանծ Մասիսը: Ու վերջին օրը պիտի առաջարկեմ, որ Համագումարի անդամները ցրուելէ առաջ գնան Բէր-Լաշէզ, Մեծ Վտարանդիին Գրիգոր Օտեանի գերեզմանին առջեւ, եռագոյն խաչապսակով մը, ու մտաբերելով «ունայնութիւնն աստեաց» կրկնեն Ուխտը սիրոյ և Միութեան, հոն պիտի լինին Գատը գիւղի անմոռանալի անցեալիս եղբայրակից «ղարիպ Տէրտէրը» Վոսմշապուհ Քիպարեան, հոն ծերունագարդ և անընկճելի Նուպարը, հոն Հայ Հանրապետութեան ցաւատանջ այլ մշտառոյզ Ահարոնեանը, հոն բովանդակ հայութիւնը:

Եւ անոնց ու մեծ Աքսորականին ստուերին պիտի գոռամ Հայուն նոր հանգանակը, զոր սորվեցայ տասնեւեօթը տարիներու ընթացքին, լքումի գիշերաստուեր մենութեան մէջ:

«Հաւասարմք ի մի Աստուած եւ ի միացեալ եւ անբաժանելի սուրբ Հայաստան».

«Հաւասարմք յմեղիս Միածին եւ ի նուիրական վրէժն դարսնոր մեր մարտիրոսագրութեան».

«Հաւասարմք եւ ի մի Սուրբ Հոգի եւ ի Միութիւն եւ համեմատութիւն հանուրց Հայաստանեայց...»

* *

Խաղաղութեան մի տասնամեակ, «Աստուած հարցն մերոց», քառսուն դարերու հալածանքի, տառապանքի տարագրութեան ու մարտիրոսութեան փոխարէն, ու պիտի վերականգնի՝ Հայաստան, միժագոյն Արեւելից լուսատու ջահն ու փարոսը պիտի լինի և իր փառքի արեւէն պիտի շլանան անհաշտ թշնամիները Խաչին և Ազատութեան և այդ պիտի լինի ազնուագոյն վրէժը ՔՈՒ ՉԱԿԻԳ, զոր լքեցի՛ր դարերով...:

Ճիպուղի 12 Ապրիլ 1920

Շոգենաւը պիտի մեկնի քանի մը ժամէն: Գիշերն ամբողջ անքուն անցուցեր եմ և արշալոյսին առաջին շողերը զիս կը գտնեն զբասեղանիս առջեւ, աչքերս արցունքէն կասկարմիր կտրած: Վերջին թղթերս կարգի դրի կամ պատուեցի, պատահամբ բեկորի մը կը հանդիպիմ, որուն վրայի գրերը դալկահարեր են ճակտիս նման: Տարիներ առաջ գրեր եմ տապանագիրս, եթէ բազմը որոշէր որ այս հեռաւոր մինակութեան մէջ փակէի աչքերս:

Ա Ս Տ Հ Ա Ն Գ Ձ Ի

Մի՛ հաւատաք, հանգիստ չունի՛ն
Իր աճիւններն աւազին տակ,
Մի՛ մօտենաք այս դամբանին,
Երջանկութի՛ւնն ու Յիշատակ:

* *

Սոխակն անուշ կ'որոնէ իր վարդենին,
Ամպեր ծովի՛ն կը սլանան հողմավար,
Ու երազն էր վտարանդի քերթողին,
Զովաջնել մի օր ճակատն հրավառ,
Զուրերուն մէջ Եփրատին:

Վասն հայրենեաց պատնէշին վրայ չինկա՛ւ ան.
Այլ կարօտով ու աչքերը կիսաբաց,
Սպասումովը շողերուն տուրնջեան
Հատաւ ինչպէս ասուպները երկնասլաց,
Զենիթէն վա՛ր կը սուրան:

* *

Մի՛ հաւատաք, հանգիստ չունի՛ն
Իր աճիւններն աւազին տակ,
Մի՛ մօտենաք այս դամբանին,
Երջանկութի՛ւնն ու Յիշատակ...:

Բարեկամներ, մտերիմներ կ'ուղեկցին մեզի շողենաւ:
Ասոնցմէ մին կը յիշեցունէ թէ մեր Զատիկն է այսօր:

— « Գրիստոս Յարեաւ ի Մեռելոց »

— « Օրհնեալ է յարութիւնն ՀԱՅԱՍՏԱՆԻ », կը պատասխանեմ, ու կը բարձրանամ կամրջակին վրայ դիտելու վերջին անգամ Ճիպուղին, որ կէս օրուան հրավառ արեւուն տակ, կը հեռանայ, կ'աղօտանայ, կ'անհետի, տառապագին սպասումի 17 տարիներուն նման:

Վ Ե Ր Ձ



Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ Ը

	ԿԸ
1. Նախաբան	3
Ա. Մինչև էրճիաս	7
Բ. էրճիասէն անդին	13
Գ. էրճիասէն անդին	22
Դ. Աղառ ափեր	29
Ե. Մախոխեանի ցուցածանդէսը	52
Զ. Սփիւնիս	57
Է. Ինչո՞ւ եկայ	59
Ը. Առ Լուսին	41
Թ. Վերադարձ	44
Ժ. Նոր Տնակս	35
ԺԱ. Վկայականը	36
ԺԲ. Աղօթք	60
ԺԳ. Մեկնողին նամակները	65
ԺԴ. Մեկնումը	67
ԺԵ. Լեզու ելլէր ու ըսէր ինձի	70
ԺԶ. Վարդէնի	77
ԺԷ. Ճ. Կօրածոն Պէննէթ	79
ԺԸ. Ծփանփներէս երեք կոհակ	—
Նախերգանփ	84
Դեպի Անդունդ	88
Մեր Յեղը	103
Առ Ովկիան	108
ԺԹ. Առաջին բաժանումը	115
Ի. Աղաւթն Անեծփը	116
ԻԱ. Մեր Մայրը	120
ԻԲ. Գընա՛	124
ԻԳ. Հարաւի Հոր Խորշակին	126
ԻԴ. Բանաստեղծին վերադարձը	128
ԻԵ. Բաղդին	152
ԻԶ. Եփրատին վրայ խաչհանգիստ	154
ԻԷ. Յիշատակ	157

Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
53	26	ուրուականը	ուր-ի-անը
55	18	ուրուականը	ուր-ի-անը
57	30	արդիւնքները	արդ-ի-քները
61	18	առաջ	ա-ռ-ա-ձ
81	18	wellcome	welcome
81	28	and	end
84	28	Յընտրքին	Յըն-տր-ան-ին
85	27	յուզումէն	յ-ու-ձ-ը-մ-է-ն
89	23	կոհակները	կ-ո-հ-ակ-ները
90	2	հասանքներ	հ-ս-ս-ան-ք-ներ
91	9	երկիրն ու	եր-կ-իր-ն ու-ր
92	4	հայրենեաց	հ-ր-ա-յ-ր-ե-աց
93	8	սուր	ս-ու-ր-ք
94	18	ղարերը	ղ-ա-ր-ե-ր-ը
109	9	աշտանակն	ա-շ-տ-ա-ր-ակ-ն
133	29	1920	1910
218	31	պաշտօեաց	պ-ա-շ-տ-օ-ե-աց
240	1	rue	ruée
270	2	պատնէշներուն	պ-ա-ր-տ-ն-է-շ-ն-ե-ր-ո-ւ-ն

ՈՎԱՍԻՍը սպագրուեցաւ Լ. Յ. Ներսիս սպարանին մէջ
96, Rue Monge PARIS 5^e.



22

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

1. ՀԱՄԲՈՅՐԻՆ ԶՔՄԵՂԱՆՔԸ — Թասեբգուրիւն
հինգ արարուած:

Միսթիք վերլուծում մը Յուզայի մատնութեան
համբոյրին, զոր ներած է մարտիրոս և յարուցեալ
Աստուածորդին:

2. ԵԿԻ ՏԵՍԻ ԵՒ ԴԱՏԵՑԻ. — Վերլուծում մը ծա-
նօթ դիմեալ երազիս և իրականութեան մէջ:



ԳԻՆ՝ ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ

910.

Մտած. — Այս Ա. տպագրութեան երկու հազար հինգ հարիւր
օրինակները թուագրուած և ստորագրուած են հեղինակէն:

Աստուած